Մ. ՌԱՍԿՈՎԱ

ՇՏՈՒՐՄԱՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

891.71
Ռ-22

891.71
Ռ-22
կր.
25 NOV 2010

Մ. ՌԱՍԿՈՎԱ

ՇՏՈՒՐՄԱՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

24 JUL 2013
73217

Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
1963
40

М. Раскова

ЗАПИСКИ ШТУРМАНА

Гиз. Арм. ССР, Ереван, ул. Ленина 65.

ՀՍԽՀ-СОРА
им. А. Мясникяна

ՆԱԽԱԲԱՆ

«Ռոդինա» սավառնակի թռիչքը մեծ հետաքրքրություն առաջացրեց դեպի նրա անձնակազմը, որ բաղկացած էր խորհրդային յերեք օդաչուներից: Մոսկվա վերադառնալուց հետո մենք, «Ռոդինա» սավառնակի անձնակազմի անդամներս, ստանում ենք բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում են հայտնել, թե մենք ինչպես ենք օդաչուհի դարձել: Տասնյակ ու հարյուրավոր աղջիկներ խորհուրդներ են հարցնում և օգնություն են ուզում օդաչուական դպրոցները մտնելու համար:

Մեր նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը մենք ամբողջովին վերագրում ենք խորհրդային հերոսական ավիացիային, որ ամենալավն է աշխարհում: Հայրենասիրաբար տրամադրված խորհրդային ժողովուրդը մեր ավիացիայի հաջողությունների մեջ տեսնում է իր խաղաղ գոյության գրավականը: Խորհրդային ավիացիան ստեղծված է և գոյություն ունի խաղաղություն պահպանելու համար: Մեր մեծ հայրենիքի ժողովուրդը հիանալի հասկանում է, որ խորհրդային ավիացիայի յուրաքանչյուր հաղթանակ մի ավելորդ օղակ է այն շղթայում, որ ամրապնդում է մեր սոցիալիստական հայրենիքի զորությունն ու պաշտպանունակությունը:

Միայն այս տեսակետով կարելի յե գնահատել այն վիթխարի հետաքրքրությունը, որով պատվում ենք մենք, խորհրդային յերեք օդաչուհիներս, Մոսկվայից Հեռավոր Արևելք անվայրեջք թռիչքը կատարելով՝ ստալինյան առաջադրանքը կատարելուց հետո:

Իմ բազմաթիվ թղթակիցները և դպրոցական թղթակցուհիները հարցնում են. «Ասացեք, դուք ինչպե՞ս օդաչուհի դարձաք»: Ինձ համար, գուցե և, շատ է ինքնակենսագրություն գրելը: Ես քսանյոթ տարեկան եմ, դեռ շատ բան կա իմ առջև: Իմ ավիացիա մտնելը խորհրդային օդաչուհիների մեծ մասի համար բնորոշ չէ: Ոչ մանուկ հասակում, ոչ պատանեկության տարիներին ես ավիացիայի մասին չեմ էլ մտածել: Իմ ծնողները երազում էին ինձ երաժիշտ դարձնել, իսկ ես ինքս պատրաստվում էի լինել դերասանուհի, օպերային երգչուհի, միայն թե ոչ օդաչուհի:

Պատահաբար չէր, որ ես օդաչուհի դարձա, թեև դրա համար ոչ մի «տեսանելի» նախադրյալ չկար: Պատահականություն չէ, որ հատկապես մեր երկրում այսպիսի կարգ գոյություն ունի. եթե երիտասարդ մարդն սկսում է մի որոշ ձգտում հետաքրքրություն և ընդունակություն ցուցաբերել, նրան չեն թողնում այդ ընդունակությունը մեռցնել, այլ, ընդհակառակը, զարգացնում և մարդուն օգնում են լրիվին հայտաբերելու այդ ընդունակությունները:

Ես ուզում եմ պատմել այն մասին, թե ինչպես Լենին-Ստալինի կուսակցության կողմից դաստիարակված մարդիկ կարողացան Ռազմա-օդային ակադեմիայի աննշան գծագրուհու մեջ տեսնել շտուրմանի ընդունակություններ, պատմել այն մասին, թե ինչպես կոլեկտիվիզմի ոգով դաստիարակված մարդիկ գիտելիքներ տվին ինձ և օգնեցին շտուրման դառնալու:

Օդաչուի պրոֆեսիան պահանջում է համառություն, տոկունություն և համբերություն: Ես ուզում եմ խորհրդային ընթերցողին պատմել, թե իմ մեջ ինչպես դաստիարակվեցին այդ հատկությունները, որոնք կյանքումս ինձ շատ անգամ են փրկել (և, հույս ունեմ, դեռ էլի կփրկեն) ամենաբարդ դրություններից:

Մ. Ռասկովա



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՔԻ՞ՄԻԱ, ԹԵ ՑԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

... Չորս կողմը կրակոցներ են որոտում: Լսվում է թընդանոթային համազարկ: Ցնցվում են մեծ, բարձր տան պատերը: Զնգզնգում են պատուհանների ապակիները: Տան մոտ ռումբեր են պայթում և շրապնելը տեղում է կարկուտի պես:

Հայրս ասում է մորս.

— Ահա հիմա մեզ մոտ էլ է ռազմաճակատ: Ահա մենք էլ ենք կռվի մեջ:

Մենք նստած ենք մոմի լույսի տակ: Այնքան լույս չէ, որքան էլեկտրական լամպի տակ, բայց հետաքրքիր է: Համազարկը մի քանի րոպեյով դադարում է, իսկ հետո վերսկսում է է՛լ ավելի մեծ ուժով: Արդեն մի քանի օր է, ինչ մեզ, երեխաներիս, փողոց չեն տանում զբոսնելու: Իսկ այնտեղ պետք է որ հետաքրքի՜ր լինի:

... Տվերսկի պրոսպեկտում ռումբից տուն է փլվել, հի-մա մեզ մոտ նույնիսկ գիշերը լույս է:

Հայրիկը մեզ միջանցք տարավ: Այստեղ անվտանգ է: Վոր-պեսզի տխուր չլինի, հայրիկն ինչ-վոր յերկար, հետաքրքրական պատմություններ է անում, կատակում է, մեզ ծիծաղացնում:

Յես հինգ տարեկան եմ: Ինչ է կատարվում այնտեղ, պա-տերից դուրս—չգիտեմ: Լսում եմ միայն, թե ինչպես մեծերն ասում են՝ «կարմիրներ», «սպիտակներ», «յունկերներ»: Մայ-րիկը ներս է վազում միջանցք և պատմում, թե մանուկների սե-նյակի պատուհանը կոտրված է: Պատի մեջ գնդակ է խրվել: Հայրիկը փորփրում, հանում է գնդակը և հիշատակի համար պահում: Աշակերտները չեն գալիս հայրիկի մոտ: Դաշնամուրը փակված է, պարապմունքները դադարել են: Մայրիկն աշխա-տանքի չի գնում, ամբողջ օրը տանն է նստած: Այդ լավ է, մենք մայրիկին շատ քիչ ենք տանը տեսնում:

Ինչ-վոր մեկը բակից վազում է մեզ մոտ և պատմում, վոր դռնապանը պատահական գնդակից սպանվել է: Յես անծանոթ բառեր եմ լսում, այդ բառերը յես այնքան էլ չեմ հասկանում, բայց զգում եմ, կյանքի մեջ մի ինչ-վոր նոր, մեծ բան է մտել:

Յերեխաների մահճակալները միջանցք բերին, մենք բոլո-րովին փոխադրվեցինք այստեղ: Այստեղ ուտում ենք, այստեղ էլ քնում: Հայրիկն ամեն օր նորանոր խաղեր է հնարում՝ մեկը մյուսից հետաքրքրական:

Յերբ հրաձգությունը դադարեց, հայրիկն ինձ տարավ զբո-սանքի: Տեղացել է առաջին ձյունը: Մեր փողոցի անկյունում մի մեծ կարմիր լճակ կա: Այդ արյուն է: Տները գնդակներից ծակ-ծըկվել են, ռումբերից այլանդակվել: Մեր տան բոլոր պատու-հանները փշրված են: Ապակին փշրվում է վոտքերի տակ: Մեր դիմացից մի բազմություն է գալիս կարմիր դրոշակներով: Դրո-շակների վերևը սգո սև ժապավեններ կան: Ամբոխն անձայն ուղղվում է դեպի Կարմիր հրապարակ: Բեռնատար ավտոներով կարմիր դագաղներ են տանում: Հեղափոխության զոհված մար-տիկներին են թաղում:

Այսպես եմ յես հիշում 1917 թվի հոկտեմբերը:

Յես ծնվել եմ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղա-

փոխությունից հինգ տարի առաջ: Այժմ վերհիշելով իմ մանկու-թյան տարիները՝ յես նրանց մեջ շատ քիչ ուրախ օրեր եմ գտնում: Յերջանիկ են մեր ժամանակակից յերեխաները: Նրանք չգիտեն այն զրկանքներն ու աղետները, վորոնց մեջ այն տարի-ներին ստիպված եյին աճել ու դաստիարակվել յերեխաները: Հեղափոխությունը միանգամից վոտքի չկանգնեց: Յերիտասարդ խորհրդային հանրապետությունը միանգամից չեր կարող յերե-խաներին տաք դպրոցներ տալ և բավականաչափ սնունդ ու հա-գուստ: Թեև շատ բան եր արվում, վորպեսզի յերեխաները կա-րիքի մեջ չլինեն և քաղաքացիական պատերազմի ծանրությունը չզգան, բայց և այնպես այն տարիներին յերեխաները ևս մեծերի հետ հաճախ ստիպված եյին լինում կիսաքաղց մնալ, վատ հագնվել, ապրել ցուրտ, չտաքացրած բնակարաններում:

Հայրս յերգի ուսուցիչ եր, մայրս՝ դպրոցական ուսուցչուհի: Առավոտից մայրիկս աշխատանքի յեր գնում, յեղբայրս՝ դպրոց, հայրիկիս մոտ աշակերտներ եյին գալիս ձայնը մշակելու: Տունը լցվում եր յերգի ու գամմաների հնչյուններով: Հայրիկս ստիպ-ված եր տանը պարապել աշակերտների հետ. առողջությունը նրան թույլ չեր տալիս պարապմունքների գնալ:

Սենյակում ցուրտ է, վառելիք չկա: Ցրտից պատսպարվե-լու տեղ էլ չկա:

Շուտով մայրիկիս աշխատանք տվին Զուբովսկի հրապարա-կի մանկատանը, և մենք փոխադրվեցինք այնտեղ ապրելու:

Այդ մի մեծ մանկատուն եր, վոր տեղավորված եր նախկին Ուսաչևսկո-Չերնյավսկի օրիորդաց ուսումնարանում: Այստեղ եյին բերվել մոտ յոթ հարյուր անտուն յերեխաներ ու վորբեր: Նախկին դպրոցից մանկատանը մնացել եյին մի քանի տասնյակ յերեխա: Նրանք լավ եյին հագնված և արտոնյալ վիճակում ե-յին: Այստեղ ընկնելով յես առաջին անգամ իմացա, վոր կան «մեր» և «ձեր» յերեխաներ: Հին մանկավարժները թշնամաբար դիմավորեցին նոր յերեխաներին և այն նոր կարգերը, վոր խոր-հրդային իշխանությունը բերեց դպրոց: Հին մանկավարժները, վորոնք առաջ յերկար տարիներ աշխատել եյին այստեղ, ու-սումնարանում ունեյին իրենց բնակարաններն ու գույքը, այստեղ ոգտվում եյին սննդից և այլ բարիքներից և այնպես

էին համարում, թե ուրիշ փող մի կերպ չի էլ կարող լինել: Ի դեմս խորհրդային իշխանության նրանք նախ և առաջ տեսնում էին մասնավոր սեփականության թշնամու, չէին հավատում, թե խորհրդային իշխանությունը կհաստատվի և ամեն կերպ սաբոտաժի էին յենթարկում նոր կարգերը:

Իսկ այդ կարգերը առաջին հերթին կայանում էին նրանում, վոր կարելի լինի կերակրել ու պատսպարել մեծ թվով անտուն յերեխաների: Առաջավոր ուսուցիչների մի խումբ, վորոնց թվում նաև իմ մայրը, վճռական պայքար էր մղում սաբոտաժ անողների դեմ: Շուտով զզվելի բաներ բացվեցին: Ուսումնարանի կառավարչուհին մթերքները թաքցնում էր, հրաժարվում էր պահեստներում յեղած թաղիքե վոտնամաններն ու տաք հագուստեղենը յերեխաներին բաժանել: Յերեխաները սառչում էին, նրանք վոտաբոբիկ վազում էին ցուրտ սենյակներում: Նրանց ձեռքերն ու վոտները ծածկվում էին բշտիկներով ու վերքերով, բայց նույնիսկ վերքերը փաթաթելու բամբակ ու բինտ չէին տալիս: Հին ռեժիմի ուսուցիչները վորքան կարող էին՝ ծաղրում էին յերեխաներին: Նրանք իրենց դժգոհությունը և նոր կարգերից անբավականությունը յերեխաների գլխին էին թափում: Մի ուսուցչուհի, վոր քահանայի աղջիկ էր, դիտավորյալ տապալում էր պարապմունքները: Նա վոչինչ չէր սովորեցնում յերեխաներին, ամբողջ որերով պարապ էր մնում դպրոցում: Յես հենց այդ ուսուցչուհու դասարանն էի ընկել: Ամբողջ տարվա ընթացքում նույնիսկ գրագիտություն չսովորեցի:

Իմ մայրիկին նշանակեցին գիշերոթիկ դպրոցի ուսումնադաստիարակչական և տնտեսական մասի վարիչ: Հենց սկզբից նա ստիպված յեղավ գլխավորել պայքարը սաբոտաժ անող ուսուցիչների դեմ: Նա շատ ջանքեր գործադրեց, մինչև վոր կարողացավ ցրել նրանց և մանկատանը խորհրդային կարգեր հաստատել:

Յես ու յեղբայրս մանկատանն ապրում էինք մյուս յերեխաների հետ միասին: Յես չարաճճի աղջիկ էի, տղաներն ինձանից վախենում էին և յերբեք ինձ չէին նեղացնում:

Յերեխաներն իրենք էին դնում նկուղ ու պահեստ՝ ամբողջ

դասարանի համար հաց ստանալու: Ամենից սիրով ինձ էին ուղարկում: Գիտեյին, վոր փոքրիկ ու ճարպիկ աղջիկը անպայման բոլորից առաջ կընկնի և շատ հացի կեղև կստանա: Իսկ կեղևը մենք առանձնապես սիրով էինք ուտում. նրա մեջ ավելի շատ հաց կա և ավելի համեղ է: Հացի համար կատաղի պայքար էր գնում: Վորպեսզի նկուղի ճանապարհին մեծ յերեխաներն ինձանից հաց չխլեն, ինձ հետ ուժեղ տղաներ էին ուղարկում վորպես պահակախումբ:

Յերբ լուսժողկոմատը նոր ուսուցիչների ոգնությամբ սաբոտաժարարներին ջախջախեց, մանկատանը դրությունը լավացավ: Յերևացին տաք հագուստներ, սկսեցին ավելի լավ կերակրել: Գտնվեցին մթերքի ու փայտի թաքցրած պաշարները, սենյակները տաքացան:

Բայց և այնպես յես ուժեղ ցրտահար յեղա: Յերկու ձեռքիս թաթերն էլ ուռան ու բշտիկներով ծածկվեցին: Մյուս հիվանդ յերեխաների հետ ինձ էլ տեղավորեցին հիվանդանոցում: Այստեղ մի քիչ ավելի լավ էր: Համենայն դեպս տաք էր և ավելի կուշտ էին կերակրում:

Առողջանալուց հետո շուտով ինձ տվին Պուշկինյան յերաժշտական դպրոցը:

Վաղ հասակից յես յերաժշտական ընդունակություն էի ցուցաբերել, տանը լսածս յեղանակները շատ շուտով յուրացնում էի ու յերգում: Յերբ ինձ յերաժշտական դպրոց տվին, վեց տարեկան էի: Ստիպեցին յերգել և շատ զարմացան, յերբ տեսան, թե ինչպես փոքրիկ աղջիկն առանց սխալի, բարձրաձայն, առանց վորևէ մեկից ամաչելու յերգում է Չայկովսկու «Ах, уймись, ты буря» ռոմանսը: Ինձ ընդունեցին և յես սկսեցի շաբաթական յերկու անգամ յերաժշտական դպրոց հաճախել: Յերաժշտությունը դյուրությամբ էի սովորում: Բայց յերաժշտությունից շատ ավելի յես սիրում էի տեսական առարկաները՝ յերաժշտական թելադրությունը և սոլֆեջիոն: Այս յերկուսն էլ ավանդում էր Յե. Ֆ. Գնեսինան, վորին յես պարտական եմ իմ առաջին յերաժշտական գիտելիքները:

1919 թվին հայրս մեռավ: Ցանկանալով գյուղ գնալ մթերք բերելու, նա գնաց Սուխարևյան շուկա՝ «բացոթյա» կոշկակարին

էր կոշիկները կարկատել տալու: Այստեղ նա մոտոցիկլետի տակ էր ընկել: Յերեք շաբաթ հայրս պառկեց Բաումաննայա հիվանդանոցում: Մորս համար այդ շատ ծանր ժամանակ էր: Նա չէր ցանկանում մեզ շուտ-շուտ տանել հիվանդանոց՝ հայրիկի մոտ և մենք՝ յես ու յեղբայրս՝ հիվանդանոցում յեղանք միայն մեկ անգամ, հորս մահից քիչ առաջ: Հիշում եմ հիվանդանոցի մեծ դահլիճը, վորտեղ շատ մարդիկ կային: Մենք շատ չմնացինք, դուրս յեկանք: Բայց շուտով նորից յեկանք հայրիկի թաղմանը:

Թաղումը շատ մռայլ էր: Մայրիկը յերեխաների ներկայությամբ յերբեք լաց չէր լինում: Նա այս անգամ էլ լաց չեղավ: Մեզ՝ յերեխաներիս նստեցրին դիակառքի վրա, դագաղի կողքին, մեծերը մինչև գերեզմանատուն քայլում էին դագաղի հետևից: Մենք նայում էինք մայրիկին: Նա դագաղի հետևից քայլում էր լուրջ, վշտահար դեմքով, քայլում էր ուղիղ, առանց կռանալու: Մենք տեսնում էինք, վոր մայրիկը չի լալիս, մենք էլ չէինք լալիս:

Հայրիկից մնաց միայն մի հին դաշնամուր, ժամացույցը և հագի շորերը: Հորս շորերը մայրիկը հարմարեցրեց յեղբորս համար: Հետո, յերբ յեղբայրս մեծացավ, այդ շորերը տվին ինձ, վոր յես մաշեմ: Ընդհանրապես մանուկ հասակում ինձ տղայի շոր էին հագցնում, դրա համար էլ յեղբորս շորերը միշտ յես էի մաշում: Յեղբայրս միշտ պետք է հիշեր, վոր իրենից հետո նրա շորերը յես պիտի հագնեմ յերկար ժամանակ: Մենք միշտ հին, մաշված ու վերաձևած շորեր էինք հագնում: Հաճախ մայրիկը մինչև ուշ գիշեր նստում էր կար անելու: Ձևափոխում, հարմարեցնում էր մեր շորերը՝ աշխատելով շատ թե քիչ կանոնավոր տեսք տալ նրանց: Մեզ համար կոշիկներ կարելու նպատակով մայրիկս կոշկակարների կուրսեր մտավ: Սկզբում նա մեզ համար կտորից էր կոշիկ կարում, թելից հյուսված ներբանով, հետո ինչ վոր մի տեղ կաշվի կտորներ ճարեց: Կարում էր գիշերները և հաճախ ձեռքերն արյունոտում էր: Բայց հո՛ մենք կոշիկներ էինք ունենում: Էլ մի հարցնի, թե վորքան էին գեղեցիկ լինում այդ կոշիկները, բայց վորքա՜ն մայրական սեր ու հոգատարություն էր դրված լինում նրանց մեջ: Մայրս վորոշել էր, ինչպիսի զրկանքներ էլ ինքը կրելու

լինի, իր յերեխաներին մեծացնել առողջ ու ամրակազմ: Նա շատ էր հոգում մեր մասին և յերեխաների սիրուն իրեն զրկում էր ամեն բանից:

Հորս մահից հետո մայրիկս նշանակվեց Մոսկվայի մոտ գտնվող Մարֆինոյի մանկական գաղութի վարիչ:

Մանկական գաղութում ապրում էին իմպերիալիստական պատերազմում զոհված զինվորների յերեխաներ: Հեղափոխությունից առաջ նրանք բացառապես կրոնական վոգով էին դաստիարակվում: Դեռ 1920 թվին նրանք կանոնավոր կերպով աղոթում էին պատերին ամրացրած սրբապատկերներին: Յերեխաների մեջ քիչ չէին զզվելի դաստիարակության հետևանքով այլասերված սանձարձակները: Հեշտ է պատկերացնել, թե մորս հետ այստեղ յեկած ուսուցիչները վորքան ջանք պիտի թափեին նախահեղափոխական դաստիարակության մնացորդներն արմատախիլ անելու համար:

Մայրիկս շատ էր աշխատում: Մենք մեր կամքին էինք թողնված: Յես լայնորեն ոգտագործում էի այդ ազատությունը, ամբողջ որը վազվզում էի դաշտերը, խաղում էի տղաների հետ. գաղութում աղջիկներ չկային: Յերաժշտությունը մոռացության էր տրված՝ հայրիկի հին դաշնամուրը մնացել էր քաղաքում:

Այդ ժամանակ յեղբայրս սավառնակներով էր տարված: Նա սավառնակներ էր շինում ճյուղերից ու սպիտակ թղթից: Յերկրորդ հարկի պատուհանը բարձրանալով՝ նա ոդում բաց էր թողնում իր մոդելները, իսկ յես ու էլի մի քանի տղա պետք է այդ մոդելները հավաքեյինք ու վերև տանեյինք: Սակայն այդ խաղը ամենևին չէր նպաստում իմ մեջ դեպի ավիացիան հետաքրքրություն առաջանալուն: Մանուկ հասակում յես բոլորովին անտարբեր էի դեպի ավիացիան և յերբեք չէի յերազում ոդաչու դառնալ: Յեղբայրս ինձնից շատ ավելի էր զբաղվում ավիացիայով: Իսկ ինձ համար դրանք միայն խաղալիքներ էին, վորոնք, ինչպես և մյուս բոլոր խաղալիքները, շատ շուտ ձանձրացնում էին ինձ:

Մարֆինոյում առաջին անգամն էր իմ կյանքում, վոր յես ապրում էի բնության ծոցում: Այստեղ մեր աչքի առաջ ցանում

էյին և մեր աչքի առաջ էլ բերքը հավաքում: Այդ ամենն ինձ շատ էր հետաքրքրում: Տաք էր, մենք ազատվել էյինք Մոսկվայի ցուրտ սենյակներից, ուտելիքը բավարարում էր: Եվ ի՞նչ էր հարկավոր ութ տարեկան մի աղջկա, վոր արդեն բավականին ճաշակել էր կյանքի զրկանքները, վորոնք սովորական էյին այն ժամանակվա շատ յերեխաների համար: Խաղալիքնե՞ր: Խաղալիք քիչ կար, բայց մենք ինքներս թղթից ու կարտոնից խաղալիքներ էյինք շինում:

Մի տարի անց՝ մայրիկին փոխադրեցին Մոսկվա: Նա ինքն էր խնդրել իրեն փոխադրել Մոսկվա, վորպեսզի մենք կարողանանք դպրոց հաճախել: 1920 թվի վերջին մայրիկը սենյակի որդեր ստացավ: Այդ սենյակը բավական մեծ էր, ձմեռը տաքացնելը դժվար էր, վորովհետև փայտը քիչ էր: Այն ժամանակ մայրիկը գնեց մի թիթեղյա վառարան՝ «բուրժույկա», բայց հարևանները չէյին թույլ տալիս խողովակն իրենց սենյակի միջով անցկացնել ծխնելույզի մեջ, ուստի մենք ստիպված յեղանք խողովակը հանել ոդանցքով:

Իմ առաջին «ոդերևութաբանական» դիտողությունները բավական գործնական բնույթ ունեյին: Յես ու յեղբայրս տուն վերադառնալով դիտում էյինք, թե քամին վորտեղից է փչում: Յեթե քամին արևմուտքից էր փչում, այդ վատ էր, վառարանը վառել չէր կարելի: Իսկ յեթե քամին փչում էր հարավից, կամ ավելի լավ էր արևելքից, ուրեմն կարելի յեր վառարանը վառել և ուզածին չափ տաքանալ:

Ինձ տվին դպրոց, յերկրորդ խումբը: Դպրոցական պարապմունքներից հետո յես գնում էյի այն մանկական ոջախը, վորտեղ մայրիկս էր աշխատում և այնտեղ ժամանակն անց էյի կացնում յերեխաների հետ նկարելով, յերգելով, դրամատիկական ու յերգեցիկ խմբակներում աշխատելով: Այդ ոջախում յես գեղարվեստական լավ դաստիարակություն ստացա: Վորոշ ժամանակից հետո յես արդեն կարող էյի կոնկուրսային քննություն տալ յերաժշտական տեխնիկում ընդունվելու համար: Կոնկուրսին յեկած հիսուն յերկու յերեխաներից ընդունեցին միայն յերկուսին՝ ինձ և էլի մի աղջկա: Կոնկուրսին յես յերգեցի «Смело, братцы» յերգը: Յերգեցի լիաձայն և ամենևին չշփոթվելով,

վոր ինձ շատերն են լսում: Նոտաները յես լավ գիտեյի. դեռ հինգ տարեկան էյի, վոր հայրիկս սովորեցրել էր:

Տեխնիկումում պարապմունքները բավական հաջող էյին ընթանում: Առանձնապես հետաքրքիր էր սոլֆեջիոյի պարապմունքը: Մենք հիանալի նոտայի թուղթ ունեյինք հաստ կարտոնից: Այդ թղթի վրա մենք պետք է դասավորեյինք մետաղյա նոտաներն այնպես, վոր յերաժշտական թելադրություն դրվեր: Ստացվում էր մի շատ հետաքրքիր խաղ, վորի ժամանակ յերեխաները լավ յուրացնում էյին յերաժշտական գրագիտությունը: Շուտով յես արդեն անսխալ նոտաներ էյի գրի առնում:

Մայրիկն առաջվա պես իր ամբողջ ազատ ժամանակը հատկացնում էր ինձ ու յեղբորս: Վորքան մենք մեծանում էյինք, այնքան նրա գործը դժվարանում էր: Նա պետք է կարկատեր մեր շորերն ու սպիտակեղենը, ձևափոխեր, հարմարեցներ, սենյակը մաքրեր, տաքացներ, ընթրիք պատրաստեր, ամանները լվանար: Այդ բոլորը նա ինքն էր անում, իսկ մենք՝ յերեխաներս՝ միայն պետք է սովորեյինք:

Հիշում եմ, թե ինչպիսի տոն էր լինում, յերբ տանն սպիտակ հաց էր յերևում: Մայրս կրոնապաշտ չէր, բայց և այնպես, պասկից առաջ, վորոշելով յերեխաներին ուրախացնել համեղ քաղցրեղենով, նա մեզ յերկուսիս էլ տարավ հացի խանութ և կես բոքոն սպիտակ հաց գնեց: Այդ հացը մենք հանդիսավոր կերպով տեղավորեցինք սեղանի վրա և ուտում էյինք մանր պատառներով, խմելով վոչ այնքան քաղցր թեյը: Այդ շատ համեղ էր թվում: Ակամայից մտքիս մեջ համեմատություն է առաջանում և յես մտածում եմ. վորքա՜ն լավ է, վոր այժմ մեր յերեխաները հասարակ սպիտակ հացից այդպիսի «ուրախություն» չեն զգում:

Տաս տարեկան հասակում յես մտա կոնսերվատորիա: Այստեղ ինձ թոշակ էյին տալիս—մի քիչ փող, իսկ վոր գլխավորն էր, տալիս էյին լավ մթերքներ՝ ձեթ, ալյուր, ճավար, կորեկ: Այդ լուրջ ոժանդակություն էր մեր ընտանիքին: Հիշում եմ, այդ ժամանակ ինձ համար տուֆլիներ տվին, իսկակա՛ն գործարանային կաշվե տուֆլիներ:

Կոնսերվատորիայի մանկական բաժանմունքը շուտով փակ-

վեց և ինձ փոխադրեցին Ռուբինշտեյնի անվան յերաժշտական տեխնիկում: Այստեղ յես սովորում եյի պրոֆեսոր Մորոզովի դաշնամուրի դասարանում: Այժմ արդեն յերաժշտությունն ինձ այնքան էլ չեր հրապուրում: Դաշնամուրի առաջ նստում եյի վո՛չ առանձին սիրով: Առանձնապես ձանձրալի եյին վարժությունները ու գամմաներ նվագելը: Ինձ դուր եյին գալիս Շոպենը, Գլիերը, Մենդելսոնը. Բախին ու Մոցարտին, չգիտեմ ինչու, չեյի սիրում: Նստում եյի դաշնամուրի առաջ և նվագում վոչ այն, ինչ հարկավոր եր դպրոցի համար, այլ այն, ինչ ինձ դուր եր գալիս:

Դպրոցական պարապմունքներս շատ ավելի հաջող եյին ընթանում: Ինձ նույնիսկ հաջողվեց մեկ տարում յերկու դասարանի դասընթաց անցնել: Մի անգամ ամառը մայրիկս, վորպեսզի կարողանա ծայրը ծայրին հասցնել, յերկու աշակերտ վերցրեց հինգերորդ դասարանի համար «պատրաստելու», և յես նրանց հետ միասին յերկու ամսում չորրորդ դասարանի դասընթացն անցա:

Դպրոցական տարիներին յես ամբողջովին ծանրաբեռնված եյի: Ամառը մենք միշտ քաղաքում եյինք անցկացնում: Մայրիկն ստիպված եր լինում ամառն էլ աշխատել: Սովորաբար նա ամառը «մասնավոր» դասեր եր տալիս, և մենք համարյա յերբեք քաղաքից դուրս չեյինք գալիս: Միայն յես յերբեմն գնում եյի ընկերուհուս մոտ՝ ամառանոց: Այդ միշտ մեծ տոն եր լինում ինձ համար:

Յես մեծանում եյի, լրջանում: Հրապուրվում եյի կենսաբանությամբ: Դպրոցում ինձ կենսաբանական խմբակի նախագահ ընտրեցին: Այն ժամանակ ինձ վրա մեծ ազդեցություն եր գործում հասարակագիտության դասատու Յեվդոկիա Անդրիանովնա Գուցոլյան:

Յեվդոկիա Անդրիանովնան այն ժամանակ ինձ հանդիպած ամենանշանավոր մարդկանցից մեկն եր: Ահա նրա համառոտ պատմությունը: Հեղափոխության հենց սկզբից, վորին նա ակտիվորեն մասնակցել եր, նա ծառայում եր Կալուգայի նահանգի Մեդին գավառական փոքրիկ քաղաքի զեմստվոյում: Հոկտեմբերի առաջին իսկ որերին նա մեկնել եր Մոսկվա՝ գյուղի համար աշխատողներ պատրաստելու դասընթացներում սովորելու և այդ դասընթացները վերջացնելով վերադարձել եր Մեդին, վորտեղ կազմակերպել եր նույնպիսի խմբակներ, իսկ ինքը գնացել եր գյուղում աշխատելու: Այստեղ նա հանդիպել եր բոլշևիկներին և այդ ժամանակից սկսած շարունակ նրանց հետ ձեռք-ձեռքի տված աշխատել է:

Յեվդոկիա Անդրիանովնան Կալուգայի բանվորական համալսարանի ակտիվ կազմակերպիչն եր յեղել, հենց այդտեղ էլ բանվորական տեխնիկումում ավանդել եր հասարակական գիտություններ, իսկ հետո յերկար ժամանակ վորպես պրոպագանդիստ-ագիտատոր աշխատել եր ագիտ-գնացքում: Նա դասախոսություններ եր կարդում Ֆրանսիական հեղափոխության մասին, 1905 թվի հեղափոխության մասին, խորհրդային իշխանության համար մղվող պայքարի մասին: Նա շատ եր աշխատում Կարմիր Բանակի զորամասերում, միաժամանակ դասավանդում եր դպրոցներում:

Առաջին անգամ Յեվդոկիա Անդրիանովնայից յես իմացա, թե ովքեր են բոլշևիկները և ինչի համար են պայքարում նրանք: Յերբեք չեմ մոռանա այն խորն զգացմունքները, վոր առաջացնում եյին իմ մեջ նրա պատմությունները այն մասին, թե քաղաքացիական պատերազմի ժամանակ սպիտակ-գվարդիական բանդաներն ինչպիսի գազանային դատաստան եյին տեսնում կոմունիստների ու կոմյերիտականների հետ:

Յեվդոկիա Անդրիանովնան ապրելիս է յեղել Բելոռուսիայի Պոչեպ փոքրիկ հրեական ավանում այն ժամանակ, յերբ կարմիր ջոկատն այդ ավանը պաշտպանելիս եր յեղել սպիտակ-գվարդիականներից: Մի քանի կոմյերիտական գերի եյին ընկել սպիտակների ձեռքը: Սպիտակները գազանաբար տանջել եյին նրանց ու սպանել: Յեվդոկիա Անդրիանովնան մեզ պատմում եր, վոր ինքը տեսել է այդ կոմյերիտականների դիակները, վորոնց դեմքն այլանդակված է յեղել, լեզուները՝ կտրված...

Այդ պատմությունները իմ մեջ ատելություն եյին առաջացնում սոցիալիստական հեղափոխության թշնամիների նկատմամբ:

Յեվդոկիա Անդրիանովնան կարողանում եր իր աշակերտներին կոլտնտեսային շինարարությամբ հետաքրքրել դեռ այն ժա-

ժամանակ, յերբ կոլտնտեսությունները նոր եյին առաջանում: Նա ինքն ակտիվ մասնակցություն եր ունենում կոլտնտեսություններ կազմակերպելու գործին, յերկար տարիներ շարունակ հասարակական-կուլտուրական աշխատանք եր տանում գյուղում և հափշտակությամբ մեզ պատմում եր, թե յերկրում ինչպիսի հիանալի կյանք կսկսվի, յերբ գյուղում կուլակային դասակարգը վերացվի և գյուղատնտեսությունը կոլտնտեսությունների ձեռքն անցնի:

Նրա պատմությունների ազդեցության տակ յես մի անգամ տանը կոլտնտեսության մի մեծ մակետ պատրաստեցի: Կարտոնից ու ներկված նկարներից յես պատրաստեցի մի ամբողջ «կոլտնտեսություն» իր կաթնապրանքային ֆերմայով, բանջարանոցով, դաշտերով, տներով: Յես ինքս խաղում եյի իմ «կոլտնտեսությունով» և խաղալիս ինքս ինձ կոլտնտեսուհի յերևակայելով խոսում եյի բարձրաձայն:

Յեվդոկիա Անդրիանովնան իր աշակերտների հետ մտերմանալու հիանալի մեթոդ ուներ: Նա գնում եր նրանց տները, մասնակցում եր նրանց տնային զրույցներին, վորպեսզի ավելի մոտիկից ծանոթանա յերեխաների բնավորությանը և իմանա, թե ինչ պայմաններում են ապրում նրանք: Մեր տանը Յեվդոկիա Անդրիանովնան մեր մարդն եր համարվում, կարծես մեր ընտանիքի մոտիկ բարեկամը լիներ: Մայրիկը նրան պատմեց կոլտնտեսության մակետի մասին:

Յեվդոկիա Անդրիանովնան տեղեկացավ, թե սովորաբար վո՛ր ժամերին եմ յես զբաղվում իմ կոլտնտեսությունով: Մի անգամ նա մայրիկիս հետ ինձնից ծածուկ ականջ եյին դրել, թե յես ինչպես եմ խոսում կոլխիկների, կոլտնտեսականների հետ, հետո վազել եր սենյակ ու աչքերս բռնել: Յես նրան իսկույն ճանաչեցի... Դեռ յերկար ժամանակ յես խաղում եյի իմ մակետով, «կոլտնտեսությունն» աճում եր, մինչև վոր ավելի լուրջ զբաղմունքներ մոռացնել տվին այդ խաղը:

Յեվդոկիա Անդրիանովնայից յես ինքնուրույն աշխատել սովորեցի: Մանկավարժի այդ հատկությունն ուներ նաև իմ մայրը:

Սկսեցին ինձ զեկուցումներ հանձնարարել սկզբում դասարա-

նում, իսկ հետո նաև ամբողջ դպրոցի համար հեղափոխական տոներին կազմակերպված հանդիսավոր յերեկույթներին: Դրանով յես զբաղվում եյի առանձին հափշտակությամբ: Յես ամենևին չեյի շփոթվում, վոր ինձ մի քանի հարյուր մարդ է լըսում, և տասներկու-տասներեք տարեկան հասակում արդեն մեծ-մեծ զեկուցումներ եյի տալիս:

Յոթնամյակն ավարտելուց հետո մտա քիմիական թեքումով ութերորդ դասարանը: Ինչո՞ւ յեր հատկապես այդ դպրոցը հըրապուրում ինձ: Մասամբ նրա համար, վոր այնտեղ սովորում եր նաև յեղբայրս: Բացի այդ, յես գտնում եյի, վոր դպրոցում ավանդվող առարկաներից ամենաաշխույժը քիմիան է: Իսկ վոր գլխավորն եր, քիմիական թեքումով իննամյակն ավարտելուց հետո հեշտ եր աշխատանքի մտնել:

Յես տասնչորս և կես տարեկան եյի: Այդ թերևս ամենադժվար տարին եր: Ստիպված եյի ուժերիցս վեր աշխատել: Առավոտը գնում եյի դպրոցական լաբորատորիան, այնտեղից` ուղղակի յերաժշտության դասերի, ճաշից հետո նորից դըպրոց` ընդհանուր կրթական պարապմունքների, իսկ յերեկոյան մինչև ժամը 11-ը յերաժշտության թեորիա եյի սովորում: Այդ ժամանակաշրջանում մայրս դպրոցի դասատու յեր: Նրա դըպրոցը հեռու յեր, տանը ճաշ չեյինք պատրաստում, ճաշում եյինք ճաշարաններում: Դա բավական ծանր աշխատանքային կյանք եր: Նույնիսկ զբոսանքի ժամանակ չկար: Շարունակ շտապելով յես դպրոցից վազում եյի տեխնիկում և` հետ: Ընկերուհիներ ունեյի, բայց հաճախ չեյի հանդիպում նրանց, ժամանակ չեր լինում:

Այդ ժամանակ ծանր հիվանդացա ականջացավով ու պարատիֆով: Յերկու և կես ամիս անկողին ընկա: Յերբ բժիշկը յեկավ և իմ պարապմունքների ցուցակը տեսավ, մորս կտրականապես հայտարարեց.

— Յեթե դուք չեք ցանկանում, վոր ձեր աղջիկը հիշողությունից զրկվի, բարի յեղեք թեթևացնել նրա պարապմունքները: Պետք է ընտրություն անել— կամ քիմիա, կամ յերաժըշտություն:

Բայց վորի՞ վրա կանգ առնել: Ինձ շրջապատողներից վոչ

1963
40

վոք պատկերացնել անգամ չէր կարող, թե ես յերաժշտությունից ձեռք կքաշեմ: Յես վատ չեյի սովորում և արդեն յերաժշտական բարդ ստեղծագործություններ եյի նվագում: Վերջին բանը, վոր յես սովորում եյի յերաժշտական տեխնիկումում, Արենսկու Ֆանտազիան եր յերկու դաշնամուրի համար, վոր համեմատաբար դժվար բան ե: Մայրս շատ եր ուզում, վոր յես շարունակեյի յերաժշտությամբ զբաղվել: Յեվ ի՞նչ իմանաս, գուցե թե, յեթե նա այն ժամանակ պնդեր իր կարծիքի վրա, իմ ուղին բոլորովին այլ լիներ... Բայց յես արդեն «մեծ» եյի և գտնում եյի, վոր կարող եմ ինքս վորոշել իմ ճանապարհը: Ինձ թողին, վոր ինքս ընտրություն անեմ քիմիայի ու յերաժշտության միջև: Յես գերադասեցի դպրոցում մնալ:

Կյանքն սկսեց լավանալ: Յեղբայրս, վոր յերկար ժամանակ ատենախոսող եր, աշխատանքի մասով պրոֆմիությունների Մոսկվայի քաղաքային խորհրդի աշխլաբորատորիան: Նա սկսեց փող վաստակել, և մայրիկը վորոշեց ամառը մեզ հետ ամառանոց գնալ: Մեր մանկական ու պատանեկան տարիների ընթացքում այդ առաջին անգամն եր, վոր մեր ընտանիքը կարող եր այդպիսի շքեղություն թույլ տալ իրեն: Ընտրեցինք եժան վայր, յերկաթուղու կայարանից բավական հեռու, Բելոռուսյան յերկաթուղու ուղղությամբ՝ Իլյինսկը:

Վորքա՞ն ուրախություն պատճառեց ինձ կյանքը բնության ծոցում: Ամբողջ ամառը յես լողանում եյի, ձուկ վորսում և մակույկով զբոսնում: Սովորաբար յես ամառը շատ եյի կարդում: Քաղաքում պատահում եր, վոր մայրիկը նստում եր կար անելու, իսկ ինձ ստիպում եր բարձրաձայն կարդալ: Կամ թե ինքն եր կարդում, իսկ յես կարում եյի: Առաջուց կազմած ցուցակի համաձայն յես գրադարանից վերցնում եյի կլասիկների յերկեր և մեկը մյուսի հետևից կարդում: Այդպիսով մայրս հետևում եր, վոր յես բազմակողմանիորեն զարգանամ: Չե՞ վոր ձմեռը շատ քիչ ժամանակ եր մնում ընթերցանության համար: Այդ ամառ առաջին անգամ յես ազատություն ստացա: Գրքերը հեռու եյին մնացել, յես վայելում եյի հիանալի բնությունը, առավոտից մինչև յերեկո ամբողջ ժամանակն անց եյի կացնում գետի ափին: Կյանքումս առաջին անգամ յես կուշտ լողացի ու լավ արևկեզ յեղա:

Ամրապնդված և հիվանդությունից բոլորովին կազդուրված՝ յես աշնանը վերադարձա դպրոց, իններորդ դասարան և նորից սկսեցի հափշտակությամբ զբաղվել քիմիայով: Բացի ընդհանուր քիմիայից, մենք անցնում եյինք տեխնոլոգիա, մեքենագիտություն, վերլուծական քիմիա, լաբորատորիայում ամեն տեսակ վերլուծություններ եյինք անում: Վերջին տարին ինձ առանձնապես հետաքրքրեց օրգանական քիմիան: Շատ ոգուտ ստացանք քիմիական և ապակու գործարաններն ու քիմիական սառնարանը եքսկուրսիա գնալուց:

Աշխատանքի մտնելու ժամանակը մոտենում եր: ԲՈՒՀ-ի մասին խոսք անգամ չկար: Յեթե բանը դրան հասներ, ավելի շուտ յեղբայրս պետք ե հնարավորություն տվեր, վոր ԲՈՒՀ մտնելու համար պատրաստվի, չե՞ վոր վերջին տարիները նա ուսումը թողնելով աշխատել եր, վորպեսզի յես կարողանամ հանգիստ ավարտել դպրոցը:

1929 թվի գարնանը յես մտա Բուտիրյան անիլինիկ-ներկարարային գործարանը: Ինձ դպրոցն այնտեղ ուղարկեց: Սկզբում լաբորատորիայում աշխատում եյի վորպես պրակտիկանտուհի, իսկ կես տարի հետո, յերբ վորակավորման յենթարկվեցի, ինձ նշանակեցին քիմիկոս-վերլուծող:

Ամբողջ որն անց եյի կացնում գործարանում, ուրախ ու կայտառ յերիտասարդության մեջ: Այդ իմ կյանքի սքանչելի ժամանակաշրջանն եր: Գործարանից մենք դուրս եյինք գալիս խմբով, յերգերով ու կատակներով: Հաճելի յեր գիտակցել, վոր յես արդեն մեծ եմ, ինքս աշխատում եմ և իմ վաստակը տուն բերում: Հաճելի յեր զգալ, վոր յես արդեն կարող եմ ինքնուրույնաբար աշխատել:

Այդ ժամանակ եր, վոր յես սկսեցի թատրոնով հրապուրվել: Գործարանային խմբակներում մենք շատ եյինք խաղում: Խաղում եյինք ակումբային պիեսներ, կարծեմ վոչ այնքան լավերը, նրանց մեջ շատ պրիմիտիվ ձևով ցույց եյին տրվում մարդիկ ու ժամանակակից կյանքը, սակայն մենք բոլորովին տարված եյինք բեմով:

Տասնյոթ տարեկանում յես ամուսնացա և վորոշ ժամանակով աշխատանքս թողի: Կարելի յեր շուտով նորից գործարան վե-

րողանալ, սակայն յես նորից արվեստով եյի տարվել: Յես լավ, յերիտասարդական ձայն ունեյի: Մորաքույրս այդ ժամանակ դասավանդում եր ГАХН-ում: Յես սկսեցի նրա մոտ սովորել: Տնեցիներից վոչ վոք դրա դեմ չեր առարկում: Իսկ մայրիկս ուրախ եր, վոր իր աղջիկը շարունակում ե յերաժշտական կրթությունը, վորին մանկության տարիներին այնքան աշխատանք եր հատկացրել: Յերբ յես աղջիկ ունեցա, հարազատներս գոհ եյին, վոր յես գործարան չեմ գնում և կարող եմ ամբողջ ժամանակս հատկացնել տանը, յերեխային:

Սակայն շատ շուտով յես հասկացա, վոր միայն յերգեցողությունն ինձ բավական չե: Յես արդեն վարժվել եյի հասարակության մեջ լինել, կոլեկտիվի մեջ: Խիստ կարոտում եյի աշխատանքի: Բոլորովին անսպասելի կերպով ինձ առաջարկեցին վորպես գծագրող մտնել Ժուկովսկու անվան Ռազմա-ոդային ակադեմիայի լաբորատորիան: Գծագրել յես սովորել եյի դեռ դպրոցում: Այնտեղ մենք հաճախ եյինք գծագրում մեքենաների դետալներ, տեխնոլոգիական պրոցեսների սխեմաներ: Ինձ վորպես գծագրող ընդունեցին ոդագնացության լաբորատորիան: Հենց այդ ել վորոշեց իմ հետագա ուղին:

ԳԾԱԳՐՈՂԸ ԴԱՌՆՈՒՄ Ե ՇՏՈՒՐՄԱՆ

Յես բոլորովին նոր աշխարհ ընկա: Ոդագնացության լաբորատորիան իր կառուցվածքով ու կահավորությամբ ամենևին նման չեր գործարանի քիմիական լաբորատորիային, վորտեղ յես առաջին անգամ աշխատել եյի: Այնտեղ կային ռեակտիվներով բանկաներ, յերկարավիզ սրվակներ, թորանոթներ, հալոցներ, չորանոցներ, ձգող պահարաններ, գազային այրոցներ, չափանոթներ (մենզուրկա): Գործարանային լաբորատորիայում ոդը հագեցած եր ծծմբաջրածնային և ուրիշ ծծմբային ու քլորային հոտերով, ներկերի ու ռեակտիվների հոտերով: Այնտեղ մարդիկ մասնագիտական հագուստներ ունեյին՝ խալաթներ, իսկ ուսներին սրբիչներ եյին գցված:

Ոդագնացության լաբորատորիան բոլորովին ուրիշ տեսք ուներ: Դա մի մեծ սենյակ եր, վորի պատի տակ խիստ շարքով

պահարաններ եյին դասավորված: Այդ պահարաններում գործիքներ եյին պահվում: Սենյակի մեջ տեղը մի քանի գծագրական սեղան եր դրված: Պատերին աղյուսակներ, պլակատներ ու դիագրամներ եյին: Լաբորատորիա գալով՝ յես հենց միայն նրա տեսքից հասկացա, վոր այստեղ աշխատանքը բոլորովին այլ ե, քան գործարանի քիմիական լաբորատորիայում:

Սկզբնական շրջանում ինձ շրջապատող բազմաթիվ գործիքների անուններն ինձ վոչինչ չեյին ասում—տախոմետր, մանոմետր, տերմոմետր, տերմոպլանշետ, սեքստանտ, վիզիր, վետրոչետ, շրջադարձի ցուցիչ և ուրիշ շատ անուններ: Ինձ համար դրանք դեռևս մեռած բառեր եյին:

Հիշում եմ, սկզբում քիչ ջանք չեր պահանջվում մի գործիքը մյուսից զանազանելու համար: Առաջին իսկ որերից գծագրելուց բացի իմ պարտականությունն եր ներկա լինել դասախոսություններին, ոգնել դասախոսներին— լաբորատորիայից գործիքներ բերել, ցույց տալ ունկնդիրներին, գծագրություններ ցուցադրել: Սկզբում բոլոր ջանքերիս նպատակն եր չխառնել, թե վորտեղ ինչ գործիք ե դրված, արագ բերել հարկավոր գործիքը, իսկ պարապմունքներից հետո յուրաքանչյուրն իր տեղը դնել:

Աստիճանաբար սկսեցի դիտել այդ գործիքները և բավական շուտ հասկացա, թե վորն ինչի համար ե: Ակադեմիայում դասատուներից առաջինը, վորի հետ յես գործ ունեցա, Նիկոլայ Կոնստանտինովիչ Կրիվոնոսովն եր: Նա հիանալի մաթեմատիկոս եր և շատ խորամիտ մանկավարժ: Ամեն բան, ինչ վոր Կրիվոնոսովն ավանդում եր, նախապես նրա մասին խորը կերպով մտածում եր և միշտ կարողանում եր մաթեմատիկորեն հիմնավորել: Նա առույգ ու ճկուն խելքի տեր մարդ եր, խոսում եր կամաց, հանդիստ, բայց շատ հեղինակավոր: Նրան լսում եյին ուշադրությամբ: Կրիվոնոսովը միշտ ել շատ սիրով հաղորդում եր իր գիտելիքները: Նախկին ծովային ոդաչու-դիտող Նիկոլայ Կրիվոնոսովը լավ գիտեր ծովային շտուրմանական գործը, իսկ ոդագնացության մեջ ծովային նավավարության շատ մեթոդներ են ոգտագործվում: Այնպես եր ստացվում, վոր Կրիվոնոսովի մոտ աշխատելով՝ յես կամա թե ակամա ուսումնասիրում եյի շտուր-

մանական գործը, այսպես ասած, ըստ նրա ակունքների: Ոդա-գնացության նոր գիտությունն արագորեն զարգանում էր: Վա-ղուց չէր, ինչ գոյություն ուներ միայն աերոֆոտոգրամմետրի-կական դպրոց, վորից դուրս եյին գալիս դիտող-ոդաչուներ: Իմպերիալիստական պատերազմը խթան դարձավ ոդագնացու-թյան զարգացմանը: Այն ժամանակ դիտող-ոդաչուից միայն պահանջվում էր, վոր կարողանա ոդում գնդացիր կրակել և սավառնակից լուսանկարահանումներ անել: Իսկ ոդագնացու-թյունը վորպես գիտություն իմպերիալիստական պատերազմից հետո էլ դեռ յերկար ժամանակ գոյություն չուներ: Ներկայումս ամբողջ աշխարհին հայտնի շտուրմանները Սպիրինն ու Բելյա-կովը, վորոնք խորհրդային Միության մեջ ոդագնացության լուրջ զարգացման սկիզբն են դրել, այդ գործի մեջ են յեկել ու-րիշ պրոֆեսիաներից: Նրանք, շտուրմանական գործի այդ պիո-ներները, ստիպված են յեղել իրենք նվաճել իրենց համար բո-լորովին նոր բնագավառներ:

Յերկար ժամանակ շտուրմանական գործը վոչ բարդ հաշ-վարկումների բավական սահմանափակ կոմպլեքս էր հանդիսա-նում: Մեծ մասամբ թռչում եյին յերկաթուղիների կամ խճու-ղիների յերկարությամբ: Այդ յերկարացնում էր թռիչքը և վատ յեղանակին թռչելու հնարավորություն չէր տալիս:

Սպիրինն իրեն նպատակ դրեց ուղիղ գծով թռչելու հնարա-վորություններ ստեղծել: Սարքավորումների ոգնությամբ նրա առաջին այդպիսի թռիչքը կատարվեց Մոսկվա—Կոլոմնա մարշ-րուտով: Սպիրինն աերոդրոմից բարձրացավ, նախորոք վորոշե-լով կուրսը և ուղիղ գծով, առանց վորևէ յերկրային կողմնորո-շիչի, հակառակ մինչ այդ գոյություն ունեցող կանոնի, թռավ մինչև Կոլոմնա: Դա մի խոշոր դեպք էր: Սարքավորումների ոգնությամբ կատարված թռիչքը հեղափոխություն էր կատա-րում ավիացիայի մեջ:

Յես ավիացիա մտա այն ժամանակ, յերբ մեր ոդաչուներն արդեն «P—5» սավառնակներով կատարել եյին արևելյան մեծ թռիչքները Մոսկվա— Քաբուլ— Թեհրան— Անկարա— Մոսկվա մարշրուտով: Այդ թռիչքը կատարվել էր ոդերևութաբանական բարդ պայմաններում: Սև ծովը կտրելիս ոդաչուները հանդիպել

եյին փոթորկի ու ամպամածության: Կույր թռիչք կատարել նրանք դեռ չեյին իմանում: Ստիպված եյին յեղել կամ ամպա-մածությունը շուրջանցել և կամ իջնել ամպի տակ մինչև ջրի մակարդակը: Յե՛վ առաջինը, և՛ յերկրորդը ոդաչուներին շատ անախորժ րոպեներ եյին պատճառել ու բարդացրել թռիչքի պայ-մանները:

Արևելյան մեծ թռիչքից հետո շտապով Սպիրինն սկսեց կույր թռիչքների դպրոց ստեղծել: Ահա թե նա ինքն ինչպես է պատ-մում այդ դպրոցի առաջին քայլերի մասին:

«Յերբ մեր յերկրում յերևան յեկան առանց վայրեջքի հա-զարավոր կիլոմետրեր թռչելու ընդունակությամբ շատ մեքե-նաներ, նոր ոդային մասնագետներ՝ շտուրմաններ դաստիարա-կելու հարց ծագեց: Սավառնակը պետք է թռչեր գիշեր ու ցե-րեկ, ամպերի միջով ու ամպերի վրայով, մառախուղի մեջ ու վատ յեղանակին:

Այն ժամանակ դրա համար սարքավորումներ համարյա չկային: Իսկ զգացողությունը հաճախ խաբում էր ոդաչուին:

Շատ ականավոր բժիշկներ պնդում եյին, թե յերկար վար-ժությունների միջոցով կարելի յե ոդաչուի մեջ մշակել վեցե-րորդ զգայարան՝ բնազդի միջոցով կողմնորոշելու թռչնային զգացողություն: Նրանք ասում եյին.

— Նայեցեք թռչուններին: Դրանք որինակելի թռչողներ են: Նրանք յերբեք չեն շփոթվում, մառախուղի մեջ կողմնորոշումը չեն կորցնում և միշտ վերադառնում են իրենց բնակության վայրը: Կարելի յե մարդուն էլ այդպես դաստիարակել:

Ոդաչուներին աչքերը փակած նստեցնում եյին ճոճին, հա-տուկ բազկաթոռների վրա դես ու դեն եյին շրջում և ապա ա-ռաջարկում եյին ցույց տալ, թե վորտեղ է հարավը, վորտեղ ա-րևելքը, վերևը, ներքևը և այլն: Այդպիսով ցանկանում եյին ոդաչուի մեջ «վեցերորդ զգայարանք» դաստիարակել...

Յերբ այդ փորձերն եյին կատարվում, յես վորոշեցի իմանալ, իսկ թռչուններն ունե՞ն արդյոք այդ զգացողությունը: Արդյոք թռչունները կարո՞ղ են կուրորեն թռչել: Թռչունների շուկայում գնեցի լավ թռչող աղավնիներ: Իմ բաժանմունքի աղջիկները կարեցին նրանց գլուխը կապելու տոպրակներ, գեղեցիկ ժապա-

վեններով: Սկզբում մենք աղավնիներին բաց թողինք աշտարակի վրայից, հետո՝ սավառնակի: Ինձ համար կարևոր եր հետևել, թե կույր թռիչքի ժամանակ աղավնին ինչպես կպահի իրեն:

Աղավնիները թռան, իսկ հետո շփոթված սկսեցին շարունակ դեպի ցած իջնելով պարապտույտներ գործել: Պտույտները գնալով ավելի ու ավելի նեղանում եյին և վերջապես դարձան բոլոր ոդաչուներին լավ հայտնի «շտոպոր»: Աղավնիները թավալվում եյին գետնին ու ջախջախվում: Միայն մեկ աղավնի վողջ մնաց: Ութ անգամ յես նրան, տոպրակը գլխին անցկացրած, բաց թողի և նա միշտ անմիջապես թևերը դասավորում եր պարաշյուտի պես և հանդիստ ցած իջնում: Այդ աղավնին պարաշյուտիստ եր: Բայց փակ աչքերով նա էլ չեր կարողանում թռչել:

Բայց գուցե կա՞ն մարդիկ, վորոնք բնազդով ուղղությունը պահելու ընդունակություն ունեն: Հարթ, կանաչ աերոդրոմում շարքի եյին կանգնած հարյուր ապագա ոդաչուներ: Նրանց բոլորի աչքերը կապեցին և առաջարկեցին ուղիղ դեպի առաջ գնալ: Սկսեցին գնալ... Սկզբում ուղիղ եյին գնում, հետո վոմանք սկսեցին դեպի աջ թեքվել, մյուսները՝ դեպի ձախ, առանձնաբար սկսեցին շրջաններ գործելով վերադառնալ իրենց հին հետքերով:

Պարզվեց, վոր վոչ թռչունները, վոչ մարդիկ կուրորեն թռչել չեն կարող: Հարկավոր եր հնարել այնպիսի սարքավորումներ, վորոնք փոխարինեյին տեսանելի յերկիրն ու արեգակը: Հարկավոր եր մարդկանց սովորեցնել ոգտվել այդ սարքավորումից:

Հիանալի ոդաչուներ պատրաստելուն զուգընթաց, մեր ավիացիան պատրաստում եր ոդային շտուրմաններ, բացառիկ հատկություններով սավառնակներ պատրաստելուն զուգընթաց, պատրաստվում եյին ոդագնացության սարքեր»...

Շտուրմանական գործը պետք եր դնել ամուր, գիտական հիմքի վրա: Ժուկովսկու անվան Ռազմա-ոդային ակադեմիայում դրանով զբաղվում եր Ալեքսանդր Վասիլյեվիչ Բելյակովը: Բելյակովն ոդագնացության լաբորատորիայի պետ նշանակվեց իմ այնտեղ գնալուց յերկու ամիս հետո: Նա յեկավ Կաչինյան

ավիացիոն դպրոցից, վորտեղ շտուրմանական վերապատրաստում եր անցնում:

Մենք արդեն գիտեյինք, վոր լաբորատորիայի նոր պետ ե նշանակված: Մի գեղեցիկ որ ներս ե մտնում մի բարձրահասակ, ամրակազմ մարդ, բարևում ե և սկսում տիրոջ նման դիտել մեր լաբորատորիայի գույքը, գործիքները, պահարանները: Յես ու ընկերուհիս գլխի ընկնելով իրար ենք նայում. «Սա յերևի հենց ինքը Բելյակովն ե»: Իսկապես շուտով ներս մտավ Կրիվոնոսովը և Բելյակովին բարևեց ինչպես հին ծանոթի:

Լաբորատորիայում յեռուն աշխատանք սկսվեց: Բելյակովն սկսեց մեթոդիկ կերպով լաբորատորիան կահավորել գործիքներով և դիտողական ձեռնարկներով: Առաջին գործիքը, վորի հետ յես գործ ունեցա, հողմաչափն եր: Դա մի գործիք ե, վորի ոգնությամբ ոդաչուն յերկրաչափորեն վորոշում ե քամու ուժն ու ուղղությունը: Սավառնակով թռչելիս կարելի յե վորոշել, թե սավառնակը յերկրի համեմատությամբ ինչ չափով ե թռչում: Սկզբում այդ վորոշվում ե մեկ ուղղությամբ, հետո մի ուրիշ, ապա յերրորդ ուղղությամբ: Այնուհետև հողմաչափի ոգնությամբ ոդաչուն յերկրաչափական խնդիր ե վճռում քամու ուղղության և ուժի մասին:

Ոդաչուին ինչի՞ն ե հարկավոր իմանալ քամու ուժն ու ուղղությունը:

Ոդաչուի առաջ գործիքների տախտակի վրա կան արագություն ցույց տվող գործիք և կողմնացույց: Դրանք ցույց են տալիս սավառնակի շարժման ուղղությունն ու արագությունն ոդային միջավայրում: Յեթե ոդային միջավայրը յերկրի մակերևույթի նկատմամբ անշարժ լիներ, ապա արագություն ցույց տվող գործիքն ու կողմնացույցը ցույց կտային սավառնակի շարժման ուղղությունն ու արագությունը յերկրի նկատմամբ: Սակայն սավառնակը շարժվում ե ոդի մեջ, իսկ ինքը՝ ոդային մասսան անշարժ չի մնում: Նա յերկրի նկատմամբ անընդհատ շարժվում ե մի վորևե ուղղությամբ և մի վորևե արագությամբ, նայած քամու ուժին և ուղղությանը:

Այսպիսով, թռչող սավառնակի վրա ազդում են յերկու ուժեր՝ սավառնակի շարժման ուժն ոդային միջավայրում և ոդ-

յին միջավայրի շարժման ուժը: Այդ յերկու ուժերից ստացվում է սավառնակի ճանապարհի իսկական ուղղությունն ու նրա շարժման արագության մեծությունը յերկրի մակերևույթի նկատմամբ: Հողմաչափի ոգնությամբ ոդաչուն լուծում է այն խնդիրը, թե քամին ինչ ազդեցություն է ունենում թռիչքի վրա:

Ոդաղնացության վերաբերյալ այդ տարրական տեղեկությունններն ստանալով, յես սկսեցի հասկանալ այն մանրակըրկիտ աշխատանքի խոշոր իմաստը, վոր հանձնարարում եյին ինձ վորպես գծագրողի: Դիտող-օդաչուի վարպետությունը կայանում է նրանում, վոր սովորի թռիչքի ժամանակ վորքան կարելի յե արագ աշխատել գործիքների վրա և առաջին հերթին հողմաչափի վրա: Այդ բանը վճռական նշանակություն ունի մարտական պայմաններում, յերբ պահանջվում է արագորեն փոխել թռիչքի ուղղությունը: Շտուրմանը պետք է այնպես վարժվի, վոր քամու ուժի և ուղղության վորոշումը նրանից չորս րոպեյից ավելի չխլի: Սովորելու ընթացքում հարկավոր եր հասնել հողմաչափի հետ վարվելու առավելագույն ավտոմատիզացիայի: Պարապմունքի ժամանակ յուրաքանչյուր ունկնդիր իր ձեռքին հողմաչափ ուներ (այդ նպատակով Բելյակովն ակադեմիայի արհեստանոցներում հատուկ վարժական հողմաչափեր եր պատվիրել): Բացի այդ, հարկավոր եր ունկնդիրներին ակնառու կերպով ցույց տալ հողմաչափի ոգնությամբ խնդիրը լուծելու բոլոր հետագա ստադիաները: Այդ նպատակով Բելյակովն ինձ հանձնարարեց գծագրել խոշոր պլակատներ, վորոնց վրա ցույց եյին տրված հողմաչափի զանազան դրությունները ոդաղնացության խնդիրները լուծելիս: Իրենց աչքի առաջ ունենալով այդ պլակատները, ամեն որ պարապմունքի ժամանակ տեսնելով դրանք, ունկնդիրները յուրացնում եյին հողմաչափի կառուցվածքը և վարժվում եյին նրա վրա արագ ու ճշգրիտ աշխատելու:

Իմ դերը համեստ եր. յես գծագրում եյի գործիքը, յուրաքանչյուր գծագրողի համար սովորական աշխատանք եյի կատարում: Այն ժամանակ իմ մտքով ել չեր անցնում, վոր շատ ժամանակ չանցած, այդ գործիքը, ինչպես և ուրիշ շատերը, վորոնք առայժմ միայն գծագրելու ոբյեկտներ եյին, դառնալու յեն իմ

անբաժանելի պրոֆեսիոնալ պիտույքները: Հողմաչափը և խընդիրների հետագա լուծումը գծագրելով յես ինձ համար ել աննկատելի կերպով վարժվում եյի վորպես շտուրման: Բելյակովի հնարած գործիքն ուսումնասիրելու «ավտոմատիկ» մեթոդը անձնապես ինձ համար վիթխարի դեր խաղաց: Յես սովորեցի արագ աշխատել հողմաչափի վրա և նրանով կատարել բոլոր հաշվումները, վորպիսիք կատարելու հնարավորություն է տալիս շտուրմանի այդ տարրական գործիքը: Նույնը տեղի ունեցավ նաև ոդաղնացության հաշվիչ քանոնի նկատմամբ:

Կյանքն արագորեն առաջ եր ընթանում: Յերկրում վիթխարի սոցիալիստական շինարարություն եր կատարվում: Աճում եյին նորանոր գործարաններ, շախտեր, ելեկտրակայաններ: Շինարարության մեջ եյին ներգրավվում ժողովրդական մասսաներ, այդ թվում նաև կանայք: Յես տեսնում եյի, վոր կնոջ համար ինչ գործ ել վերցնես, վոչ մի խոչընդոտ չկա, սակայն շտուրման-օդաչուի պրոֆեսիայի մասին դեռ չեյի մտածում, թեև ինքս ել չգիտակցելով՝ յես արագ քայլերով ուղիղ դեպի այդ մասնագիտությունն եյի գնում:

Աշխատանքային որը վերջանում եր, յես վերադառնում եյի իմ փոքրիկ աղջկա մոտ: Նա արդեն մեկ ու կես տարեկան եր: Նա աճում եր, սկսել եր թոթովել և ինձ ահագին ուրախություն եր պատճառում: Ամբողջ որը նրան թողնում եյինք տանը, դայակի խնամքին: Աշխատանքի ընթացքում, վարժությունները անելիս վորքա՛ն հաճախ եյի յես նրան հիշում, մտածում եյի, թե արդյոք տանն ամե՞ն ինչ լավ է, արդյոք դայակն իմ փոքրիկի համար խաշիլ յեփե՞լ է, արդյոք շաքարն ավելի շուտ չի՞ դըրել, քան խաշիլը կրակի վրայից վերցնելը: Ինչպիսի՜ ուրախություն եյի ապրում յես, յերբ տուն վերադառնալով իմ փոքրիկ աղջկան ուրախ ու կայտառ եյի գտնում: Հոգնածությունն անցնում եր: Յես ինքս նրան գրկանքի եյի առնում, նրա համար խաշիլ եյի յեփում, վերնաշապիկներ եյի կարում, ժանեկավոր փոքրիկ շորեր: Յես ուզում եյի, վոր նա վորքան կարելի յե գեղեցիկ հագնված լինի:

Աղջիկս սկսում եր քայլել: Նրան լավ խնամք եր հարկավոր: Յերբ նա նկատում եր, վոր յես պատրաստվում եմ աշխատանքի

գնալու, տնով մեկ ճիչ եր բարձրացնում: Այն ժամանակ յես դիմում եյի սովորական մայրական խորամանկության. դուրս եյի գալիս միջանցք և գլխարկս ու վերարկուս այնտեղ եյի հանում:

Հաճախ յես գիշերները վեր եյի կենում, ուղղում նրա անկողինը, սպիտակեղենը փոխում և զննում, թե Տանյուշան վորքան խաղաղ ե քնել, հանգստանալով այն բանից, վոր մոր ձեռքը կպել եր նրա քնքույշ մարմնին: Արդյոք իմ աղջիկն ինձ հոգս պատճառո՞ւմ եր: Միայն այն ժամանակ, յերբ հիվանդանում եր: Բայց վո՞ր մայրը ծանոթ չե այդ հոգսերին: Նա խանգարո՞ւմ եր ինձ աշխատել: Յերբե՛ք: Իմ կյանքում չի յեղել մի րոպե, յերբ յերեխա ունենալու համար վորևե անհարմարություն զգամ: Աղջիկս ինձ միայն ուրախություն եր պատճառում:

Մինչդեռ լաբորատորիայում իմ պարտականությունների շրջանակն սկսեց ընդարձակվել: Ինձ հանձնարարեցին նաև գործիքներն ստուգել, տեխնիկների հետ միասին դրանք դասավորել սավառնակների վրա, փորձերի ժամանակ գրի առնել նրանց ցուցմունքները: Իմ սովորության համաձայն յես ձգտում եյի սովորել ամեն ինչ ինքնուրույնաբար անելու: Այդ բանում ինձ չեյին խանգարում: Ընդհակառակը, Բելյակովն իր ամբողջ աշխատանքի մեջ մի հիանալի մեթոդ եր կիրառում— յուրաքանչյուր աշխատավորին հնարավորություն տալ ինքնուրույն կերպով լուծելու ամեն մի խնդիր, ամեն մի տեխնիկական հարց:

Այսպիսով յես մոտեցա սավառնակին: Սովորեցի սարքի համար ընտրել ամենահարմար տեղը, անցքեր բաց անել, սարքն ամրացնել այնպես, վոր ամուր մնա, չշարժվի, վոր թռիչքի ժամանակ հարմար լինի նրանից օգտվելը: Սարքերը սավառնակի վրա ամրացնող տեխնիկների հետ միաժամանակ աշխատում եյին մոտորների տեխնիկներ: Յես լսում եյի նրանց խոսակցությունը, տեսնում եյի մոտորները, սկսում եյի մեխանիկայից վորոշ բան հասկանալ: Այսպիսով քայլ առ քայլ յես գործնականում տիրապետեցի մեքենային:

Ինձ համակեց ստեղծագործական խոշոր աշխատանքը, վոր այն ժամանակ յեռում եր շտուրմանական գործի մեջ: Ոդագնացության գիտությունը զարգանում եր շատ արագ քայլերով:

Յես հասկացա, վոր ինձ հարկավոր ե սովորել, վորպեսզի ավելի խոր ըմբռնեմ այն գիտության իմաստը, վորին այնքան արագ կպավ իմ սիրտը, վորպեսզի կարողանամ նրա զարգացմանը հավասար քայլել: Յես վորոշեցի մտնել Լենինգրադի ավիացիոն ինստիտուտի հեռակա բաժանմունքը: Յերկու տարի շարունակ յես կատարելագործվում եյի մաթեմատիկայի, ֆիզիկայի, յերկրաչափության և մեքենագիտության մեջ:

Սակայն շտուրմանին հարկավոր հատուկ գիտելիքները յես ստացա Ակադեմիայի պարապմունքներից: Յես Ակադեմիայի ունկնդիր չեյի, սակայն վորպես ասիստենտ, ավելի ճիշտ՝ վորպես տեխնիկական ոգնական յես միշտ դասախոսություններին ներկա եյի լինում: Մնում եր միայն ուշադրությամբ լսել և մտքում պահել: Յես լսում եյի ու մտքումս պահում: Ակադեմիայի ունկնդիրների համեմատությամբ իմ առավելությունն այն եր, վոր միևնույն նյութը յես լսում եյի շատ անգամ, բացի այդ, շարունակ ապրում եյի գործիքների մեջ, աշխատում եյի նրանց վրա, ջոկջկում եյի, գծագրում, ուսումնասիրում եյի նրանց կառուցվածքը՝ մինչև վերջին մանրամասնությունը:

Ալեքսանդր Վասիլևիչ Բելյակովն իր աշակերտների ու ոգնականների վրա վիթխարի ազդեցություն եր ունենում: Նա մեզ զարմացնում եր իր ճշգրտությամբ ու վորոշակիությամբ: Բելյակովը գործարար մարդու յերջանիկ ընդունակություն ունի. կարողանում ե նախորոք նախատեսել բացարձակապես այն ամենը, ինչ վոր աշխատանքի ժամանակ նրան կարող ե հարկավոր լինել: Ունկնդիրների հետ իր պարապմունքները նա այնպես եր նախապատրաստում, վոր ժամանակը հաշված եր լինում բառացիորեն րոպե առ րոպե: Նախապես վորոշում եր, թե վորքան ժամանակ հարկավոր կլինի խնդիրը լուծելու համար, վորքան՝ տարրական բացատրելու, քանի րոպե կտևեն հարց ու պատասխանները: Այն ամենը, ինչ նրան դասախոսության ժամանակ հարկավոր եյին— դիտողական նյութեր, սարքեր, գծագրեր, բլանկներ, բորտ ժուռնալներ, աղյուսակներ—այս ամենը նախապես պատրաստած եր լինում և յուրաքանչյուրն իր վորոշակի տեղն եր ունենում: Նա ունկնդիրներից վոչ մի ավելորդ րոպե չեր խլում: Բելյակովն իրեն հատուկ մեթոդականությամբ իր փոքրիկ

հուշատետրում գրի չի՞ առնում այն բոլոր հարցերը, վոր ծագում էյին դասավանդման պրոցեսում։ Ոդագնացությունը նոր գիտություն է։ Հարցեր շատ էյին ծագում, վորոնք յերբեմն պարզ չէյին լինում նույնիսկ դասատուի համար։ Լինում են դասատուներ, վորոնք անտեղի ամոթից դրդված, վախենալով, թե աշակերտների աչքում իրենց «կգցեն», չեն ցանկանում խոստովանել, թե չգիտեն, չեն կարող պատասխանել ծագած հարցին։ Բելյակովը յերբեք չէր փորձում իրեն ամենագետ ցույց տալ։ Յեթե վորևէ բան նրա համար պարզ չէր լինում, առանց չփոթվելու ասում էր․

— Այդ յես չգիտեմ, ինքս էլ պետք է մտածեմ դրա մասին։ Հետևյալ անգամ կպատմեմ։

Յեվ դեպք չէր լինում, վոր նշանակված ժամին Բելյակովն սպառիչ պատասխան պատրաստած չլիներ։

Բելյակովի մոտ միշտ կարելի յե գտնել նրա աշխատանքի հետքերը։ Դրանք պահվում են կանոնավոր թղթապանակներում վորպես գրանցումներ, գծագրություններ, հաշվումներ։ Այդ բոլորը նա գրի յեր առնում շատ մանր ու պարզ ձեռագրով։ Այն ամենը, ինչով վոր նա հարստացնում էր իր միտքը, պահվում էյին թղթապանակներում, մեր լաբորատորիայում և նա բոլորին հնարավորություն էր տալիս ծանոթանալու իր նյութերին։ Բելյակովը բուռն կերպով սիրում էր իր լաբորատորիան։ Պատահում էր, հենց վոր իմանում էր, թե վորևէ տեղ՝ գիտահետազոտական ինստիտուտում կամ գրադարանում շտուրմանական գործի վերաբերյալ վորևէ նորություն է յերևացել, անմիջապես մեկնում էր այնտեղ, մանրամասնորեն հարց ու փորձ անում, գրի առնում, յեթե հարկավոր էր, ոտար լեզվից թարգմանում էր ռուսերեն և ուրախ-ուրախ բերում մեր լաբորատորիան։ Մենք նրա դեմքից արդեն իմանում էյինք, վոր Ալեքսանդր Վասիլյեվիչն ինչ վոր նորություն է բերել։ Իսկ նա ասում էր․

— Ի՞նչ եմ ձեզ բերել, ընկերներ։

Ապա իր պորտֆելից հանում էր կամ մի գրություն ռադիոպելենգացիայի նոր մեթոդների մասին, կամ ինչ-վոր նոր գյուտեր։

— Ահա, վերլուծեցեք, յերբ կհասկանաք, ինձ կպատմեք։

Այս ասվում էր այնպես, կարծես թե նա խնդիր էր տալիս ուսումնասիրելու նոր գյուտը կամ մեթոդը, վոր իրեն էլ դեռ անհայտ էր։ Այդպիսի դեպքերում մենք՝ նրա ոգնականները՝ աշխատում էյինք ամբողջ ուժով։ Առանձնապես հաճելի յեր լինում, վոր ղեկավարը մեզ ինքնուրույն աշխատանք էր հանձնարարում։ Պատահում էր, գնում ես նրա մոտ ու ասում․

—Ահա, Ալեքսանդր Վասիլյեվիչ, յես արդեն այս մշակել եմ։

Նա ուշադիր լսում է ու պատասխանում․

— Շնորհակալ եմ, այդ բոլորը յես արդեն գիտեմ։

Այսպես էր Բելյակովի մանկավարժական մեթոդը։ Նա իր ոգնականների ու աշակերտների մեջ ինքնուրույնաբար աշխատելու կարողություն էր զարգացնում։ Մեր յերիտասարդ գիտության մեջ այդ մեթոդը լիովին արդարացրեց իրեն։ Ստեղծվում էր առանձնապես խնամքով աշխատելու սովորություն, վորպեսզի հետո կարելի լինի ուրիշին բացատրել։ Մինչև այժմ յես իմ գործնական աշխատանքում և վարժությունների ընթացքում կիրառում եմ Բելյակովի մեթոդը։

Բելյակովի կյանքը կարծես նրա սիրած գործի՝ ավիացիայի ու ոդագնացության գիտության արտացոլումը լինի։ Գյուղական ուսուցչի վորդի, քաղաքացիական պատերազմի մասնակից, չապայեվցի Բելյակովը մտնում է ավիացիոն դպրոց և ինքն էլ դեռ չիմանալով, թե դրանից ինչ դուրս կգա, ընկնում է դիտող-ոդաչուների ջոկատը։

«Համաշխարհային պատերազմի ժամանակ,— վերհիշում է Բելյակովը պատմելով իր մասին,— դիտող-ոդաչուի մասնագիտություն չկար։ Ավիացիան ոգտագործվում էր գլխավորապես հրաձգության մեջ ուղղումներ մտցնելու համար։ Ոդաչուի հետ սավառնակ էյին նստեցնում նաև մի հրետանավորի։ Այդ նույն հրետանավորն ռմբակոծում էր հակառակորդին։ Իսկ յերբ սավառնակը թռչում էր հետախուզություն կատարելու, ոդաչուի կողքին նստեցնում էյին շտաբային մի սպա։ Այն ժամանակ կարծում էյին, թե դիտողը պարտավոր է գետնի վրա դիտել գործիքները, իսկ թռչելը նրա համար պարտադիր չէ։ Ավիացիայի զարգացման և սավառնակի գործողության շառավիղի մեծացման հետ ոդաչուն սկսեց հատուկ ոգնականի կարիք զգալ, վորը հետևեր ուղղությանը և նշեր թռիչքի ուղղությունը»։

Լսելով Բելյակովի այդ պատմությունները՝ իմ մեջ ավելի ու ավելի շատ հետաքրքրություն ու հարգանք էր առաջանում դեպի նրա պրոֆեսիան ու նրա ավանդած առարկան: Ամերիկացի հեղինակ Ասսեն Ջորդանոն օդաչուների համար գրած իր հետաքրքիր ու սրամիտ ձեռնարկում, «Ձեր թևերը» գրքում, գրում է.

«Վախը հաղթահարել կարելի է կամ վտանգը արհամարհելով, կամ գիտելիքների օգնությամբ: Վերջին միջոցն ամենից լավն է»:

Բելյակովը Խորհրդային Միության մեջ առաջին օդաչուներից մեկն էր, որ ձեռք բերեց այնպիսի գիտելիքներ, որոնք հարկավոր են ամեն տեսակ յեղանակին ու ամեն տեսակ պայմաններում առանց յերկյուղի թռչելու համար: Հետագայում նա Մոսկվա—Վարշավա—Փարիզ թռիչքի ժամանակ ֆլագ-շտուրման էր և անձրևի ու մառախուղի միջով, հանդիպակաց քամուն հակառակ ուղղությամբ վստահորեն առաջ էր տանում օդաչու Բայդուկովի ֆլագ-սավառնակը: Հինգ տարի շարունակ Բելյակովը Ժուկովսկու անվան Օդային ակադեմիայի շտուրմանական ամբիոնի պետն էր: 1936 թվին, լինելով ականավոր օդաչուներից մեկը, Բելյակովը պիլոտի կոչման քննություն տվեց և սկսեց ինքնուրույն կերպով թռչել: 1936 թվի հունիսին Չկալովի և Բայդուկովի հետ միասին Բելյակովն անվայրէջք թռիչք կատարեց Մոսկվա—Վիկտորիա կղզի—Չելյուսկինի հրվանդան—Ուդդ կղզի (Չկալով) մարշրուտով 9374 կիլոմետր յերկարությամբ: 1937 թվին Բելյակովը նույն սավառնակի համար ճանապարհ է բացում Մոսկվա—Ամերիկա մարշրուտով, Հյուսիսային բևեռի վրայով: Յես պարծենում եմ, որ շտուրմանական գործը նրանից եմ սովորել:

Այն ամենը, ինչ եյական էր այդ մասնագիտության մեջ, յես իմացել եմ Բելյակովից: Մի քանի ամսում յես դարձա շտուրմանական գործի նեղ մասնագետ: Օդագնացությունը յես տեսականորեն լավ գիտեյի, համենայն դեպս այն չափով, որքան այն ժամանակ ավանդվում էր Ակադեմիայում: Սակայն գործնականորեն յես շտուրմանական գործի մասին դեռ շատ աղոտ պատկերացում ունեյի: Այստեղ ինձ օգնության յեկան իմ

ավագ ընկերները, Ակադեմիայի դասատուները: Մի անգամ Նիկոլայ Կոնստանտինովիչ Կրիվոնոսովն ասաց.

— Դուք արդեն համարյա պատրաստի սավառնորդ եք: Ձեզ մնում է միայն գործնականորեն զբաղվել շտուրմանական գործով: Զբաղվեցեք աստղաբաշխական դիտողություններով: Փորձեցեք սեքստանտի օգնությամբ որոշել ձեր գտնված վայրը:

Յես սարքերն առած բարձրանում եյի աշտարակը և արևի ու աստղերի օգնությամբ որոշում իմ գտնված վայրը: Սկզբում այդ ինձանից խիստ շատ ժամանակ էր խլում, հետո ավելի ու ավելի քիչ: Սեքստանտի օգնությամբ յես որոշում եյի արևի կամ որևէ աստղի բարձրությունը, ապա հաշվումներ եյի անում, մշակում եյի չափած բարձրությունը և այդպիսով իմանում եյի, թե յերկրի վոր կետումն եմ գտնվում: Սկզբում սխալվում եյի մի քանի տասնյակ կիլոմետր, հետո սխալներն ավելի ու ավելի պակասում եյին: Այդպես վարժություններ եյի անում յերկար ժամանակ, մի քանի տարի շարունակ, նույնիսկ այն ժամանակ, յերբ ինքնուրույնաբար աշխատել եյի սովորել: Յես համոզված եյի, վոր շտուրմանական գործում յերկար ու համառ վարժություններ կատարելը նույնն է, ինչ վոր յերաժշտի վարժությունները: Ինչպես յերաժիշտը, յեթե դադարի վարժություններ անելուց, տեխնիկայից կզրկվի, այնպես էլ շտուրմանը, յեթե վարժություններ չանի, կմոռանա գործիքների հետ վարվելը և չի կարող արագորեն կողմնորոշվել:

Շուտով սկսեցին ինձ վստահել Ակադեմիայի ունկնդիրների հետ աստղաբաշխական դիտողություններ անելը: Յես արդեն վստահորեն ունկնդիրների աստղաբաշխական խմբակի պարապմունքներն եյի ղեկավարում: Բայց Կրիվոնոսովը չէր հանգստանում:

— Ահա դուք այդ բոլորն ուսումնասիրում եք,—ասում էր նա,— բայց հայտնի չէ, կարո՞ղ եք ձեր գիտելիքները գործադրել թռիչքի ժամանակ, կարո՞ղ եք թռչել: Դուք օդագնացության մեջ այդքան աշխատանք եք դնում: Բայց հանկարծ յեթե թռչելը ձեզ դուր չգա, այն ժամանակ ի՞նչ պիտի անեք ձեր գիտելիքները:

Օդաչուի պրոֆեսիայի մասին յես բավական ընդհանուր

պատկերացում ունեի: Օդաչուների մասին տանն էլ էին խոսում, ծանոթներիս շրջանումն էլ էին խոսում: Ես այնքան էլ անտարբեր չէի դեպի թռիչքային գործը, սակայն, խոստովանում եմ, նա այնքան էլ չէր հրապուրում ինձ նույնիսկ այն ժամանակ, երբ մնում էր միայն սավառնակ նստել և սկսել գործադրել իմ շտուրմանական գիտելիքները:

Առաջին թռիչքն իմ բախտը որոշեց: Ես գնացի աէրոդրոմ, ինձ սավառնակ նստեցրին: Այդ ժամանակ ինչ-որ մեկը կատակներ էր անում: Օդաչու Լեոնիդ Կուցովն օդ բարձրացրեց իր «Р—1-ը»: Երբ մենք թռանք, ես աէրոդրոմը գտնել չկարողացա: Ես հասկացա, որ գետնին շտուրման լինելը դեռ չի նշանակում կարողանալ սավառնակ վարել:

Երբ վերադարձա, բոլորը շնորհավորում էին իմ օդային մկրտությունը: Բելյակովն ասաց.

— Է, ինչ կա որ, եթե ցանկանում եք, կարող եք թռչել:

— Ինչպե՞ս թե թռչել, ինչո՞ւ համար:

— Գործիքները կսովորեք, ցուցմունքներ գրի կառնեք: Օդում գործ կգտնվի:

Կրիվոնոսովը հավանություն տվեց նրա ասածին:

— Զբաղվեցեք դրանով, ձեզանից սավառնորդ դուրս կգա:

Ես սկսեցի Բելյակովի հետ թռչել եռամոտոր ծանր մեքենայով: Թռիչքի ժամանակ, ինչպես և գետնի վրա, Բելյակովը շատ հանգիստ էր աշխատում: Ինչպես պարապմունքների ժամանակ, այնպես էլ այստեղ ամեն ինչ առաջուց ճշտորեն հաշված էր լինում: Ոչ մի րոպե իզուր չէր կորչում: Գործիքների ցուցմունքները նա գրի էր առնում սավառնակի մատյանում իր մանր ու հավասար ձեռագրով: Ես հսկայական գործնական փորձ էի անցնում: Սկսեցի բոլորովին այլ կերպ ըմբռնել այն գիտելիքները, որ ձեռք էի բերել լաբորատորիայում՝ պարապմունքների ժամանակ: Ուսուցչի հետ զուգընթացաբար ես վարժություն էի անում, օրինակ, արեգակի միջոցով որոշելու սավառնակի տեղը: Այդ բանն արվում էր այսպես: Օպտիկական սարքավորման սեքստանտի օգնությամբ չափվում է արեգակի բարձրությունը: Ապա հատուկ աղյուսակներով հաշվվում է, թե դիտողության ժամանակ արեգակի բարձրությունը կամավոր

կերպով վերցրած որևէ կետում որքան պետք է լինի: Ընդունենք, թե A կետում արեգակի բարձրությունը 51° է, իսկ մեր չափած արեգակի բարձրությունը՝ 50° 50′: Նշանակում է սավառնակի չափած դիրքը գետնի նկատմամբ մեծ շրջանի աղեղից 10 րոպե հեռու է մնում վերցրած համեմատական կետից: Եթե չափած բարձրությունն ավելի է, նշանակում է մենք արեգակին ավելի մոտ ենք քան այդ կետը: Եթե չափած բարձրությունը պակաս է, նշանակում է մենք ավելի հեռու ենք արեգակից: Աղեղի յուրաքանչյուր րոպեն հավասար է մեկ ծովային մղոնի կամ 1,85 կիլոմետրի: Այժմ մնում է թվաբանական հասարակ խնդիր վճռել: Մղոնները վեր են ածվում կիլոմետրերի և ստացվում է սավառնակի դիրքի բռնած գիծը:

Սեքստանտի հետ կատարվող աշխատանքը և բոլոր հաշիվները, ինչպես և մյուս սարքերի հետ կատարվող աշխատանքը պետք է արագ կատարվի, հակառակ դեպքում սավառնակն զգալի տարածություն կանցնի և դիտողությունն իր արժեքը կկորցնի: Հարկ է լինում մի ամբողջ սերիա հաշվումներ անել և դուրս բերել միջին մեծությունը: Ստացված արդյունքը գրանցվում է քարտեզի վրա և միայն այդ ժամանակ շտուրմանը որոշում է ընդունում՝ կամ ուղղությունն ուղղել, կամ արագությունը փոխել... Դա կախված է թռիչքի պայմաններից:

Աստղաբաշխական դիտողությունները վճռական նշանակություն են ստանում ամպերից վեր թռիչքի ժամանակ, երբ օդաչուն երկիրը չի տեսնում: Այդ ժամանակ նա թռչում է շտուրմանի ցուցումներով և նա կարիք չի ունենում բարձրությունը կորցնել, իջնել երկրին մոտիկ, որպեսզի կարողանա կողմնորոշվել, հետևապես և հարկ չի լինում վառելանյութ ծախսել նոր բարձրություն վերցնելու համար: Վառելանյութը, ինչպես հայտնի է, հաճախ վճռում է թռիչքի բարեհաջող ելքը, մանավանդ հեռավոր տարածության վրա: Նույն Ասեևն Ջորդանովն «Ձեր թևերը» գրքում շատ ճիշտ կերպով գրում է. «Եթե ձեր սավառնակը թռիչքի ժամանակ առանց վառելանյութի մնա, դուք ձեզ արդարացնելու համար ասելիք չեք ունենա...»:

Առաջին իսկ թռիչքների ժամանակ ես հասկացա, թե օդագնացությունն ինչպիսի վիթխարի նշանակություն ունի ռազմա-

կան պայմաններում: Հակառակորդի տերիտորիայի վրա օդա-չուն միշտ էլ ձգտելու է զենիթային հրետանու համար անհա-սանելի բարձրության վրա թռչել: Նա յերկրին մոտ իջնելուց վախ չունի: Յեվ ահա աստղաբաշխական կողմնորոշումը օգնու-թյան կգա նրան: Յես հասկացա նաև, վոր դա կողմնորոշման մյուս միջոցների նկատմամբ անվիճելի առավելություն ունի, նրա ճշգրտությունը չի տուժում այն բանից, վոր սավառնակը հեռանում է իր բազայից, մինչդեռ հենց դրանով աչքի յեն ընկնում և' ռադիոկողմնորոշումը, և' ճանապարհի հաշվումները:

Բելյակովի հետ կատարած թռիչքների ժամանակ յես ստացա նաև ընդհանուր տարրական գործնական դասեր, վոր անհրա-ժեշտ են ամեն մի շտուրմանի: Այստեղ յես իմացա, վոր այդ բան է կարողանալ հաշվումներ անել ու հաշիվները գրի առնել և բոլորովին այլ բան է օդում կողմնորոշվել: Մի անգամ մենք թռչում եյինք Կաշիրայից վոչ հեռու: Յես ծուխ տեսա և իմ ուսուցչին հարցնում եմ.

— Այդ ի՞նչ է, հրդե՞հ է:

— Վո՛չ, հրդեհ չի, այլ Կաշիրա քաղաքն է. քաղաքի գըլ-խին հաճախ է ծուխ լինում...

Արձակուրդ գնալիս Բելյակովն ինձ ասաց.

— Իսկ դուք այժմ կարող եք թռչել նաև առանց ինձ:

Ինձ թույլատրված եր ինքնուրույն կերպով թռչել վորպես շտուրման: Վաղուց չեր, վոր այդ դարձել եր իմ բաղձանքը: Առաջին ինքնուրույն թռիչքն օդաչու Բարաբանովի հետ Մոսկ-վա—Զագորսկ—Դմիտրով—Մոսկվա մարշրուտով կատարած թռիչքն եր: Յես կարգին հուզվում եյի: Ինձ դեռևս թվում եր, թե շտուրման լինելն աներևակայելի ծանր բան է: Ինչի՞ց սկսել օդում: Ինչպե՞ս գործել: Չե՞ վոր յես ինքնուրույն պետք է ճա-նապարհ ցույց տամ սավառնակին: Իսկ յեթե հանկարծ վորևե բան խառնեմ: Չե՞ վոր սա գետնի վրա չէ:

Նորից Կրիվոնոսովը ինձ օգնեց:

— Գիտե՞ք ինչ,— ասաց նա,— գործեցեք այնպես, ինչպես գետնի վրա: Այն ամենը, վոր դուք սովորել եք այստեղ կատա-րել, նույն հետևողականությամբ կկրկնեցեք օդում, ուրիշ վո-չինչ հարկավոր չէ:

Նրա հորդորներն ինձ կայտառություն տվին, բայց և այն-պես հուզվում եյի: Ըստ յերևույթին սովորական հուզմունք է յուրաքանչյուր յերիտասարդ մասնագետի համար, վորն սկը-սում է աշխատել առանց կողմնակի օգնության: Այդպես հուզ-վում է առաջին անգամ բեմ դուրս յեկող դերասանը, իր առաջին նախագիծը պաշտպանող ինժեները, առաջին վիրահատումը կա-տարող բժիշկը:

Վերջապես մենք օդ բարձրացանք: Թռչում ենք: Կուրսը հաշվեցի, օդաչուին ուղղություն տվի, իսկ ինքս նստել եմ ու հուզվում եմ. հանկարծ յես Զագորսկը չճանաչեմ: Ի՞նչ կլինի այն ժամանակ: Չե՞ վոր Զագորսկից հետո հարկավոր է օդա-չուին ուղղություն տալ դեպի Դմիտրով: Հիշում եմ, թե յես վորքան զարմացա և ուրախացա, յերբ ճիշտ հաշվումների հա-մաձայն մեր տակ յերևաց Զագորսկը: Դժվար չեր քաղաքը ճա-նաչել նրա բնորոշ գծագրությունով: Զագորսկն անցնելով մենք ուղղվեցինք դեպի Դմիտրով: Դմիտրովը ևս իր տեղը դուրս յե-կավ: Բայց հիմա ինձ համար մի նոր հոգս առեղծվեց. ինչպե՞ս անել, վոր աերոդրոմը չանցնենք: Այդ արդեն, կարծում եմ, վոչ մի կերպ գտնել չեմ կարող... Յեվ նորից զարմացա, յերբ ճիշտ հաշված ժամանակ մենք մեր տակ տեսանք աերոդրոմը:

Ինձ համար դա մի խոշոր ուրախություն եր իմ նոր պրո-ֆեսիայում: Կենդանացան և բոլորովին նոր իմաստ ստացան այն բոլոր գիտելիքները, վոր յես ձեռք եյի բերել յերկու տարվա ընթացքում: Այդպես՝ յերեխայի համար հանկարծ կենդանանում և հասկանալի յե դառնում գունավոր նկարը: Յես վոչ թե վերա-ցականորեն, այլ գործնականում հասկացա, թե ինչու, օրինակ, ճանապարհը շատ ավելի լավ կողմնորոշիչ է, քան զանգակա-տունը կամ հրդեհային դիտանոցը: Առաջ յես դրան պետք է հա-վատայի խոսքով: Գիտելիքների ամբողջ պաշարը բոլորովին ու-րիշ տեսակ եր դասավորվում իմ գլխում: Սկսեցի ուրիշ կերպ ըմբռնել այնպիսի բաները, ինչպիսիք են կողմնորոշիչը, արա-գությունը, կուրսը:

Այդ պահից յես սովորեցի գիտակցաբար աշխատել:

Մինչ այդ շտուրմանական գործը շարունակում եր կա-տարելագործվել ու զարգանալ: Բառացիորեն յուրաքանչյուր ա-

մեջ նորանոր կատարելագործումներ ու գյուտեր եր բերում: Հրապարակ եյին գալիս մինչ այդ անծանոթ նոր սարքեր, հարմարանքներ, հաշվումների նոր մեթոդներ:

Ռազմա–օդային ակադեմիայի օդագնացության լաբորատորիան այն կենտրոնն եր, վորի մեջ եյին հոսում շտուրմանական գործում յեղած բոլոր նորությունները: Շտուրմանական ֆակուլտետի պետ Ալեքսանդր Վասիլյեվիչ Բելյակովի մանկավարժական հիանալի հատկությունների շնորհիվ մենք՝ նրա ունկնդիրներս ու աշակերտներս, արագորեն իմանում եյինք բոլոր նորությունները և սովորում եյինք հասկանալ դրանք: Լավ հիշում եմ, որինակ, այսպիսի մի դեպք: Սովորաբար աստղաբաշխական դիտողությունների մշակումը մենք կատարում եյինք Բիլլեի գլանի օգնությամբ: Այդ գործիքը կատարյալ չեր, թռիչքի ժամանակ գլանը դյուրությամբ վիբրացիայի յեր յենթարկվում, մի բաժանումից անցնում եր մյուսին:

Մի անգամ Բելյակովը լաբորատորիա յեկավ ժպտուն դեմքով, ինչպես լինում եր նրա հետ, յերբ մի վորևե նորություն եր գտած լինում: Իրոք նա գիտահետազոտական ինստիտուտից, Սպիրինից, բերեց աստղաբաշխական մշակման մի նոր յեղանակ, Վիմսի յեղանակը՝ աղյուսակներով: Սովորականի նման նա մեզ առաջարկեց, վոր ինքներս ուսումնասիրենք այդ նորությունը, վորպեսզի հետո իրեն պատմենք: Նոր յեղանակն, իրոք, շատ ավելի հասարակ ու փառահեղի դուրս յեկավ...

Իմ մեջ աշխատելու մեծ ցանկություն կար: Ինձ շրջապատող ընկերների ազդեցության տակ յես իմ մեջ մշակել եյի այսպիսի մի գիծ. յեթե վորևե բան միանգամից չի հաջողվում, յեթե վորևե բան չգիտեմ, ապա այնքան պիտի աշխատեմ, մինչև վոր ամեն ինչ վերջնականապես պարզ լինի, մինչև վոր բոլոր նրբությունները հասկանամ:

Տանը խիստ շատ եյի պարապում: Շատ հաճախ շտապ ճաշելով նստում եյի մաթեմատիկա, մեխանիկա, քաղաքական գիտություններ ուսումնասիրելու: Չե՞ վոր հարկավոր եր ուսումնասիրել այն նյութերը, վոր ստանում եյի Լենինգրադի ավիացիոն ինստիտուտի հեռակա բաժանմունքից: Այդ ժամանակ ինքնուրույն կերպով ուսումնասիրում եյի կուսակցության պատ-

մությունը և Մարքսի «Կապիտալ»-ը: Աշխատում եյի շատ խնամքով, նյութերի կոնսպեկտներ եյի կազմում: Հոդվածներ ու զեկուցումներ եյի կազմում այն ծրագրերի համաձայն, վոր ուղարկում եր ինձ ինստիտուտը:

Տանն սկսեցին ավելի ու ավելի հաճախ խոսել, թե յես չափից դուրս հոգնում եմ և ընտանիքի վրա քիչ ուշադրություն եմ դարձնում: Ցավ, իրոք, իմ աղջիկը մեծանում եր: Պատահում եր, վոր յես ամբողջ շաբաթներով չեյի կարողանում նրանով զբաղվել ինչպես առաջ, յերբ նա դեռ պստլիկ եր: Իմ հանգստի օրերն ընտանեկան տոն եյին դառնում: Այդ որերին յես աղջկանս հետ զբոսնում եյի, նրան սահնակ եյի նստեցնում, ամեն կերպ յերես եյի տալիս: Թվում եր, թե չկա այնպիսի մի բան, վոր յես չանեյի իմ մանկիկի համար:

Սակայն յերեխային հարկավոր եր նորմալ դաստիարակություն: Մայրս, տեսնելով, թե ինձ համար վորքան ավելի ու ավելի դժվարանում ե աշխատանքից կտրվելը, իմ և իր թոռնիկի սիրուն զիջեց մի նոր, մեծ զոհաբերություն: Նա աշխատանքը թողեց և ամբողջապես նվիրվեց Տանյուշայի դաստիարակության գործին:

... Ամառն Ակադեմիայի ունկնդիրները մեկնեցին ճամբարները՝ պրակտիկ պարապմունքների: ԲԳԿԲ ՌՕՈՒ գիտահետազոտական ինստիտուտում ամառվա համար լրացուցիչ աշխատակիցների պահանջ զգացվեց: Ինձ գործուղեցին ինստիտուտ, Սպիրինի տրամադրության տակ, վորը ղեկավարում եր օդագնացության բաժանմունքը:

ԲԳԿԲ ՌՕՈՒ գիտահետազոտական ինստիտուտն այն կենտրոնն եր, վորտեղ ծնունդ եյին առնում բոլոր նորագույն սարքերը, շտուրմանական գործի բոլոր ժամանակակից մեթոդները: Այդ վիթխարի ստեղծագործական աշխատանքի շունչն ու հոգին Իվան Տիմոֆեյեվիչ Սպիրինն եր: Սպիրինը ԲԳԿԲ ռազմաօդային ուժերի շտուրմանական գործի հնագույն կազմակերպիչներից մեկն ե: Հիանալի կենսագրություն ունի նա: Նա ծնվել ե Կոլոմնայում, յուղագործ բանվորի ընտանիքում: 1915 թվին մըտնում ե յերկաթուղի՝ սկզբում վորպես բեռնող, հետո վերանորոգման բանվոր: 1918 թվին վորպես կամավոր մտնում ե Կար-

մեր բանակ և 1919 թվին ընկնում է «Իլյա Մուրոմեց» եսկադրիլիան:

Ավիացիայում Սպիրինն ամենից առաջ գտավ իր մասնագիտությունը: Անցյալ մռայլ ժամանակներում նա չկարողացավ նույնիսկ ինչպես հարկն է գրագիտություն սովորել: Սպիրինն սկսում է համառորեն սովորել: Նա մտնում է յերեկոյան բանֆակ և իրեն հանգստությունից զրկելով մի քանի տարում ձեռք է բերում այն գիտելիքները, վորոնցից մինչ այդ զուրկ եր ավիացիայում հաջող աշխատելու համար:

Նա տարվում է ոդային հաղորդակցության գաղափարով: Իր թռիչքային կյանքի առաջին իսկ քայլերից Սպիրինն ընտրում է հեռագնացի դժվարին դերը: Նա նպատակ է դնում թռիչքային արվեստի մեջ նոր ուղիներ բանալ:

Սպիրինն ավելի մեծ չափով պրակտիկ եր, քան իմ առաջին ուսուցիչ Բելյակովը: Այն ամենը, վոր Սպիրինին հաջողվում եր հասնել թեորիայում, նրա կողմից արդեն տասնյակ ու հարյուրավոր անգամ ստուգված եր գործնականում: Սպիրինին է պատկանում այն նախագուշակությունը, վոր ոդաչուների մեջ տարածված ասացվածք է դարձել.

«Կգա ժամանակ, յերբ հարկ լինի թռիչքային յեղանակը դարձնել վոչ թռիչքային և ընդհակառակը: Հարկ կլինի թռչել, այսպես ասած, վոչ թռիչքային յեղանակին, վորպեսզի կարելի լինի աննկատելի մոտենալ թշնամուն և նրան հանկարծակիի բերել»:

Առաջին թռիչքն բաց մարշրուտի Սպիրինը կատարեց 1925 թվին Մոսկվայից դեպի Կոլոմնա: Անցել եր միայն տասներկու տարի և նույն Իվան Տիմոֆեյևիչը վորպես փլագշտուրման ճանապարհ բացեց սավառնակների մի ամբողջ եսկադրիլիայի համար, վորոնք Մոսկվայից մեկնում եյին Հյուսիսային բևեռ, և ոդաչու Վոդոպյանովի հետ առաջինն իջավ բևեռում, վորին մարդիկ այնքան համառորեն ձգտել են բազմաթիվ դարերի ընթացքում: Վորպիսի վիթխարի ճանապարհ է անցել այդ մարդը կարճ ժամանակամիջոցում: Սակայն, վորպեսզի մարդկության դարավոր բաղձանքը հնարավոր լիներ իրականացնել, Սպիրինն այդ տարիների ընթացքում համառորեն աշխատում եր, աշխատում եր այնպես, ինչպես պետք է աշխատի բոլշևիկը, ժողովրդի զավակը, Լենինի—Ստալինի կուսակցության դաստիարակած մարդը: 1927 թվին նա մասնակցում է խորհրդային ոդաչուների յեվրոպական մեծ թռիչքին, 1929 թվին հեռավորության միութենական ռեկորդ է խփում: Մի տարի հետո նա նորից մի շարք միութենական խոշոր ռեկորդներ է սահմանում, իսկ եվ մի տարի անց, 1931 թվին մասնակցում է արևելյան մեծ թռիչքին՝ Մոսկվա—Սևաստոպոլ—Անկարա—Թեհրան—Քաբուլ—Տաշքենդ—Մոսկվա մարշրուտով: 1934 թվին մենք Սպիրինին հանդիպում ենք ոդաչու Գրոմովի ռեկորդային թռիչքի մասնակիցների մեջ: Նրանք 75 ժամ անընդհատ թռչում եյին և անվայրեջք անցան 12,411 կիլոմետր:

Իվան Տիմոֆեյևիչն օժտված է վոչ միայն արտակարգ աշխատունակությամբ, այլև բոլշևիկյան հատուկ հատկություններով—յերբեք կանգ չառնել ձեռք բերածի վրա, չհանգստանալ, այլ բացել, նվաճել, կատարելագործել:

Սպիրինի ղեկավարությամբ յես սովորեցի ոդագնացության բոլոր սարքերի ներքին մեխանիկան: Մինչ այդ յես գիտեյի միայն սարքերի դերը, կարողանում եյի գործ ածել նրանք, հաշվումների արագության վարժություններ եյի անում: Բայց այժմ, գիտա-հետազոտական ինստիտուտում, իմ առաջ բացվեց ոդագնացության տեխնիկայի ներքին եյությունը: Յես հասկացա, թե ինչ է նշանակում ջերմաստիճանի ազդեցությունը մետաղների վրա, վորոնցից շինված են մեր սարքերը, հասկացա, թե ինչ են նշանակում մնացորդային և լծացման յերևույթները: Այստեղ, ինստիտուտում, յես վերջնականապես պարզեցի աստղաբաշխական կողմնորոշման ինձ համար մինչ այդ բոլոր անհասկանալի հարցերը:

Սպիրինին եմ պարտական այն բացառիկ ուշադրության համար, վոր կար իմ նկատմամբ ինստիտուտում: Դեպք չի յեղել, վոր յես այստեղ սպառիչ ու ամենամանրամասն պատասխան չստանամ այն հարցերին, վորոնք հուզում եյին յերիտասարդ սկսնակ շտուրմանին: Իսկ հարցեր շատ եյին կուտակվում: Յես հաստատ գիտեմ, վոր մինչև հիմա էլ Իվան Տիմոֆեյևիչը միշտ դժվարին պահերին ոգնության կգա, կոգնի իր խորհրդով,

ցույց տա և ամեն ինչ պարզ կդառնա: Նա այդ կանի այնքան հանգամանորեն և հասկանալի, վոր դրանից հետո այլևս վոչ մի կասկած չի մնա:

Սկզբից յես շատ բան սովորեցի: Հասկացա, թե թռիչքային աշխատանքի համար ինչպիսի բացառիկ նշանակություն ունի շտուրմանի աշխատանքի տեղը, հասկացա, թե ինչ է նշանակում շտուրմանի նախաձեռնությունը թռիչքի ժամանակ, վերջապես տեսա, վոր իմ շտուրմանական կրթության մեջ լուրջ պակասություն կա, յես ուղղի գիտելիքներ չգիտեյի: Իսկ այն ժամանակ ռադիոտեխնիկան ոդագնացության մեջ արդեն լուրջ տեղ եր գրավել: Այդ տարիների ընթացքում իմ ձեռք բերած գիտելիքները գիտահետազոտական ինստիտուտում աշխատելուց հետո այնքան եյին ամրապնդվել, վոր իմ շրջապատն այդ նկատում եր: Այն ժամանակ ինձ հանձնարարվեց ինքնուրույն պատասխանատու շտուրմանական մի խնդիր՝ Սև ծովի վրա:

ՓՈԹՈՐԻԿԸ

1933 թվի աշնանը նախատեսվում եր մի նոր մարդատար հիդրոավիացիոն գիծ՝ Ոդեսա—Բաթումի: Կանոնավոր մարդատար հաղորդակցություն սկսելուց առաջ հարկավոր եր այդ գիծը մշակել, այսինքն ուսումնասիրել թռիչքի բոլոր պայմանները, ընտրել ու նկարագրել այն վայրերը, վորտեղ սավառնակը կարող է իջնել, աերոնավահանգիստների ու աերոկայանների համար ընտրել ամենահարմար կետերը: Հատուկ եքսպեդիցիա ուղարկվեց Սև ծով: Ցամաքային խմբերը հետազոտում եյին ծովափերը՝ իրար հանդեպ շարժվելով: Ոդային եքսպեդիցիան ցամաքայիններին ցույց եր տալիս այն վայրերը, վորտեղ պետք է կատարվեյին ակվատորիաների (ապագա հիդրոաերոնավահանգիստների ջրային ավազանների) խորության չափումները:

Այդ մի մեծ եքսպեդիցիա յեր: Նրա մեջ աշխատում եյին յերկրաբաշխներ, հիդրոգրաֆներ, յերկրաբաններ, հիդրոյերկրաբաններ, ֆոտոաշխատողներ, քարտեզագետներ, գծագրողներ, ինժեներներ, շինարար բանվորներ: Սավառնակներն ու թռչող կազմը եքսպեդիցիայի մեջ եր մտել տեղական ավիացիայից: Ոդաչուները փոփոխվում եյին, միայն շտուրմանն եր մշտական: Շտուրմանի պարտականություններն ինձ վրա յեր դրված: Իմ պարտականությունն եր սավառնակից լուսանկարումներ անել: Բացի այդ, բազա վերադառնալուց հետո յես պետք է թռիչքի ժամանակ հետազոտած ուղեգծի մասերի մանրամասն նկարագրությունը կազմեյի:

Խաղաղ յեղանակին ծովի վրայով թռչելը մեծ բավականություն է: Յերկինքն անամպ է, ոդը՝ մաքուր ու թափանցիկ, արեգակը լուսավորում է պայծառ: Ցածր, սավառնակի տակ տարածված է լինում ծովի ու ծովափի հոյակապ պանորաման: Մենք թռչում եյինք ափի յերկարությամբ, կողմնորոշումն առանձին դժվարություն չեր հանդիսանում: Ամեն ինչ սքանչելի կանցներ, յեթե յեղանակը չդավաճաներ մեզ: Հաճախ ծովում այնպիսի փոթորիկ եր լինում, վոր շոգենավերը չեյին կարողանում նավահանգիստ մտնել: Մի կերպ նավահանգիստներում ամրացած շոգենավերն այնպիսի տեսք եյին ունենում, վոր կարծես հենց նոր եյին վերադարձել Հյուսիսային բևեռից: Նավակները ծածկվում եյին սառցի հաստ կեղևով, պարաններից կախվում եյին սառցալուլաներ, տախտակամածները դառնում եյին սառցի սահարաններ: Այդպիսի որերին սավառնակն ոդում այնպես եր ճոճվում, վոր մարդիկ դժվարությամբ եյին իրենց տեղը մնում: Մենք առանձնապես նեղն ընկանք Նովոռոսիյսկի մոտ: Մի անգամ մենք Սևաստոպոլի ծովախորշից թռանք, յերբ յերկինքը մաքուր եր ու անամպ: Թռչում եյինք խաղաղ, յուրաքանչյուրն իր գործն եր անում: Յեվ հանկարծ, Նովոռոսիյսկի մոտ բոլորովին անսպասելի կերպով մեքենան ցած նետվեց: Յես նայեցի բարձրաչափին: Ընդամենը մեկ րոպեյում սավառնակը համարյա 200 մետր ցած եր իջել: Քամին գզգզում և դես ու դեն եր նետում մեր նավը, վոր մինչ այդ այնքան հզոր ու անսասան եր թվում: Կյանքումս առաջին անգամ յես տեսնում եյի ոդային «ճոճանակ»: Այդ «բորան» եր փչում, ուժեղ, դաժան, ընդհատ-ընդհատ պաղ քամին, վոր լավ ծանոթ է սև-ծովայիններին, մանավանդ Նովոռոսիյսկի բնակիչներին: Յես նրա գոյության մասին գիտեյի միայն լսածս պատմություններից: Սովորաբար «բորանը» վիթխարի ուժով վրա յէ տալիս լեռնային բարձրու-

թյուններից։ Յերբ լեռներն անմիջականորեն սահմանակցվում են ծովի հետ, քամին առանձնապես ուժեղ ե լինում։ Նովոռոսիյսկի ծովախորշը հենց շրջապատված ե լեռներով։ Այդ լեռների վրայով անցնելով՝ քամին հասնում ե վիթխարի ուժի, յերբեմն վայրկյանում 30 մետրի։ Նա մարդկանց ե վայր գցում, շենքեր ե քանդում, յերկաթուղային վագոններ ե շուռ տալիս։ Ծովում ուժեղ ալեկոծություն ե սկսվում։ Ոդը լցվում ե ջրային փոշով։

Ոդաչու Անատոլի Շեմյակինը, վոր մեր սավառնակն եր վարում, ինձ հայտնեց հետևյալ յերկյուղը. «բորան քամի յե փչում, հարկավոր ե ցած իջնել»։

Բայց վորտե՞ղ իջնել։ Վերադառնալ Նովոռոսի՞յսկ, վորտեղից այդ անիծյալ քամին եր փչում։ Ծովն այնպես ե մոլեգնել, վոր կարող ե շուռ տալ նույնիսկ ծովային շոգենավը։ Նովոռոսիյսկի ծովախորշում իջնելու մասին մտածել անգամ չեր կարելի։ Հեռու Նովոռոսիյսկից։ Վայրեջքի միակ հարմար վայրն եր թվում Գելենջիկի ծովախորշը։ Թեև այստեղ ել փոթորիկ եր, բայց մեծ ընտրություն չեր մնում։ Լավ կլիներ, իհարկե, հասնել մինչև Փոթի կամ Սուխումի, բայց այդպիսի տարածություն անցնելու համար մեր վառելանյութն ել չեր բավականացնի։ Այսուամենայնիվ Շեմյակինին հաջողվեց մեքենան հաջողությամբ իջեցնել Գելենջիկի ծովախորշում։ Ի զարմանս մեզ՝ վոչ վոք կատերով մեզ դիմավորելու չեկավ, ինչպես արվում ե հիդրոսավառնակի վայրեջքի ժամանակ։ Ալիքները սկսեցին մեքենան քշել ծովի խորքը։ Մենք մեծ ջանքեր եյինք գործադրում սավառնակը պահելու համար։ Վերջապես մի կատեր մոտեցավ, մեզ բուքսիրի վերցրեց և ոգնեց սավառնակն ամրացնել ծովախորշում խարիսխի ու յերկու խաչմերուկ կապի ոգնությամբ։

Գելենջիկում նորդ-ոստ քամին եր մոլեգնում։ Դա այնպիսի ուժեղ քամի յեր, վոր ափի փայտաշեն տները քանդում եր։ Փողոցով գլորվում եր աֆիշաների բուդկան, վոր պոկել եր քամին։ Մենք մի կերպ սողալով հասանք բազա։ Սավառնակի մոտ հերթապահություն սահմանեցինք։

Յերեք որ քամին մոլեգնում եր։ Անելիք չկար, տխուր եր։ Մենք հնուց ի վեր այդտեղ ապրողների հետ ծանոթացանք և սկսեցինք հարց ու փորձ անել այդ վայրերի յեղանակի ռեժիմի

մասին։ Փորձված դելֆինորսները պատմում եյին, վոր սովորաբար այստեղ փոթորիկը վորոշ ժամանակամիջոցներում ե տեղի ունենում։ Յերբեմն տևում ե յերեք որ, յերբեմն՝ վեց, բայց պատահում ե նաև ինը, տասներկու որ։ Սակայն յերբ փոթորիկը ժամանակավորապես խաղաղվում ե, դադարներ ել են լինում։ Ի՞նչ կլինի, յեթե մենք ոգտվենք այդ դադարներից և փորձենք հեռանալ։ Բաթումում հիանալի յեղանակ եր։ Ընդամենը մի յերեք ժամից հետո մենք կարող եյինք այնտեղ լինել։

Յեվ իրոք, քամին շուտով մեղմացավ։ Մենք վորոշեցինք ոգտվել դադարից և սավառնակի բաքերը վառելանյութ լցնել։ Բաքերում վեց տակառ վառելանյութ եր տեղավորվում։ Ափում մենք խառնուրդ պատրաստեցինք, բարձեցինք մի նավակի և նավեցինք դեպի մեր սավառնակը։ Մեզ հաջողվեց հինգ տակառի վառելանյութը բարեհաջող կերպով լցնել բաքերը, մնում եր վերջին, վեցերորդ տակառը։ Բայց այդ ժամանակ տեսանք, թե ինչպես լեռներից սկսում ե արագորեն ցած սահել ամպերի խիտ շարքը։ Այդ նշանակում եր, վոր նորդ-ոստը մոտենում ե։ Մի քանի րոպեյից հետո ծովում նորից ուժեղ ալեկոծություն սկըսվեց։ Մենք արագորեն կտրեցինք նավակն ինքնաթիռին միացնող խողովակը։ Բենզինի մնացորդը ջուրը թափվեց։ Բաց թողնըված սավառնակը ծավալվեց քամու առաջ, իսկ մենք շտապեցինք դեպի ափ։ Դուրս յեկավ, վոր ափին մոտենալն անհնարին ե։ Քամին սպառնում եր փշրել մեր նավակը խփելով նավամատույցին։ Մենք նավամատույցից յերկու մետր եյինք հեռու։ Մնում եր միայն ցատկել։ Ոդաչուներն առանց դժվարության արագորեն ցատկեցին մեզ բաժանող ջրի վրայով։ Նավակում մնացել եյինք միայն նավի հրամանատարը և յես։ Հրամանատարը գոռում ե. «ցատկեցեք»։ Յես զգում եմ, վոր ինձ համար դժվար չե այդպիսի վարժություն կատարել, բայց շրջազգեստս կաշկանդում ե վոտքերս ու խանգարում։ Ափին մեծ բազմություն ե հավաքվել։ Բոլորը կարեկցությամբ հետևում են մեզ և, ինչպես միշտ լինում ե նման դեպքերում, լավ խորհուրդներ են տալիս։ Յես ինքըս ինձ մտածում եմ. «Ապա մի ինքներդ փորձեցեք ցատկել այսպիսի շրջազգեստով»։ Բայց մտածելու ժամանակը չեր։ Շըրջազգեստս վեր քաշելով և ամենևին չմտածելով, թե այդ ինչպես

կերևա ուրիշներին, յես ցավում եմ: Իմ թռիչքային գործունեության ընթացքում այդ րոպեներին առաջին անգամ յես զգացի կանացի հագուստի անհարմարությունը: Դրանից հետո յես աշխատանքի ժամանակ յերբեք շրջազգեստ չեմ հագնում:

Այդ աշնանը ծովափը հետազոտելով՝ մենք թռանք Ղրիմի բոլոր կողմերը, Կովկասյան ափերը, Ազովի ծովը: Հետազոտեցինք Ղրիմի Թերակղզու հյուսիսային մասը, անցանք նրա արևմտյան ծայրը և այդտեղից թռանք Սևաստոպոլ: Այն ժամանակվա համար դա բարդ թռիչք եր համարվում: Յերբ մենք Սևաստոպոլի ծովախորշում իջնում եյինք, ծովափին մեզ դիմավորում եր ամբողջ հրամանատարությունը:

Այսպես յես ձեռք բերի ծովերի վրայով թռչելու իմ առաջին փորձը:

Յես հասկացա, վոր այդ շատ ավելի բարդ է, քան ցամաքային սավառնակով թռչելը: Յերիտասարդ շտուրմանի համար դա հիանալի դպրոց եր: Մենք սովորված եյինք լինում ամենատարբեր յեղանակներին յոթական ժամ անվայրեջք թռիչք կատարել: Պարզ եր դառնում, վոր, յերբ այդպիսի պայմաններում օրգանիզմս դիմանում է թռիչքներին, ապա ցամաքի վրայով ավելի լավ կարող եմ թռչել: Հիշում եմ, յերբ մենք Գելենջիկից պիտի թռչեյինք, մի պառավ կին մեզ համար մի ամբողջ թաս կարկանդակ բերեց կաղամբով պատրաստած: Ամբողջ ճանապարհին մենք կարկանդակ ու մանդարին եյինք ուտում: Դեռ մի կարկանդակը կուլ չտված՝ թիկունքիս կողմից մեկնվում եր բորտ տեխնիկի ձեռքը մի նոր կարկանդակով: Ուրախ եր սավառնակում: Միակ անհարմարությունը հագուստն ու վոտնամանն եր: Ոդաչու Շեմյակինը նախազգուշացրեց.

— Տեսեք, դուք ձեր քաղաքային կոշիկով կսառեք, ավելի լավ է թաղիքե վոտնաման հագեք:

Յես անուշադրության մատնեցի փորձված ոդաչուի խորհուրդը: Ոդում շատ շուտով վոտքերս սկսեցին սառել: Նայում եմ՝ բորտ տեխնիկն ինձ է մեկնում սկզբում մեկ վոտնամանը, ապա մյուսը և մի գրություն. «Նավի հրամանատարը խնդրել է ձեզ հանձնել»...

Յես չսառեցի, հագա թաղիքե վոտնամանները և վոտքերս

փրկվեցին: Դրանից հետո յես հասկացա, թե ոդաչուի համար ինչ է նշանակում թռիչքի համար կանոնավոր հագնվել:

Յերբ յես Մոսկվա վերադարձա, Բելյակովն ինձ առաջարկեց Ռազմա-ոդային Ակադեմիայի շտուրմանական ամբիոնում մանրամասն զեկուցում տալ Սև ծովում կատարած իմ աշխատանքի մասին: Զեկուցումս լսելով՝ Բելյակովն ասաց.

— Դե, ընկեր Ռասկովա, այժմ միայն մնում է ձևակերպել ձեզ վորպես շտուրման:

Բելյակովի խոսքը յերբեք չի անջատվում գործից: Ինձ թույլատրեցին եքստերն քննություն տալ շտուրմանի կոչման համար և ինձ տվին այդ կոչումը: Յես նշանակվեցի նույն ոդագնացության լաբորատորիայի հրահանգիչ-ոդաչուի պաշտոնում.

ՈԴԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ

Շտուրմանական կադրերը դեռ նոր եյին ստեղծվում: Վերապատրաստման համար Ակադեմիա եյին գալիս պիլոտներ և դիտող-ոդաչուներ: Նրանք ԲԳԿԲ հրամանատարի կոչում եյին ունենում: Մի անգամ պահեստից վերապատրաստման յեկան հին հրամանատարներ: Նրանցից հատուկ խմբակ կազմվեց: Յես այդ խմբակի դասատու նշանակվեցի: Յերբ հրամանատարները դասացուցակում կարդացել եյին «Շտուրմանական գործ, դասատու Ռասկովա», մտածել եյին, թե այդ վրիպակ է, հավանորեն «Ռասկով»-ի փոխարեն գրել են «Ռասկովա»: Ծիծաղել էլ եյին:

Բայց ահա, յեկավ պարապմունքների առաջին որը: Ռազմաուսումնական հաստատություններում սովորաբար, յերբ դասատուն ներս է մտնում, դասակի հերթապահը «զգաստ» հրաման է տալիս, ունկնդիրները վոտքի յեն կանգնում և դասատուն զեկուցում է ընդունում: Բայց վորքան մեծ յեղավ իմ զարմանքը, յերբ յես դասարան մտա և հրամանը չլսեցի: Ունկնդիրները շարունակում եյին նստած մնալ իրենց տեղերում: Վոչ վոք զեկուցում չտվեց: Թեև իմ առջև հին հրամանատարներ եյին, սակայն չեր կարելի հենց սկզբից կարգապահության խախտում թույլ տալ:

— Ո՞վ է դասակի հրամանատարը,—հարցրի ես։

Հրամանատարը դուրս եկավ։

—Ընկեր հրամանատար, ինչո՞ւ չեք զեկուցում։

Նա բավական դժվարությամբ ու ծուլորեն հրաման տվեց։ Հրամանատարները ևս դժվարությամբ յենթարկվեցին։ Ապա ինձ զեկուցում տվեց և պարապմունքներն սկսեցինք։

Ունկնդիրներն զգուշությամբ, բայց բացահայտ հետաքրքրությամբ ինձ էյին նայում։ Կին շտուրմա՞ն, այն էլ Ակադեմիայի դասատու—այդ արտասովոր բան էր։ Նորմալ հարաբերությունները միանգամից չստեղծվեցին։ Սկզբում իմ դեմ բողոքարկեցին ֆակուլտետի պետին. հրամանատարներին տարօրինակ էր թվում, որ նրանք պետք է «զգաստ» կանգնեն մի կնոջ առաջ։

Ֆակուլտետի պետը հայտարարեց, թե Ռասկովան իրավացի է, յերբ պահանջում է զինվորական դիսցիպլինա պահպանել։ Հրամանատարներն զգուշացան։ Յերբեմն նրանցից մեկը փորձում էր ինձ «բռնել» խրթին ու բարդ հարցեր տալով։ Բայց դրան շատ շուտով վերջ տվեց։ Վերջում մի հետաքրքրական ու սրտաշարժ միջադեպ տեղի ունեցավ։ Խմբային պարապելուց առաջ յես ունկնդիրներին ստուգողական աշխատանքն էյի բաժանում։ Յերբ բոլորն իրենց աշխատանքն ստացան և յես արդեն պատրաստվում էյի լսարանից հեռանալ, հանկարծ դասակի հրամանատարը դիմեց ինձ.

— Ընկեր Ռասկովա, իմ աշխատանքը չվերադարձրիք։

Յես սկսեցի փնտրել։ Իսկապես, նրա աշխատանքը չկար։

— Սպասեցեք, հիմա լաբորատորիայում կնայեմ։ Հավանորեն ձեր աշխատանքն այնտեղ եմ թողել։

Այս ասելով յես լսարանից դուրս յեկա։ Յերբ վերադարձա, ինձ համար պարզվեց, որ ինձ հետ կատակ են արել։ Աշխատանքն իր տեղն էր. իմ ունկնդիրներին հարկավոր էր յեղել միայն, որ յես մեկ րոպեով դուրս գայի։ Դեռ հազիվ էյի ներս մտել, յերբ հնչեց բարձր հրամանը. «վոտքի՛, զգա՛ստ»։ Դասակի հրամանատարը մոտեցավ ինձ մի ահագին ծաղկեփունջ ձեռքին և ճառ արտասանեց։ Յես լավ հիշում եմ նրա խոսքերը.

«Մենք կցանկանայինք, որ բոլոր օդաչուները մեզ պես համոզվեյին, որ կանայք մեր յերկրում կարող են լինել տղամարդուց վոչ պակաս օդաչուներ...»։

Ակադեմիայում դասավանդելն ինձ ոգնեց կատարելագործվելու ավիանավարության տեխնիկայի ու տեսության մեջ։ Ուրիշներին սովորեցնելով յես ինքս էլ անդադար շարունակում էյի սովորել ու վարժվել և տեսնում էյի, որ ոդանավագնացության գիտության մեջ, ինչպես և բոլոր մյուս գիտություններում, կատարելագործմանը սահման չկա։ Յեթե մարդ սովորել է յերեք րոպեյում սեկստանտի ոգնությամբ վորոշել սավառնակի տեղը, նա պետք է ձգտի, որ այդ բանը կարողանա անել յերկու րոպեյում։ Յեթե նա կարողանում է աստղաբաշխական դիտողություններ կատարել մինչև 10 կիլոմետր ճշտությամբ, նա պետք է ձգտի ե՛լ ավելի մեծ ճշտության։

Լաբորատորիան ավելի ու ավելի յեր հարստանում նորագույն սարքերով ու հարմարություններով։ Ստիպված էյինք լինում շատ բան հնարել կամ պատրաստել ինքներս, մեր միջոցներով։ Լսարաններում դրված էյին տրենաժերները— շտուրմանների վերերկրյա վարժությունների հարմարություններ։ Ունկնդիրները տրենաժերներում տեղավորվում էյին ինչպես սավառնակներում, այստեղ նրանց առաջ էյին լինում նույն սարքերը, ինչ լինում են թռիչքի ժամանակ, իսկ հատակին ու պատերին լինում էր վայրի շարժվող պանորաման։ Մոտորների ոգնությամբ պանորաման շարժման մեջ էր դրվում, վարժություն անողի համար թռիչքի տպավորություն էր ստեղծվում։

Այսպիսի վիճակում ունկնդիրները ոդանավագնացության զանազան խնդիրներ էյին լուծում։ Խնդիրներ կազմելն իմ սիրած գործն էր։ Յուրաքանչյուր խնդիր յես պետք է նախորոք լուծեյի։ Այդպիսով դասավանդումն ամենևին չէր խանգարում շտուրմանի վարժություններին։ Ունկնդիրների հետ միասին յես հափշտակվում էյի, այսպես կոչված, թռիչքների տանուլ տալով։ Այդ այսպես էր արվում։ Ունկնդիրները նստած էյին դասարանում, նրանց առջև սեղաններին դրված էին քարտեզներ, սավառնակի մատյաններ և բոլոր հարկավոր սարքերը՝ հողմաչափեր, ոդանավագնացության քանոններ, ուղղումների գրաֆիկաներ։ Հրահանգչի առաջադրությամբ ունկնդիրները պետք է կա-

տարեն այն բոլոր հաշիվները, որ շտուրմանը պետք ե կատարի ոդում: Ունկնդիրները խնդիրը լուծում են, իսկ այդ ժամանակ հրահանգիչը ցանկացած կողմնակի տվյալներ ե տալիս, բարդացնում ե թռիչքը, փոխում ե պայմանները: Հանկարծ անսպասելի կերպով հաղորդում եմ.

— Քամին փոխվեց: Զուգընթաց քամու փոխարեն այժմ հանդիպական քամի յե:

Կամ՝

— Ձեր սավառնակն ընկավ համատարած ամպամածության մեջ:

— Ռադիոփարոսը չի աշխատում:

— Դուք հարկադրված եք փոթորկային ճակատը շրջանցել:

Ունկնդիրները պետք ե արագորեն դրությունից դուրս գալու ելքը գտնեն, ուղղությունը փոխեն, նորից հաշիվներ անեն իրենց սարքերով:

Այդպիսի վարժությունը (ի հարկե, առաջուց փորձած ծրագրով) շտուրմանին սովորեցնում ե իր հաշիվները կատարել համարյա ավտոմատիկ կերպով: Վարժություն անողը սովորում ե արագորեն գործ ունենալ իր հաշվիչ սարքերի հետ:

Երբեմն այսպիսի խաղի ժամանակ ունկնդիրը «կողմնորոշման կորուստ» յե հասնում և պետք ե ինքը վերականգնի այն, որոշի իր տեղը և սավառնակի ուղղությունը դեպի նպատակակետը: Այսպիսի վարժություններ կատարվում եյին մեկ սավառնակով, ապա ամբողջ եսկադրիլիայով, հետո խոշոր միավորումներով:

Ամառը պարապմունքները փոխադրվում եյին աերոդրոմ, ճամբարները: Այստեղ իմ ունկնդիրների հետ թռչելով՝ ես նրանց ոգնում եյի ոդում յուրացնել նույն սարքերը, որոնցով մենք աշխատել եյինք ձմեռը լաբորատորիայում:

Առանձնապես շատ թռիչքներ գործեցինք 1934 թվի ամառը: Բելյակովը Մոսկվա—Փարիզ—Վարշավա մարշրուտով իր թռիչքից առաջ յեկավ ճամբարները և ինձ ասաց.

— Յես թռչելու յեմ: Դուք սովորած պիտի լինեք ամբողջովին ձեզ վրա վերցնել իմ բաժանմունքներում դասավանդելը:

Բելյակովը բարձր հրամանատարական կազմի հետ եր պարապում: Ինձ թվում եր, թե դժվար ե լինելու գլուխ հանել այդպիսի պատասխանատու աշխատանքից: Բայց Բելյակովը պնդում եր.

— Կկարողանաք: Յեթե դժվար լինի, ֆակուլտետի պետը ձեզ կոգնի:

Նա ինձ հանձնեց կանոնավոր գրի առած տետրակները, վորոնցով կարելի յեր տառացիորեն ըստ որերի հետևել այն աշխատանքին, որ ունկնդիրները կատարել եյին պարապմունքների ժամանակ: Յուրաքանչյուր բաժանմունքի համար Բելյակովն առանձին տետրակ եր սարքել: Ինձ համար, որ լայնատարած ձեռագիր ունեյի, նույնիսկ սարսափելի յեր ձեռնամուխ լինել Բելյակովի տետրակներին: Յես աշխատում եյի ընդորինակել նրան, ամեն ինչ գրի առնել նույնպիսի պարզ ու մանր ձեռագրերով, ինչպես նա յեր անում: Դրանից բան չեր դուրս գալիս: Բայց նույնիսկ այդպիսի մանրունքը շտուրմանին անհրաժեշտ վարժություն եր տալիս:

Ամառային պրակտիկան հաջող անցավ: Բոլոր ունկնդիրները «գերազանց» եյին թռչում և լուծում ոդագնացության ու տակտիկական խնդիրները: Բացի Բելյակովի դասակներից, յես պարապում եյի նաև իմ դասակների հետ: Շատ եյի թռչում և՛ ծանր, և՛ թեթև սավառնակներով: Թռչում եյի որպես «միջնորդ» ուսուցումների ժամանակ: Վարժական տակտիկական պարապմունքների ժամանակ «միջնորդ»-ը սովորաբար թռչում ե եսկադրիլիայի կողքից, նշում ե ունկնդիրների, եսկադրիլիայի կամ ջոկատի հրամանատարի դեր կատարողների բոլոր գործողությունները, ինչպես և շտուրմանների գործողությունները: Յեթե լինում են սխալ լուծումներ, որոնք թռիչքի անվտանգությանն են սպառնում, «միջնորդը» եսկադրիլիայի հրամանատարությունն իր վրա յե առնում և եսկադրիլյան տանում ե աերոդրոմ:

Թռիչքից հետո մենք հավաքվում եյինք աերոդրոմի ծայրին, անտառի յեզրին և թռիչքի փորձնական վերլուծություն եյինք կատարում: Յուրաքանչյուր թռիչքային որ այդպես եր վերջանում: Այդ ամառ ինձ վիճակվեց շտուրմանական գործը սովո-

բեցնել ավիամիավորումների հրամանատարների, նրանց հետ աշխատանք կատարել՝ սկսած թռիչքին նախապատրաստվելուց մինչև տակտիկական խնդրի կատարումը:

Յերիտասարդ շտուրմանի համար շատ հաճելի յեր, յերբ Բելյակովը յեվրոպական թռիչքից վերադառնալով հիանալի գնահատական ավեց ունկնդիրների աշխատանքին:

«ԲԵԶԱՆԻՑ ՈԴԱԶՈՒ ԴՈՒՐՍ ԿԳԱ»

Վրա հասավ 1934 թվի աշունը: Սովորական պարապմունքներն սկսվեցին: Իսկ ինձ մի մեծ ուրախություն եր սպասում. Մի անգամ Բելյակովն ինձ կանչում և ասում է.

— Մենք վորոշել ենք լավ աշխատանքի համար ձեզ պարգևատրել վորևէ բանով, բայց չգիտենք ինչով: Ի՞նչ կուզեյիք դուք ինքներդ:

Այդ հարցն ինձ շփոթեց: Բելյակովը խորամանկ հայացքով նայում է իր աշակերտուհուն:

Այդ դեպքում այ թե ինչ կասեմ,— ասաց նա,— յես ձեզ մի փոքր ճանաչում եմ, թույլ տվեք, վոր յես ինքս հրամանատարությանն առաջարկեմ, թե ինչով պարգևատրել ձեզ:

Վորոշ ժամանակից հետո նա ինձ ասում է.

— Ակադեմիայի պետը ձեզ կանչում է: Գնացեք նրա կաբինետը:

Այստեղ ինձ նորից տվեց նույն հարցը. ի՞նչ պարգև եմ ուզում յես:

Յես պատասխանեցի, թե ինձ առանձնապես վորևէ բան հարկավոր չէ: Հրամանատարությունն ինչ վոր անհրաժեշտ համարի, այն էլ լավ է:

Բայց, ինչպես յերևում է, Բելյակովն արդեն ամեն ինչի մասին համաձայնության եր յեկել: Յես այնպիսի պարգև ստացա, վորի մասին յերազել անգամ չեյի համարձակվի: Վորոշել եյին ինձ Ակադեմիայի հաշվին թռիչքային գործը սովորեցնել: Իմ ուրախությունն անսահման եր:

Սկսվեց մի նոր հետաքրքիր կյանք, հրապուրիչ ուսում: Ճիշտ է, ամեն ինչ միանգամից հարթ չգնաց: Յերբ յես ներ-

կայացա Տուշինո, Կենտրոնական աերոակումբ, թռիչքային մասի պետն ու հրահանգիչը փակուղու մեջ ընկան: Նրանց առաջ կանգնած եր մի շտուրման, վորը բավական լավ գիտեր շատ տեսական առարկաներ, վորոնք օդաչուն պետք է գիտենա: Վո՞ր խմբակում տեղավորել ինձ, վորպեսզի յես ավելորդ ժամանակ չկորցնեմ: Մտածեցին, մտածեցին և վորոշեցին, վոր յես աերոակումբում տեսությամբ չեմ զբաղվելու, վոր ինձ մնում է միայն գործնականորեն յուրացնել թռիչքային արվեստը: Ինձ տեղավորեցին աերոակումբում վերապատրաստվող օդաչուների խմբակում: Հրահանգիչն օդաչու Գեպներն եր, վոր մի տիպիկ «արշավորդ» եր: Օդաչուական շրջաններում Գեպների մեծ համարձակությունն արդեն հայտնի յեր: Սկզբնական շրջանում նա բավական անուշադիր եր վերաբերվում ինձ հետ:

— Ավելի շատ ուշադրություն,— ասում եյի ինքս ինձ և չեյի նեղանում, վոր ինձ, ասենք թե, որական միայն մեկ թռիչք եյին թույլատրում, մինչդեռ մյուս օդաչուներն որական վեց–յոթ անգամ եյին թռչում: Դրա փոխարեն յերբ բանը հասնում եր մեքենան մաքրելուն, յես աշխատում եյի բոլորին հավասար, յեթե վոչ ավելի մյուսներից: Հնարավոր է, վոր այդ արվում եր դիտավորյալ կերպով, ստուգելու համար իմ ուշադրությունն ու համառությունը. գուցե թե, մտածում եյին, նրան կձանձրացնի ու նա կթողնի կգնա...

Բայց ինձ չեր ձանձրացնում: Յես նկատելի բավականությամբ կատարում եյի այն ամենը, ինչ վոր ինձ հանձնարարվում եր: Հրահանգիչը տեսնում եր, վոր իր աշակերտուհին վոչ մի «ծնչում» չի գցում, շրջում է ուրախ, կայտառ, միշտ կանոնավոր ներկայանում է պարապմունքներին: Բացի այդ, նա իմացավ, վոր յես արդեն բավականաչափ թռիչքներ եմ ունեցել, վոր վորպես շտուրման մասնակցել եմ բավական խոշոր թռիչքների:

Այնուամենայնիվ նա վորոշեց ինձ փորձել ըստ իր ձևի: Ձմեռն եր: Անհրաժեշտ եր սավառնակը թռիչքային դաշտից տեղափոխել անգար: Բավական թանձր մառախուղ եր, թռչել չեր կարելի, պետք է սավառնակը գետնի վրայով տանել դեպի անգար: Գեպներն ինքը նստում է սավառնակի մեջ, իր հետ վերցնում է մի տեխնիկ և ինձ ասում է.

— Պետք է ուղեկցես սայլակին, բանես հարթ տեղից...

Ես սայլակի հետ վազում էի վորքան ուժս պատում էր: Հետ չէի մնում, թեպետ և դժվար է յերկար վազել խոր ձյունի միջով, թռիչքային հագուստով: Գեպները սայլակից ինձ ձայն տվեց.

— Կանգնիր դահուկի վրա, ինչու յես վազում:

Ես կանգնեցի դահուկի վրա: Բռնել եմ չեղակից, սայլակն առաջ է սլանում, քամին շնչասպառ է անում: Իսկ Գեպները մեքենան ավելի ու ավելի արագ է քշում: Մեկ կորչում է դեմից, հետո նորից իջնում, ապա նորից ող բարձրանում: Այդպես մենք վորոշ ժամանակ ղեկը չուռ տվինք: Ես յերկու ձեռքով կառչել էի չեղակին և շարունակում էի դահուկի վրա կանգնած մնալ: Ուսուցման տեսակետից այդպիսի «վարժություն» վոչ մի կարևորություն չկար: Հրահանգիչը պարզապես ցանկացել էր այդպիսի արտասովոր յեղանակով ստուգել կին ոդաչուի դիմացկունությունն ու համարձակությունը: Յերբ վերջապես նա ղեկը չուռ տվեց դեպի անգար և կաբինից դուրս յեկավ, տեսավ, վոր այտերի փոխարեն իմ յերեսին յերկու խոշոր կլոր բծեր են: Այտերս ցրտահար եյին յեղել: Հրահանգիչն ինքն սկսեց ձյունով շփել այտերս և ասաց.

— Կեցցե՛ս, քեզանից ոդաչու դուրս կգա:

Դրանից հետո բեկում տեղի ունեցավ: Յերբ հրահանգիչները խմբային պիլոտաժի եյին դուրս գալիս, Գեպները յուրաքանչյուր թռիչքի ժամանակ ինձ վերցնում եր իր մեքենայի մեջ: Բացի այդ, ինձ թույլատրեցին ավարտողներից յուրաքանչյուրի հետ թռչել: Խմբակում բացի ինձանից վեց աշակերտ կար: Մի ժամանակ յես ամեն որ նրանցից յուրաքանչյուրի հետ թռչում եյի բոլոր թռիչքներին: Քիչ չեր պատահում, վոր առավոտից մինչև յերեկո սավառնակից դուրս չեյի գալիս: Որգանիզմս այնպես եր վարժվել թռիչքների, վոր յես նույնիսկ պիլոտաժի ամենաբարդ ձևերի ժամանակ վոչ մի անհարմարություն չեյի զգում: Որըստորե ինձ համար ավելի ու ավելի յեր հեշտանում ոդում:

Ես արդեն գիտեյի, վոր շատ կանայք են հասել ոդաչուի արվեստին, վոր նրանք ինքնուրույնաբար թռչում են: Արդեն

հայտնի եյին Վալենտինա Գրիզոդուբովայի, ոդաչու Կազարինովայի և շատ ուրիշների անունները: Աերոակումբում յես աղջիկ-հրահանգիչներ եյի տեսնում և հաստատ գիտեյի, վոր ինձ համար էլ ոդաչու դառնալը մատչելի գործ է:

Թռիչքներն ավելի հաճախակի ու ավելի հետաքրքրական եյին դառնում: Մեր խմբակի մեծ մասը, վոր բաղկացած եր վերապատրաստվող ոդաչուներից, արդեն աերոակումբից բաց եր թողնված: Խմբակում բացի ինձանից մնացել եյին յերկու հոգի՝ պարաշյուտային սպորտի հրահանգիչ Զաղումեննին և դիտող-ոդաչու Բողդանովը: Մեզ տվին մի ուրիշ հրահանգիչ՝ Գրոդզենսկուն: Նա Գեպների լիակատար հակապատկերն եր: Գեպները գործում եր բացառապես իր անձնական քաջությամբ, իսկ սա ամեն ինչ հաշվով եր կարգ ու կանոնով, մեթոդով: Թռիչքի ժամանակ յերբեք մի ավելորդ շարժում չի թույլ տա իրեն: Խստապահանջ, կայուն, դիսցիպլինար Գրոդզենսկին իսկույն ուշադրություն դարձրեց իմ վարժությունների վրա: Յես սկսեցի ավելի հաճախ թռչել: Քիչ ժամանակից հետո գնաց նաև Բողդանովը: Մնացինք միայն Զաղումեննին և յես: Անգարում մեքենան խնամելը դժվարացավ: Այն աշխատանքը, վոր սովորաբար յոթ մարդու վրա յեր բաժանվում, այժմ ընկած եր յերկուսիս վրա: Դրա փոխարեն կարելի յեր ավելի շատ թռչել, դրա համար էլ մենք ամենևին չեյինք վշտանում:

Աերոակումբում որն սկսվում եր առավոտյան ժամը հինգից: Ժամը տասին յես պետք է գնայի Ակադեմիա՝ պարապմունքի: Գարնանն ու ամռանն ուսուցումն աերոակումբում տեղի յեր ունենում առավոտյան 4-ից մինչև 9-ը և յերեկոյան 6-ից մինչև արևը մայր մտնելը: Ամառն իմ հարազատներն ամառանոց վարձեցին Տուշինոյից վոչ հեռու, վորպեսզի ինձ համար աերոակումբ գնալը մոտիկ լինի:

Յես ինձ հիանալի եյի զգում: Թարմ ոդին վազում եյի աերոդրոմ և տեղ եյի հասնում ուրախ ու կայտառ: Մեքենան դուրս եյի բերում և անմիջապես թռչում:

Այնպես պատահեց, վոր Զաղումեննին պարաշյուտով թռչելիս վնասվածք ստացավ և հիվանդանոցում պառկեց: Խմբակում յես մեն-մենակ մնացի: Մինչև ուսման վերջը շատ ժամա-

նակ չեր մնացել և մեքենան լիովին իմ տրամադրության տակ դրվեց:

Հիանալի սավառնակ եր: Թռիչքի ժամանակ շատ դիմացկուն եր և լավ կարգավորված: Յես սիրով եյի խնամում այն: Տեխնիկի հետ միասին յերկար ժամանակ մոտոր մաքրում եյի, ստուգում մինչև ամենամանր պտուտակները: Պատահում եր, վոր մթնում եր, բոլորը գնում եյին աերոդրոմից, իսկ մենք դեռ «շփում ենք» մեքենան, վորպեսզի նորի պես փայլի: Մեր այս հոգատարությանը մեքենան պատասխանում եր անտրտունջ հընազանդությամբ: Ուրիշ խմբակներում սովորող օդաչուները բավական տանջվում եյին, մինչև կարողանային մոտորը գործի գցել: Իսկ մեր մոտորն անմիջապես գործի յեր ընկնում և աշխատում եր անխափան:

Հասավ առաջին ինքնուրույն թռիչքի ժամանակը: Յես դրան ավելի շուտ եյի պատրաստվել, քան ինձ հետ միաժամանակ աերոակումբի մյուս խմբակները մտած ուրիշ սովորող-օդաչուները: Չե՞ վոր ինձ հաջողվել եր շատ ավելի թռիչքներ կատարել, քան նրանք: Սակայն առաջին ինքնուրույն թռիչքից առաջ պետք է կատարեյի յուրաքանչյուր սովորող-օդաչուի համար ստուգողական փորձերը: Աերոակումբի աշխատողներն ու ղեկավարներն ըստ իրենց եյին հասկանում այն պատասխանատվությունը, վոր նրանք կրում եյին յուրաքանչյուր բաց թողած օդաչուի համար և բոլորին մի մկրատով եյին խուզում: Սկսվեց բավական յերկարատև ու տաղտկալի ստուգումը: Ըսկըզբում ինձ հետ թռչում եր հրահանգիչը, հետո ջոկատի հրամանատարը, ապա էսկադրիլիայի հրամանատարը, վերջապես թռիչքային մասի պետը: Յերբ բոլորն էլ հերթով համոզվեցին, վոր յես թռչել կարողանում եմ, թռիչքային մասի պետը հրահանգչին հրամայեց.

— Տվեք էլի յերկու թռիչք ուղեկցողի հետ:

Նորից թռչել հրահանգչի՞ հետ: Բայց յես արիաբար դիմանում եյի բոլոր փորձերին: Գիտեյի, վոր համբերելու շատ բան չի մնացել, վոր շուտով բաց կթողնեն: Հրահանգիչն ավելի յեր անհամբեր, քան յես:

— Վաղուց ժամանակն եր, վոր դուք մենակ թռչեք:

Հասավ վաղուց փափագած օրը: Ինձ առաջարկեցին խընդրել, վոր Ակադեմիայից մի յերկու օրով ինձ ազատեն աշխատանքից: Դե, մտածում եմ, ժամս հասավ: Ժամը չորսին գնացի աերոդրոմ, մեքենան անգարից դուրս բերի: Տեսնում եմ՝ ամեն ինչ նորից է սկսվում: Նորից յես պետք է օդ բարձրանամ նախ հրահանգչի հետ, ապա ջոկատի հրամանատարի, ապա էսկադրիլիայի հրամանատարի և վերջապես թռիչքային մասի պետի հետ: Յերբ այդ թռիչքները կատարեցինք, ինձ հրամայեցին հանգստանալ: Ժամերն անցնում եյին, արդեն յերեկոն մոտենում եր, իսկ ինձ դեռ հետ եյին պահում: Հրահանգիչն ասում է.

— Յեկեք մի անգամ էլ յես ձեզ հետ թռչեմ:

Մենք աերոդրոմի գլխին յերեք պտույտ ենք գործում և իջնում: Ինձ ասում են. «լավ, էլի մի քիչ նստեցեք»: Էլի ինչքա՞ն պիտի նստեմ: Սովորող օդաչուներից վո՞ր մեկը չի հասկանա իմ անհամբերությունն այդ ժամերին:

Վերջապես յես տեսա, վոր տեխնիկը մոտեցավ մեքենային, առջևի կաբինից հանում է թարձերը, կապում է փոկերը, մի խոսքով կաբինն ազատում է: Իսկ վարժական սավառնակներում սովորաբար առջևի կաբինում հրահանգիչներն են նստում: Ուրախացա. նշանակում է հրահանգիչն ինձ հետ չի լինելու: Ասենք՝ տեխնիկն էլ վողջունելով գլխով է անում, թե՝ հիմա մենակ կթռչես...

Հրահանգիչը մոտենում է ինձ և ասում.

— Կթռչեք առանց ինձ: Կատարեցեք այնպիսի վայրեջք, ինչպես վերջին թռիչքի ժամանակ:

Դժվար է նկարագրել այն զգացմունքը, վոր յես ապրեցի նախ քան գազ տալը, յերբ մտածում եյի, վոր կյանքումս առաջին անգամ յես մենակ պիտի լինեմ օդում: Բայց ահա ստարտյորն սպիտակ դրոշակը թափահարեց, յես բոլորովին մեքենայաբար գազ տվի: Մեքենան սլացավ, արագությունը մեծացրեց, գետնից պոկվեց և սկսեց բարձրանալ: Յես շուրջդարձ կատարեցի: Ամենադժվարն անցած եր: Լա՛վ: Յես թռչում եմ մենակ, իմ առջև ամեն անգամվա պես չի ցցված հրահանգչի գլուխը կաշվե սաղավարտով: Հրահանգիչը ցածն է, այնտեղ, այն քառակուսու մեջ, աերոդրոմում: Կանգնած է և հավանաբար

հուզվում է, թե յես ինչպես կիջնեմ առանց իր ոգնության: Շատ ուրախ եմ: Կատարեցի սովորական շրջանաձև «տուփիկը» և յերբ սկսեցի վայրեջքի պատրաստվել, նույնիսկ մոռացել էյի, վոր հրահանգիչն ինձ հետ չի: Վստահ ու հանգիստ մեքենան իջեցրի ուղիղ «T»-ի վրա: Յեվ միայն այդ ժամանակ հիշեցի հրահանգչին: Իսկ նա ինձ մոտ է վազում և շնչակտուր ասում·

— Ելի՛ այդպես:

Այդ թռիչքը կրկնելու հակիրճ հրաման էր:

Յես կրկնեցի: Ինձ շնորհավորեցին ինքնուրույն թռիչքիս համար:

Սակայն ուսուցումը սրանով չվերջացավ: Առաջին ինքնուրույն թռիչքից հետո հրահանգիչը շարունակում էր ինձ հետ թռչել ամեն օր, որը մեկ անգամ: Հետո արդեն յես կարող էյի ուզածիս չափ թռչել: Բայց որվա մեջ առաջին թռիչքը հրահանգչի հետ լինելը պարտադիր էր: Ինձ պիլոտաժ էյին սովորեցնում: Յես թռչում էյի աերոդրոմի գլխին և զոնայում: Սկզբում մանր, ապա խոր վիրաժներ էյի անում: Խոր վիրաժներն ինձ առանձնապես դուր էյին գալիս: Յերբ սամոլյոտի թեքվածքը 45 աստիճանից անցնում էր, շրջադարձի ղեկը դառնում էր խորության ղեկ և, ընդհակառակը, խորության ղեկը՝ շրջադարձի ղեկ: Ղեկերի փոփոխությունը ոդաչուի աշխատանքը բարդացնում է:

Շուտով արդեն յես կարողանում էյի ինքնուրույնաբար կատարել ոձագալարներ, սպիրալներ, «ութնոցներ», թևի վրա սահումներ, գալարապտույտներ, մարտական շրջադարձեր, ողակներ: Այդպիսով յես ոդաչու դարձա: Ոդագնացության գիտելիքիս ավելացավ սամոլյոտն ինքնուրույն վարելու կարողություն: Ինձ համար նոր անծայրածիր հորիզոններ բացվեցին:

ԿՈՒՅՐ ԹՌԻՉՔ

Ակադեմիա բերին մի նորագույն կատարելագործված սարքավորում — տրենաժեր՝ կույր թռիչքների համար, այսպես կոչված՝ Լինկի կաբին: Դա սամոլյոտի լիակատար մոդել էր իր հարթություններով, ֆյուզելյաժով, փետրավոր պոչով, վոր ուներ կառավարման բոլոր հարմարությունները ու սարքերը:

Կույր թռիչքը մինչև հիմա բոլոր յերկրների ոդային նավատորմերի համար խոշորագույն պրոբլեմ է հանդիսանում: Ռազմական տեխնիկան բոլոր յերկրներում արագ զարգանում է: Պատերազմական պայմաններում ոդաչուն պետք է թռչի այնպիսի բարձրությամբ, վոր գետնից գնդակոծելու համար անհասանելի լինի: Հարկավոր է բարձրանալ մինչև ամպերը և ամպերից էլ վեր: Բացի այդ, մեր ժամանակներում յուրաքանչյուր ոդաչու պետք է պատրաստ լինի գիշերային թռիչքների: Նորմալ, վոչ կույր թռիչքի ժամանակ կողմնորոշման գիծը, վորի ոգնությամբ ոդաչուն կարող է սամոլյոտը կառավարել, հորիզոնի գիծն է: Սակայն մեծ բարձրության վրա, ամպերի մեջ կամ խավարում, յերբ հորիզոնը չի յերևում, հարկավոր են այնպիսի արհեստական միջոցներ, սարքեր, վորոնց ցուցմունքները կարող են փոխարինել բնական կողմնորոշմանը:

Կույր թռիչքը կամ սարքերի ոգնությամբ թռիչքը ոդաչուին հնարավորություն է տալիս օդ բարձրանալ ամեն տեսակ յեղանակի և ցերեկվա ու գիշերվա ուզած ժամին: Դա խիստ կարևոր է. յերբեք ոդաչուն յերաշխիք չունի, վոր նույնիսկ ամենալավ յեղանակին թռչելով՝ ճանապարհին չի հանդիպի ամպամածության, անձրևի, մառախուղի, փոթորկի: Ոդաչուն պետք է զինված լինի այն բոլոր անակնկալ սյուրպրիզների դեմ, վորոնցով բնությունը հարուստ է զանազան բարձրությունների վրա: Ժամանակակից տեխնիկան ոդաչուին հզոր միջոցներ է տալիս ոդագնացության սարքերի ձևով, վորոնց ոգնությամբ կարելի յե թռչել առանց յերկրի տեսանելիության, այսինքն կատարել կույր թռիչքներ:

Ամեն վոք կարող է սովորել կույր թռիչքը: Հարկավոր է միայն համառ ու յերկարատև վարժություն: Ակադեմիայի բերված Լինկի կաբինը հնարավորություն էր տալիս վարժություններ անելու ամենատարբեր պայմաններում, վորոնց մեջ կարող է ընկնել ոդաչուն կույր թռիչքի ժամանակ:

... Ոդաչուն նստում է կաբինում և ամուր կափարիչով փակվում: Նրա առաջ լուսավորված սարքերն են: Ոդաչուն մոտորը միացնում է, «թռիչքն» սկսվում է: Այդ րոպեյից կաբինում նստած մարդը պետք է գլխից դուրս հանի այն ամենը, ինչ վոր

կարող է խանգարել նրան՝ ուշադրությունը կենտրոնացնելու սարքերի վրա: Էլեկտրական վակուում-մոտորի օգնությամբ, վորի չորս փուքսերի վրա սարքավորված է Լինկի կաբինը, պահպանվում է օդի միահավասար նոսրացում: Ոդաչուի կամքով կառավարման բռնակի ու պեդալների շարժումներով կաբինը կարող է շուռ գալ, թեքվել, բարձրանալ ու իջնել, մի խոսքով կատարել այն շարժումները, վորոնք տեղի յեն ունենում թռիչքի ժամանակ ղեկը շարժելուց: Մեքենան կարող է կատարել վիրաժներ, դարձումներ, յենթարկվել արհեստական «ճոճման»: Ոդաչուի տրամադրության տակ է դարձումի ցուցիչը, վոր ցույց է տալիս պտույտի արագությունն ու ճշտությունը և հնարավորություն է տալիս վորոշելու, թե արդյոք սավառնակի պոչը չի շեղվում, դարձումի ներսի կողմի վրա թևի վրա սայթաքում չկա արդյոք: Այդ սարքի կողքին սարքերի տախտակի վրա տեղավորված են արագության ցուցիչը, վարիոմետրը, վորի սլաքը ցույց է տալիս վերելքի ու վայրեջքի արագությունը, կեղծ ռադիո—փարոսի սարքավորումը: Մի հատուկ կառուցվածք հնարավորություն է տալիս վարժության ժամանակ կաբինին ազդանշաններ հաղորդել, վորոնք սովորաբար տալիս է ռադիոփարոսը: Կաբինը հեռախոսով միացած է հրամանատարական կամրջակի հետ, վորտեղից հրահանգիչը վարժության ամբողջ տալիս է բոլոր անհրաժեշտ ցուցումները, ուղղում է նրա աշխատանքը «թռիչքի» ժամանակ, տալիս է լրացուցիչ առաջադրանքներ, հաղորդում է, թե ճի՞շտ է պահպանվում ուղղությունը:

Մենք սկսեցինք նոր տրանժերը յուրացնել: Ակադեմիայի լսարաններից մեկում սարքավորեցինք այն, բոլոր դետալները կարգի բերեցինք, ապա սկսեցինք վարժությունները:

Յես ինքս էլ պետք է խիստ շատ վարժություններ անեի. Ոդաչուն պետք է իր մեջ մշակի սարքերի ցուցմունքները մեքենայորեն հասկանալու ընդունակություն: Այդ արվեստն ունկընդիրներին հաղորդելու համար հրահանգիչն ինքը պետք է կատարելապես տիրապետի կույր թռիչքի տեխնիկային: Լինելով «կույր» կաբինի մեջ՝ ոդաչուն կաբինի դիրքի մասին խաբուսիկ տպավորության մեջ է ընկնում: Դրան նպաստում է մարդու

ներքին ականջի, այսպես կոչված վեստիբուլյար ապարատի կառուցվածքը: Որինակ, յերբ ոդաչուն սավառնակը ճիշտ պտույտի (վիրաժի) մեջ է գնում և վորոշ ժամանակ շարունակում է այդպես պտտվել, նա այդ պտույտը չի զգում: Բայց հենց վոր նա փորձում է սավառնակը նորից ուղղագիծ շարժման մեջ դընել, նա զգում է այսպես կոչված՝ հակաշրջման զգացմունք. նրան թվում է, թե սավառնակն սկսել է արագորեն պտտվել հակառակ կողմը: Յեթե ոդաչուն իր այդ զգացմունքին հետևի, նա սավառնակին կստիպի նորից պտտվել սկզբնական ուղղությամբ. և այդ ժամանակ վոչ մի ուժ սավառնակի պտույտը չի դադարեցնի: Ոդաչուն չպետք է լսի իր վեստիբուլյար ապարատի խաբուսիկ զգացմունքին, նա պետք է վստահի միայն սարքերին:

Այդ այնքան էլ դյուրին բան չէ: Պահանջվում է համառ ու յերկարատև վարժություն կատարել, վորպեսզի մարդ կարողանա իրեն ստիպել, վոր լիովին վստահի սարքերին և ղեկերով արագորեն գործի ըստ նրանց ցուցմունքների:

... Մոտորը միացված է, վարժությունն սկսվել է: Հիմա ոդաչուն վիրաժների վարժություններ է անում: Նա մեքենան թեքում է և համաչափորեն «վոտք տալիս», սեղմում է վոտքի պեդալը: Վիրաժն սկսվեց: Հարկավոր է կրենոմերին ուշի-ուշով հետևել: Ահա կրենոմերի գնդիկը կենտրոնից գնում է դեպի պտույտի ներքին կողմը: Նշանակում է կամ թեքվածքը շատ մեծ է, կամ ըստ վերցրած թեքվածքի պտույտը շատ քիչ է: Ոդաչուն սավառնակի դիրքը չի տեսնում, բայց ըստ սարքի նա վորոշում է, վոր սավառնակը սահում է և բարձրությունը կորցնում: Ի՞նչ պիտի անել: Դրությունից դուրս գալու յերկու ճանապարհ կա: Կարելի յե թեքվածքը թողնել ինչպես կա և պեդալի (պտույտի ղեկի) վրա համաչափ ճնշում գործելով պտույտի արագությունը մեծացնել: Կրենոմերի գնդիկը կվերադառնա իր տեղը: Պտույտը կարագանա, սավառնակը կդադարի բարձրությունը կորցնել: Մյուս միջոցն է՝ թույլ չտալ վոր սավառնակն իր թեքվածքը մեծացնի, կամ, ինչպես ոդաչուներն են անում, թեքվածքը պահել: Դրա համար հարկավոր է համաչափ կերպով, բառացիորեն միկրոսկոպիկ շարժումով «ուժ գործ դնել» բռնակի վրա դեպի թեքվածքի հակառակ կողմը: Մեքենան կդադարի թևի վրա սահել, գնդիկը կվերադառնա կենտրոն:

Այսպես վարժություններ էյի անում յերկար ժամանակ, ուրական մի քանի ժամ: Պարապմունքներից դուրս ժամանակս ամբողջովին վարժությունների վրա չեր գնում: Նոր գործը միշտ դժվար է թվում: Ինձ համար ևս սկզբում դժվար էր իմ զգացմունքներին չենթարկվելը: Յերբ ես Լինկի կաբինում վարժվեցի կույր թռիչքին և սկսեցի սարքերի ցուցմունքներին արձագանքել նույնիսկ ճոճման պայմաններում, հենց ինձ էլ տարօրինակ թվաց, թե ինչպես էր, որ առաջ վստահում էյի իմ խաբուսիկ զգացողություններին: Կաբինում իմ շարժումները դարձան հավասար, սահուն, ես հասկացա, որ չի կարելի սարքերի վրա հույս դնել, յերբ պեդալին ճնշում ես կոպիտ կերպով, յերբ կառավարման լծակը շուռ ես տալիս կտրուկ շարժումով: Այդ կարող է մոլորեցնել միայն— մեքենան շատ զգայուն բան է:

Լաբորատորիայի պետն ինձ առաջարկեց մշակել օդաչուների վարժության ծրագիր՝ կույր թռիչքի կաբինի համար: Ծրագիրը կազմեցի: Յուրաքանչյուր օդաչու քսան պարապմունքի ընթացքում պետք է կաբինում վարժություն աներ ընդհանուր առմամբ 10 ժամ:

Այն օդաչուները, որոնք առաջին խմբակներն էյին յեկել կույր թռիչքի վարժություններ անելու, ինձանից շատ ավելի լավ էյին թռչում: Ինձ թվում էր, թե հենց որ նրանք նստեն կաբինում, անմիջապես կվարժվեն կույր թռիչքի տեխնիկային: Բայց իրականում այդպես չեղավ: Նրանք վարժված էյին բաց կաբինում թռչելու: Իսկ այստեղ, կափարիչով ծածկված լինելով, նրանք կտրուկ շարժումներ էյին անում: Իմ հրահանգչական կամրջակին կանգնած՝ յես տեսնում էյի, որ կաբինը ցընցվում է, կարծես թե ուժեղ կերպով նրան դես ու դեն են ձիգ տալիս: Մի քանի պարապմունքից հետո միայն օդաչուն սովորում էր կաբինի հետ քնքույշ և կարգին վարվել:

Մեր ծրագրում վերջին խնդիրն էր արագ պտույտը: Այստեղ ստուգվում էր, թե օդաչուն որքան է սովորել օգտվել սարքերից: Առանց այդ խնդրի մասին օդաչուին նախազգուշացնելու՝ յես առաջարկում էյի առավելագույն թեքվածքով ու արագությամբ դարձում կատարել դեպի ձախ:

— Իմ ազդանշանով,— ասում էյի յես,— մեքենան ուղղեցեք դեպի հյուսիս:

Այդ նշանակում էր, որ խոր վիրաժով պտտվելիս օդաչուն վոչ միայն մեքենան պիտի դուրս բերի դարձումից, այլև այն պետք է ուղղի մի վորոշակի ուղղությամբ:

Օդաչուն կաբին էր մտնում ուրախ, կարծես վոչինչ չեր յեղել. խնդիրը նրան հեշտ ու հասարակ էր թվում: Մյուս բոլոր թռիչքների պես այդ «թռիչքն» էլ սկսվում էր ուղիղ դիրքից, յերբ կաբինը կանգնած էր լինում ուղիղ հորիզոնական դիրքով: Յես հեռախոսով օդաչուին ասում էյի.

— Ձախ դարձո՛ւմ:

Իսկ ինքս գործի էյի գցում վայրկյանաչափը: Սավառնակը վարժված օդաչուի կարող ձեռքերում դառնում էր արագ ու ճշգրիտ: Մեր կաբինը յոթ վայրկյանում կատարում էր մեկ վիրաժ, այսինքն մեկ լրիվ պտույտ իր առանցքի շուրջը: Սովորաբար վիրաժի այդպիսի փոքրիկ շառավիղի օդաչուները չեն հանդիպում վոչ մի սավառնակում: Յերբ սլաքը մոտենում էր բոլեյին, յես վայրկենաչափը կանգնեցնում էյի և հրահանգում.

— Ուղղեցեք դեպի Նորդ (հյուսիս): Յեվ նորից վայրկյանաչափը միացնում էյի: Այդ նրա համար էր, որ նշեմ, թե օդաչուն վորքան ժամանակում է կարողանում մեքենան դարձնել հարկավոր ուղղությամբ: Նույնիսկ լավ վարժված օդաչուն սկզբում անխուսափելիորեն յենթարկվում էր հակապտույտի իր զգացողությանը: Դա յերևում էր նրանից, որ թեև կաբինն սկզբում թեքվածքից դուրս էր գալիս, բայց հետո նորից շարունակում էր նախկին արագությամբ պտտվել ձախ կողմը: Այն ժամանակ յես օդաչուին ասում էյի.

— Մի՛ լսեք ձեր ներքին ականջին: Վստահեցեք միայն սարքերին:

Օդաչուն ջանում էր խաբուսիկ զգացողությունը հաղթահարել: Յերբեմն նրան նույնիսկ հաջողվում էր մեքենային ուղիղ դիրք տալ, բայց մի քանի վայրկյան անց՝ նորից կաբինն սկըսում էր պտտվել նույն ուղղությամբ: Իսկ վայրկենաչափի սլաքը վազում է, վայրկյանների թիվն ավելանում է...Վերջա-

պես աղջիկին հաջողվում էր պտույտը դարձնել և մեքենային ուղիղ դիրք տալ։ Բայց այդ դեռ նորդ ուղղությունը չէ, այլ մի ինչ-որ ուրիշ ուղղություն։ Մեքենան առաջադրված կողմն ուղղելու համար նորից պահանջվում էր մանր «շրջումներով» մեքենան դարձնել։ Սովորաբար արդեն խիստ տաքացած աղջիկն այդ բանն անում էր կոպիտ կերպով և կաբինն սկսում էր պտտվել դեպի աջ։ Աղջիկն ստիպված էր լինում նորից պտույտը մղել իր հակառակ ուղղության հետ։ Վերջապես, երբ նա սարքերի նկատմամբ ամեն մի վստահություն կորցնում էր, սկսվում էր կաբինի բոլորովին անկանոն պտույտ՝ մերթ դեպի ձախ՝ աջ թեքումով, մերթ հակառակը, դեպի աջ՝ ձախ թեքումով, երբեմն այդ ժամանակ կաբինը համարյա լրիվին կորցնում էր իր արագությունը։

Հեռախոսով աղջիկին ասում են.

— Դուք դալարապտույտի մեջ եք ընկել։

Կամ՝

— Ձեզ սպանված համարեցեք։

Բայց հարկավոր էր տեղն ու տեղը խրատ տալ, հիշեցում անել.

— Թողեք ձեր բոլոր զգացողությունները։ Նայեցեք միայն սարքերին և վստահեցեք նրանց։ Ուրիշ բան ձեզ հարկավոր չէ։ Ձեզ մոտ պտույտի սլաքը աջ կողմն է, կենտրոնաձիգ գնդիկը՝ ձախ։ Հանդարտ սեղմեցեք ձախ պեդալը, ղեկերդ չեզոք պահեք, վերցրեք ձախ թեքվածք։ Բայց այդ բոլորն արեք հանդարտ։

Մի քանի վայրկյան անց մեքենան վերցրեց ճիշտ առաջադրված ուղղությունը։ Այն ժամանակ ես աղջիկին թույլատրում էի կափարիչը բանալ։ Աղջիկն կաբինից դուրս էր գալիս քրտնամխած։ Իմ վայրկենաչափը հաշված էր լինում շատ րոպեներ, այդպիսի գործողության համար չափազանց շատ։

— Այ քեզ խնդիր,— շփոթված ասում էր աղջիկն։

— Ոչինչ, ես ինքս էլ այդպես եմ վարժվել։ Եվս մի քանի այդպիսի պարապմունք՝ և այլևս ձեզ համար այդքան շոգ չի լինի... Միայն թե ավելի շատ վստահեցեք սարքերին։ Նրանք

հենց նրա համար էլ գոյություն ունեն, վորպեսզի դուք կարողանաք կույր թռիչք գործել։

Ցավ կրոք, յերկու-յերեք պարապմունքից հետո աղջիկն վարժվում էր իր դիրքին և սկսում էր ավելի շատ վստահել սարքերին, կտրվում էր իր զգացողություններից։ Առաջադրանքի կատարման համար գործադրվում էին արդեն վոչ թե րոպեներ, այլ մի ինչ-որ տաս վայրկյան։ Աղջիկն կաբինից դուրս էր գալիս ուրախ, հանգիստ։ Այժմ նա պատրաստ էր սավառնակով կույր թռիչք կատարելու։



ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՈԴԱՅԻՆ ԶՈՐԱՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Ո՞վ չգիտի Մոսկվայի մայիսմեկյան զորահանդեսները: Յեթե նույնիսկ ձեզ չի հաջողվել տեսնել այն, համենայն դեպս հավանաբար շատ եք լսել ու կարդացել նրանց մասին: Խորհրդային հայրենասերների սիրտը լցվում է հպարտությամբ և ուրախությամբ, յերբ տեսնում է հարյուրավոր թևավոր մեքենաները, վորոնք ռազմական խիստ կարգով թռչում են քաղաքի վրայով միջազգային պրոլետարիատի մեծ տոնի որը: Հենց միայն նրանց տեսքը ռազմական ահեղ ուժ է ցույց տալիս: Մայրաքաղաքի փողոցներում հարյուր հազարավոր ցնծալից մարդիկ: Նրանք հիացմունքով վերև են նայում: Քաղաքը լցվում է մոտորների դղրդյունով: Սա-

վառնակները գալիս են հանկարծակի և ուղիղ ցերեկվա ժամը 12-ին Կարմիր հրապարակի վրայով թռչելով անհայտանում են ոդում: Մոսկվացիներից վո՞ր մեկը Մայիսի մեկի որն իր ընկերոջը չի հարցնում.

—Ե՛, տեսա՞ր ոդային զորահանդեսը:

— Ի հարկե տեսա,— հպարտությամբ պատասխանում է ընկերը և բացականչում.

— Աքանչելի՛ յեր:

Այդ բացառիկ տեսարանը ժողովրդին մատուցելու, աշխատավորության մեր ավիացիայի հզորությունը ցուցադրելու համար, դեռ մայիսմեկյան զորահանդեսից շատ առաջ ռազմական ավիացիոն մասերում համառ ու մանրակրկիտ նախապատրաստական աշխատանք է կատարվում: Կարիք կա՞ արդյոք պատմելու այն յերկարատև ոդաչուի ուրախության մասին, վորին առաջին անգամ հայտնում են, թե նա մասնակցելու յե մայիսմեկյան ոդային զորահանդեսին: Այդ մոմենտը կանխաճաշակելով՝ յես պատրաստ եյի վեր ցատկել ուրախությունից:

1934 թվին զորահանդեսի փլագշտուրման եր նշանակված Ստեբլիկովը, նրա տեղակալ՝ Սպիրինը: Նախապատրաստությունն սկսվեց Մայիսի մեկից շատ առաջ: Առավոտից մինչև ուշ գիշեր շտուրմանները զորահանդեսի պլանն եյին մշակում: Նրանց առաջ դժվարին խնդիր եր կանգնած: Մի քանի հարյուր սավառնակ զանազան աերոդրոմներից պետք եր ոդում հավաքել և ուղիղ ժամը տասներկուսին մարտական կարգով անց կացնել Կարմիր հրապարակի վրայով: Այդ բացառիկ գեղեցիկ տեսարանը, վոր Մոսկվայի ցուցարարները տեսնում են գետնից, մայիսմեկյան զորահանդեսի շտուրմանների համար ամենից առաջ մաթեմատիկական ճշգրիտ հաշիվ է: Ընդամենը ութ րոպե սավառնակները ձգվում են Կարմիր հրապարակի վրայով, մավզոլեյի վրայով, վորի տրիբունից նրանց են նայում յերկրի լավագույն մարդիկ, մեծ Ստալինը, կուսակցության ու կառավարության ղեկավարները, պաշտպանության ժողկոմ Վորոշիլովը: Սավառնակները շատ են: Վորպեսզի նրանցից յուրաքանչյուրը գտնվի ճիշտ այնտեղ, վորտեղ պետք է վոր նա թռչի զորահանդեսի ժամանակ, նախապես հաշվվում է առանձին եսկադրիլիա-

ների շարժվելու ժամանակն ու անգամ ընդհանուր զորայունի մեջ և վերջապես՝ յուրաքանչյուր սավառնակի իր աերոդրոմը վերադառնալու ժամանակը:

Բոլոր սավառնակների վառելանյութը պետք է բավականացնի: Նախապես զորահանդեսի մասնակիցների համար պետք է պատրաստել աերոդրոմներ և պահեստի հրապարակներ՝ մոտոռը փչանալու դեպքերի համար: Մինչև մեկ վայրկյան ճշտությամբ պետք է պահպանված լինի սավառնակների ամբողջ հզոր զորայունի անցման ժամանակը Կարմիր հրապարակի վրայով: Այդ հաշիվները շտուրմաններն են պատրաստում:

Յես բախտ ունեցա այդ օրերին աշխատելու Խորհրդային Միության լավագույն շտուրմանների՝ Սպիրինի, Ստերլիգովի, Բելյակովի հետ:

Նրանք հավաքվեցին կենտրոնական աերոդրոմի մի փոքրիկ սենյակում:

Քարտեզների ու աղյուսակների վրա կռացած՝ Սպիրինն առատ ծուխ էր արձակում ծխախոտից, բոլորին զարմացնելով իր նախաձեռնությամբ ու ձեռներեցությամբ: Բելյակովն ու Ստերլիգովը կատարում եյին անթիվ հաշիվներ, պատրաստում եյին գծագրություններ, աղյուսակներ: Ինձ հանձնարարեցին կազմել շտուրմանական գրաֆիկներ ու հաշիվներ: Յես իմ գործն անում եյի հանգիստ, վստահ և ուշի ուշով դիտելով ավագ ընկերներիս աշխատանքը, որոնցից սովորելը վարժություն էր դարձել ինձ համար:

Ապրիլի 29-ին սկսեցին կազմել զորահանդեսի մասնակիցների ցուցակը Ֆլագմանական ոդանավերի համար: Ինձ շատ էր անհանգստացնում այն միտքը, թե զորահանդեսի ժամանակ ինձ կվերցնե՞ն սավառնակի վրա, թե՝ ոչ: Առաջին Ֆլագմանական ոդանավով թռչելու յեր ամբողջ հրամանատարությունը, յերկրորդով՝ զորահանդեսի հրամանատարի տեղակալ Սպիրինը:

Սպիրինն ինքը դիմեց ինձ հետևյալ հարցով.

— Հավանորեն դուք ցանկանո՞ւմ եք թռչել:

— Շատ եմ ցանկանում, Իվան Տիմոֆեյեվիչ:

— Լավ, ձեզ ինձ ոգնական կգրեմ:

Յերբ ցուցակը հաստատեցին, յես գրված եյի յերկրորդ ո–

դանավում շտուրմանի ոգնական: Հարկ կա՞ ասելու, թե յես որքան եյի ուրախացել, ինչպես եյի հպարտանում ինձ ցույց տված վստահության համար, ինչպես կանխաճաշակում ե–յի այն թռիչքի քաղցրությունը, որի մասին ինձ նման յերիտասարդ ոդաչուն միայն յերազել կարող էր:

Մայիսի մեկին վաղ առավոտյան մենք հավաքվեցինք աերոդրոմում: Աերոդրոմը մի հազվագյուտ տեսարան էր ներկայացնում: Դաշտի յերկարությամբ խիտ կարգով հարյուրավոր սավառնակներ եյին կանգնած: Առջևում, սավառնակների ամբողջ մասսայից անջատ կանգնած եյին յերեք խոշոր Ֆլագմանական ոդանավերը:

Պայմանական ռակետով մի քանի հարյուր մոտոռները միաժամանակ աշխատել սկսեցին: Հիանալի բան է սավառնակների շարքի յերկարությամբ նայելը: Ոչ մի մոտոր առանց աշխատելու չմնաց: Իմ կյանքում առաջին անգամն եյի այդպիսի հզոր միավորում տեսնում: Ահա թե ինչպիսին է մեր ավիացիան: Մեծ պատիվ ու բախտավորություն է նրա մեջ աշխատելը, լինել թեկուզ ամենափոքրիկ պտուտակը այդ անխորտակելի արմադայի: Հնչեց հրահանգը.

— Դեպի սավառնակնե՛րը:

Մենք բարձրացանք մեր սավառնակը և յես տեղ գրավեցի Սպիրինի կողքին:

Սպիրինն ասաց.

— Դուք ինձ մոտ կապ պահպանող կլինեք:

Այդ նշանակում էր, որ յես պետք է վարեմ յերկրորդ Ֆլագմանական ոդանավի ներքին պնևմատիկ կապը: Շատ լա՛վ:

Ռակետը վիթխարի ոձի պես ոդն է բարձրանում: Մեր սավառնակը թռչում է: Մենք թռչում ենք Մոսկվայից հեռու, Կլինից դենը, որպեսզի կրկին ու կրկին անգամ ոդում ստուգենք ժամին և ճշգրիտ հաշվենք, թե որտեղ շուռ գանք դեպի Մոսկվա, որպեսզի ուղիղ ժամը տասներկուսին լինենք Կարմիր հրապարակի գլխին: Շտուրմանական աշխատանքում այդ ամենալարված րոպեներն են: Բավական է, որ թեկուզ մի քիչ սխալվես և ամբողջ զորայունը կուշանա Կարմիր հրապարակ հասնելուց:

Ահա Փլագմանական ոդանավն սկսում է շուռ գալ, Կլինի մոտ կտրում է յերկաթուղին և յերկաթուղու աջ կողմով, նրանից վորոշակի հեռավորություն պահպանելով թռչում է հեռ, դեպի Մոսկվա: Մենք Փլագմանական ոդանավի հետևից շուռ ենք գալիս, շարվում ենք նրա հետևից և մի քանի րոպե անց Սպիրինը ցույց է տալիս.

— Տեսնո՞ւմ եք, յերկաթուղու այն կողմից դեպի մեզ է թռչում ծանր սավառնակների առաջին եսկադրիլյան:

Առանձին ուշադրությամբ հետևում եմ այդ եսկադրիլյային: Նրան առաջնորդում է Բելյակովը:

— Ահա հիմա նրանք կսկսեն շուռ գալ դեպի մեր պոչը,— ասում է Սպիրինը:

Յեվ իրոք, վորոշակի ժամանակին ծանր, չորս մոտորանի գեղեցկուհիների եսկադրիլյան շուռ է գալիս և կուռ շարքով հետևում մեզ:

Յուրաքանչյուր յերեք րոպեն մեկ անգամ նույն կարգով, ինչպես առաջինը, շուռ են գալիս նաև մյուս եսկադրիլյաները: Սկզբում ծանր սավառնակները, ապա թեթևները: Ոկրուժնայա ճանապարհի առաջ մեր հետևից շարվում է թեթև սավառնակների վերջին եսկադրիլյան:

Իմ պարտականությունները բարդ չեն. ընդունում եմ ռադիոյի հաղորդումները, հանձնում Սպիրինին և գրի յեմ առնում, թե վո՛ր ժամանակ, վո՛ր եսկադրիլյաներին ենք հանդիպում մենք: Յերբ վերջին եսկադրիլյան միացավ զորասյունին, Սպիրինն ինձ թույլատրեց դուրս գալ առջևի կաբինի տուրելը և նայել հեռ, մեր հետևից թռչող սավառնակների յերամներին: Կյանքումս յերբեք չեմ մոռանա այդ հմայիչ տեսարանը: Սավառնակները թռչում եյին իրար հետևից, բոլորովին ճշգրիտ հեռավորության վրա:

Յես այնպես եյի հմայվել, վոր նույնիսկ չեյի զգում, թե ինչպես է Սպիրինն իմ վոտքից քաշում, վորպեսզի յես տուրելում տեղս իրեն զիջեմ. հարկավոր եր, վոր նա ինքը նայի, թե եսկադրիլյաներն ինչպես են թռչում:

Անցանք Լենինգրադյան խճուղին: Վերևից յերևում են ցուցարարների շարքերը, կուռ, հավասար, ինչպես թելով ձգված:

շարքերի միջև և նրանց մեջ կային բազմաթիվ կարմիր բծեր ու շերտեր. դրանք շտանդարտներ եյին, դրոշակներ ու լոզունգներ:

Մինչև Կարմիր հրապարակ հասնելը րոպեներ են մնում: Ագերսանքով նայում եմ Սպիրինին.

— Իվան Տիմոֆեյևիչ, յերբ մոտենանք Կարմիր հրապարակին, թույլ տվեք դուրս գալ տուրել նայելու:

— Դուրս կգանք միասին,— ասում է Սպիրինը:

Մտնում ենք տուրել: Յերկու հոգու համար այստեղ նեղվածք է, բայց դրա փոխարեն ամեն ինչ յերևում է: Մենք տեսնում ենք, թե ինչպես Գորկու փողոցում, Պատմական թանգարանին չհասած ցուցարարների շարքերը կանգ առան ու քարացան: Զորահանդեսը դեռ չի վերջացել, սպասում են, մինչև վոր մենք կանցնենք և այն ժամանակ ցնծացող ժողովրդի բազմությունները ալիքի պես կհորդեն դեպի հրապարակ, այնտեղ, վորտեղ Ստալինն է կանգնած: Հրապարակը մաքուր է: Այնտեղ վոչ վոք չկա: Ըստ յերևույթին վերջին տանկային զորամասերը հենց նոր են անցել: Մարդկանց գլուխները փոքրիկ սևերի պես յերևում են միայն հրապարակի շուրջը բոլոր կից փողոցներում:

Իսկ այնտեղ, ցածում, հրապարակում, նրա կենտրոնում, Լենինի մավզոլեյի վրա կանգնած է մարդկանց մի փոքրիկ խումբ: Մենք նրանց դեմքերը չենք տեսնում, բայց հաստատ գիտենք, վոր այնտեղ իր զինակիցներով ու բարեկամներով շրջապատված կանգնած է Ստալինը, և մենք հպարտ ենք այն գիտակցությամբ, վոր այդ րոպեյին նա գլուխը վեր բարձրացրած մեզ է նայում: Գուցե նույնիսկ նա ձեռքով է անում, վողջունում է մեր եսկադրիլյաներին: Մի հաճելի հուզում համակում է ինձ, յես արդեն չեմ նկատում տուրելի անհարմարություններն ու նեղվածքությունը: Ափսոս, վոր այդպիսի բարձրությունից չի կարելի տեսնել Ստալինի դեմքը: Բոլոր մտքերս ու զգացմունքներս նրա կողմն են ուղղված:

Ժամացույցի սլաքը ցույց է տալիս տասներկուսը: Ճիշտ նշանակված ժամին մենք թռչում ենք հրապարակի վրայով: Զորահանդեսն ավարտված է: Եսկադրիլյաները ցրվում են իրենց աերոդրոմները: Մեր սավառնակում միայն ոդաչուներին հա—

կանալի ուրախություն է սկսվում: Բոլորս յերեխաների պես աշխուժանում ենք, քրքջում, ուրախ կատակներ անում: Մեզ ուրախ հուզմունք է համակել:

Վայրէջք ենք կատարում և վերադառնում տուն: Փողոցներով դեռ քայլում են ցուցարարների վերջին շարքերը:

***

Հետևյալ տարին մայիսմեկյան զորահանդեսի ֆլագշտուրման եր նշանակված Իվան Տիմոֆեևիչ Սպիրինը: Նա ինձ վիթխարի վստահություն ցույց տվեց. հանձնարարեց ինքնուրույն կերպով կազմել զորահանդեսի ժամանակ սավառնակների զորասյուները դասավորելու բոլոր հաշիվները: Աշխատում եմ այնպես խնամքով, ինչպես յերբեք:

Ամեն ինչ պատրաստ եր, հասավ մեծ տոնի նախօրյակը: Սպիրինն ասաց.

— Այս տարի դուք կգնաք զորասյունի գլխավոր մեքենայով, «Մաքսիմ Գորկի»-ով: «Մաքսիմ Գորկու» ոդաչուն Գրոմովն է լինելու: Ամբողջ զորասյունն ոդում կշարվի քաղաքից հեռու, գլխավոր մեքենան պետք է զորասյունին դիմավորի, նրա առաջն անցնի և առաջնորդի դեպի Կարմիր հրապարակ:

Զորահանդեսին մասնակցող ոդաչուները գլխավոր մեքենան անվանում եյին «որկեստր»,— «Մաքսիմ Գորկու» վրա բարձր նվագում եր ռադիոն: Ոդում շատ հեռու տարածվում եյին «Ինտերնացիոնալ»-ի և տոնական ուրախ քայլերգների հնչյունները:

Մենք սավառնակում գրավում ենք մեր տեղերը: Յես, վորպես շտուրման, տեղավորվում եմ ամենաառջևի կաբինում: Մեքենան ոդ է բարձրանում: Նրա հետևից բարձրանում ու կողքերից գնում են յերկու կործանիչ: Մեր կարմրաթև հսկայի համեմատությամբ նրանք խաղալիքներ են թվում:

Հիանալի կահավորված մեքենայում մեզ համար շատ հարմար է: Վոչ մի սավառնակում յես դեռ այդպիսի շտուրմանական կաբին չեմ տեսել: Այստեղ դրված է իսկական դրասեղան՝ շտուրմանին անհրաժեշտ բոլոր պիտույքներով, մենք նստում ենք փափուկ, հարմար բազմոցների վրա, ոդաչուի կաբինի մի-

ջով, ֆյուզելյաժի խորքում յերևում է բուֆետը՝ ահագին ինքնայեռով: Իմ տեղը շատ հարմար է, միայն կինոոպերատորը շարունակ ստիպում է գլուխս թեքել, գլուխս նրան խանգարում է նկարել: Իմ սովորության համաձայն յես զորահանդեսին մասնակցելու յեմ յեկել սովորական ամառային հագուստով՝ անդրավարտիքով, սաղավարտով ու վերնաշապիկով: Մեկը կատակում է, թե այդպիսի մեքենայով կարելի յե սպիտակ մետաքսե հագուստով թռչել...

Մոտորները դղրդում են: Յերկու կործանիչների ուղեկցությամբ առաջատար մեքենան գնում է ուղիղ դեպի Ոկրուժնայա ճանապարհը: Ահա մենք արդեն մոտեցանք ոդում կազմվող շարքին: Նրան առաջնորդում է Սպիրինը: Գեղեցի՛կ զորասյուն: Կարելի յե անվերջ հիանալ, այնքան նա հավասար է ու կուռ: Մենք ճիշտ հաշվով շուռ ենք գալիս և կանգնում զորասյունի առջևում: Ռադիոն ոդը խլացնում է «Ինտերնացիոնալ»-ով: Նորից մենք Մոսկվայի գլխին ենք, նորից նույն հուզմունքը Կարմիր հրապարակի վրայով թռչելուց առաջ: Գրոմովը մեքենան հիանալի յե տանում:

Ահա և Կարմիր հրապարակը: Կուրծքս սեղմվում է: Հրճվանքը և ուրախությունը հորդում են դուրս, ուզում եմ գոռալ, յերգել: Բայց և այնպես չեմ մոռանում գլուխս թեքել, վորպեսզի կինոոպերատորը կարողանա նկարել հրապարակի հոյակապ պատկերը, վոր կխով չափ լցված է ժողովրդով:

Յերբ զորահանդեսը վերջացավ և մենք աերոդրոմ վերադառնալով գնացինք շտաբ՝ մեզ դիմավորեց Սպիրինը.

— Ահա և մեր որկեստրավորները յեկան:

Յերկար ժամանակ աերոդրոմից գնալ չեյի ուզում: Բարձրանալով տնակի վիշկան, մենք հետևում եյինք, թե զորամասերին մասնակցած մեքենաներն ինչպես են իրար հետևից իջնում ճշտորեն իրենց հատկացված տեղերը: Մենք տեսնում ենք, թե ինչպես է լցվում աերոդրոմը, ինչպես են սավառնակները դասավորվում դաշտի չուրջը: Քննարկում ենք յուրաքանչյուրի վայրէջքը: Վիճում ենք՝ «կդերաչփի», թե «կթերաչփի» սավառնակը:

Սպիրինը պատմում է իր արևելյան թռիչքի մասին, արևե-

յան յերկրներում իր ստացած տպավորությունների մասին: Ավղանական կանայք իրենց դեմքը ցույց տալու իրավունք չունեն: Նրանք ման են գալիս փարանջայով ամուր ծածկված: Ավղանական կինն իրավունք չունի մտնելու այն սեղանին, վորի շուրջը տղամարդիկ են նստած: Սլեպնևը պատմում ե կնոջ բարբարոսական ստրկացման, այն ճնշումների մասին, վորոնց կինը յենթարկվում ե Արևելքում:

— Իսկ, այ, դուք, ընկեր Ռասկովա,—վերջացրեց իր պատմությունն Սլեպնևն,— այսօր մեր Մոսկվայում բաց արիք ոդային զորահանդեսը, և ձեզ նայում եր ընկեր Ստալինը:

ՎԵՑ ՍԱՎԱՌՆԱԿ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ ԹՌՉՈՒՄ ԵՆ ՄՈՍԿՎԱ

1935 թվի ոգոստոսին ինքնուրույն յերկարատև թռիչքով յես ոդաչուի մարտական մկրտություն ստացա: Մինչ այդ մեր ամբողջ յերկրում աերոակումբները շատ կին–ոդաչուներ եյին տվել: Նրանցից շատերը բավական հեռավոր թռիչքներ եյին կատարել: Սակայն դրանք անհատական թռիչքներ եյին մեկ մեքենայով: Յերիտասարդ կին–ոդաչուներն ինչպե՞ս գլուխ կհանեն խմբական թռիչքից: Եքսպերիմենտալ ավիացիոն ինստիտուտը վորոշեց կազմակերպել կանանց առաջին փորձնական խմբակային թռիչքը: Ռազմա–ոդային ակադեմիան մի նամակ ստացավ, վորով խնդրում եյին ինձ ուղարկել այդ թռիչքին մասնակցելու:

Յես կարո՞ղ եյի հրաժարվել: Վորոշ ժամանակ եր արդեն, վոր հեռու տարածությամբ ինքնուրույն թռիչքները դարձել եյին իմ բաղձանքը: Յես միայն հետաքրքրվեցի, թե ինչպիսի մեքենայով պիտի թռչեմ: Ինձ պատասխանեցին.

— Յերեք թեթև վարժական սավառնակով:

— Յե՞րբ պիտի թռչենք:

— Այսօր յերեկոյան «Կրասնայա ստրելայով» կգնաք Լենինգրադ: Թռչելու յեք Լենինգրադից Մոսկվա: Պատրաստվեցեք:

Պատրաստվելը բարդ բան չեր: Հետևյալ որը յես Լենինգրադում ներկայացա ինժեներ Յակովլևի կառուցվածքի սպորտային սավառնակների գործարանը: Այստեղ յես իմացա, վոր խմբակային թռիչքին մասնակցելու յեն վեց կին–ոդաչու: Յուրաքանչյուրը կստանա մեկ սավառնակ իր ուղևորով:

Առաջին անգամ իմ առաջ լուրջ դժվարություն ստեղծվեց: Չե՞ վոր մինչ այդ յես թռչում եյի սովորական վարժական սավառնակներով: Իսկ այժմ ինձ առաջարկում են նոր, անծանոթ մեքենայով ճանապարհ ընկնել բավական յերկարատև խմբակային թռիչքի: Կարո՞ղ եմ արդյոք: Սակայն յես չշտապեցի իմ կասկածները հայտնել:

Թռիչքի հրամանատար նշանակեցին ոդաչու–հրահանգիչ Ագնեսսա Կազացկայային: Միավորումը բաժանված եր յերկու ոդակի, յուրաքանչյուրում յերեք սավառնակ: Մյուս ոդակի հրամանատարն եր Վալենտինա Ստոյանովսկայան: Ոդակում բոլորը ծանոթ են—յերիտասարդ ոդաչուներ, վորոնք աերոակումբներն ավարտել են առանց արտադրությունից կտրվելու:

Մեզ բերին աերոդրոմ, մեքենաներն են ցույց տալիս: Նրանք մեզ շատ են դուր գալիս: Դրանք շքեղ յերկտեղանի լիմուզին–մոնոպլաններ եյին՝ բարձրադիր թևերով: Մոտորը նույնն ե, ինչ վոր վարժական սավառնակներինը, սակայն տեղավորված ե մի քիչ ցածր, և պտուտակի հեռավորությունը գետնից անհամեմատ ավելի յե, քան վարժական սավառնակներում: Յես ուշադրություն դարձրի և այն բանի վրա, վոր մեզ առաջարկվող մեքենաները չունեյին կրկնակի ղեկ, ինչպես վարժական մեքենաներինն ե:

Ակամայից հարգանք զգացի նոր մեքենայի նկատմամբ: Նույնիսկ թեթևակի անհանգստացա, թե կհաջողվի՞ ինձ միանգամից թռչել այդ մեքենայով: Ագնեսսա Կազացկայան և Վալենտինա Ստոյանովսկայան նստեցին ու թռան շատ հեշտությամբ: Բայց ինձ այդ այնքան ել հասարակ բան չթվաց: Այդ անծանոթ մեքենայում նույնիսկ նստելն ուրիշ տեսակ ե: Մինչ այդ՝ վարժական սավառնակով թռչելիս յես սովորաբար նստում եյի հետևի կաբինում, առջևինը թողնվում եր հրահանգչի համար: Իսկ Յակովլևի սավառնակն ուներ միայն մեկ կաբին ոդաչուի և ուղևորի համար: Մի ուրիշ բան, վոր ինձ անհանգստացնում եր, նոր, անծանոթ աերոդրոմն եր: Յես վարժական

սավառնակով վարժություններ անելու թույլտվություն խնդրեցի: Մոտ «У—2» սավառնակի առջևի կաբինը և մեկ օրում քսանչորս վայրէջք կատարեցի: Հետևյալ օրը վարժությունները շարունակվեցին: Ցես քառասուն վայրէջք կատարեցի: Այժմ յես իջնում էյի վոչ միայն հիմնական աերոդրոմում, վորտեղից թռչում էյի, այլև ղանաղան պատահական հրապարակներում: Մտաբերում եմ ինձ հայտնի տասնյակ դեպքեր ուրիշ օդաչուների հետ պատահած, վորոնք ստիպված են յեղել իջնել պատահական անծանոթ հրապարակներում: Վաթսունչորս թռիչքից ու վայրէջքից հետո յես հայտնեցի, թե պատրաստ եմ Յակովլևի մեքենայով թռչելու: Ինձ առաջարկեցին նախ թռչել օդաչուի հետ վորպես ուղևոր: Օդաչուի ուսի վրայով յես ծանոթացա նոր սավառնակին, դիտեցի նրա առանձնահատկությունները: Ինձ թույլատրեցին, վոր ինքս թռչեմ աերոդրոմի գլխին: Առաջին իսկ թըռիչքին յերևան յեկան իմ նոր մեքենայի բոլոր առանձնահատկությունները: Ցես տեսա, վոր Յակովլևի սավառնակն ավելի մեծ արագություն ունի քան «У–2», նշանակում է՝ վայրէջքի ժամանակ նա գետնի վրա ավելի հեռուն է գնալու: Ցերբ իջնելու լինես, ստիպված պիտի լինես մեքենան ավելի ցածում հավասարեցնել: Մեքենան փոքերի շարժումներին խիստ է հնազանդվում, հետևվաբար փոքերով կտրուկ շարժումներ անել չի կարելի: Ամենից շատ մտահոգում էր պտուտակի ու գետնի միջև յեղած չափազանց փոքր տարածությունը: Ահա, մտածում եմ, յեթե թռիչքի պահին պոչը չափից ավելի բարձրացնեմ, անպայման պտուտակը գետնին կքսվի...

Թռա և անմիջապես ինձ հիանալի զգացի, կարծես թե արդեն վաղուց թռչելիս լինեմ այդ մեքենայով: Դուրս յեկավ, վոր այդ մեքենան շատ լավ է հնազանդվում և շատ հեշտ է նըրան ղեկավարելը: Վայրէջքը ևս հաջողվեց: Այն ժամանակ ել յերկու թռիչք կատարեցի: Հետևյալ օրը յես «իմ սեփական մեքենան» ստացա: Առավոտից մինչև յերեկո խնամքով ծանոթանում էյի իմ նոր օդային ընկերոջ հետ: Առանձնապես ուշի ուշով ուսումնասիրեցի մոտորը: Թեև դա սերիային արտադրության սովորական մոտոր էր, բայց յես արդեն լավ գիտեյի, վոր յուրաքանչյուր մոտոր ունի իր թեկուզ աննշան առանձնահատկու-

թյունները, քմահաճույքներն ու վարքը: Օդաչուն, վորպեսզի կարողանա թռիչքի ժամանակ մոտորին ստիպել վոր հնազանդվի, պետք է նախապես ուսումնասիրի նրա բնավորությունը: Նյութական մասին ինչպես հարկն է ծանոթանալուց հետո միայն յես վորոշեցի հետևյալ օրը իմ մեքենայով ինքնուրույն թռիչք կատարել: Ինձ ասում են.

— Դուք պետք է ձեզ հետ ուղևոր վերցնեք:

Աերոդրոմում հավաքվել եյին կենտրոնական թերթերի մի քանի թղթակիցներ, վորոնք շատ եյին հետաքրքրվում մեր թըռիչքով: Ցես ասացի.

— Դե, ընկերներ, ում համար կյանքը թանկ չէ, թող նստի, թռչենք:

Թղթակիցների խմբից բաժանվեց շատ բարձրահասակ լուրջ դեմքով մի աղջիկ և մոտեցավ ինձ: Նա ասաց, վոր ինքն էլ օդագնացության գործը սովորել է աֆերային գնդերում: Ցես ուրախացա, վոր ավիացիոն տեսակետից գրագետ ուղևոր եմ ունենալու: Թռանք: Մոտ քառասուն րոպե գտնվում եյինք օդում: Պտտվում եյինք աերոդրոմի գլխին, հետո յես ուղղություն վերցրի դեպի Մոսկվա, վորպեսզի մարշրուտի յելքերը տեսնեմ: Ճանապարհին մենք սկսեցինք զրուցել և յես վորոշեցի ստուգել իմ ուղևորի օդագնացական ընդունակությունները: Նրան մի քիչ տարա Մոսկվայի կողմը, հետո շուռ յեկա դեպի աերոդրոմ և հայտնում եմ.

—Ո՞ւր թռչենք:

Նա պատասխանում է.

— Չգիտեմ:

— Ցես ինքս էլ չգիտեմ,— ասում եմ ծիծաղելով: Տեսնելով, վոր իմ ուղևորի դեմքը լրջանում է, յես շարունակում եմ.

— Բայց յես ձեզ վրա էյի հույս դրել:

Տեսնում եմ՝ նա կաբինի պատուհանից ուշի-ուշով նայում է, թե ինչ է կատարվում ներքևում, մեր տակը, բայց վոչինչ չի հասկանում: Մինչ այդ յես գազ եմ տալիս և սկսում իջնել: Իմ ուղևորի դեմքը ձգվում և լիակատար տարակուսանք է արտահայտում: Ցերբ անիվները գետնին դիպան, նա ժպտաց, հասկացավ, վոր յես կատակ եմ արել:

Իմ ուղևորի խնդրանքով նրան թույլատրեցին թռիչքի ժամանակ թռչել իմ մեքենայով: Եվ մի քանի օր մենք վարժություններ արինք: Վերջապես սպասելի օրը նշանակված էր:

Վորոշված էր թռիչքն սկսել օրվա յերկրորդ կեսին: Սակայն նշանակված ժամին ամեն ինչ պատրաստ չգտնվեց: Ստարտն ուշացավ: Թռիչքը նախապատրաստողներից մեկը մեզ հավատացնում էր, թե հետաձգվելը նույնիսկ լավ է, թե ավելի ձեռնտու յե մարշրուտը կիսել յերկու մասի՝ Լենինգրադից Մոսկվա ճանապարհին մեկ վայրեջք կատարելով: Մենք դրան համաձայն չեյինք, չե՞ վոր մենք պատրաստվում եյինք անվայրեջք խմբակային թռիչք կատարել: Բայց ի՞նչ կարող եյինք անել: Ժամը 19 և 15 րոպեյին վեց սավառնակներն աերոդրոմից թռան, ու բարձրացան և ուղղություն վերցրին դեպի Մոսկվա:

Մեր խնդիրն էր՝ սավառնակները հասցնել Մոսկվա և ցույց տալ խորհրդային կին-օդաչուների կարողությունը համախմբված թռիչք գործելու: Այդ այնքան էլ բարդ գործ չի թվում: Բայց չորս տարի առաջ խորհրդային յերիտասարդ կին-օդաչուների համար այդ բավական լուրջ փորձություն էր: Ի դեպ, տարածությամբ թեև վոչ խոշոր այդ թռիչքը մինչև հիմա էլ ամբողջ աշխարհում մնում է կանանց միակ խմբակային թռիչքը:

Չի կարելի ասել, թե ամեն ինչ նորմալ էր ընթանում: Լենինգրադից դուրս գալուց կես ժամ հետո մենք փոթորկի մեջ ընկանք: Մեր սավառնակները կույր թռիչքի համար սարքավորված չեյին: Միայն հրամանատարական մեքենան՝ Ագնեսսա Կազացկայայի մեքենան ուներ մեկ «պիոներ»—շրջադարձի ցուցիչ: Նա վորոշեց փոթորկաբեր ամպերի ճակատը ճեղքելով առաջ գնալ: Իսկ ինձ վոչինչ չէր մնում անելու, բացի այն, վոր աշխատեյի վորքան կարելի յե մոտիկ մնալ հրամանատարին և ուղղություն վերցնել ըստ նրա սավառնակի: Յես գազն ավելացրի և ավելի ևս մոտեցա հրամանատարի սավառնակին: Նույնքանն արեց նաև յերկրորդ օդաչուն: Ուժեղ անձրև էր տեղում: Ջուրը կաբինի ապակիները վողողելով նրանց թափանցիկությունը նվազեցնում էր: Մառախուղի մեջ հազիվ էր նկատվում առջևի սավառնակի գծագրությունը, վոր մյուս յերկու սա-

վառնակների համար կողմնորոշման միակ միջոցն էր հանդիսանում: Ճոճումը գնալով ավելի յեր ուժեղանում:

Թռչելը դժվար է, բայց՝ հաճելի: Հաճելի յե գիտակցել ու տեսնել, վոր, չնայած վատ յեղանակին, յերեք սավառնակներ, վորոնց վարում են կին-օդաչուներ, առաջ են գնում ամուր ու խիտ շարքերով, հետ չեն մնում իրարից, վոր օդաչուհիները կարողանում են տարածության վրա զգալ իրար և հնազանդվել ընդհանուր նպատակին, ընդհանուր խնդրին:

Ամպամածությունից դուրս յեկանք և տեսանք, վոր մյուս օղակը մեզանից հետ է մնացել: Հարկ յեղավ գազը նվազեցնել, ավելի դանդաղ գնալ, վորպեսզի մեր ընկերուհիները կարողանան հասնել մեր հետևից: Յերկրորդ օղակն իրեն յերկար սպասել չտվեց: Մարտական խիտ շարքով մենք առաջ թռանք:

Սակայն փոթորիկն իր գործն անում էր: Շուտով մեր առաջ յերևաց փոթորկային մեծ ճակատի սև շերտը: Աղջամուղջի փոթորիկը նպաստեց, վոր մութը շուտ ընկնի: Առանց այն էլ մռայլ ամպերը խտանում եյին՝ սպառնալով բոլորովին ծածկել վորևէ տեսանելիություն: Ագնեսսա Կազացկայան վորոշեց յերկրորդ անգամ ամպերի միջով չգնալ: Խավարը կարող էր վրա հասնել մառախուղի մեջ և այն ժամանակ մենք չեյինք կարող վայրեջքի տեղ գտնել:

Սավառնակները գնում եյին 500–600 մետր բարձրության վրա: Մենք իջանք ամպերից ցած, սկզբում գնացինք 100 մետր բարձրությամբ, վերջապես խուզող թռիչքով սկսեցինք թռչել անտառի վրայով: Անձրևն ուժեղանում էր: Աղջամուղջն ավելի ու ավելի արագ էր վրա հասնում: Պարզ էր, վոր մինչև աերոդրոմ չենք հասնելու:

Մենք գտնվում եյինք Վիշնի Վոլոչեկի մոտերքը: Մեր տակ փռված էր ճահճոտ ու անտառոտ մի վայր: Վերևից յերևում էր խիտ անտառով յեզերված մի մեծ մարգագետին: Այդ մարգագետնի վրա ջուր էր փայլփլում, վոր ճահճի բացահայտ նշան էր, իսկ կենտրոնում կար մի ահագին սպիտակ խաչ: Սպիտակ խաչը պայմանական նշան է օդաչուների համար: Այն նշանակում է, վոր այն հրապարակը, վորտեղ խաչ է տնկված, սավառնակների վայրեջքի համար ամենևին պիտանի չէ: Այդպիսի

նախազգուշական նշաններ, վորոնք սովորաբար ցեմենտված են լինում, սարքվում են մարդատար սավառնակների ճանապարհին ընկած ճահճային և այլ հրապարակներում, վորոնք վայրեջքի համար պիտանի չեն: Սակայն այլ բան է նախազգուշական ազդային ОРУД-ը և այլ բան է իրականությունը: Ուրիշ ճար չկար, թեև մենք գիտեյինք, վոր մանր անիվներով մեր մեքենաներն այնքան էլ պիտանի չեն այդ հանպատրաստից ճահճոտ աերադրոմում վայրեջք կատարելու համար:

Ադինեսա Կաղացկայան առաջինը պտույտ է գործում և դիմում է վայրեջքի: Յես վերևից տեսնում եմ, վոր նրա մեքենան գետնի վրայով շատ քիչ վազեց և կանգ առավ: Նշանակում է՝ հողը կոշտ է: Դիմում եմ վայրեջքի, շրջան եմ գործում, իջնում եմ, ավելի ուշադիր եմ նայում գետնին: Այնտեղ քիչ չեն կոճղերը: Բայց և այնպես ինձ հաջողվում է նկատել մի փոքրիկ հրապարակ, վորն իր գույնով խիստ տարբերվում է շրջապատի ճահճից: Ճահիճը պայծառ կանաչավուն գույն ունի մուգ-շագանակագույն բծերով, իսկ այդ հրապարակը, ավելի ճիշտ՝ այդ շերտը մոխրագույն է: Այստեղ հավանորեն հողն ավելի չոր է: Կաշխատեմ իջնել հենց այդ հրապարակում: Այդ վորոշումն ընդունելով՝ անհապաղ սկսում եմ յերկրորդ շրջանը: Այդ ժամանակ մյուս մեքենան, վոր իմ հետևից եր գալիս, վայրեջքի հերթականությունը խախտելով կտրում է իմ շրջանը և համարձակ կերպով վայրեջքի դիմում: Այդ բոլորը կատարվում է կայծակի արագությամբ: Վերևից տեսնում եմ, վոր նրա մեքենան իջնում է քթի վրա, քթից շուռ է գալիս թևի վրա և պառկում գետնին իջած պլանյորի պես: Իմ ուղևորը լրջորեն անհանգստանում է և ինձ հարցնում.

— Ի՞նչ պատահեց:

— Տեսնում եք ինչ. կոտրվեց:

— Նա կենդանի՞ յե:

— Չգիտեմ, կիջնենք, կիմանանք...

Մթնում է: Պետք է իջնել ինչ գնով էլ լինի, և շուտ իջնել: Գազը կտրում եմ, սկսում եմ ճախրել: Գետինը մոտիկ է: Փոքրիկ «ճխպոցով» մեքենան իջեցնում եմ ճահճի վրա: Իջնելուց առաջ վառելու կեռն անջատում եմ, վորպեսզի, յեթե մեքենայի

մոտոռի ցնցում լինի, բռնկում չառաջանա: Սավառնակը գետնի վրայով վազում է մի քանի մետր և կանգ առնում: Յես շուռ եմ գալիս դեպի իմ ուղևորը և ասում.

— Շնորհակալ յեղեք, վոր կենդանի մնացիք...

Նա ուրախ ծիծաղում է:

Իմ մեքենան մինչև անիվների սռնին խրվել է հողի մեջ: Յեթե մի քանի կիլոմետր ավելի արագություն ունենար, սավառնակը կփշրվեր: Սակայն յերկար մտածելու ժամանակ չէ: Ոդում էլի յերեք մեքենա կան: Ինչպե՞ս կիջնեն նրանք: Ադինեսա Կաղացկայայի հետ մենք անհամբերությամբ սպասում ենք մեր ընկերուհիներին: Ահա վերջապես վայրեջքի յե դիմում մեկը, ապա յերկրորդը, յերրորդը... Սրտներս թեթևանում է: Վերջապես մենք բոլորս միասին ենք: Ճիշտ է, աերոդրոմում չենք իջել, բայց գլխավորն այն է, վոր բոլորս վողջ ենք: Կաղացկայան իջել եր ուղիղ նախազգուշական նշանի մոտ: Վեց սավառնակներից վնասվել եր միայն մեկը: Նա մեզնից հեռու յեր, անտառի յեզրին: Հարկավոր է ոգնության գնալ: Ոդաչուներից միայն Կաղացկայան և յես եյինք ամառային թռիչքային հագուստով—անդրավարտիկով, կոշիկներով և կաշվե բաճկոնով: Անձրև եր գալիս, մեր վոտքերի տակ բարակ ճահիճ եր: Մեզ յերկուսիս այդ չեր շփոթեցնում: Բայց մյուսները շարժվելու հնարավորություն չունեին. նրանք հագած ունեյին սովորական հագուստ, իսկ վոտքերին թեթև կիսակոշիկներ եյին:

Յես ու Կաղացկայան շարժվեցինք դեպի փշրված սավառնակը: Նա իջել եր հրապարակի յեզրին, անտառի մոտ: Յերբ մոտեցանք, տեսանք, վոր սարսափելի վոչինչ չի պատահել: Կոտրվել եյին միայն պտուտակը և շասսիի հենարանը: Յերկուսն էլ հեշտ եր փոխելը: Ոդաչուհին պրծել եր ճակատին մի ուռուցք ստանալով:

Գյուղի ծայրում մի փոքրիկ սարայ կար, պահականոց: Տասներկու կանայք— ոդաչուհիներ և ուղևորներ— գնացինք այնտեղ: Պահականոցը մեծ քանակությամբ փափուկ ու հոտավետ ծղոտ կար: Կես ժամ չանցած մենք քնած եյինք մեռածի պես: Քնելուց առաջ Ադինեսա Կաղացկայան չմոռացավ հետա-

գիր ուղարկել կայարան, Լենինգրադի համար, վորպեսզի մեզ ուղարկեն պտուտակ և շասսիի հենարան:

Արթնացանք լուսաբացին: Ճահիճը դիտեցինք և գտանք, վոր այդտեղից թռիչք գործելու համար այնքան էլ անհուսալի չէ: Մինչև Լենինգրադից պտուտակ ու հենարան կբերեն, հարկավոր է քննել ու կարգի բերել կոտրված սավառնակի մոտորը: Թղթակից ուղևորուհիները սիրով դառնում են մոտորիստներ և մեզ հետ միասին քանդում, մաքրում, ոգնում են մոտորը կարգի բերելու:

Կես օրվա մոտ ոդում սավառնակի աղմուկ լսվեց: Հրապարակի գլխին յերևաց «У-2»-ը: Ներքևից յերևում էր, վոր սավառնակի կաբինից կախված է պահեստի պտուտակը: Սավառնակը ցած իջավ և սկսվեց համբերատար աշխատանքը: Վնասված սավառնակը շուտով կարգի բերինք: «У-2»-ով մեզ մոտ թռած ոդաչուն փորձնական թռիչք է կատարում: Թռչելն այնքան էլ հեշտ չէ, ինչպես մեզ էր թվում:

Վորոշում ենք թռչելուց առաջ նախաճաշել: Ուտելիքի պաշարը մեծ չէ—մի քիչ կարտոֆիլ և մի քանի ձու: Ձվերը բոլորին չեն բավականացնում: Թղթակցուհիներն անձնազոհաբար հրաժարվում են նրանից և միայն կարտոֆիլ են ուտում: Նրանք ասում են, վոր մեզ, ոդաչուհիներիս հարկավոր է ավելի լավ ուտել: Ուտելու խիստ ցանկություն կա և մենք սիրով ընդունում ենք մեր ուղևորների այդ զոհաբերությունը:

Թռչելուց առաջ ճահճի մեջ ճյուղերից ճանապարհ ենք գցում: Ճանապարհը խոտորեն նշելուց հետո միայն Կազացկայան հրամայում է բարձրանալ մեքենաները: Նա առաջինը թռավ: Նրա սավառնակի շասսիները քիչ մնաց ծառերին դիպչեին: Յես ուշադիր հետևեցի հրամանատարի թռիչքին և հասկացա, վոր հարկավոր է թռչել անտառի անկյունի ուղղությամբ, վորպեսզի գետնի վրա մեքենայի վազքի ճանապարհը վորքան կարելի յե ավելի յերկարացվի: Դառնալով դեպի իմ ուղևորը՝ յես կատակ եմ անում.

— Դե, հրաժեշտ տվեք ձեր կյանքին: Յեթե հիմա չմեռնեք, նշանակում է յերկար եք ապրելու...

Նա նստել էր իր տեղը այնպես, կարծես վոչինչ էլ չկար:

Յես գազ տվի: Մեքենան գետնի վրա մի քիչ սլացավ, և հանկարծ զգում եմ, վոր շուռ է գալիս դեպի աջ: Հավանորեն մի անիվը ճահճի մեջ կպչում է:

Հարկ յեղավ ժամանակից առաջ լծակը քաշել իմ կողմը և առանց արագության մեքենան գետնից կտրել: Ինձ դժվարությամբ է հաջողվում պահել այն, վորպեսզի նորից գետնին չընկնի: Ելի մի րոպե և մեր ծառերի կատարները յերևացին:

— Դե, հիմա յերկար եք ապրելու, —ասում եմ յես՝ շուռ գալով դեպի իմ ուղևորը:

Հենց վոր մենք ոդ թռանք, յես քաղց զգացի: Մենք ունեյինք բավական պատկառելի «անհատական» պաշար— մի ամբողջ շերտ շոկոլադ: Իմ ձեռքերն զբաղված են: Ուղևորս փոքրիկ կտորներով բերանս է դնում:

Քանի դեռ տատանումը չէր սկսվել, ամեն ինչ լավ էր: Նայում եմ իմ ուղեկցուհուն— նրա դեմքն ավելի ու ավելի տխուր է դառնում... Շոկոլադի կտորներն ավելի ու ավելի ուշ են ինձ հասնում: Ե՛, մտածում եմ, աղջիկը տխրել է: Իսկ նա հարցնում է.

— Այս ի՞նչ է, տատանո՞ւմ:

— Տատանում, ասում եմ:

— Իսկ ավելի ուժեղ լինո՞ւմ է:

— Ի հարկե, այն էլ ինչպե՛ս...

Նա է՛լ ավելի տխրեց, շոկոլադ ստանալս բոլորովին կտրվեց... Այնուամենայնիվ իմ ուղևորուհին բավական արիաբար դիմացավ տատանմանը: Շուտով յերևաց Մոսկվայի լավ ծանոթ աերոդրոմը: Մենք հասել եյինք նպատակակետին: Վեց աղջիկ խիստ կարգով վայրէջքի դիմեցին և իջան: Առաջին խմբակային կանանց թռիչքը վերջացավ:

ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՎԱԶՔԸ 1937 Թ.

Անցավ մեկ տարի: Առաջվա պես յես Ակադեմիայում դասավանդում եյի և շարունակում եյի վարժություն անել: Ամեն անգամ, յերբ բաց եյինք թողնում շտուրմանական ֆակուլտետի

ունկնդիրներին, ինձ համար եղ աննկատելի կերպով յես նորանոր գիտելիքներ եյի կուտակում, իսկ առաջուց ձեռք բերած գիտելիքներս ե՛լ ավելի եյին ամրապնդվում հիշողության մեջ: Յես հասկացա, վոր իրավացի յե շատ մանկավարժների այն կարծիքը, թե ուսուցիչն ինքը ցանկության դեպքում շատ բան կարող է սովորել իր աշակերտներից: Յես շարունակում եյի կիրառել Բելյակովի մեթոդը, սակայն դրա հետ միասին իմ մեջ արդեն դաստիարակման մի շարք ձևեր եյին մշակվել: Վիթխարի բավականություն եր պատճառում այն գիտակցությունը, վոր դու ակտիվորեն մասնակցում ես քո հարազատ, ջերմորեն սիրած յերկրի համար նոր կուլտուրական ավիացիոն կադրեր պատրաստելու գործին:

1937 թվին խորհրդային օդաչուները խոշոր թռիչքներ կատարեցին: Խորհրդային հողի դիմին թռչում եր Խորհրդային Միության հերոսներ Չկալովի, Բելյակովի ու Բայդուկովի, Վոդոպյանովի, Մոլոկովի, Մազուրուկի, Սպիրինի, Գրոմովի, Դանիլինի, Յումաշևի և շատ ուրիշների փառապանծ յերամը: Խորհրդային օդաչուների անունները սկսեցին ավելի ու ավելի պատկառելի տեղ գրավել օտարերկրյա մամուլում, իսկ միջազգային ռեկորդների ացյուսակն ավելի ու ավելի յեր լցվում խորհրդային օդաչուների անուններով:

Մեր օդաչուները դրանով եղ չեյին հանգստանում: Թռչել աշխարհում բոլորից բարձր, բոլորից հեռու և բոլորից արագ: Խորհրդային ամբողջ ավիացիայի համար աշխատանքը հետապնդում եր այդ լոզունգի իրագործումը: Յուրաքանչյուր ամիս բերում եր նոր գյուտեր ու կատարելագործումներ, սավառնակների նոր կոնստրուկցիաներ: 1937 թվի հուլիսին Խորհրդային Միության Հերոս Վոդոպյանովի առաջարկությամբ, վորին պաշտպանեց ամբողջ ավիացիոն հասարակայնությունն ու «Պրավդան», կազմակերպվում են արագության մրցարշավներ թեթևամոտոր սավառնակներով՝ Մոսկվա—Սևաստոպոլ—Մոսկվա մարշրուտով: Տասներկու յերիտասարդ օդաչուներ տասներկու տարբեր կոնստրուկցիայի մեքենաներով մասնակցում են այդ մրցություններին, վորոնք ըստ նախաձեռնողի մտադրության պետք է դառնային սպորտային թեթևամոտոր սա-

վառնակի տրադիցիոն մրցություններ: Մրցության ընթացքում մեր Խորհրդային օդաչուները պետք է ցույց տային իրենց հմտությունները: Իսկ կոնստրուկտորները պետք է մրցության փորձից դաս առնեյին իրենց կոնստրուկցիաները կատարելագործելու համար:

Համամիութենական մրցությանը դուրս յեկան նոր սավառնակներ՝ «УТ-1», Յակովլեվի կոնստրուկցիայի № 12, Գրիբովսկու կոնստրուկցիայի թեթևամոտոր և թեթևաթև մեքենաներ: Յակովլեվի կոնստրուկցիայի այն սպորտային սավառնակը, վորով կանանց խմբակային թռիչքի ժամանակ յես թռել եյի, արդեն հնացած կոնստրուկցիայի սավառնակ եր համարվում: Այնուամենայնիվ հարկավոր համարեցին այդ մեքենան ուղարկելու արագության մրցությանը կոնկուրսից դուրս— վոչ թե մրցանակ շահելու, այլ համեմատության համար, գիտական-գործնական նպատակով: Սավառնակի վրա ամեն ինչ մնացել եր նույնը, ինչ վոր կանանց խմբակային թռիչքի ժամանակ եր: Միայն վառելանյութի համար լրացուցիչ բաքեր եյին դրված:

Ինձ առաջարկեցին մրցությանը մասնակցել այդ մեքենայով վորպես շտուրման: Սավառնակը վարում եր օդաչու Ռավիկովիչը:

Թռչելուց առաջ Ռավիկովիչն ինձ հարցրեց.

— Ի՞նչ եք կարծում, մեզ կհաջողվի՞ մրցել արագաթև մեքենաների հետ:

— Կարծում եմ, վոր այդ ամենևին անհնարին չէ:

Օդաչուն և շտուրմանն իրար հետ բլոկ կազմեցին: Պայմանն եր՝ աշխատել թռչել ուղիղ գծով, չհետևելով դեպի ուղենիշներին: Բացի այդ, մենք վորոշեցինք ըստ հնարավորին վայրեջքներ չկատարել վառելանյութ վերցնելու համար:

Մրցության պայմանների համաձայն մեզ թույլատրված եր, վոր Զապորոժյեյի վրայով թռչելիս ինքներս վորոշենք՝ իջնել վառելանյութ վերցնելու համար, թե՝ չիջնել: Մենք սավառնակը տարանք ուղիղ գծով, առաջուց նշած կուրսով, դեպի Զապորոժյե: Թռչում եյինք անցնելով բոլոր քաղաքները, նկատի առնելով միայն մեր ուղիղ ու ամենակարճ մարշրուտը: Հի-

նալը յծղանակ էր: Վորոշեցինք առանց վայրէջքի թռչել մինչև Սևաստոպոլ: Յեվ յերբ ցած իջանք, պարզվեց, վոր մեր բաքերում դեռ տասներեք փութ թռիչքի վառելանյութ էլ է մնացել:

Կոնկուրսից դուրս թռած՝ Յակովլևի կոնստրուկցիայի հին մեքենան Սևաստոպոլ հասավ չորրորդը: Դա կատարյալ սենսացիա առաջացրեց: Մեզանից մի քիչ առաջ տեղ հասած օդաչուներն ասում էին.

— Ահա թե ինչ է նշանակում շտուրմանի հետ թռչել: Հետևյալ անգամ հաշվի կառնենք…

Այդ խոսակցությունները սպորտային մրցության առաջացրին: Մենք շատ վառելանյութի պաշար վերցրինք և հետ վերադարձանք: Չորրորդ տե՛ղ— այդ հո վորևէ բան նշանակում էր: Մրցությանը վեց մրցանակ էր դրված: Յեթե վերադարձին էլ մեր տեղը պահենք, կարելի յէ մրցանակի հույս ունենալ:

Սակայն վերադարձի ուղին ավելի ծանր էր: Հարկ յեղավ թռչել ամպամածության հակառակ յերկարությամբ, դիմացից ուժեղ քամի յեր փչում: Քամին նվազեցնում էր առանց այն էլ մեզ անբավարար թվացող արագությունը:

Յերեկոն մոտենում էր, յերբ մենք մոտեցանք Որյոլին: Որյոլը վառելանյութ վերցնելու վերջին կետն է: Իջնե՞լ, թե ռիսկ անել առաջ թռչելու: Յեթե իջնենք, միևնույն է, Որյոլից մեզ մինչև առավոտ բաց չեն թողնի: Այն ժամանակ ավելի լավ է գիշերել Սերպուխովում: Մինչև Սերպուխով կթռչենք առանց վառելանյութի լրացման: Տուլան անցնելով և յերկաթուղին մեր աջ կողմը թողնելով թռանք մինչև Սերպուխով:

Ըստ ժամանակի՝ վառելանյութի պաշարն սպառվելու վրա յեր:

— Ի՞նչ անենք,— հարցնում է Ռավլիկովիչը:

— Ավելի մեծ բարձրություն վերցրու, կձգենք մինչև Սերպուխով:

Ռավլիկովիչն այդպես էլ արեց: Վերցրեց հազար յերկու հարյուր մետր բարձրություն: Այդ պահին մեր մոտորը, վոր մինչ այդ աշխատել էր անթերի, հանկարծ սկսեց ընդհատումներ տալ: Այդ նշանակում էր, վոր բենզինը մոտորին չի հասնում: Յերբ սավառնակն սկսեց բարձրություն վերցնել, բենզինի մնացորդները հոսեցին բաքի անկյունը, և կարբյուրատորի մեջ բենզին հոսելը բոլորովին դադարեց:

Ռավլիկովիչը սավառնակին հորիզոնական դիրք տվեց—մոտորը կրկին աշխատեց: Մինչև Սերպուխով տաս րոպեյի թռիչք էր մնում: Յես ճշգրիտ գիտեի, վոր տաս րոպեյից հետո Սերպուխովը կերևա: Սակայն դուրս յեկավ, վոր մոտորն ավելի քիչ համբերատար է, քան սավառնակի վրայի մարդիկ: Նա նորից սկսեց հազալ, իմաց տալով, վոր մենք դադարել ենք նրան բենզին տալ: Այ քեզ անկշտում վոր: Բայց վորտեղի՞ց բենզին ճարես: Ռավլիկովիչը ամբողջ ուժով աշխատում էր սավառնակը խիստ հորիզոնական դիրքում պահել: Սակայն ամեն ինչի վերջը կա: Մոտորն ավելի սպառնալից հազաց և հարկ յեղավ սավառնակը փոխադրել ճախրելու:

— Շո՞ւտ կհասնենք Սերպուխով,— հարցնում է Ռավլիկովիչը:

— Այ, հիմա կգա խճուղին, իսկ խճուղու այն կողմն անմիջապես աերոդրոմն է: Այստեղ յես յուրաքանչյուր տունը ճանաչում եմ:

Ռավլիկովիչն այլևս վոչինչ չի հարցնում և հանգիստ շարունակում է թռչել ըստ մեր մարշրուտի: Յերբեմն-յերբեմն մոտորը հազում է:

Ելի մի քանի րոպե անցավ: Աերոդրոմը յերևաց: Այժմ արդեն հանգիստ կարելի յէ վայրէջքի գնալ: Հենց վոր գետին իջանք, մոտորը վերջնականապես լռեց, սավառնակին նույնիսկ հնարավորություն չտալով, վոր աերոդրոմում մի քանի տասնյակ մետր վազք կատարի:

Մթության մեջ, անձրևից թրջված ու բարձր խոտի միջով մենք հասանք գիշերոթևան:

Մոտորիստները բաքերը վառելանյութով լցրին, մոտորն ստուգեցին: Մենք վեր կացանք այգաբացից շատ առաջ, թռանք և ուղղություն վերցրինք դեպի Մոսկվա:

Տուշինոյում աերոդրոմը դեռ քնած էր: Այնտեղ քար լռություն էր և միայն պահակության հրաձիգներն էին քայլում անգարների մոտ:

Մենք վայր իջանք, քշեցինք մինչև անգար և այստեղ իմացանք, որ մեզանից առաջ տեղ են հասել մրցության մասնակիցներից միայն հինգը: Մնացածները գիշերել էին Որյոլում: Նշանակում է մենք նվաճել ենք վեցերորդ տեղը: Հնացած կոնստրուկցիայի մեքենայի համար այդ վատ տեղ չէ:

Իմ թռիչքային կյանքում այդ ամենաերկարատև թռիչքն էր: Չէ՞ որ նախորդ օրը մենք տասնմեկ ժամ գտնվում էինք օդում: Հաճելի էր գիտակցել, որ մեկ օր ու գիշերում մենք Մոսկվայից հասել ենք Սևաստոպոլ և Սևաստոպոլից՝ Մոսկվա: Հոգնածություն զգացի միայն այն ժամանակ, երբ տուն հասա: Խոր քուն մտա և քնեցի երկար ժամանակ:

ՎԱԼՅԱ ԳՐԻԶՈԴՈՒԲՈՎԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄՈՒՄ

Օդաչուները Վալենտինա Գրիզոդուբովայի մասին շատ էին խոսում: Ես շատ էի առիթ ունեցել լսելու, թե նա հիանալի օդաչու է, որ նա շատ ու շատ և լավ է թռչում: Ես նրա հետ ծանոթանալու առիթ էի փնտրում:

Մի անգամ Ակադեմիայում ավարտական երեկույթի ժամանակ ունկնդիրներից մեկն ինձ ասաց, որ ինքը հենց նոր տեսել է Գրիզոդուբովային: Շատ ուրախացած ես շրջեցի ամբողջ ֆոյեն, դահլիճներն ու միջանցքները, բայց ոչ մի տեղ կին-օդաչու չտեսա: Նորից իմ ունկնդրին հանդիպելով՝ ասացի.

— Այդ ի՞նչ էիր հնարել դու: Այստեղ ոչ մի Գրիզոդուբովա չկա:

— Սպասիր, ինչպե՞ս թե չկա: Ահա, նա կանգնած է կործանիչ-օդաչու Սոկոլովի հետ:

Այդ նրա ամուսինն է: Մետաքսի շքեղ հագուստով գեղեցիկ կինը նազանքով ու սիրալիր ժպտում էր: Խիտ արտևանունքների տակից ճառագայթելով ու ջերմորեն ժպտում էին նրա աչքերը: Այդ աչքերն ինձ առանձնապես դուր եկան ու տպավորվեցին մտքիս մեջ: Նրա հետ խոսել չհաջողվեց, փոխարենը նրան մի ուրիշ կողմ տարան: Երբ նա հասատուն, համարյա տոնական քայլվածքով փոքր ինչ օրորվելով ուղղվեց դահլիճի կողմը, ես մտածեցի, «Ա՛յս է հայտնի օդաչուհին է»:

Դրանից հետո ես Վալենտինային հաճախ էի հանդիպում Գեորգիևսկի պարկում, աերոդրոմի ճանապարհին: Ըստ երևույթին նա էլ ինձ էր նկատել: Ամեն անգամ հանդիպելիս նրա աչքերը համարյա ծիծաղում էին և շրթունքներին խաղում էր սիրալիր ժպիտ, ինչպես լինում է ծանոթներին հանդիպելիս:

1936 թվի մարտի 9-ին մայրաքաղաքի անվանի կանայք պարահանդեսի էին հրավիրված Միությունների տան սյունազարդ դահլիճում: Ամբողջ քաղաքից հավաքվեցին ստախանովական, հարվածային, շքանշանակիր կանայք, բոլոր պրոֆեսիաների, բոլոր տարիքների ու դիրքի կանայք: Շքեղ դահլիճն ու ֆոյեն լիքն էին ուրախ ծիծաղով, երաժշտությամբ ու կատակներով: Գեղեցիկ հագնված աղջիկները պտույտ էին գալիս ուրախ պարով, զբոսնում էին թևանցուկ արած: Միջանցքներից մեկում ես հանկարծ դեմ առ դեմ դուրս եկա Վալենտինա Գրիզոդուբովայի հետ: Այս անգամ նա հագած ուներ մի ուրիշ, նույնպես շքեղ ու գեղեցիկ մետաքսե շոր: Ոչ մի բան ցույց չէր տալիս, որ նա օդաչու է:

Ես կանգնեցրի նրան:

— Դու Վալյա Գրիզոդուբովա՞ն ես:

— Իսկ դու Մարինա Ռասկովա՞ն:

— Դե, բարև:

— Բարև:

Բանից դուրս եկավ, որ Ակադեմիայի ունկնդիրներն իմ մասին շատ են պատմել նրա ամուսնուն և նա գիտեր, որ ես թռչում եմ, որ ես կույր թռիչքների հրահանգիչ եմ: Այդ ամբողջ երեկոն մենք այլևս չբաժանվեցինք: Խոսում էինք ամեն բանի մասին: Վալյան ինձ պատմեց, որ ինքը դաշնամուր է նվագում և, բացի այդ, պատրաստվում է մայր դառնալու: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը մեզ չխանգարեց վալս պտտվել Սյունազարդ դահլիճի սքանչելի պարկետի վրա:

Պարահանդեսից մենք բավական ուշ դուրս եկանք: Վալյան տուն էր շտապում և ես հաճույքով գնացի նրա հետ միասին:

Որքա՜ն հաճելի եր գիշերը քայլել Մոսկվայի հանգչող փողոցներով: Մենք կամացուկ զրուցում եյինք՝ պատմելով ինչ-վոր պատմություններ, ծիծաղում եյինք, կատակում: Յես չը-նկատեցի, թե ինչպես եմ անցել իմ տունը: Յերկուսս էլ ու-րախ եյինք և ափսոսում եյինք բաժանվել: Հրաժեշտը տալիս Վալյան ասաց.

— Անցիր ինձ մոտ, Մարինա:

Սակայն նրա մոտ գնալ հաջողվեց միայն աշնանը, յերբ Վալյան արդեն տղա ունեցավ: Ճամբարներից վերադառնալուց հետո, աշնան առաջին օրերից մեկին, յես Վալյային հանդիպեցի Պետրովսկի պարկում: Մենք ուրախացանք: Աշխույժ զրույցով յերկար ժամանակ քայլում եյինք պարկում: Ի հարկե, խոսում եյինք թռիչքների մասին, այն մասին, թե վորքան լավ կլիներ, յեթե միասին մի վորևե տեղ թռչենք:

— Միայն թե հեռու,— ասում եր Վալյան:

— Դե, ի հարկե հեռու:

Նա ինձ քարշ տվեց իր մոտ:

Վալյան իր ամուսնու, մոր և փոքրիկ տղայի հետ ապրում եր մեկ սենյակում: Յերեխային ծննդյան օրից սկսել եյին Սոկոլիկ անվանել, թեև նրա անունը Վալերի յեր: Յես տեսա, վոր իմ ընկերուհին վոչ միայն օդաչուհի յե, այլև հիանալի մայր: Յերեխան աղմկում եր, բայց այդ նրան ամենևին չեր նեղացնում: Նա յերեխայի յուրաքանչյուր շարժումին հետևում եր այնպիսի հիացմունքով, վոր յես նույնիսկ նախանձեցի նրան:

Մենք փոխ առ փոխ դաշնամուր եյինք նվագում: Նվագում եյինք վորպես սիրող, ինչպես կարող եյինք, բայց մեծ վոգևորությամբ: Յերբ մեզանից վորևե մեկը սխալ եր անում, մենք ուրախ աչքով եյինք անում իրար, կարծես ասելով՝ «դե, դու հասկանո՞ւմ ես»:— «Հասկանում եմ, հասկանում»:— «Դե, պատկերացնո՞ւմ ես դու»:— «Ի հարկե պատկերացնում եմ»: Մենք մեծահոգաբար ներում եյինք մեկը մյուսի կատարած ան-մեղ յերաժշտական սխալները:

Այդ յերեկո յես իմացա, վոր Վալյան ծնվել է ավիացիոն ընտանիքում, վոր նրա հայրը դեռ հեղափոխությունից առաջ

սավառնակներ է կառուցել և ինքն էլ թռել է նրանցով: Վոր Վալյայի մայրը՝ Նադեժդա Անդրեևնան, հորն օգնել է սավառնակներ կառուցելիս: Յերբ ընտանիքը կարիքի մեջ է յեղել և սավառնակի նյութական մասերը գնելու համար փող չի յեղել, մայրը հարուստ մարդկանց մոտ կար անելով փող վաստակելիս է յեղել:

Սեղան նստեցինք: Ինձ շրջապատեցին սիրալիր, հյուրասեր մարդիկ՝ Վալյան, նրա ամուսինը, Վալյայի մայրը: Նա մեզ հյուրասիրեց համեղ բաներով: Մենք զրուցում եյինք անբռնազբոսիկ ու կամացուկ, վորպեսզի Սոկոլիկին չարթնացնենք: Փոքրիկը քնած եր անխռով, նա շնչում եր հանդարտ ու համաչափ, ինչպես յուրաքանչյուր առողջ յերեխա: Յերբեմն-յերբեմն Վալյան անձայն մոտենում եր մահճակալին և խնամքով ուղղում նրա վերմակը: Նա հագած ուներ շատ թեթև տնային հագուստ, վոր նրան է՛լ ավելի կանացի ու հրապուրիչ եր դարձնում:

Վիկտորը՝ Վալյայի ամուսինը, թռիչքներից վերադարձել եր հոգնած: Նրա դեմքը կարմիր եր ու հողմահարված:

Խոսում եյինք ավիացիայի մասին: Վալյայի մայրը պատմում եր իր աղջկա առաջին թռիչքի մասին: Բանից դուրս յեկավ, վոր Վալյան հոր հետ թռել է դեռ յերկու տարեկան հասակում: Մի անգամ մայրը տանից գնացել է աշխատանքի: Մեկը չի յեղել, վորի մոտ յերեխային թողնի. հայրը, վոր պատրաստվելիս է յեղել ստուգելու իր նոր սավառնակը, առանց յերկար մտածելու աղջկանը կապել է իր մեջքին ու թռել:

— Ահա և նա օդաչուհի դարձավ,— ասում եր Նադեժդա Անդրեևնան, և նրա խոսքերի մեջ հպարտություն եր հնչում:

Հիանալի ընտանիք է այդ ընտանիքը: Համերաշխ, խաղաղ: Հետագայում, յերբ մենք սկսեցինք ավելի հաճախ հանդիպել, Վալյայի մոտ յեղած ժամանակ յես յերբեք չտեսա, վոր նրանցից վորևե մեկը վրդովվեր կամ ձայնը բարձրացներ: Այստեղ միշտ միալար ուրախ տրամադրություն եր թագավորում: Զրույցները մեղմ եյին, սրտաբուխ: Հաճախ Վալյայի մոտ եր գալիս նրա բորտ-տեխնիկ Կատյա Սլոբոժենկոն: Ապագա թռիչքների մասին մեր զրույցին ու փափագին վերջ չկար:

Մի անգամ սովորության համաձայն Վալյան վերարկուն ուսերին գցելով դուրս յեկավ ինձ ճանապարհ դնելու: Մենք դանդաղ քայլում էյինք Ակադեմիայի յերկար միջանցքով և զրույց էյինք անում ամենախորհրդավոր կերպով, ինչպես միայն կարող են զրուցել յերկու օդաչուհիներ: Մենք ծարավի էյինք թռչելու՝ վորքան կարելի յե ավելի, վորքան կարելի յե հեռու: Ուշ գիշերին Ակադեմիայի հանրակացարանի միջանցքում մեր մեջ սկսեց հասունանալ կանանց հեռավոր անվայրէջք թռիչքի գաղափարը:

Դրանից հետո մենք սկսեցինք ավելի հաճախ հանդիպել: Մեզանից յուրաքանչյուրը շարունակում էր իր գործը: Ակադեմիայի իմ աերոդրոմից յես հաճախ հետևում էյի Վալյայի թռիչքին: Յերբեմն մենք միասին գնումներ անելու էյինք գնում: Շրջում էյինք խանութներում, խաղալիքներ գնում՝ նա իր Սոկոլիկի համար, յես՝ իմ Տանյուշայի: Ինչպե՜ս էր ուրախանում ու ցնծում իմ Վալյան, յերբ նրան հաջողվում էր ընտրել որևէ օրիգինալ խաղալիք, գեղեցիկ վառնամաններ կամ մանկական կոստյում:

Ի հարկե, ամեն անգամ մենք զրուցում էյինք թռիչքների մասին: Ավելի ու ավելի հաճախ էյինք անդրադառնում մեր ընդհանուր բաղձանքին՝ միասին թռչելու հարցին: Բայց այդ բոլորը առայժմ դեռ բավական մշուշապատ էր:

Մի անգամ 1937 թվի աշնանը Վալյան անսպասելի կերպով հեռախոսով զանգահարեց ինձ:

— Մարինա, ցանկանո՞ւմ ես ինձ հետ մի փոքրիկ ռեկորդի թռիչք կատարել:

— Ի՞նչպիսի ռեկորդ:

— Սպորտային, հեռավորության ռեկորդ: Կթռչե՞ս:

— Ի հարկե կթռչեմ: Յե՞րբ:

— Հանգստյան օրն անցիր ինձ մոտ, կխոսենք:

Գնացի: Վալենտինան ինձ պատմեց, թե կա № 12 մի փոքրիկ մեքենա, Յակովլեվի կոնստրուկցիայի, վորը հնարավորություն է տալիս թեթևամոտոր սավառնակի համար ուղիղ գծով թռչելու հեռավորության ռեկորդ սահմանել:

— Կուզե՞ս միասին թռչենք,— հարցրեց Վալյան:

— Այդ ի՞նչ հարց է: Ի հարկե ուզում եմ:

Մենք սկսեցինք մարշրուտը քննարկել: Վալենտինան առաջարկեց Միջին Ասիան:

— Թռչենք Կազալինսկ: Այդ տրասսը յես գիտեմ, շատ անգամ եմ թռել:

Այդպես էլ վորոշեցինք: Յես գնացի տուն և առանց հետաձգելու սկսեցի մեր մարշրուտը քննել շտուրմանական տեսակետից: Յեթե մենք ուզում ենք ուղիղ գծով հեռավորության ռեկորդ սահմանել, ապա պետք է թռչել վոչ թե քաղաքացիական ավիացիայի սովորական ճանապարհով, այլ յերկու կետերի միջև յեղած ամենակարճ ճանապարհով: Յես վճռեցի, վոր մեզ համար ամենահարմարը կլինի Մոսկվայից թռչել ուղիղ դեպի Օրենբուրգ, իսկ այնտեղից յերկաթուղու յերկարությամբ մինչև այնտեղ, վորքան վառելանյութը կբավականացնի:

Վալյան խնդրեց.

— Մի քանի օրով աշխատանքից ազատվիր, մեր մեքենայով թռիչքներ կատարենք Մոսկվայի վրա:

Ինձ աշխատանքից բաց թողին և յես գնացի Տուշինոյի աերոդրոմ:

Վալյան արդեն սպասում էր ինձ: Նա հագած ուներ մի փառահեղ վերարկու, թեթև, բարձրակրունկ տուֆլիներ, գեղեցիկ տարազի գլխարկ: Կարծես իր հագուստն արդարացնելու համար Վալյան ասաց.

— Յես պատահաբար եմ յեկել աերոդրոմ: Այսօր թռչելու մասին չեյի էլ մտածում...

Բայց նա թռավ: Վերարկուի վրայից պարաշյուտ հագավ, գլխին սաղավարտ դրեց, շքեղ տուֆլիները հանեց և չուլքերով մտավ սավառնակ: Իր կյանքում առաջին անգամ նա նոր մեքենա յեր վարում: Բայց վորքան գեղեցիկ պոկվեց սավառնակը գետնից: Աերոդրոմում գտնվող օդաչուներն աղմուկով գովեցին Գրիզոդուբովային: Յես կանգնած լսում էյի նրանց աշխույժ զրույցը:

— Այ, այդպիսի թռիչքին կարելի յե նախանձել:

Ինձ այնպիսի հպարտություն համակեց, վոր կարծես իմ մասին էյին խոսում: Հաճելի յեր լսել, վոր փորձված օդաչու-

ներն այդպես են արտահայտվում կին-ոդաչուի մասին և առանձնապես հաճելի յեր, վոր այդպես են ասում իմ ընկերուհի Վալյայի մասին:

Նա վայրեջք կատարեց նույնքան հիանալի, ինչպես կատարել եր թռիչքը: Հագավ տուֆլիները, վրայից հանեց պարաշյուտը և սկսեց ոդաչուների հետ զրուցել: Խոսքը վերաբերում եր այն բանին, թե թռիչքի ժամանակ չասսիները պե՞տք ե հավաքել, թե վոչ: Վալյան գտնում եր, վոր չասսիներն անպայման պետք ե հավաքել:

— Այ, նայեցեք մեր ավագ ոդաչու Պլոնտկովսկուն: Նա ջոկատում ամենաուժեղ տղամարդն ե: Բայց նույնիսկ նա ստիպված ե լինում մեքենան «կախել» նվազագույն արագության վրա, վորպեսզի չասսիները հավաքի: Եվ դուք ինչպե՞ս կարող եք գլուխ հանել: Այստեղ ֆիզիկական մեծ ուժ ե հարկավոր:

Յեվ իրոք, խորություններում չասսիները հավաքելու ժամանակ, վորտեղ այն հավաքվում ե, առաջանում ե ոդային բարձ և մեծ ջանք ե հարկավոր ոդի ճնշումը հաղթահարելու համար:

— Դուք այն վոչ մի կերպ չեք կարող հավաքել, չփորձեք,— ասում եյին ոդաչուները:

— Անպայման կփորձեմ,— պատասխանում եր Վալյան:

Նա իրավացի յեր: Չասսիների հավաքելը ավելացնում ե արագությունը, մի քանի կիլոմետր ավելի անցնելու հնարավորություն ե տալիս: Կախ ընկած չասսիներն, ընդհակառակն, ավելացնում են սավառնակի դիմադրականությունը և նվազեցնում նրա արագությունը:

Հետևյալ որը մենք կրկին յեկանք աերոդրոմ և միասին թռանք: Յես առջևի կաբինում եմ, Վալյան իմ հետևն ե: Շըրջանաձև թռիչք գործեցինք: Մեքենան փոքրիկ ե, թեթև: Կաբինը բավական նեղվածք ե, սարքերը՝ քիչ: Կա միայն քարտեզ, ժամացույց, կողմնացույց և արագությունը ցույց տվող սարք: Նույնիսկ քամու ուժը չափելու վորևե գործիք տեղավորել հնարավոր չե: Նշանակում ե, մտածում եմ, ստիպված եմ լինելու քամին վորոշել մեծ ետապներով, առնվազն հիսունական կիլոմետրերով, կոպիտ կերպով հաշված կուրսով և հետո միայն քարտեզի նշել, թե քամին մարշրուտից վոր կողմն ե թե-

քում սավառնակը: Այդ, ի հարկե, թռիչքը կերկարացնի, կըխանգարի ուղիղ գծով թռչելուն, բայց ի՞նչ արած: Թռիչքային կշիռը կոնստրուկտորին չի թույլ տվել կաբինի ծավալը մեծացնել և ահա սարքերին տեղ չկա...

Փոքր ինչ պտույտներ գործեցինք և ցած իջանք: Վալյան ինձ ասում ե.

— Դուրս արի:

— Ինչո՞ւ դուրս գամ:

— Վորովհետև յես մենակ եմ թռչելու. չասսիները պիտի հավաքեմ:

Մոտեցան ուրիշ ոդաչուներ ել: Հարցնում են.

— Ի՞նչ եք ուզում անել:

— Ուզում եմ փորձել չասսիները հավաքել:

— Բայց դուք չեք կարող:

— Կփորձեմ. գուցե կհաջողվի...

Վալյան ինձ ռիսկի յենթարկել չեր ուզում: Ի՞նչ բան կարող եր պատահել չասսիները հավաքելու ժամանակ:

Սավառնակը վեր թռավ, բարձրացավ և աերոդրոմից յերևում եր, վոր թռչում ե առանց չասսիների: Հետո Վալյան ցածրացավ և համարյա թե ոդաչուների գլխի վրայով թռչելով՝ մի քանի անգամ ցույց տվեց չասսիները հավաքելու ձևը: Հավաքել ու բաց թողնել, հավաքել ու բաց թողնել: Մեկ անգամ նույնիսկ անցավ համարյա ոդաչու Պլոնտկովսկու գլխի վրայով, այն մարդու, վորի մասին պատմում եյին, վոր նրան վոչ մի կերպ չի հաջողվում ոդում չասսիները հավաքել: Վալյան շատ հանգիստ կատարում եր իր տրյուկը, կարծես իր ամբողջ կյանքում հենց այդպիսի վարժություններ անելիս եր յեղել: Աերոդրոմի քառակուսու մեջ կանգնած ոդաչուները ցնծության մեջ եյին.

— Ոհո, Պլոնտկովսկի, հիմա Վալկան կարող ե քեզ բոքսի ել հրավիրել...

Վալյան իջավ, սավառնակից դուրս յեկավ ու մոտեցավ ոդաչուներին: Նրա աչքերը խորամանկորեն և ուրախ ժպտում եյին: Նա վոչինչ չասաց: Յեվ ի՞նչ պիտի ասեր վոր: Այն, ինչ նա հենց նոր արեց ոդում, արդեն խոսում եր ինքնին: Վալյայից

ավելի յես եյի ցնծության մեջ։ Ձե՞ վոր յես արդեն Գրիգորուբովայի անձնակազմի անդամ եյի···

Ստարտը նշանակեցինք հետևյալ առավոտյան։ Մեքենան տուրքի դնելու հանձնեցինք, իսկ յես ու Վալյան գնացինք տուն։ Այդ յերեկոն ու գիշերը յես անց կացրի Գրիգորուբովենց մոտ։ Հատակին փռած քարտեզներ եյինք կպցնում։ Հենց այդտեղ էլ, հատակին չոքեչոք էր անում փոքրիկ Սոկոլիկը։ Նա շատ էր հետաքրքրվում մեր արածով և ինքն էլ էր ուզում կպցնել։ Ըստիպված յեղանք նրան էլ մի վրձին ու սոսինձ տալ։ Նա անմիջապես քարտեզների կտորտանքը դասավորեց ու սկսեց զբաղվել նրանցով, ամենևին չխանգարելով մեզ։

Կթռչե՞նք տեղ կհասնե՞նք, թե՝ վոչ։ Կբավե՞ արդյոք վառելանյութը։ Ի՞նչպիսի յեղանակ կլինի։ Մենք նորից ու նորից վերադառնում եյինք այդ հարցերին։ Սոկոլիկն ուշի ուշով ականջ էր դնում։ Վալյայի ամուսինն ասում է·

— Կարծես ձեր վառելանյութը քիչ է։ Տեսեք, կարող է տեղ չհասնեք···

Հանկարծ Սոկոլիկը գոչեց·

— Կհասնե՛ք, կհասնե՛ք···

Բոլորս ծիծաղեցինք։ Քանի վոր յերեխան ասում է, ուրեմն ամեն ինչ կարգին կլինի։

Վալյան փոքրիկին գրկեց, ամուր սեղմեց իր կրծքին, համբուրեց և պառկեցրեց քնելու։ Շուտով նա ինքն էլ պառկեց։ Նրան հանգստանալ էր հարկավոր։ Նրա ամուսինը մնաց ինձ մոտ, վոր ոգնի քարտեզները կպցնելու։ Ահա, քարտեզներն արդեն պատրաստ են և յես էլ եմ գնում պառկելու։ Քունն աչքերիս լսում եմ, թե ինչպես Վալյան շնորհակալություն է հայտնում իր ամուսնուն.

— Կեցցես դու, վոր ոգնեցիր քարտեզները կպցնելու։ Դու լավ ընկեր ես ինձ համար։

Քնած ենք։ Հանդարտություն։ Միայն Նադեժդա Անդրեևնան չի պառկում։ Նա առավոտյան մեր թռիչքի համար նախաճաշ ու հավ է պատրաստում։

Լուսաբացից յերկու ժամ առաջ մենք վեր կացանք և սկսեցինք արագ ու խնամքով պատրաստվել։ Ինչպես մեկնելուց ա-

ռաջ միշտ լինում է՝ յուրաքանչյուր իր մի քանի անգամ ստուգում եյինք, վախենալով թե վորևէ բան կմոռանանք։ Քարտը վերցրե՞լ ենք։ Ի հարկե վերցրել ենք։ Քարտը տեղն է, բայց մենք նորից ու նորից ենք ստուգում։ Իսկ քարտեզը փաթաթե՞լ ենք։ Ձե՞ վոր հենց նոր տեսանք պլանշետը։ Նորից ենք նայում։ Նադեժդա Անդրեևնան մեզ համար տոպրակի մեջ է դնում բուտերբրոդներ, մի հավ և շատ խնձոր։ Հոգատարությամբ, ինչպես միայն կարող է մայրը, նա հետևում է մեզ, յերբ մենք հագնում ենք մեր թռիչքային զգեստը։ Յես հագնում եմ բրդե աստառով կաշվե շոր, Վալյան՝ տաք կոմբինեզոն։ Նադեժդա Անդրեևնան համբուրում է մեզ, բարի ճանապարհ է մաղթում և մենք դուրս ենք գալիս։ Սոկոլիկը խաղաղ քնած է իր մահճակալում։

Լուսարձակներով պայծառ լուսավորված մեր մեքենան պատրաստ կանգնած էր աերոդրոմի բետոնապատ ուղու վրա։ Վերջին պատրաստությունները ավարտվում եյին։ Մարդիկ շըրջապատել եյին սավառնակը և աշխատում եյին, ինչպես մեղուն փեթակի շուրջը։ Սպորտիվ կոմիսարները կաբինում ամրացնում եյին պլոմբած բարոգրաֆները՝ բարձրությունը ցույց տվող սարքերը։ Ամենից շատ հուզվում էր կոնստրուկտոր Յակովլևը. Նա դեռ անհանգստանում էր, թե գետնից ինչպես կպոկվի ծանր բարձված մեքենան։ Վալյան Յակովլևին ասաց·

— Մեքենայով առաջ գնացեք վազքի ուղղությամբ և կանգառեք այնտեղ, վորտեղ, ձեր կարծիքով, պետք է վազքը դադարեցնել, յեթե մեքենան չբարձրանա։ Այն ժամանակ յես գազ կտամ։

Յակովլևը գնաց։ Մենք նստեցինք սավառնակ։ Վալյան մեքենան շատ հեշտությամբ պոկեց գետնից։ Յակովլևի ավտոմոբիլի կանգնած տեղը մենք արդեն բավականին բարձրացել եյինք։

Վալյան ծիծաղեց. կոնստրուկտորի սպասածից ավելի շուտ ենք բարձրացել։

Ոդը թարմ էր։ Արևը դեռ չէր ծագել։ Բայց ահա մենք բարձրություն ենք վերցրել. հորիզոնում յերևաց լուսաբացի նեղլիկ վարդագույն շերտը։ Յերկիրը շատ հեռու մնաց։ Յերե-

վում են միայն քաղաքի կրակները, շատ կրակներ: Անցնում է էլի մի քանի րոպե, գետնին կրակները մարում են, գծագրությունն ավելի պարզ է դառնում և ահա, արդեն արևը ծագում է և շուրջն ամեն ինչ պայծառ լուսավորում: Մարդու սիրտ ուրախանում է: Մոտորը շատ համաչափ է աշխատում: Իմ կաբինում ավելի հարմար եմ տեղավորվում և շտուրմանական տնտեսությունը կարգի բերում: Հանկարծ խոսակցության ապարատից լսում եմ Վալյայի ձայնը.

— Գիրոմագնիսական կողմնացույցը չի աշխատում:

Յես փորձում եմ խորհուրդ տալ, թե այդպիսի դեպքերում ինչ պետք է անել: Բայց, պարզվում է, վոր վոչինչ չի օգնում: Կողմնացույցը շարքից հանված է: Այն ուղղել կարելի յե միայն գետնի վրա: Այ թե ինչ եյին արել սպորտային կոմիսարները: Յերբ նրանք կաբինում ամրացնում եյին բարոգրաֆները, պոկվել եր կողմնացույցին յուղ տվող խողովակը, վոչինչ չի կարելի անել: Գիրոսկոպը[1]) չի պտտվում, կողմնացույցը չի գործում:

Ի՞նչ անել: Զիջնե՞լ արդյոք: Սավառնակի բաքերը բերնեբերան լի՞քն են վառելանյութով: Այդպիսի բեռով իջնել չի կարելի, շասսիները կկոտրվեն: Օդում վառելանյութը թափելու համար սավառնակը հարմարություն չունի: Ուրեմն ի՞նչ անել: Պտույտներ գործել մինչև վառելանյութն սպառվի՞:

— Ի՞նչ անենք,— հարցնում է Վալյան:

— Թռիր ըստ իմ կողմնացույցի,— առաջարկեցի յես:

Իմ կաբինում նեղվածք է, շուռ գալու տեղ չկա: Կողմնացույցը վոտքերիս մոտ մի ինչ-վոր խոր տեղ է գտնվում: Յեվ ահա, յես կռանում եմ դեպի վոտքերս և հրահանգում. «դեպի աջ», «դեպի ձախ», «այդ ուղղությունը պահել», և այդպես ամբողջ թռիչքի ընթացքում: Մի ամպ եմ նկատում՝ ասում եմ. «Այդպես ուղղություն պահիր դեպի ամպը»: Յեթե յերկար ժամանակ ազդանշան չեմ տալիս, Վալյան հիշեցնում է.

— Ուղղությո՛ւնը:

---

1) Գիրոսկոպ — հոլիկ, գիրոմագնիսական կողմնացույցի հիմնական մասն է:

Շուտով այդ մի քիչ արտասովոր յեղանակով թռչելուն վարժվեցինք և սկսում ենք զրուցել: Ցածում մի վորևե հետաքրքրական բան ես նկատում, շատ ես ուզում, վոր Վալյան ել տեսնի այդ:

— Տես, վորքան գեղեցիկ է:

— Այո, գեղեցիկ է, Մարինկա:

Թռչում ենք Ժիգուլիի վրայով: Մտաբերեցինք Ժիգուլիի պարեջուրը և յերգում ենք. «Ախ, Ժիգուլի, իմ Ժիգուլի»: Գետակը փայլատակեց: Վալյան գոռում է.

— Նայիր, ի՛նչ սքանչելի գետակ է: Այ թե վորտեղ լավ կլիներ լողանալ:

Մի քանի րոպեյից հետո նորից ապարատում լսվում է նրա գրնգուն ձայնը:

— Մարինկա, ուտել ուզո՞ւմ ես: Յես արդեն հացը խժռում եմ:

Յես պատասխանում եմ.

Իմ հացն ամբողջապես բենզինոտվել է: Յեվ ստացվել է բենզինահամով սոուս:

— Ցած գցիր:

Բայց յես չեմ գցում: Շոկոլադ ենք ուտում: Ծիծաղում ենք ու կատակում: Շոկոլադը ստարտի ժամանակ հանդիսավոր կերպով մեզ եր մատուցել կոնստրուկտոր Յակովլևը: Յեթե անձնակազմը տղամարդկանցից լիներ կազմված, նա հավանաբար օդաչուներին յերկու շիշ լավ կոնյակ կնվիրեր...

Ժամանակն անցնում եր աննկատ: Վոլգան կտրեցինք անցանք Կույբիշևից հարավ: Ներքևում փռված եր Զավոլժյեյի տափաստանի տխուր տեսարանը: Վոլգայից դենը յեղանակն սկսեց վատանալ, ամպերն ավելի ու ավելի եյին ցածրանում: Փորձեցինք ամպերի միջով թռչել—բան դուրս չեկավ: Սավառնակը կույր թռիչքների հարմարանքներ չուներ: Ամպերից դուրս յեկանք ու շարունակեցինք թռչել ցածով, գետնից 100–200 մետր բարձրությամբ: Տեսանելիությունը վատ է, կաբինի պատուհանի ապակիները թափանցիկ չեն: Մենք ավելի ու ավելի ուշ-ուշ ենք կատակներ անում: Վալյան ավելի ու ավելի հաճախ է հարց տալիս:

— Ուղղությո՞ւնը, ուղղությո՞ւնը:

— Ըստ հաշիվների՝ հինգ րոպեից հետո Օրենբուրգն է լինելու: Այստեղից, ինչպես պայմանավորվել ենք, կարելի կլինի գնալ յերկաթուղու ուղղությամբ: Սակայն հինգ րոպե հետո Օրենբուրգը չերևաց: Ինձ զարմացնում էր սավառնակի հրամանատարի հանգստությունը: Վալյան անհամբերության վոչ մի նշան չէր ցույց տալիս և միայն հարցրեց.

— Ի՞նչ անենք այսուհետև:

— Թռչենք էլի հինգ րոպե:

Հինգ րոպե անց նա հարցնում է.

— Ապա ո՞ւր է քո Օրենբուրգը:

— Այստեղ շատ մոտիկքումն է: Մենք չենք տեսնում, վորովհետև ցածր ենք:

— Ի՞նչ անենք ուրեմն:

— Թռչենք յերեք րոպե դեպի հյուսիս, վեց րոպե՝ դեպի հարավ: Հավանորեն կգտնենք կամ յերկաթուղին, կամ Օրենբուրգը:

Թռանք դեպի հյուսիս: Քաղաքը չկա: Այն ժամանակ ուղղությունը վերցրինք դեպի հարավ և չորս րոպեից հետո դուրս յեկանք յերկաթուղու վրա: Սակայն այդ ինչ ճանապարհ է, Օրենբո՞ւրգ է տանում, թե՞ Օրենբուրգի այն կողմն է: Ուշիուշով նայեցինք և տեսանք, վոր այդ ճանապարհն անցնում է այդտեղ ձգվող Ուրալյան լեռնաշղթայի ստորոտի մոտով: Նշանակում է՝ այդ Կուրգան տանող ճանապարհն է: Իսկ յերկրորդ ճանապարհը, մեզ հարկավորը, վոր Օրենբուրգից Կազալինսկ է տանում, մնացել է աջ կողմը և չի յերևում: Այն ճանապարհը պետք է անցնելիս լինի ցածրիկ ավազոտ տափաստանով: Պարզվեց, վոր մենք Օրենբուրգն անցել ենք տաս րոպե առաջ, սակայն անցել ենք մոտ քառասուն կիլոմետր մեր մարշրուտից դեպի հյուսիս: Ցածր ամպամածությունը քաղաքը պահել է մեզանից:

Օրենբուրգ վերադառնալ չուզեցինք. վառելանյութն առատ էր: Ամայի, հարթ տափաստանի վրայով թռանք ուղիղ դեպի Ակտյուբինսկ: Շուրջը տաղտուկ ավազ է: Յերբեմն միայն ավազոտ հարթությունը փոխվում է նույնպիսի ավազաբլուրներին: Վերևից կարծես անապատը ծալծլված լինի: Մեր տակ կարծես ավազը շարժվում է:

Հանկարծ զգում եմ, թե ինչպես ծնկիս վրայի քարտեզներն սկսում են բարձրանալ: Հետո քարտեզների հետ միասին կաբինից բարձրանում եմ և յես: Փոկերից բռնեցի: Տեսնեմ՝ Վալյան ծիծաղում է.

— Մոտոռում ընդհատում է: Վառելանյութը վերջացել է բոլոր բաքերում, բացի ավարիայինից: Մոտոռն ուզում էր կանգ առնել, յես լծակը թողի ու կռացա, վոր վառելանյութի մյուս բաքը միացնեմ: Այդ ժամանակ մեքենան «կտցահարեց» և դու քիչ մնաց պլոտի դուրս ընկնեյիր կաբինից...

Յես մրթմրթում եմ.

— Քեզ համար այդ ծիծաղելի յե...

Իսկ Վալյան ավելի շատ է ծիծաղում:

— Իսկ դու փող ունե՞ս մոտդ:

— Ներքև նայիր մի, Վալեչկա,— պատասխանում եմ յես,— այնտեղ, միևնույն է, փողը պետք չի գա:

Իսկապես, մենք թռչում էյինք խուլ, անմարդաբնակ անապատի վրայով: Բացի ավազից ուրիշ վոչինչ չկար: Վոչ մի ավան, վոչ յերկաթուղի:

— Այ, այնտեղ դու յերևի կուտեյիր քո բենզինով համեմած հավը:

— Այո, մեռյալ վայր է...

Կատակելով ու ծիծաղելով չնկատեցինք, թե ինչպես անցան էլի տաս-տասնհինգ րոպե և ավազաթմբերի մեջ յերևացին յերկաթուղու յերկարությամբ կառուցված շենքեր: Այդ Ակտյուբինսկն էր:

Առանց դժվարության աերոդրոմը գտանք: Իջանք: Այստեղ մեզ վոչ վոք չէր սպասում: Սպորտային կոմիսարներին գտանք և յերբ նրանք բարոգրաֆները հանեցին, վայրէջքի մասին արձանագրություն կազմեցին և բենզինի բաքերի պլոմբներն ստուգեցին, մենք դիմեցինք աերոպորտի պետին և խնդրեցինք մի մեքենա, վոր գնանք քաղաք ընթրելու: Մեզ քաղաք տարան ավտոբուսով, աերոպորտի աշխատակիցների հետ, վորոնք կոլեկտիվ կերպով կինո էյին գնում:

Ճաշարանում մեզ ղազախական ձևով պատրաստած վոչխարի համեղ միս տվին: Ուտելուց հետո դուրս յեկանք մաքուր օդ:

Վալյայի հագին կոմբինեզոն էր. այդ տեսքով քաղաքում շրջելն անհարմար էր: Յես նրան տվի իմ ռեգլանի մորթե աստառը: Նա այն հագավ բուրդը դեպի դուրս, վոր մուշտակի նման մի բան դարձավ: Մենք նստեցինք մի տան աստիճանների վրա և սկսեցինք բարձր ձայնով խոսել ու յերազել մեր հետագա հեռավոր թռիչքների մասին:

— Ի՜նչ լավ կլիներ մի հինգ հազար կիլոմետր թռչել: Բայց ո՞ւր: Այ, Ամելիա Երխարտը թռչում է բոլոր յերկրներով...

— Մեզ այդ պետք չէ, Վալյա: Մեր հայրենիքն այնպիսի ընդարձակ տարածություններ ունի, վոր ինձ ու քեզ նախանձել կարող է ոտարերկրյա ամեն մի ոդաչու: Թռչենք Հեռավոր Արևելք:

Տեղին էր ասված: Գտնված էր հրապուրիչ, հետաքրքիր, բարդ մարշրուտը: Սկսեցինք քննարկել, թե վո՛ր մեքենայով ավելի լավ է թռչել, ինչ վերցնել մեզ հետ: Այնպես էինք խոսում դրա մասին, վոր կարծես պատրաստվում էինք հենց վաղը թռչել նոր մարշրուտով:

— Միայն թե, անպայման պահեստի կողմնացույց վերցրու, Վալյա, թե չէ ինձ ձանձրացրեց ամեն րոպե կռանալն ու «դեպի աջ», «դեպի ձախ» գոռալը: Ուղղի կվերցնենք...

Ավտոբուսը մեզ նորից աէրոդրոմ հասցրեց: Այստեղ գիշերեցինք, իսկ առավոտյան հաց ու խաղողով նախաճաշելով՝ Ակտյուբինսկի փոշոտ աէրոդրոմից թռանք դեպի Մոսկվա: Մեզ նախազգուշացնում էին. թե այդքան բեռով այդ աէրոդրոմից թռչել չի լինի: Բայց թռանք: Ի հարկե, Մոսկվա վերադառնալ կարելի յեր նաև յերկաթուղով, բայց յերկուսս էլ շտապում էինք տուն: Յես պետք է արձակուրդ գնայի Սուխումի, վորտեղ ինձ սպասում էին մայրս ու աղջիկս: Վալյան էլ իր Սոկոլնիկի մոտ էր շտապում:

Որենբուրգից մոտ յոթանասուն կիլոմետրի վրա մենք ծխի մեջ ընկանք: Տեսանելիությունը վատացավ: Հանկարծ Վալյան ասում է.

— Ինչ վոր բենզինի հոտ է գալիս: Ապա մի հոտոտիր քո կաբինը:

Յես կռացա և բենզինի սուր հոտ զգացի:

— Նայի՛ր, բաքից չի՞ ծորում:

Բաքը սարքերի տախտակի հետևն էր, իմ վոտքերի մոտ: Ձեռքս քսեցի բաքի կողերին և հանկարծ բենզինի ուժեղ շիթը կպավ ձեռքիս: Իսկույն թրջվեցին քարտեզները, կոշիկներս և ամեն բան, ինչ վոր կաբինում էր: Կաբինի ձախ կողմը, վորի վրա պերկալ էր քաշած, թափանցիկ դարձավ, կտորը թրջվել էր:

Հրահանգի համաձայն այդպիսի դեպքերում պետք է վայրէջք կատարել: Մոտորի միջից չափազանց հարուստ խառնուրդի յուրաքանչյուր բլթոց հրդեհի սպառնալիք է: Սակայն իջնել այնտեղ, վորտեղով մենք թռչում էինք, շատ տխուր բան կլիներ: Շրջապատում շատ կիլոմետրերի վրա վոչ մի բնակություն չէր յերևում: Վալյան վորոշեց վերադառնալ Որենբուրգ:

Այժմ արդեն մենք այնքան էլ ուրախ չէինք: Ամեն րոպե պետք է զգույշ լինել, վորպեսզի հրդեհ չբռնկի: Հակիրճ խոսակցություն ունեցանք:

Վ ա լ յ ա.— Հրահանգի համաձայն պետք է իջնել: Ուզո՞ւմ ես:

Յ ե ս.— Ցած նայիր մի, ի՜նչ զզվելի յե այնտեղ...

Վ ա լ յ ա.— Դե, ուրեմն դու էլ ինձ պես ես մտածում: Թռչենք Որենբուրգ:

Յ ե ս.— Համաձայն եմ: Որենբուրգը հեռու չէ:

Մենք հաջողությամբ իջանք Որենբուրգի աէրոդրոմում: Յերբ մտանք կայանի պետի կաբինետը՝ այնտեղ ինչ-վոր խորհրդակցություն կար: Մեզանից այնպես ուժեղ բենզինի հոտ էր գալիս, վոր կայանի պետը հրահանգեց.

— Ծխելը դադարեցնե՛լ:

Մեզանից բարձրացող բուրմունքից կայանի պետը հասկացավ, թե մենք ինչու յենք հյուր ընկել իր մոտ:

— Ի՜նչ արած,— սփոփում էինք ինքներս մեզ,— ստիպված ենք լինելու յերկաթուղով գնալ: Ցավալի յե:

Ճիշտ է, ուղիղ գծով թռիչքի կանանց միջազգային ռեկորդը գերազանցված էր: Մինչ այդ ռեկորդն ամերիկյան ոդաչուհիներին էր պատկանում: Նրանք ուղիղ գծով թռել էին մոտ 800 կիլոմետր: Իսկ մեր թռիչքը 1443 կիլոմետր էր: Բայց և այնպես մենք գոհ չէինք մեզանից:

... Գնացքում, ռեստորան-վագոնում, յերկու ուղևոր մեր կողքին նստած սեխ եյին ուտում և կատակներ անում:

— Ա՛յ քեզ սեխ: Սա գալիս է Ալմա-Աթայից և վոչ մի թերթում սրա մասին չի գրում: Իսկ կան մարդիկ, վոր գալիս են Որենբուրգից կամ Ակտյուբինսկից, բայց նրանց մասին արդեն թերթում գրել են...

Մենք թերթը վերցրինք: Այնտեղ մեր թռիչքը մանրամասն նկարագրված եր: Սպորտային կոմիսարների պատմածի համաձայն, հաղորդվում եր, վոր մենք գերազանցել ենք թեթև սավառնակով հեռավոր թռիչքի միջազգային ռեկորդը:

Կնքված բարոգրաֆները գնում եյին մեզ հետ միասին նույն գնացքով:

... Մոսկվայի կայարանում մեզ դիմավորեց Վալյայի ամուսինը: Նա Վալյայի համար կաշվե բաճկոն եր բերել. գիտեր, վոր Վալյան կոմբինեզոնով է թռել: Բայց Վալյան արդեն զուգվել եր իմ ռեգլանի չուռ տված աստառով:

— Վոչինչ, այսպես ել լավ է ինձ համար:

Մենք իջանք կառամատույց և մեր առջևը շատ ծաղիկներ տեսանք: Վալյան դեռ վոչինչ չկասկածելով ասում է.

— Նայիր, ինչ վոր մեկին դիմավորում են ծաղիկներով...

Բայց ծաղիկների հետևը յերևացին բազմաթիվ ոդաչուական գլխարկներ: Մենք գլխի ընկանք. այդ ոդաչուներն եյին յեկել մեզ դիմավորելու: Վալյան անմիջապես ցած գցեց նրան այլանդակող մուշտակը և կաշվե բաճկոնը հագավ: Յեվ լավ ժամանակին արեց այդ:

Մեզ մոտեցավ Խորհրդային Միության հերոս Սլեպնևը՝ մի ահագին ծաղկեփունջ ձեռքին:

ՊՈԼԻՆԱ ՈՍԻՊԵՆԿՈՆ ԼՈՂԱԼ Է ՍՈՎՈՐՈՒՄ

Յես նրան միայն լուսանկարներից եյի ճանաչում: Թերթերում տպվում եյին նրա նկարները: Ոդաչուները նրա բարձրության թռիչքների մասին խոսում եյին հաճախ և գոհունակությամբ: Մի անգամ յերեկոյան աշխատանքից վերադառնալով՝ յես մեր տանը տեսա ռազմաոդային ուժերի գիտահետազոտական ինստիտուտի ինժեներին: Նա ինձ հետ այսպիսի մի զրույց սկսեց.

— Ինչպե՞ս կվերաբերվեյիք դուք կին ոդաչուի հետ հեռավոր թռիչք կատարելուն:

— Ո՞ւմ հետ,— հարցնում եմ:

— Միևնույն չե՞, թե ում հետ: Դուք այն ասացեք. համաձա՞յն եք, թե վոչ:

— Համաձայն եմ,— պատասխանում եմ յես,— բայց նայած ինչ աղջիկ է: Չե՞ վոր յես իմ կյանքը պիտի վստահեմ նրան, իսկ կյանքն ինձ համար թանգ է, ինչպես հիշողությունս:

Ծիծաղեցինք: Մի րոպե անց ինժեներն ասաց.

— Դե, յեթե ձեզ համար միևնույն չե, ուրեմն լսեցեք. Պոլինա Ոսիպենկոն ձեզ առաջարկում է թռչել իր հետ: Նա աղջիկ-շտուրման է վորոնում և ռազմաոդային ուժերի վարչությանը խորհուրդ է տվել ձեզ դիմել:

— Պոլինա Ոսիպենկոյի հետ համաձայն եմ:

— Բայց ինչո՞ւ չեք հարցնում, թե ուր եք թռչելու,— ծիծաղեց ինժեները:

— Ինձ համար միևնույն չե՞: Նա լավ ոդաչու յե: Քանի վոր յես նրան վստահում եմ, ուրեմն միևնույն է, թե ուր կթռչենք: Բայց յեթե գիտեք, ասացեք:

— Պոլինան պատրաստվում է ծովային հիդրոսավառնակով թռիչք կատարել ցամաքի վրայով— Սև ծովից մինչև Սպիտակ ծով: Հավանո՞ւմ եք:

— Շա՛տ:

Այդ միտքն, իրոք վոր, հիանալի յեր: Յես դեռ լսած չեյի, վոր վորևե մեկը հիդրոսավառնակով ցամաքի վրայով այդքան տարածություն անցած լիներ:

— Վաղն առավոտյան յեկեք վարչություն,— ասաց ինժեները հրաժեշտ տալիս,— այնտեղ վեստիբյուլում կհանդիպեք Պոլինա Ոսիպենկոյին:

— Բայց յես նրան ինչպե՞ս ճանաչեմ:

— Կարծում եմ այնքան ել շատ աղջիկ-ոդաչուհիներ չեն լինի այնտեղ:

Հետևյալ առավոտյան յես գնացի ռազմաոդային ուժերի վարչություն: Վեստիբյուլում բավական շատ ոդաչուներ կային, բայց աղջիկ-ոդաչու չեր յերևում: Յես արդեն պատրաստ-

վում եյի գնալու, յերբ հանկարծ ինձ մոտեցավ մի աղջիկ և կանացի ձայնով ասաց.

— Դուք Մարինա Ռասկովա՞ն եք:

— Պոլի՛նա, իսկ յես ձեզ տղամարդկանցից չեյի ջոկում:

Իսկապես, նրան տարբերելը դժվար եր, մազերը կարճ խուզած, հագին շալվար, գլխին՝ պիլոտկա,—վոչ մի բանով նա չեր տարբերվում տղաներից:

Մենք դուրս յեկանք, Գոգոլի բուլվարում նստեցինք մի նստարանի վրա և յերկար ժամանակ քննարկում եյինք մեր ապագա թռիչքը: Պոլինան հետաքրքրվում եր այդպիսի թռիչքի դժվարություններով՝ շտուրմանական տեսակետից: Յես էլ ցանկանում եյի իմանալ, թե ինչպիսի մեքենայով ենք թռչելու: Բաժանվեցինք նախնական պլանով միանգամայն բավարարված: Այդ տարի թռչելն արդեն ուշ եր, ոգոստոս ամիսն եր: Պայմանավորվեցինք թռիչքի պատրաստվել գարնան համար:

Նույն որը Պոլինան գնաց իր զորամասը: Յես անցա նախապատրաստություններին: Ձեռք բերի Միության յեվրոպական մասի քարտեզներ՝ ամենահարավային սահմաններից մինչև Սպիտակ ծովը և սկսեցի զանազան վարիանտներ կազմել: Ի՞նչն է ամենակարևորն այդպիսի թռիչքի ժամանակ: Վորքան կարելի յե քիչ տարածություն կորցնել, գնալ ուղիղ գծով և դրա հետ միասին այնպիսի մարշրուտ ընտրել, վոր հնարավոր լինի հարկադրական վայրեջքի դեպքում ոգտագործել ճանապարհին յեղած գետերը: Չե՞ վոր մենք նավակով թռչելու յենք ցամաքի վրայով:

Ամեն ինչ լավ եր ստացվում: Միայն ճանապարհի մի մեծ կտոր՝ Նիկոլայեվից մինչև Կիև պետք է անցնեյինք մերկ ցամաքի վրայով: Այդ նշանակում եր, վոր ավելի քան յերկու ժամ մենք վոչ մի ջրի չենք հանդիպելու: Ինչպե՞ս կվճռի Պոլինան: Այդ տափաստանային գոտին շուրջանցել Դնեպրի վրայով, թե՞ կտրել ուղիղ գծով: Ճիշտ է, Պոլինան բարձրաթռիչ ոդաչու յե, նա կարող է շատ բարձր թռչել: Իսկ վորքան բարձրությունն ավելի լինի, այնքան անհրաժեշտության դեպքում ավելի շատ կարող է սավառնակը ճախրել գետի հասնելու համար: Բայց այս բոլորի հետ ճանապարհին դեռ մնում եր մոտ յերեք հարյուր կիլոմետր համատարած ցամաք: Այստեղ ճախրելու տեղ չի լինի:

Բոլոր հաշիվներն անելով և մարշրուտի մի քանի վարիանտ մշակելով՝ յես սկսեցի սպասել Պոլինայի գալուն:

Նա Մոսկվա վերադարձավ միայն 1938 թ. մարտին: Պարզվեց, վոր նա էլ իր հերթին հիմնավորապես պատրաստվել է մեր թռիչքին: Պոլինան ինձ ներկայացրեց մեր անձնակազմի յերրորդ անդամին՝ Վերա Լոմակոյին: Մենք բոլորս էլ միաբերան համաձայնվեցինք, վոր դեպի Կիև թռչելու յենք ուղիղ գծով, ցամաքի վրայով: Այդ բանն առանձնապես պնդում եր Պոլինան: Ճանապարհի մյուս մասերը կասկածներ չեյին առաջացնում: Մնում եր միայն վորոշել, թե մենք մեզ հետ վորքան և ինչ մթերքներ ենք վերցնելու, վորքան վառելանյութ, ինչ ենք հագնելու: Թռիչքի մանրամասն պլանով մենք զեկուցելու գնացինք ռազմաոդային ուժերի պետի մոտ:

Մեզ լսելուց հետո ՌՈՈՒ պետը շատ պիտանի մանրամասն ցուցումներ տվեց, թե ինչպես պիտի ապահովել մեր թռիչքը, ինչպիսի սարքեր, ռադիոկայան, թռիչքային հագուստեղեն պիտի տալ մեզ: Նա մեզ առաջարկեց մեզ հետ Սևաստոպոլ տանել լիակատար սարքավորում, վորպեսզի ամեն ինչ առաջուց պատրաստված լինի:

Առաջինը Պոլինան գնաց Սևաստոպոլ, վորպեսզի մեր նավակը Սևաստոպոլից գործարան փոխադրի: Մեքենայի ինչ-վոր լրացումներ անել եր հարկավոր: Պոլինան ուզում եր. մոտ գործարանում սամոլյոտի թռիչքային կշիռը նվազեցնի: Յես Պոլինային ճանապարհ դրի մինչև կայարան: Վագոնի կուպեյում նրա ճամպրուկի կողքին տեղավորեցինք սարքերի արկղները: Պոլինան մի քիչ փնթփնթում եր, վոր ինքն ստիպված է այնքան բեռ տանել իր հետ, բայց ինչ կարող եր անել: Նա գիտեր, վոր յես իմ սարքերը վոչ վոքի չեմ վստահի տանելու, բացի անձնակազմի անդամներից:

Վերա Լոմակոն գնաց Արխանգելսկ: Նա պետք է դիտեր այն լիճը, վորի վրա վայրեջք եյինք կատարելու, ձեռք բերեր ավելի մեծ մասշտաբի քարտեզներ, տեղում ծանոթանար մեր մարշրուտի վերջին կտորներին:

Յես մնացի Մոսկվայում: Շտապ կարգով սկսեցի լրացնել շտուրմանական կրթության մեջ ունեցած իմ բացերը, սկսեցի տիրապետել ռադիստի արվեստին:

Ես ուզում ասել կողմնորոշումը գիտեյի, բայց այդ դեռ չէր նշանակում, թե կարող եմ ռադիոգրամներ ընդունել ու հաղորդել: Իսկ այդպիսի թռիչքի ժամանակ ցամաքի հետ կապ պահելը վճռական դեր էր խաղում: Մեր ճանապարհն անցնելու յեր ընդարձակ ամայի տարածություններով, անտառների, ճահիճների, լճերի վրայով: Ի՞նչ կլինի, յեթե ստիպված լինենք վայրէջք կատարել մի վորևէ ամայի տեղ, բնակավայրերից հեռու: Ինչպե՞ս տեղեկություն կտանք մեր մասին, յեթե ռադիոկապ չլինի: Չորրորդ անձ վերցնել մեզ հետ՝ կնշանակեր ճանապարհը կրճատել, այսինքն՝ նախապես հրաժարվել վառելանյութի լիակատար պաշարով թռչելու մտքից:

Կարճ ասած՝ յես սկսեցի համառորեն ուսումնասիրել ռադիոտեխնիկան: Որական յերկու ժամ ընդունման ու հաղորդման վարժություններ եյի անում: Ակադեմիայի դասատու Արտեմենկոն նստում էր իմ դիմաց, և հեռագրական բանալիով տեքստ ու թվեր էր հաղորդում: Յես ընդունում և գրի եյի առնում: Որեցոր Արտեմենկոն ավելի ու ավելի արագացնում էր հաղորդման տեմպը: Նրանից հետ մնալ չէր կարելի: Արտեմենկոն ինձ վարժեցնում էր համառորեն: Յեթե պատահում էր, վոր յես անփորձության պատճառով մի քանի նշան բաց եյի թողնում, նա ստիպում էր ընդունումն այնքան կրկնել, մինչև վոր սխալս ուղղում եյի: Բավական արագ յես սովորեցի մի րոպեյում իննսուն նըշան հաղորդել և այդքան էլ ընդունել: Այն ժամանակ մենք անցանք ռադիոկայանին: Ինձ տրամադրվեց սուպերգետերոդին ընդունիչ: Նա հեռագրային կամ ձայնի և առանձնապես խնամքով լարում է պահանջում: Ռադիստները ուրիշ շատ պրոֆեսիայի տեր մարդկանց պես, յերևակայելով, թե իրենց մասնագիտությունն ամենադժվարն է աշխարհում, վախեցնում եյին, թե սկզբում յես վոչինչ չեմ կարող ընդունել: Բայց Արտեմենկոն սիրտ էր տալիս:

— Ազատվեցեք ձեր շտուրմանական ավտոմատիզմից և ամեն ինչ լավ կգնա: Ամբողջ խնդիրն այն է, վոր կարողանաք ընդունիչ սարքավորումն արագորեն շուռ տալ հաղորդիչի: Սովորեցեք վերացնել այն դեֆեկտները, վոր կարող են թռիչքի ժամանակ առաջ գալ սավառնակի տատանումներից:

Մի անգամ վստահելով իմ ուսուցչին՝ յես հետևում եյի նրա խորհուրդներին, Յեվ իրոք, նրա մեթոդը շատ լավը դուրս յեկավ:

... Իմ կայանն առած նստած եմ նկուղում: Արտեմենկոն յերրորդ հարկումն է: Նա հաղորդում է, յես ընդունում եմ: Ինչպես սեղանի առջև էր, այժմ էլ Արտեմենկոն արագացնում է հաղորդման տեմպը, յես աշխատում եմ հետ չմնալ և վոչ մի բան չթողնել: Նա ինձ ստիպում է արագորեն ընդունիչը շուռ տալ հաղորդիչի: Միացնում եմ: Ռադիոգրամներ ենք փոխանակում, խոսում ենք հեռախոսով: Ամենափոքր հապաղում, և ռադիոգրամի կեսն անդարձ կորած է: Ի՞նչ պիտի անենք, յեթե թռիչքի ժամանակ էլ այդպես լինի: Այս չեղավ: Կրկին ու կրկին պետք է վարժություններ անել:

Արտեմենկոն հանգիստ չէր տալիս իր աշակերտուհուն և յես գոհ եյի նրանից: Ամենափոքր սխալի դեպքում նա պահանջում էր.

— Կրկնեցե՛ք:

Նա դիտմամբ ռադիստի գործն ամեն կերպ բարդացնում էր: Հանկարծ սկսում էր ալիքից ալիք փոխադրվել և այդ անում էր համառորեն, այնքան ժամանակ, մինչև համոզվեր, վոր իր աշակերտուհին իրոք սովորել է արագորեն լարել: Այժմ պարապմունքներն ավելի յերկարեցին: Որական չորս ժամ անընդհատ աշխատում եյինք: Մի քանի որից հետո մի անգամ Արտեմենկոն յերրորդ հարկից իջավ նկուղ և կանգնեց իմ հետևը: Այդ ժամանակ հաղորդումը վերևից շարունակում էր մի ուրիշ ռադիստ: Արտեմենկոն ուշի-ուշով դիտում էր իմ աշխատանքը և խրախուսանքով գլխով անում:

Յերբ նա տեսավ, վոր յես բավական ճշտորեն գրի յեմ առնում ռադիոգրամները, արագ պատասխանում եմ, մի ալիքից մյուսին ճիշտ եմ անցնում և ռադիո ազդանշանները յուրացրել եմ, նա հայտարարեց.

— Դե, Ռասկովա, կարող եք թռչել, գլուխ կհանեք: Տեսնում եմ, ռադիստի աշխատանքը ձեզ այնպես է դուր յեկել, վոր դուք հավանորեն այլևս չեք ցանկանում շտուրման լինել:

Յես պատրաստվեցի Սևաստոպոլ գնալու: Խնամքով դարսած ռադիոկայանը բաղաժ հանձնեցի, իսկ ինձ հետ վագոն վերցրի սարքերով լի բազմաթիվ արկղներ:

Վերա Լոմակին արդեն Սևաստոպոլում ինձ էր սպասում: Պոլինան դեռ գործարանումն էր: Ամեն օր յես ու Վերան գնում էյինք ծովային աերոդրոմ: Նա ծովային մեքենայով թռչել էր սովորում: Կատակելով վերադառնում էյինք քաղաք, հյուրանոց: Ցերեկներն անց էյինք կացնում պարապելով: Վերան շարունակում էր նյութական մասն ուսումնասիրել, յես քարտեզներն ուսումնասիրելով էյի զբաղվում: Վաղ էյինք պառկում քնելու, վորպեսզի առավոտյան աերոդրոմ գնանք:

Պոլինան ուշանում էր: Այդ մեզ անհանգստացնել էր սկսում: Մի՞թե գործարանում վորևէ լուրջ բան է պատահել մեքենային: Մի անգամ յերեկոյան, հանգստի օրը, յես ու Վերան զբոսնում էյինք Սևաստոպոլի փողոցներում: Արդեն այնքան էլ ցուրտ չէր և մենք կաշվե բաճկոններ ունեյինք հագած: Հանկարծ տեսնում ենք՝ մեր դիմացն է գալիս մի մարդ, մորթե աստառով կաշվե ծանր վերարկուն հագին, ձեռքին մեկ ձուկ: Մենք զարմացանք, վոր այդ մարդն այդքան տաք է հագնված և նույնիսկ խղճացինք նրան: Նայում ենք՝ բայց սա մեր Պոլինան է: Նա ժպտում է և պարծենկոտությամբ ձեռքի ձուկն է թափահարում:

— Այդ վորտեղի՞ց է այդ հսկա ձուկը, Պոլինա, ինչի՞դ է պետք:

— Ազովի ծովումն եմ բռնել,— պարծեցավ Պոլինան:— Բերել եմ քեզ... Թող տապակի:

Ձուկը տապակեցին:

Առավոտյան մենք գնացինք մեր հիդրոաերոդրոմը: Թվում էր, թե էլ վոչինչ հարկավոր չէ: Մեքենան սարքին է, մարդիկ թռել են նրանով— նստիր ու թռիր քո մարշրուտով: Բայց այդպես չեղավ: Ծովային հիդրոավիացիան իր օրենքներն ունի: Ցամաքային օդաչուի համար այնքան էլ հեշտ չէ միանգամից հիդրո-սավառնակ նստել ու թռչել: Նույնիսկ ջրից կտրվելը բոլորովին նման չէ գետնից կտրվելուն: Այստեղ շատ կան յուրահատուկ բաներ, վորոնք չգիտե ցամաքից թռչող օդաչուն:

Շտուրմանից պահանջվում էր, վոր նա կարողանա կատերի հետևից սավառնակը բուքսիրի վերցնել, կարողանա կառչել կեռին, արձակել ծայրը, պատրաստվել իջնելու, իմանա ծովային ազդանշանները՝ վարչության կենտրոնական կետի հետ դրոշակներով խոսելու համար: Սրանք կարծես թե բարդ բաներ չեն: Սակայն յերկարատև վարժություն էր պահանջում, վորպեսզի մարդ կարողանա սովորել այդ բոլորը և սովորել այնպես, ինչպես այդ պահանջում էր մեր խստապահանջ հրամանատար Պոլինա Օսիպենկոն: Յես աշխատում էյի բոլոր ուժերով: Վերջապես գովասանքներ տալուն սովորաբար ժլատ Պոլինան ասաց.

— Դե, հիմա դու, Մարինա, իսկական ծովային ես արդեն:

Պոլինան ինքնուրույն թռիչքի դուրս յեկավ: Հետո այդ նույնն արեց Վերա Լոմակին: Յես հերթով թռչում էյի նրանցից յուրաքանչյուրի հետ: Պոլինան շատ լավ է թռչում: Նրա ղեկավարությամբ մեքենան շատ ազատ ու համաչափ պոկվում է ջրից և նույնպես փափուկ ու անլսելի իջնում ջրի վրա: Ափին հավաքված հրամանատարները գովում էյին Պոլինայի թռիչքներն ու վայրէջքները: Իսկ օդաչուի համար կանոնավոր թռչելն ու մեքենան կանոնավոր իջեցնելը գործի կեսից ավելին է: Հրամանատարները Պոլինայի մասին ասում էյին.

— Դե, նա բոլորովին ծովային է դարձել:

Մի բան միայն, վոր Պոլինան չէր իմանում՝ լողալն էր: Նա, ըստ յերևույթին ծաղրից վախենալով, մեզանից խնամքով թաքցնում էր իր այդ անմեղ թերությունը: Օդաչուներն առավել մարդիկ են. բավական է, վոր նրանց բերանն ընկար... Ճիշտ է, մենք իրար ծաղրում էյինք բոլորովին վոչ-վիրավորական ձևով և սրտաշարժ կերպով: Առանձնապես առատ ծաղրանկարներ էյինք սարքում: Պարապ ժամանակ մենք ինքներս մեզ նկարում էյինք ծովային «աքցանների» մեջ, զանազան ծովային աշխատանքներ կատարելիս: Յերեքով ապրում էյինք հյուրանոցի մի սենյակում: Յերեք մահճակալ շարել էյինք իրար կողքի և աշխատանքային օրն անցնելուց հետո, քնելուց առաջ, յերկար ժամանակ հյուրանոցի պատերը խլացնում էյինք մեր ծիծաղով: Ծիծաղում էյինք շատ և ամեն մի առիթով:

Մի խոսքով՝ Պոլինան լողալ չգիտեր: Մենք այդ իմացանք այն ժամանակ, յերբ Սևաստոպոլում արդեն բավական շոգ էր և յես ու Վերան ցանկացանք լողանալ: Մեզ հսկող բժշկից

թույլտվություն ստացանք և ջուրը մտանք։ Պոլինան կանգնած է ափին, նայում է մեզ, բայց ջուրը չի մտնում։ Մենք հարցնում ենք, թե ինչո՞ւ չի գալիս։ Պատասխանում է.

— Յես նոր եմ գլուխս լվացել, չեմ ուզում նորից մազերս թրջել աղի ջրով։

Ե՛, ինչ արած, մարդը լողանալ չի ուզում, թող չլողանա։ Հետևյալ անգամ էլ նույնն է կրկնվում։ Մենք սկսեցինք ձեռ առնել Պոլինային ու խայտառակել.

— Խոստովանիր, որ դու ջրից վախենում ես։ Կամ գուցե լողա՞լ չգիտես։ Մենք քեզ կսովորեցնենք։

Պոլինան էլի յերկար համառում էր, մինչև որ խոստովանեց։ Այո, նա լողալ չգիտի։ Այո, վախենում է։ Ի՞նչ կա ծիծաղելի։ Մենք տեսանք, որ նա նեղանում է և դադարեցինք կշտամբել։ Բայց Պոլինան չդիմացավ։ Մի անգամ ինքն առաջարկեց.

— Գնանք ծանծաղ տեղը, յես կլողամ։

Սկսեց լողալ և չարունակ ոտքով հատակն է տնտղում։ Հենց որ զգում է, որ հատակը չկա, իսկույն շտապում է հետ դառնալ։ Այն ժամանակ մենք նրան ասում էինք.

— Բարձր թռչել չես վախենում, իսկ լողալ չգիտես, էլ ի՞նչ ծովային ես դու։ Դեռ թռչող նավակի հրամանատար էլ ես։

Ի դուր չէր մեր կատակը։ Հարկավոր էր Պոլինային ստիպել, որ լողալ սովորի։ Ամբողջ անձնակազմն ամեն տեսակ անակնկալների պետք է պատրաստ լինի։ Վերջապես Պոլինան զիջեց։

— Լավ,— ասաց նա ինձ,— յես կլողամ, միայն թե դու էլ իմ կողքին պիտի լողաս։ Պիտի լողաս ու չարունակ կրկնես՝ «հանդարտ... հանդարտ»։

Մենք յերկուսով լողացինք։ Վաղուց արդեն հատակը չի շոշափվում ոտքով, իսկ իմ Պոլինան լողում է ու լողում։ Միայն թե ձեռքերն ու ոտքերը շատ ուժեղ է թափահարում, կարծես խեղդվելուց է վախենում։ Յես չարունակ կրկնում եմ. «Հանդարտ, հանդարտ»։ Նա առաջ է լողում։ Այդպես մենք լողացինք մինչև տակառը, ափից հարյուր մետր հեռու։ Պոլինան տակառից բռնեց, նրա աչքերը փայլում էին յերջանկությունից։

— Դե, ինչպե՞ս է, սարսափելի չէ՞, հարցնում եմ յես։

— Սպասիր հետ լողանք մինչև ափը, այն ժամանակ կասեմ՝ սարսափելի յե, թե ոչ։

Մի չափազանց պատասխանատու գործ անողի պես գործարար ձևով Պոլինան սկսեց հետ լողալ։ Մենք Վերա Լոմակոյին պատմեցինք, որ Պոլինան վերջնականապես ծովային է դարձել, նույնիսկ լողալ է սովորել։

— Չեմ հավատում,— ասում է Վերան։— Այ, յերբ նա Մարինկայի պես հեռու լողա, այն ժամանակ յես կասեմ, որ իսկապես ծովային է դարձել։

Պոլինան տխրեց։ Յես նորից նրա ոձիքից կպա։

— Դե, պահպանիր հրամանատարի պատիվը։ Ի՞նչ բան է որ։ Մի՞թե դու ջրի մեջ հոգնում ես։

— Չեմ հոգնում, այլ վախենում եմ,— անկեղծորեն խոստովանեց Պոլինան։

— Այն ժամանակ նորից լողանք միասին։

Լողացինք։ Յես աչքս նրանից չեմ հեռացնում։ Նրա շարժումներն աստիճանաբար սահուն են դառնում, նա այլևս առաջվա պես չի չփչփացնում։ Յերբեմն հետ է նայում ու ծիծաղով հարցնում. «Հը, ո՞նց է, լողո՞ւմ եմ»։ Յես կրկնում եմ. «Հանդարտ, հանդարտ», և այդ այնպես լավ է ազդում նրա վրա, որ առանց դժվարության լողում է մինչև տակառը։ Այն ժամանակ յես կանչում եմ.

— Տակառից չբռնես, հե՛տ լողանք։

Պոլինան անբավական ֆռթացնում է, բայց լռում է։

— Ու, վախկոտ,— գոռում եմ յես ու ինքս հետ եմ դառնում։

Պոլինան ջանք է գործադրում և լողում մինչև ափը։

— Դե, այժմ հանգստացիր, հետո միասին կլողանք մինչև այն հեռու խաչանիշը։ Դա այնքան տարածություն է, որքան հիմա մենք միասին լողացինք։

— Վախենում եմ,— նորից ասում է Պոլինան։

— Ինչպես չես ամաչում, չէ՞ որ նույնքան տարածություն է։

— Այնտեղ ավելի խոր է։

— Մի անգամ փորձիր:

— Իսկ դու էլի կկրկնե՞ս՝ «հանգա՜րտ»:

— Կկրկնեմ:

— Լավ, լողանք:

Լողացինք: Հասանք տակառին, յես հարցնում եմ.

—Հոգնե՞լ ես:

— Վոչ:

— Դե, ուրեմն առաջ լողանք:

Այդպես մենք հասանք հեռավոր խաչանիշներին, հանգստացանք և այդտեղից Պոլինան առանց կանգ առնելու լողաց մինչև ափը: Գոհ սրտով դուրս յեկավ, ջուրը թափ տվեց վրայից, խոր շունչ առավ ինչպես ծանր աշխատանքից հետո և ասում ե.

— Բավական ե, շատ լողացինք...

Մի յերկու որից հետո գնում եմ կանանց պլյաժը և տեսնում, վոր իմ Պոլինան ծովախորշում լողում ե միայնակ: Յես նետվեցի նրան հասնելու: Մոտեցա: Պոլինան լուռ, մռայլ ու կենտրոնացած՝ ձեռքերով թիավարում ե ջրում: Յես առաջ անցա: Պոլինան դեմ առավ ինձ, յես գոռում եմ նրան.

— Կեցցես, Պոլինա, կեցցես չիժիկ:

Ինքս ել չգիտեմ, թե ինչու հանկարծ նրան չիժիկ անվանեցի: Այդ անունը նրան կպավ ու մինչև հիմա ել մնացել ե:

— Հեռացիր ինձանից,—գոռում ե Պոլինան,— ուզում եմ մենակ լողալ:

Ափ դուրս յեկավ և ինձ հետ խոսում ե այնպես խրատական յեղանակով, վոր կարծես յես եյի վախենում ջուրը մտնել և վոչ թե ինքը:

— Տեսնում ես,—ասում ե,— այնքան ել դժվար չե վախը հաղթահարել:

Ահա այսպես բարձրաթռիչ Պոլինան լողալ ել սովորեց:

Նույն յեղանակով, բայց շատ ավելի շուտ, Պոլինան սովորեց թիավարել բայդարկա (նավակ), վորի վրա նա իր կյանքում առաջին անգամն եր նստում: Բայդարկան նրան այնպես դուր յեկավ, վոր նրա մեջ նստելով քաջավարի, վորպես յեփված ծովային, թիակները ջրի մեջ խրելով՝ Պոլինան ասում եր.

— Ա՜յ, սա հիանալի յե, հիանալի: Յես չգիտեյի, թե վորքան լավ ե այս:

Մի անգամ նա բաց ծովի մեջ այնքան խորը գնաց, վոր մեզ ուղեկցող բժիշկը շատ հեռու մնացած լինելով սկսեց գոռալ.

— Վերադարձեք, վերադարձեք: Բժշկական նկատառումներով յես թույլ չեմ տալիս այդքան հեռու թիավարել:

Այսպիսով մեր Պոլինան վերջնականապես ծովային դարձավ:

Վարժությունները մոտենում եյին վախճանին: Մենք արդեն ջրի վրայից թռչում եյինք մեծ բեռով: Պոլինան մեքենան յուրացնում եր նույնպես համառորեն ու մեթոդաբար, ինչպես և լողալ եր սովորում: Մի քանի անգամ նա ոդ բարձրացավ և ամեն անգամ ավելի մեծ բեռով: Վերջապես նշանակվեց թռիչք այնքան բեռով, վորքան մեքենան պիտի ունենար մեր թռիչքի ժամանակ: Սավառնակում նստեց ինժեները: Նա պետք ե հետեվեր, թե մեքենան լիակատար բեռով ինչպես կանջատվի ջրից և իրեն ինչպես կպահի թռիչքի ժամանակ:

Սակայն թռիչք կորզելն այնքան ել դյուրին չեր: Մի քանի որ շարունակ մենք դուրս եյինք գալիս բաց ծովը և լիակատար թափ տալով մեքենան քշում եյինք ալիքների վրայով: Ընտրում եյինք ամենաուժեղ քամին, վորպեսզի նա մեզ ոգնի ջրից պոկվելու: Ալիքները լողանների վրայից լցվում եյին իմ կաբինը: Յես կուլ եյի տալիս ծովի աղի ջուրը և միայն աշխատում եյի կաշվե վերարկվով ծածկել ռադիոկայանը: Ծովային ուժեղ հորձանքը տարուբերում եր սավառնակը, սակայն քամի չկար: Պոլինան դադարեցնում եր վազքը և մենք վերադառնում եյինք ծովախորշ: Սակայն մենք չեյինք կասկածում, վոր վերջիվերջո կհաջողվի ընտրել այնպիսի որ, յերբ ալիքն ավելի փոքր կլինի, իսկ հանդիպական քամին՝ ավելի ուժեղ, և այն ժամանակ մենք անպայման կթռչենք: Ստիպված յեղանք շատ սպասել, սակայն անհողմության վերջն ել յեկավ: Մեքենան կտրվեց ջրից և թռավ:

Սակայն այդ դեռ մեր մարշրուտով կատարվող թռիչքը չեր: Հեռավոր ճանապարհորդության՝ Արխանգելսկ մեկնելուց առաջ հարկավոր եր ստուգել, թե մեքենան իրեն ինչպես ե պահում ոդում, ծովի գլխին: Այդ նպատակով մենք վորոշեցինք վառելանյութն սպառել Սևաստոպոլ—Ոչակով և հետ մարշրուտով

խուչելով: Յերեք–չորս այդպիսի թռիչք կկատարենք և կվերադառնանք ծովախորշ:

Հենց վոր Սևաստոպոլի ծովախորշում վեր բարձրացանք, ամբողջ ծովը ծածկվեց թանձր մառախուղով: Մառախուղի ճեղքերից փոքրիկ կապույտ կետի նման յերևում եր ծովախորշը: Վերա Լոմակոն ասում է.

— Հարկավոր է իջնել:

Պոլինան դիմում է ինձ.

— Դու կարո՞ղ ես մառախուղի վրայով սավառնակը տանել դեպի Ոչակով:

— Կարող եմ:

Թռանք դեպի Ոչակով: Անցավ մի ժամից ավելի, բայց մենք դեռ թռչում եյինք մառախուղի վրայով: Հաշիվների համաձայն մի քանի րոպեյից հետո պետք է հասնենք Ոչակով: Սակայն մեր տակը վոչինչ չկա, բացի ամպի պես սպիտակ մառախուղից: Մենք նպատակ եյինք դրել Ոչակովի վրայով թռչել 50 մետր բարձրությամբ: Բայց վորքան մեծ յեղավ մեր ուրախությունը, յերբ մառախուղը ճեղքվեց և մենք մեր տակ տեսանք քաղաքը: Սկզբում փայլատակեց կապույտ ջրի մի շերտ, հետո յերևաց ափի մի կտոր, իսկ ափին, ուղիղ մեր սավառնակի ճանապարհի վրա՝ Ոչակովը: Պոլինան հրահանգեց. «Ռակետ տալ» և ինձ մեկնեց մի գրություն. «կեցցես, Մարինկա»:

Մենք ռակետ բաց թողինք, նորից բարձրացանք և թռանք դեպի Սևաստոպոլ: Խերսոնի փարոսի մոտ նորից իջանք 50 մետրի վրա: Փարոսի վրայի մարդիկ նայում եյին մեր թռիչքին: նրանք մեր կողմն եյին թափահարում ձեռքերն ու գլխարկները: Այդպես մենք յերեք անգամ թռանք Ոչակովի վրայով և հետ դարձանք: Յերբ յերրորդ անգամ Ոչակովից վերադառնում եյինք, հանկարծ մոտորը կանգ առավ: Գործածվող բաքի բենզինը վերջացել եր, իսկ Վերա Լոմակոն, վորի պարտականությունն եր ծորակները միացնել մյուս բաքին, չեր կարողացել ժամանակին անել այդ: Սավառնակն սկսեց արագաթափ ցած իջնել: Ցածում մառախուղ եր, նույնիսկ ջուր չեր յերևում, վորտեղ կարելի լիներ իջնել: Յես ինքնաբե-

րաբար սկսեցի անտեննան հավաքել, վորպեսզի վայրէջքի դեպքում ջուրը նավակի մեջ չանցնի:

Պոլինայի դեմքը լուրջ ու լարված պատկեր ստացավ: Նա կանչում է Վերա Լոմակոյին, վոր միացնի վերջին բաքը: Վերջապես Վերան կարողացավ վերջին բաքը միացնել: Մոտորը նորից սկսեց աշխատել, վտանգն անցավ: Պոլինան ինձ մի գրություն է մեկնում.

«Ճիշտ վոր, Մարինկա, մոտորը կխչանա, հո չի կարելի այսպիսի մառախուղին իջնել: Յեվ ի՞նչպես մենք կարողացանք հրամանատարությանը մոլորեցնել, վոր այսպիսի մի որ մեզ թույլատրեցին թռչել»:

Մենք նորից բարձրություն ենք վերցնում: Թռչում ենք դեպի Սևաստոպոլ: Սևաստոպոլի հետ կապ եմ պահպանում ռադիոյով: Այնտեղ ուշադիր հետևում են մեր թռիչքին: Յերբ Սևաստոպոլին մոտենում ենք, բաքերում էլի մի փոքրիկ մարշրուտի վառելանյութ է մնացած լինում: Այն ժամանակ վորոշում ենք թռչել դեպի Յեվպատորիա: Յերբ նորից ուղղություն վերցրինք դեպի Սևաստոպոլ, Վերա Լոմակոն տագնապ բարձրացրեց. յուղը վերջանում է: Ուրիշ բան չեր մնում անելու. ստիպված յեղանք Սևաստոպոլի ծովախորշում վայրէջքի դիմել: Մենք ինը և կես ժամ թռիչքի մեջ եյինք յեղել: Յերբ ջրի վրա իջանք, մեզ շնորհավորեցին, վոր հիդրոսավառնակով կատարված գծով հեռավոր թռիչքի կանանց միջազգային ռեկորդ ենք սահմանել: Մենք թռել եյինք 1750 կիլոմետր, վոր մի քիչ պակաս է մեր Սևաստոպոլ—Արխանգելսկ հիմնական մարշրուտից:

Բայց Պոլինան անբավական եր և՛ իրենից, և՛ մեզանից: Նա մրթմրթում եր, թե չափազանց շատ բենզին է ծախսվել, չափազանց շատ յուղ է ծախսվել, ինչու Լոմակոն ժամանակին չմիացրեց բաքերին: Դեռ լավ է, վոր չուրմանի նկատմամբ հրամանատարն առանձին պահանջներ չուներ: Նա մեզ հետ խոսում եր խիստ ու անբավական տոնով:

Վարժական թռիչքները շարունակվում եյին: Այդ թռիչքներից մեկի ժամանակ մենք անցնում եյինք Ազովի ծովի ափի յերկարությամբ: Յես նայեցի Պոլինային: Նրա դեմքը շատ մեղմ եր ու բարի: Նա ուշադիր նայում եր ցած, գետնին: Մեր տակը

մի գյուղ կար։ Ի՞նչ է փորձում նա այնտեղ,— մտածում եմ ես։ Պոլինան շարունակում էր ուշադիր ցած նայել։ Հետո ինձ է տալիս մի գրություն. «Այս Նովոսպասկովան է, իմ հայրենի գյուղը»։ Մատիտին մի գրություն կապեց և ցած գցեց. «Ողջույն իմ համագյուղացիներին։ Պոլինա Օսիպենկո»։

ՅԵՐԵՔ ՄԱՐԴ ԲԱՑ ԾՈՎՈՒՄ

Նյութական մասն ու մարդիկ լիովին պատրաստ են։ Սևաստոպոլի և Օչակովի միջև վերջին թռիչքները մենք կատարել ենք 4500 մետր բարձրությամբ։ Առանց թթվածնային սարքի թռել ենք 6—ական և 9-ական ժամ։ Այսպես ուրեմն, մեր պատրաստականությունն արդեն ոչ մի կասկած չի հարուցում նույնիսկ հեռավոր թռիչքներ կազմակերպող ամենապահանջկոտ մարդկանց մեջ։

Սավառնակը ափ հանեցինք, մի անգամ էլ ստուգեցինք մոտորի բոլոր ագրեգատները, փաթաթեցինք ու պլոմբեցինք։ Այդ վիճակում մեր թռչող նավակը պետք է սպասի հարմար յեղանակի։

Սկսվեցին տաղտկալի օրերը։ Ամեն օր գնում էինք օդերևութաբանական կայան և ուշի—ուշով դիտում յեղանակի քարտեզները։ Հատկապես մեր անձնակազմի համար Մոսկվան ամեն օր հաղորդում էր յեղանակի նախատեսումը Սևաստոպոլ—Արխանգելսկ մարշրուտով։ Ամեն օր մենք մեր ապագա ճանապարհի յերկարությամբ տեսնում էինք մերթ ամպամածություն, մերթ ամպրոպներ, մերթ հեղեղներ։ Յեվ ինչպես կարող էր այլ կերպ լինել։ Չէ՞ որ մեր ճանապարհն անցնում էր բոլորովին այլազան օդային մասսաներով. մենք թռչելու էինք տրոպիկական տաք օդից, ապա ընկնելու էինք ցամաքային միջավայր, դրանից հետո բևեռային մասսաները և, վերջապես, Սպիտակ ծովի մոտ՝ արկտիկական օդի մեջ։ Օդի չորս տարբեր մասսաներ, տարբեր ջերմաստիճան, քամիների տարբեր ուղղություններ, տարբեր խոնավություն։ Այդ օդային մասսաների հետ շփում ունենալիս մարշրուտի որևէ մասում անխուսափելիորեն պետք է առաջանային ամպրոպներ ու հեղեղներ և փոթորիկներ։ Մի՞թե

այդպիսի յերկար ու բազմազան կլիմաներով անցնող ճանապարհորդության ժամանակ կարելի յե միանման յեղանակ սպասել։ Մինչդեռ թռիչքի հրամանատարությունն այն հաստատ համոզված էր, թե մեզ կարելի յե բաց թողնել միայն այն դեպքում, յեթե մարշրուտի դեմ յերկու յերրորդում լավ յեղանակ լինի։

Մենք մեր հյուրանոցն էինք վերադառնում մռայլ ու չարացած։ Աշխատում էինք շուտ պառկել քնելու, վորպեսզի [illegible]կլուցենք։ Պոլինան լինելով դիսցիպլինար զինվորական ոդաչու՝ գտնում էր, վոր յեթե հրամանատարությունն այդպիսի պայման է դնում, նշանակում է վոչինչ չի կարելի անել, պետք է սպասել ու յենթարկվել։

Բայց մինչև յե՞րբ սպասել։ Մինչև աշո՞ւն, յերբ ընդհանրապես հեռու թռչելու հնարավորությունը վերանում է։ Ինչի՞ սպասել, ինչ վոր հատուկ «կուսական» յեղանակի՞։ Բայց ով մեզ համար կպատրաստի հատկապես այնպիսի յեղանակ, վոր վոչ անձրև տեղա և վոչ քամի փչի։

Մենք վրա էինք տալիս Պոլինային։ Ինչո՞ւ չթռչել։ Հրամանատարը նա յե, թող ինքն էլ վորոշում ընդունի ու գործի անցնի։ Պոլինան լսում էր, լսում, վերջապես, տեսնում ենք՝ վերկացավ, հագնվում է։

— Գնամ զանգահարեմ Մոսկվա, ընկեր Վորոշիլովին։

Ուղիղ հեռախոսագծի մոտից նա վերադարձավ հուզված, բայց առաջվա պես մռայլ։ Ժողկոմը խոստացել է, թե կհետաքրքրվի և կզանգի, սակայն դեռ անհայտ էր, թե նա կթույլատրի՞ թռիչքը։

Սևծովյան նավատորմի քաղվարչությունը մեզ զբաղեցնել ցանկանալով՝ հաճախ թատրոն էր հրավիրում, սակայն այնտեղ էլ մենք խոսում ու մտածում էինք միայն յեղանակի մասին և այն մասին, թե վերջիվերջո ինչ է լինելու մեր թռիչքը։ Մի անգամ, յերբ մենք թատրոնից հյուրանոց վերադարձանք, մեզ մի հեռագիր տվին։ Մենք բլանկը բացինք ու կարդացինք. «Թռիչքը թույլատրում եմ։ Մի անգամ ևս խնամքով ստուգեցեք նյութական մասը։ Ցանկանում եմ լիակատար հաջողություն։ Վորոշիլով»։

Յերեք մեծահասակ կանայք սկսեցինք յերեխաների պես սենյակում թռչկոտել։ Մենք գրկախառնվում էինք, համբուրվում,

ծափ էյինք զարկում, իրար շնորհավորում, կարծես թռիչքն արդեն ավարտված լիներ և բոլոր դժվարություններն անցած: Պոլինային գցեցինք մահճակալի վրա և կողքերն ուժեղ տրորելով ասում էյինք.

— Ահա քեզ հրամանատա՛ր, ահա քեզ հրամանատա՛ր:

Հետևյալ օրը մենք ցնծությամբ ու հաղթական գնացինք աէրոդրոմ: Մեր թռիչքը նախապատրաստող ծովային մասի շտաբում արդեն գիտեյին մեր ուրախության պատճառը: Վորոշիլովի հեռագրի պատճենն այստեղ ստացվել եր: Սակայն ժողկոմը մեր մասին էլ ավելի յեր հոգացել: Նա հատկապես Մոսկվայից մարդիկ ուղարկեց թռիչքի պատրաստությունները մի անգամ ևս ստուգելու:

Այժմ իսկական նախապատրաստություններն սկսվեցին: Մեր Սևաստոպոլ գալու օրվանից արդեն մոտ յերեք ամիս եր անցել: Թեպետ և այդ ժամանակամիջոցում մեզ հաջողվել եր մի «ռեկորդիկ» սահմանել, ինչպես մենք քնքշորեն անվանում էյինք մեր թռիչքը փակ կորագծով, բայց չե՞ վոր այդ, այսպես ասած, ծրագրից դուրս թռիչք եր, վոր չեր մտնում մեր սկզբնական հաշիվների մեջ: Անցած ժամանակի մեծ մասը մենք իզուր կորած էյինք համարում: Ճիշտ է, այդ յերեք ամիսների ընթացքում անընդհատ վարժություններ էյինք արել, յուրաքանչյուր օրն ավելացրել եր մեր գիտելիքներն ու փորձը: Սակայն, պետք է յենթադրել, հենց այդպես է յերիտասարդ մարդու բնավորությունը. մենք ուզում էյինք շուտ անցնել մեր մարշրուտով:

Յերեք կին օդաչուների նկատմամբ իշխանությունն անցավ բժշկի ձեռքը: Ռազմա-ծովային բժիշկների հետ կատակ անել չի լինի: Ամեն օր մեզ քնելու էյին պառկեցնում յերեկոյան ժամը վեցին: Պատուհանները ծածկափեղկերով ամուր փակվում էյին: Հրամայել էյին վոչ վոքի մեզ մոտ չթողնել: Բայց յերեկոյան ժամը վեցից ինչպե՞ս քնես: Դեռ մի քանի օր դրանից առաջ, յերբ օդերևութաբանական նախատեսումների ու յեղանակի չարաբաստիկ քարտեզներից զայրացած, վորոնք մեր ձեռք ու վոտքերը կաշկանդում էյին, մենք աշխատում էյինք վորքան կարելի յե շուտ քնել, վորպեսզի քիչ զրուցենք: Իսկ այժմ արդեն քուններս չեր տանում: Դուրս էյին ժայթքում այն բոլոր զրույցները,

վոր կուտակվել էյին հարկադրական լռության օրերին: Կարելի՞ յե արդյոք պատմել յերեք օդաչուների զրույցները, այն կին օդաչուների, վորոնք վերջապես տեսնում են, վոր ահա, վորտեղ վոր է կիրականանա իրենց բաղձանքը և նրանք կթռչեն այնպիսի մարշրուտով, վորով դեռ վոչ վոք չի թռչել: Մենք մեր յերկարատև զրույցը դադարեցնում էյինք միայն այն ժամանակ, յերբ խստապահանջ ու դիսցիպլինար Պոլինան հիշեցնում եր, թե՝ մի քանի ժամից հետո մեզ վոտքի յեն հանելու:

Գիշերվա ժամը մեկին մենք վեր էյինք կենում և, ինչպես լինում է ամեն մի հեռավոր թռիչքից առաջ, բժշկական մի քանի պրոցեդուր ընդունելուց հետո գնում էյինք նավահանգիստ: Այստեղ մեզ սպասում եր կատերը: Ծովը շնչում եր հանգիստ ու խաղաղ: Կատերը ծովախորշի միջով խավարի մեջ մեզ տանում եր ծովը, դեպի հիդրոաէրոդրոմ: Մենք նայում էյինք և հուզված նայում. արդյոք քամի կա՞, բավականաչափ ուժեղ քամի, վոր կարելի լինի ծանր բեռնված սավառնակով պոկվել ջրից: Արդյոք ծովախորշում ալիքների այնպիսի կուտակում չկա, վորը կարողանա խանգարել մեր թռիչքին:

Աէրոդրոմում ուտում էյինք մեզ համար պատրաստված նախաճաշը: Հետո խավարի մեջ մեքենան ջուրն էյինք իջեցնում և կատերի հետևից քաշվում բաց ծովը:

Սակայն բոլոր ջանքերն ի զուր էյին. մեքենան հրաժարվում եր թռչել: Նրա ցանկությունն ու հնարավորությունները բացահայտորեն տարբերվում էյին մեր ձգտումներից: Մենք ցանկանում ենք օդ բարձրանալ, իսկ մեքենան համառորեն սլանում է ջրի յերեսին և ջրից չի կտրվում անիծվածը: Մերթ քամին շատ թույլ է նրա համար, մերթ ալիքները խիստ ուժեղ են:

Ի՞նչ անել: Մենք վերադառնում էյինք հյուրանոց: Հետևյալ օրը բոլորը նորից եր կրկնվում: Յերեք օր իրար հետևից մենք լիովին պատրաստ աէրոդրոմ էյինք գնում և դատարկաձեռն վերադառնում քաղաք: Ճիշտ է, այժմ մենք այնքան չէյինք զայրանում, վորքան այն օրերին, յերբ թռիչքը հետաձգվում եր բոլորովին այլ պատճառներով: Չե՞ վոր վերջիվերջո հարմար քամի կորսանք: Յերբևիցե կփչի մեր պահանջած քամին: Յեվ ի՞նչ է հարկավոր. ընդամենը մի վայրկյանում հինգ մետր փչող

քամի: Բայց ահա անհողմությունն անցավ և վաղուց փափագած քամու շունչը նորից հույս ներշնչեց մեզ: Բայց քամին խորամանկություն էր անում: Նա փչում էր ծովից և ալիքները կուտակում: Այդպիսի ջրից նավակի համար թռչելը նույնն է, ինչ վոր ցամաքային սավառնակի համար անհարթ, դար ու փոս հրապարակից թռչելը: Մեքենան միայն վեր ու վար էր անում ալիքների վրա, իսկ վերև թռչել չէր ցանկանում:

Սևաստոպոլի ոդերևութաբանները, վորոնք մեզանից պակաս չէյին շահագրգռված, վոր մեր թռիչքը տեղի ունենա (մենք արդեն բավականաչափ ձանձրացրել եյինք նրանց հարց ու փորձով), վերջապես ուրախալի լուր հայտնեցին: Վաղը լուսաբացին քամին փչելու յե ցամաքից, մոտավորապես մեկ վայրկյանում 5 մետրի ուժով: Ուռա՛: Հուլիսի 1-ին ստարտն էր նշանակված:

Այդ գիշեր ուժեղ հուզմունքից մենք համարյա չքնեցինք: Գիշերը մորթե սատառով կաշվե վերարկուներ հագած, մորթե սաղավարտներով և ունտերով գնացինք մեր սավառնակի մոտ: Մեզ ճանապարհ դնելու յեկավ Սևծովյան նավատորմի ամբողջ բարձր հրամանատարությունը: Յերեք ոդաչուհիներս սավառնակի մոտ շարք կանգնեցինք: Պոլինա Ոսիպենկոն զինվորական կարգով նավատորմի հրամանատարին ռապորտ տվեց անձնակազմի պատրաստության մասին: Հրամանատարն ռապորտն ընդունեց և ճառ ասաց: Նա ընդգծեց, վոր Սև ծովի ոդաչուներից վոչ մեկը մինչև հիմա ծովային մեքենայով այդպիսի յերկար թռիչք չի գործել ցամաքի վրայով: Նա հաջողություն մաղթեց մեզ, սեղմեց մեր ձեռքերը, հնչեց հրամանը. «Դեպի սավառնա՛կ»,— և մենք ուրախ, հուզված գրավեցինք մեր տեղերը: Կատերը սավառնակին բուքսիրի առած ծովը տարավ: Սավառնակի հետևից ընթանում էր ծովային նավակը: Մեր հետևից շարժվեցին հրամանատարության կատերները՝ մեզ ճանապարհ դնելու:

Լույսը բացվում էր: Ցանկանալով վորքան կարելի յե ավելի շատ թեթևացնել սավառնակը՝ մենք վորոշեցինք մոտորը գործի գցել մակույկից: Սավառնակից ցած առանք մի մեծ, ծանր բալոն՝ լի սեղմված ոդով: Բալոնը տեղավորեցինք մակույկում: Այստեղ եյին ինժեներ Կոլչինսկին, բորտ-մեխանիկ Սոլոմատովը,

մոտորիստ Պոպերեչնյուկը և յերկու կարմիր նավատորմայիններ: Մոտորը գործի գցելու ժամանակ մակույկը մոտեցավ սավառնակին, մարդիկ նրան պահում եյին ամուր սեղմած սավառնակի կողին: Խտացրած ոդի բալոնը խողովակով միացված էր սավառնակին: Յերբ մոտորը գործի յեր գցվում, սավառնակն սկսում էր ջրի յերեսին շարժվել: Սավառնակի հետ շարժվում էր նաև մակույկը: Վերջապես խողովակը վերցվեց և «տա՛լ» հրահանգի հետ մակույկում յեղած բոլոր մարդիկ պառկեցին նրա հատակին: Մակույկը կայծակի արագությամբ անցավ ստաբիլիզատորի տակով և մնաց սավառնակի հետևը շատ հեռու:

Ավաղ, այս անգամ հարկ յեղավ այդ ծանր գործողությունը յերեք անգամ կատարել: Յերեք անգամ մոտորը գործի գցվեց, յերեք անգամ մենք փորձեցինք թռչել: Մոտորը սկսում էր տաքանալ, սակայն մեքենան ջրից չէր կտրվում: Արեգակը ծագեց, որը տաքանում էր, քամին՝ թուլանում: Վոտքից մինչև գլուխ թրջված՝ յես նստել եյի առջևի կաբինում: Հետևը, պիլոտի կաբինում նստած էր Պոլինան, նույնպես թրջված, սակայն՝ քրտնելուց: Նա նստած էր առանց սաղավարտի, կոճակներն արձակած մուշտակավոր ռեգլանով և անտանելի շոգից ծանր շընչում էր: Նա մոտորն անջատեց և ազատ թողնված մեքենան սկսեց անոգնական դրեյֆել ծովում: Նորից կատերը մոտեցավ, մեզ բուքսիրի առավ և կրկին քաշեց ստարտի տեղը:

Յերեք անգամ այդպիսի «թռիչք» կատարելուց հետո պարզ յեղավ, վոր այդ որը թռիչքը չի կայանա: Մեզ ուղեկցող կատերներն արագ ընթացքով գնում եյին դեպի ծովախորշը: Իսկ ձախորդ-ոդաչուհիները հանում եյին իրենց պարաշյուտային կապերը, քարշ եյին տալիս մուշտակե տաք վերարկուները, ունտերն ու սաղավարտները: Նրանք զայրացած եյին յեղանակի վրա, իրենք իրենց վրա, ամբողջ աշխարհի վրա, դուրս եյին գալիս իրենց կաբիններից և մոտորային մույթերի տակ թիկնած ձեվացնում եյին, թե իրենք անտարբեր են աշխարհում ամեն բանի նկատմամբ: Մենք արդեն այնպես եյինք վարժվել անհաջողություններին, վոր, որինակ յես բուքսիրապարանի ծայրից բռնած համարյա ննջում եյի:

Մեքենան ափ հանեցինք: Նա այնքան ծանր էր բարձած, վոր

նույնիսկ առափնյա նորմալ խորության պայմաններում նստում էր ինչպես ծանծաղուտում: Ջրասույզները սավառնակի տակ սայլակ դցեցին և ճոպաններով քաշեցին ափ: Այս անգամ ջրասույզներին ստիպված յեղան շատ չարչարվել մեր մեքենայի հետ: Ծովից թուլացած մենք քաղաք վերադարձանք:

Հետևյալ օրը, հուլիսի 2-ին, մենք թռչելու մի փորձ ել արինք: Մեզ ուղեկցում եյին միայն յերկու կատեր: Մեկը սավառնակին բուքսիր եր անում, մյուսով գալիս եր նավատորմի քաղվարչության պետը: Մոտորը գործի դցելու համար յեկող մակույկում կային միայն յերեք մարդ՝ ինժեներ Կոլչինսկին, տեխնիկ Սոլոմատովը և մոտորիստ Պոպերեչնյուկը: Ահա բուքսիրող կատերը մեզ թողնում է ծովում և ինքը մի կողմ քաշվում: Մակույկի մարդիկ պատրաստվում են մոտորը գործի դցելու: Յես աչքս չեմ հեռացնում ձեռքիս բռնած փոքրիկ դրոշակից և գոհունակությամբ տեսնում եմ, վոր այն կարգին ծածանվում է. Նշանակում է քամի կա: Քամին փչում է թերակղզուց. այդ հենց այն քամին է, վոր մեզ հարկավոր է: Սավառնակից շատ մոտիկ անցնում է կատերը: Մեզ վողջունում է քաղվարչության պետը և Ռազմական խորհրդի անունից բարի ճանապարհ է մաղթում: Տեխնիկ Սոլոմատովը, ցանկանալով Լոմակոյի աշխատանքը թեթևացնել, բարձրանում է սավառնակի վրա և սկսում մոտորի թողարկումը պատրաստել: Մակույկում մնում եր յերկու մարդ: Նրանք դժվարանում են մակույկը սավառնակի կողքին ամուր սեղմած պահել: Յես ձեռքս մեկնում եմ ինժեներ Կոլչինսկուն, վոր նրան օգնեմ: Կոլչինսկին հրաժարվում է.

— Ձեր առջև դեռ շատ աշխատանք կա: Դուք մի՛ հոգնեք:

Նա այդ ասում է փաղաքշական ձայնով և ինձ թվում է, թե նրա աչքերում արցունք կա:

Ահա մոտորն սկսեց աշխատել: Մակույկը վազում է մեր կողքով: Նրա վրայի մարդիկ ամբողջ ուժով բռնել են սավառնակի կողից: Սակայն, ըստ յերևույթին, ուժները չի պատում: Հանկարծ մակույկի և սավառնակի միջև ճեղքվածք է առաջանում: Մեքենայի արագ վազքից բարձրացած ջուրը շատրվանի պես վեր է խփում այդ ճեղքով և վայրկենապես լցվում մակույկի մեջ: Մակույկը դեռ դիմանում է, նա միայն կիսով չափ

է լցվել ջրով: Այդ պահին տեխնիկ Սոլոմատովը բալոնի խողովակն անջատում է և սավառնակից թռչում մակույկի մեջ: Մակույկը խորասուզվում է: Մենք սավառնակի հետևը տեսնում ենք յերեք գլուխ ջրի մակերևույթին, վորտեղ մեր նավակը յերկար ու ալեկոծ ակոս եր գծում: Յերեք մարդ լող են տալիս ափից հեռու, բաց ծովում:

Մեր մոտորը տաքանում է: Հարկավոր է թռչել, բայց չենք թռչում: Կաբինից դուրս եմ գալիս և կարմիր դրոշակով կատերներին ազդանշան եմ տալիս աղետի մասին: Պոլինան մեքենան հեռու յե քշում խեղդվող մարդկանցից, վորպեսզի մեր մակույկի բարձրացրած ալեկոծությունը նրանց չսուզի: Թռչելու մասին վոչ վոք չի էլ մտածում: Մեր հայացքը հառած եր յերեք մարդկանց վրա, վորոնք իրենց բոլոր ուժերը հազիվ լողում են բաց ծովում, ափից մի քանի մղոն հեռավորության վրա: Սրտիս խորքից մի ուրախ ճիչ է դուրս թռչում, յերբ կատերները նկատում են իմ ազդանշանները և լիընթաց սլանում փրկելու խեղդվողներին: Մենք տեսնում ենք, վոր կատերները նրանց օգնության հասան: Պոլինան թռիչքի ընթացք է տալիս և լիակատար գազ է թողնում:

ԹՌՉՈՂ ՆԱՎԱԿՈՎ ՅԱՄԱՔԻ ՎՐԱ

Մենք թռանք Սևաստոպոլի ծովախորշի մուտքի ուղղությամբ: Մտածում եյինք այսպես. յեթե վազքի համար մինչև ափը յեղած տարածությունը չբավե, այն ժամանակ թռիչքը կշարունակենք ծովախորշում: Ծովախորշի մուտքը նեղ է, ալեբեկիչներով սահմանագծված: Ծովախորշի մուտքի առաջ չուգունի գնդերի շղթա կա:

Պոլինան ինձ խնդրում է հետևել թռիչքի ուղղությանը, վորպեսզի այդ գնդերի մեջ չխրվենք: Լուսաբացը դեռ նոր է սկսվում: Քաղաքում լույսերը վառվում են: Ծովախորշի ծայրին փակոցային լույսի ծովային նշանն է: Թռիչքն սկսում ենք: Ամեն անգամվա պես իմ կաբինի վրայով ջրի ուժեղ ալիք է անցնում: Սովորաբար այդպիսի դեպքերում յես յերեսս ծածկում եյի կաշվե բաճկոնիս թևքերով, վորպեսզի պաշտպանվեմ աղի

ջրի ծակող շիթերից: Այժմ ձեռքերս զբաղված են. հարկավոր է ամուր բռնել կաբինի կողերից, թե չէ ցնցումը դուրս կգցի ծովը և շտուրմանի հետքն էլ չի մնա: Ակնոցների միջով նայելն անհնարին է, նրանք ծովային ջրից քրտնել են և դարձել անթափանցիկ: Ակնոցներս ճակատիս եմ բարձրացնում, լարված նայում եմ առաջ ու կողքերին և ձեռքով ուղղություն եմ ցույց տալիս Պոլինային:

Ծովախորշի մուտքն արագորեն սլանում է ուղիղ մեր կողմը: Ահա, յեթե Պոլինան վոտքն իջեցնի և ճիշտ ուղղություն չպահի, մենք կխրվենք դնդերի մեջ և մեր սավառնակի վերջը կհասնի: Մինչև ծովախորշի մուտքը մի քանի տասնյակ մետր է մնացել: Յեվ, ո՛, ի՛նչ ուրախություն: Մեքենան պոկվում է ջրից և սկսում է սահուն կերպով բարձրանալ ծովախորշի գլխին: Մեքենան օդում պտույտ է գործում և մենք տեսնում ենք, թե ինչպես յերկու կատերները հանգիստ վերադառնում են ծովախորշ: Կատերներից մեզ ձեռքով են անում: Նշանակում է խեղդվողները փրկված են:

Շուտով արեգակը կծագի: Ահա արդեն արևելքում յերևաց արևածագի նախակարապետը՝ լուսաբացի պայծառ վարդագույն շերտը: Կարծես լավ յեղանակ է լինելու:

Ուղղություն ենք վերցնում դեպի Կիեվ և վերջին անգամ հրաժեշտի հայացք ենք գցում Սևաստոպոլի վրա: Յերեք ամիս մենք այնտեղ մնացել ենք՝ սպասելով այս րոպեյին:

Հենց վոր մեր ուղղությունը բռնում ենք, անտենան ցած եմ թողնում և Սևաստոպոլի հետ ռադիոկապի մեջ մտնում: Ինձ հարց են տալիս. «Ինչպե՞ս եք լսում»: Պատասխանում եմ. «Լավ եմ լսում», և հաղորդում եմ առաջին ռադիոգրամը. «Ամեն ինչ կարգին է: Բռնել ենք Կիևի ուղղությունը»:

Ձախ կողմը ծովն է, աջ կողմը՝ Ղրիմի արևմտյան ափը: Լուսաբացի աղջամուղջին անցնում ենք Յեվպատորիան: Արևածագը դիմավորում ենք Կարկինիտյան ծոցի գլխին:

Ծովը սքանչելի յե դառնում:

Դանդաղորեն դեպի վեր է սահում հրակարմիր գունդը: Ահա նա հորիզոնից անջատվեց և շարունակ ավելի ու ավելի վեր է սահում:

Արեգակը դեռ այնքան էլ պայծառ չի լուսավորում, բայց յերկար ժամանակ նրան նայել հնարավոր չէ, մարդու աչքեր են ցավում:

Անցնում է էլի մի քիչ ժամանակ և, ահա, առաջին շողերն արդեն խաղում են ծովի ալիքների մեջ:

Ծովը փայլում է, կարծես ուրախ է բացվող որվան:

Ափերը կենդանացան, կանաչեցին, գունազեղվեցին բոլոր գույներով:

Թվում է, թե վոչ մի բան չի կարող խախտել արևի ու ծովի խաղաղ բարեկամությունը:

Ամեն ինչ արթնացավ: Որը բացվեց: Նա բերում է հրճվանք և յերջանկություն:

Մենք թռչում ենք, լավ է մեզ համար: Նախաճաշեցինք Սև ծովի գլխին, իսկ ընթրելու յենք Արխանգելսկում:

Բայց արևը մեզ յերկար չի փայփայում ու գուրգուրում: Ահա նա մեր առջև լուսավորեց ամպերի մի մեծ շերտ: Կարծես շուտով պիտի հրաժեշտ տանք լավ յեղանակին: Յեվ իրոք, հազիվ ենք մենք անցնում Կարկինիտյան ծոցի վրայով, մտնում մայր ցամաքին և բռնում Նիկոլայեվի ուղղությունը, յերբ ամպերը շրջապատում են սավառնակը: Ամպերի միջով հազիվ են յերևում ծովի ցոլքերը: Ապա ձախ կողմում յերևում է մի քաղաքի գծագրություն. դա Նիկոլաևն է: Այստեղ մենք հրաժեշտ ենք տալիս Սև ծովին:

Ահա արդեն աջ կողմից բավական հետ է մնացել Դնեպրը, ձախ կողմից՝ Բուգը, մեր տակը փռված է ցամաքը, տափաստանային մի շերտ: Գեթ մի փոքրիկ լճակ փայլատակեր: Վո՛չ. տափաստանն անջուր է: Մենք թռչում ենք մարշրուտի հենց այն կետերի վրայով, վորը նախապատրաստությունների ժամանակ մեզ ամենից առաջ էր անհանգստացնում:

Բայց մոտորը կարգին է աշխատում և մենք թռչում ենք հանգիստ ու վստահ: Ցամաքային պեյզաժի վրա, ձախ կողմում բավական գեղեցիկ գծագրվում է մեր նավակի ստվերը: Այնքան էլ վատ չի ստացվում, ցամաքային սավառնակից վատ չէ:

Մեր տակ պատառոտված ամպեր են: Թռչում ենք 4000 մետր բարձրությամբ: Առջևում ձյունապատ լեռների պես կուտակվում

են ամպերը: Պոլինան հիանում է նրանց գեղեցկությամբ: Յես ամպերին նայելու ժամանակ չունեմ: Այդ րոպեներին ինձ ամենից շատ կապն է հետաքրքրում: Հիմա Սևաստոպոլի հետ աշխատանքս պիտի ավարտեմ: Կապի հետևյալ կետը Կիևն է: Ալիքը փոխում եմ՝ կանչում: Կիևն ինձ լսում է: Սևաստոպոլին վերջին վողջույնն եմ ուղարկում: Ընդունում եմ Կիևը, հաղորդում եմ, հաշիվներ եմ անում, գրանցում նավամատյանում: Աշխատում եմ վոչ մի րոպե չկորցնել: Հետո ամբողջ հասակով կանգնում եմ կաբինի առջևի մասում, վորպեսզի գետինը տեսնեմ: Ցածում, փոքր ինչ հետևի կողմը կաբինում գտնվում է իմ կողմնացույցը: Յես այն լավ եմ տեսնում: Յեթե Պոլինան ու Վերան ուղղությունից մի քիչ շեղվում են, յես նրանց ձեռքով նշան եմ անում: Պոլինան նստել է հանդիսավոր դիրքով, կարծես իր անվանակոչության հանդեսը լինի: Վերան չարունակ սողում է դեպի մեր «МП-1»-ի պոչը, բենզինի բաքերի մոտ, հետևում է, թե վառելանյութն ու յուղն ինչպես են ծախսվում: Դրան փորձից խրատված՝ Պոլինան նրան ավելի ու ավելի հաճախ է ուղարկում բաքերի մոտ:

Շուտով Կիևն է լինելու: Վաղուց արդեն մեր տակը համատարած ամպամածություն է: Յեվ հանկարծ (ոդում, յերբ թռչում ես, բնության մեջ բոլոր նորությունները հանկարծ են կատարվում) մեր առջև ցցվում է ամպերի մի վիթխարի աշտարակ: Յես գիտեմ, վոր դա փոթորկի նշան է. փոթորկաբեր ամպերը միշտ աշտարակի կերպարանք են ստանում: Մենք թռչում ենք 5000 մետր բարձրության վրա, բայց ամպե աշտարակը ավելի բարձր է: Նրա վրայով թռչել չի հաջողվի: Առանց այն էլ շնչելը դժվարանում է: Աշխատում ենք շնչել հավասար, համաչափ, վարժվում ենք բարձրությանը: Փոքր ինչ դեպի աջ ենք թեքվում, վորպեսզի մրրկաբեր ամպե աշտարակը հեռու թողնենք: Բայց վո՛րտեղից: Ամպերը կարծես գերի յեն բռնում սավառնակը և ահա արդեն մենք թռչում ենք բոլոր կողմերից ճերմակ սպարուրով փաթաթված: Շատ գեղեցիկ են այդ վիթխարի ամպերի ցնցոտիապատ ձյունանման մասսաները: Պոլինան հիանում է նրանցով: Մենք յերբեմն կուրաբար ենք թռչում, յերբեմն էլ, յերբ ամպի մեջ փոքրիկ ճեղքեր են լինում, գտնում

ենք գետինը և համոզվում, վոր ճիշտ ուղղությամբ ենք գնում:

Այդպես մոտենում ենք Կիևին: Ամպերի ճեղքերից տեսնում ենք Դնեպրի փայլուն ոձապտույտը: Հիանալի յե: Անջուր տարածության ամենադժվարին մասն անցել ենք: Սրտներս թեթևանում է: Զրույցի մեջ եմ մտնում Պոլինայի հետ: Նա ինձ մի գրություն է հանձնում՝ «Ճիշտ է, գեղեցիկ քաղաք է: Յես այստեղ աշխատել եմ ավիացիայում»: Ուղղվում ենք դեպի Նովգորոդ:

Դեռ Սևաստոպոլում Վերա Լոմակոն պատմում էր, վոր իր հարազատները Գոմելում են ապրում: Յես նրան առաջարկում եմ իր քաղաքի մոտով անցնելիս մի նամակ ցած գցել: Վերան վողջույն է գրում: Յերբ Գոմել տանող յերկաթուղին յերևում է, յես ընտրում եմ ամենալավ վիմպելը, վորպեսզի յերկաթուղային կայարաններից մեկի վրա ցած գցեմ Վերայի նամակը: Ամպերը թանձրանում են: Մենք չարունակ ավելի ու ավելի վեր ենք բարձրանում: Վերջապես տեսնում եմ ճանապարհը, կայարանը: Հաշիվ եմ անում և վիմպելը ցած գցում: Հետո Վերա Լոմակոյին գրում եմ. «Կատարված է: Փոստատարը ձեր նամակըն ուղարկեց»...

Այնուհետև գետինն այլևս չէր յերևում: Համընթաց քամին մեզ առաջ է մղում: Ճանապարհին ընկած կետերը նախատեսած ժամանակից շատ ավելի շուտ ենք անցնում: Վառելանյութն այլևս մեզ չի անհանգստացնում. քամին մեզ ոգնում է: Անցնում եմ Սմոլենսկի հետ կապվելուն, Կիևին հրաժեշտ եմ տալիս, վերջին անգամ հաղորդում եմ, թե ինչ կետերի վրայով ենք անցել մենք:

Այժմ մենք մի նոր հոգս ունենք: Նովգորոդում սպորտային կոմիսարը պետք է գրի առնի այն րոպեն, յերբ մենք կանցնենք քաղաքի վրայով: ՖԱԻ-ի պայմանների համաձայն մենք պարտավոր ենք 50 մետր բարձրությամբ թռչել այն կետերի վրայով, վորտեղ մեզ սպորտային կոմիսարներ են հետևում: Այժմ մենք գետնից 5000 մետր բարձրության վրա յենք, թռչում ենք կուրաբար, ամպերի թանձր շերտի միջով: Քամին համընթաց է, ամպերի ներքևի յեզրը բարձր չէ, նշանակում է՝ հարկավոր է մեքենան ճշտորեն Նովգորոդ հասցնել: Շատ ամպերի տակ իջնել

չի կարելի. յեթե վորևէ պատճառով հարկ լինի ջրի վրա իջնել, փոքր բարձրությունից չենք կարող:

Յես դուրս եմ սողում և շատ յերկար մնում եմ այստեղ, ռադիոփարոսներն եմ լսում, մեր ուղղությունն եմ ստուգում: Պոլինային թվում է, վոր յես խիստ շատ եմ իմ կաբինից դուրս յեկած մնում: Մեր հրամանատարը չի հանդուրժում, վոր անձնակազմից վորևէ մեկն իր գործի մոտ չլինի: Նա ինձ պատվիրում է յետ դառնալ և կաբին մտնել: Յես նրան հանգստացնում եմ, ռադիոփարոսներն եմ լսում, ասում եմ, մի՛ անհանգստանա: Ըստ ռադիոփարոսների դուրս է գալիս, վոր մենք արդեն մոտենում ենք Իլմեն լճին, վորի ափին Նովգորոդ քաղաքն է: Ահա այստեղ կարելի չէ իջնել ամպերի տակ և ցածից Իլմեն լճի վրայով մոտենալ Նովգորոդին: Պոլինային իջնելու նշան եմ անում: Նա չի ուզում. նրան թվում է, թե դեռ վաղ է, թե չի կարող պատահել, վոր այսքան շուտ Նովգորոդ հասած լինենք: Ինչո՞ւ ցած իջնի, քանի վոր ներքևում կարող է ցամաք լինել: Յես նրան հաղորդում եմ. «Տե՛ս, քամին համընթաց է, Նովգորոդը կփախցընենք: Ավելի լավ է ցածրանալ»: Իսկ նա ինձ պատասխանում է. «Վո՞րտեղից գիտես, վոր հիմա Նովգորոդն է լինելու: Չե՞ վոր այժմ գետինը չի յերևում: Այն ժամանակ յես նրան հիշեցնում եմ, վոր ինձ մոտ կան ռադիոփարոսներ, վորոնք չեն խաբում: Պոլինան տարակուսանքով նայում է ինձ, ուսերը թոթվում (հավանորեն այդ ժամանակ իմ հասցեյին վորևէ բան էլ է փնթփնթում), բայց և այնպես ցածրանում է: Մեքենան ճախրում է ամպերի մեջ: Թռչում ենք 2000, 1500, 1000 մետր բարձրությամբ, բայց գետինը դեռ չի յերևում: Միայն 700 մետրի վրա իջնելուց հետո վորոշակիորեն տեսնում ենք Իլմեն լիճը:

— Վորտե՞ղ է Նովգորոդը,— հարցնում է Պոլինան:

Հպարտորեն ձեռքով ցույց եմ տալիս Իլմեն լճի դիմացի ափը: Լճի ափին փռված է հնադարյան գեղեցիկ քաղաքը: Մենք տեսնում ենք Վոլխովի վրայով ձգված կամուրջները, միջնաբերդի սպիտակ պատերը: Մեզ հենց այդ էլ հարկավոր է: Մենք պետք է անցնենք միջնաբերդի հրապարակի վրայով, մեր սպորտային կոմիսարն այնտեղ պիտի կանգնած լինի: Պոլինան իր

գործը լավ գիտե: Բարձրաչափը ցույց է տալիս 50 մետր: Մենք անցնում ենք հրապարակի վրայով և նորից վեր բարձրանում:

Այժմ Պոլինան շտուրմանից ստանում է նոր, վերջին ուղղությունը՝ դեպի Արխանգելսկ: Պոլինան գոհ է: Նա ձախ ձեռքի բութ մատը վեր է բարձրացնում և ասում. «Ահա՛»: Յես այնպիսի դիրք եմ ընդունում, վոր կարծես ասելիս լինեմ, «Դե, ի հարկե, այդպես էլ պիտի լինի»: Նշաններով կատակներ ենք անում: Դե, մտածում եմ, քանի վոր Պոլինան ուրախացել է, նշանակում է ամեն ինչ կարգին կլինի:

Բայց այստեղ տրտմել է սկսում Վերա Լոմակոն: Շարունակ սավառնակի պոչի կողմը, բենզինի բաքերի մոտ կատարած իր ճամբորդությունների ժամանակ նա բենզինի գոլորշիներ է շնչել և հիմա գլուխը ցավում է: Նա նստած է գունատ, կոպերը կարմրած: Պոլինան նրան հրամայում է սկսել թթվածին շնչել: Յես ու Պոլինան դեռևս թթվածնին ձեռք չենք տալիս: Մտածում ենք առանց նրան յոլա գնալ, չե՞ վոր դեռ կարող է պատահել, վոր ստիպված լինենք շատ մեծ բարձրության վրա թռչել:

Վերան թթվածնային դիմակը հագնում է: Ի հարկե, լավ կլիներ ցած իջնել, նա անմիջապես կլավանար: Բայց այժմ մեր տակը շատ տխուր տեղեր են: Լադոգայի լիճը մեր հետևն է մնացել, ամպերի սակավաթիվ ճեղքերի միջով մենք միայն անտառոտ ու ճահճոտ տեղեր ենք տեսնում: Պոլինան յերկարող է գրում. «Այս վայրերում ավելի լավ է չցատկել, ավելի լավ է մեքենայի մեջ մնալ, թե չե ճահիճների մեջ կկորչես»: Պատասխանում եմ. «Վոչինչ, այստեղ շատ լճեր կան, ծայրահեղ դեպքում լճի վրա կիջնենք»:

Առջևում, ճեղքերի միջով յերևում է Ոնեգայի լիճը: Նրա գլխին ամպեր չկան: Ահա արդեն մենք թռչում ենք նրա ամայի, մռայլ ջրերի վրայով: Պոլինային գրում եմ. «Յեթե շուտ իջնել ես ուզում, Պետրոզավոդսկի մոտ ջրի վրա իջնելու հնարավորություն կա»: Բայց Պոլինան ժպտում է, գլուխը բացասաբար շարժում ու գրում է. «Մինչև Արխանգելսկ կբավի», և յերբ իմանում է, վոր յես արդեն Արխանգելսկի հետ կապ եմ պահպանում, գլխով հավանության նշան է անում:

Ոնեգայի լճն անցանք: Կրկին ու կրկին ամպամածություն է: Ի՞նչ ոգուտ, որ յերբեմն—յերբեմն ամպերը փոխում են իրենց ձևը. մերթ կուտակվում են, մերթ փետրաձև դառնում, մերթ բամբակե վիթխարի փաթիլների կերպարանք ստանում, մերթ համատարած են լինում, մերթ հազիվ նկատելի անցքեր ունենում: Միևնույն է, դրանք բոլորն էլ ամպեր են, որոնց միջով ոչինչ, ոչինչ չի յերևում: Ահա այժմ մեր վերևը ամպերի յերկրորդ շարքն է: Նրանք փռված են յերկար մարգերի ձևով, ուժեղ քամին նրանց ցրել է բարձրում: Ոչ մի լավ բան չեն խոստանում այդ ամպերը, հենց միայն նրանց տեսքից մարդ սարսուռ է զգում: Իսկ մենք առանց այդ էլ դողել ենք, թեև հագած ունենք տաք մորթե վերարկու, տաք սաղավարտ, և ունտեր: Մտածեցեք միայն. մի քանի ժամ առաջ մենք այդ նույն հագուստով թուլանում էինք Սևաստոպոլի շոգից... Պոլինան փշաքաղվում է և տերմոսից տաք թեյ է խմում:

Ոնեգա գետն անցանք: Ծովով Արխանգելսկ կհասնենք: Քառասուն բալե հեռու: Գլուխս սկսում է ցավել: Քունքերս ուժեղ դարկում են: «Ոհո, մտածում եմ, թթվածնի սովն զգացվում է»: Նայում եմ Պոլինային, ինձ ստուգում եմ նրա տեսքով: Իմ Պոլինան նույնպես գունատվել է: Հապա ի՞նչ: Ահա արդեն մոտ ժամ է, մենք թռչում ենք 5000 մետր բարձրությամբ, իսկ թթվածնային բալոններն անշարժ են մնացել: Բայց մենք համառում ենք: Այժմ արդեն սպորտային համառությունը հաղթում է բոլոր մյուս զգացմունքներին ու ապրումներին: Մի ինչ որ կես ժամվա համար արժե՞ բալոնները բանալ:

Բայց ինչպիսի՜ բավականությամբ ենք մենք զգում ցած իջնելը, յերբ մոտենում ենք Արխանգելսկին և Պոլինան իջնելու յե դիմում: Քունքերիս դարկն խուլ դղրդում է, ականջը դյուրանում: Ահա և ամպերը մնացին մեզանից հեռու, վերևը: Ցածում մի յերկաթուղի կա: Մենք այդ յերկաթուղու յերկարությամբ գնում ենք դեպի Խոլմոգորսկոյե լիճը: Մեքենան ճահճոտ և լճերով հարուստ վայրի գլխին սկսում է ճոճալ ու թռթռալ: Այժմ մենք յերանի յենք տալիս բարձունքին. այնտեղ թեև ող քիչ կար, բայց ճոճումներ չկային: Ի՜նչ հանգիստ է մեծ բարձրության վրա թռչելը:

Յերկու ցամաքային սավառնակ թռչում են մեզ ընդառաջ: Նրանք մեր առջևից են թռչում: Մենք շուտով գազ ենք տալիս և նրանց առաջն անցնում: Առջևում արդեն պարզ յերևում է Խոլմոգորսկոյե լիճը, որ վերջին լիճն է Արխանգելսկ հասնելուց առաջ: Յերախտագիտությամբ նայում եմ Վերա Լոմակոյին, որը նախապատրաստությունների ժամանակ մեզ համար ամենաճշգրիտ ու ամենամանրամասն քարտեզներ է ճարել: Պոլինան էլ է տեսնում լիճը և գիտե, որ մենք այստեղ պիտի իջնենք:

Շտուրմանի աշխատանքն ավարտված է: Իջնում եմ կաբին, որ անտենան հավաքեմ, փակեմ անտենայի և դիտանի անցքերը: Հավաքում եմ գործիքները, քարտեզները, քանոններն ու սարքերը, բոլորը զետեղում եմ պատյանների մեջ, իրենց տեղերը: Ռադիոկայանը փակում եմ և վերջին անգամ փաղաքշանքով նայում նրան. նա պատվով դիմացավ իր ծանր բեռանը և այնքան հնազանդ պահեց իրեն ոդում: «Միշտ այդպես, իմ թանկագին, լսիր մեծերին»:

Վերջին րոպեներն աննկատելի թռչում են: Գլուխս կաբինից դուրս եմ հանում և տեսնում՝ Պոլինան արդեն վայրէջքի յե դիմում: Մեր տակ լիճն է: Ցանկալի Խոլմոգորսկոյե լիճը: Այժմ արդեն մեզ ուղեկցում են յերկու հիդրոսավառնակ: Որքան հաճելի յե, որ տղերքը մեզ դիմավորելու յեն դուրս յեկել:

Լճի մեջ տեղը, մակույկի մեջ ծխաթաս է վառվում: Ծուխը նեղ շերտով ծավալվում է ջրի յերեսին և ցույց տալիս քամու ուղղությունը: Մեզ սպասում են:

Պոլինան, ինչպես հարկն է, վայրէջքի յե դիմում քամուն հակառակ: Մակույկն այնքան սահուն է կպչում լճի հարթ ու խաղաղ մակերևույթին, որ յես նույնիսկ չեմ նկատում վայրէջքի րոպեն: Սավառնակը սահում է հայելանման ջրի վրայով: Պոլինան մոտոռն անջատում է: Մենք իներցիայով ելի մի քիչ առաջ ենք շարժվում և լճի մեջտեղը կանգ առնում:

Նայում ենք մեր շուրջը: Ոչ ոք չի յերևում: Լճի ափին մի ցածրիկ յեղևնուտ կա: Յեղևնիները կարծես խուզած լինեն: Ափի կանաչն այնքա՛ն պայծառ է: Մենք զարմանում ենք, որ հյուսիսում այսքան փարթամ բուսականություն կա: Սևաստոպո-

յում կանաչ խոտ չկար: Այնտեղ արևն այրել եր խոտը և գորշ դեղնավուն գույն տվել: Պոլինային ասում եմ.

— Տես, ի՜նչ հիանալի յե շրջապատը:

Պոլինան պատասխանում է.

— Համենայն դեպս, հյուսիսում ավելի լավ է, քան հարավում:

Լռության մեջ լսվեց մի փոքրիկ մոտորի աղմուկ: Մոտեցավ մի շատ փոքրիկ մոտորանավակ, վորպեսզի մեզ քաշի դեպի ափ: Դժվար եր պատկերացնել, վոր այդ պստլիկը քաշելու յե մեր «МП—1»-ը: Դեռ այսոր առավոտյան եր, վոր նրան ծովն եր քշում մի հզոր մոտոռ: Սակայն մակույկից ինձ են նետում պարանի ծայրը: Յես այն կապում եմ իմ կաբինի առջևի մասի ունկին և մակույկը մի տեսակ անհանգիստ, ցնցումներով սկսում է մեզ քաշել դեպի ափ: Ծիծաղելի յե մեզ համար: Վերա Լոմակոն և Պոլինան նստել են մոտորի տակ ցենտրոպլանում, վոտքերը նավակողից ցած են կախել, հանել են իրենց կաշվե վերարկուները, թեև դրա անհրաժեշտությունը չկար, վորովհետև բավական ցուրտ եր: Մոտենում ենք ափին: Վառ կանաչ խոտի վրա մի փոքր խումբ մարդիկ ենք տեսնում: Մեզ վողջունում են, ձեռքով են անում: Սավառնակին ամրացնում են հատկապես մեզ համար պատրաստած ցցափայտին, և մենք ափ ենք դուրս գալիս: Մեզ հյուսիսային ծաղիկներից կազմված փնջեր են մատուցում, շնորհավորում են: Բայց վորտե՞ղ են սպորտային կոմիսարները: Ահա և նրանք: Յերկու կոմիսար մակույկով գնում են սավառնակ՝ բարոգրաֆները վերցնելու և բենզինի ու յուղի բաքերի պլոմբներն ստուգելու: Ուժեղ անձրև է սկսվում: Մեզ նստեցնում են նույն մակույկը և տանում դեպի Լախտա լիճը: Այնտեղ կա մի հանգստի տուն, վորտեղ մենք պետք է ապրենք մինչև Արխանգելսկ մեկնելը:

Անցնում ենք մի կղզի, վորի վրա մի փոքրիկ գյուղ կա: Մեջտեղը ծիծաղելի ձևով ներկած յեկեղեցին է, վոր կարծես անայնագործի պատրաստած խաղալիք լինի: Դեպի աջ, լճի ափին լայն աստիճաններով մի սանդուխք կա, վոր ամբողջապես զարդարված է ծովային դրոշակներով: Սանդուխքի վրա ժողովուրդ կա: Յերբ մեր մակույկը մոտեցավ փոքրիկ նավամատույցին,

վորից վերև եր բարձրանում սանդուխքը, նվագախումբը նվագեց: Հուզմունքից համարյա մեզ կորցրած՝ մենք սանդուխքով վերև վազեցինք: Ամեն կողմից ծաղկեփնջեր եյին թափում մեզ վրա: Սանդուխքի լայնքով կախված եյին կարմիր կտորներ, վորոնց վրա լոզունգներ եյին գրված: Բայց ամենից շատ մեզ զարմացրին ծովային դրոշակները, վորոնք, ինչպես հայտնի յե, կախվում են միայն առանձնապես հանդիսավոր դեպքերում: Մի՞թե այս ամենը մեր ժամանման պատվին է սարքած...

Մեզ տուն են առաջնորդում: Պոլինան իսկույն գնում է ուղիղ հեռախոսադծի մոտ՝ Մոսկվայի հետ խոսելու: Նա ռազմաօդային ուժերի պետին զեկուցում է, վոր մեր թռիչքն ավարտված է: Մոսկվայից մեզ շնորհավորել եյին: Միայն հիմա մենք հիշեցինք, վոր չեր խանգարի լվացվել ու շորներս փոխել: Բայց դրանից առաջ մենք յերեքով հավաքվեցինք մի անկյունում և սկսեցինք հեռագիր կազմել կառավարությանն ու ընկեր Ստալինին: Յերկար ժամանակ հեռագիր եյինք կազմում, բայց ստացվեց շատ հակիրճ հեռագիր.

«Մոսկվա, Կրեմլ.

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

Սևաստոպոլ—Արխանգելսկ անվայրեջք թռիչքը կատարված է: Պատրաստ ենք կատարելու ձեր ամեն մի առաջադրանքը:

ՈՍԻՊԵՆԿՈ, ԼՈՄԱԿՈ, ՌԱՍԿՈՎԱ»

Հեռագիրն ուղարկված է, լվացվում ենք, հագնվում ու նստում նախաճաշելու: Շատ քաղցած ենք: Չե՞ վոր ամբողջ որը վոչինչ չենք կերել: Միայն Պոլինան թռիչքի ժամանակ մի քիչ թեյ է խմել տերմոսից: Ընթրելուց հետո մենք ուրախ ու յերջանիկ խոր քուն մտանք:

Առավոտյան յես բոլորից շուտ արթնացա: Մեր սենյակից մի սքանչելի տեսարան եր բացվում դեպի լիճը, դեպի մուգ կանաչ հյուսիսային անտառը: Յես արթնացրի Վերային: Վերան արագ վոտքի յելավ: Կամացուկ, վորպեսզի Պոլինային չանհանգստացնենք, մենք դուրս յեկանք սենյակից: Իրար ձեռք բռնեցինք և վազեցինք անտառով: Ցողաթաթախ խոտը հաճելիորեն քսվում

եր մեր կոշիկներին: Կոշիկներս թրջվել եյին, սակայն այդ էլ հաճելի յեր և մենք վազում եյինք, վազում: Գտանք մասրենու մի թուփ, ծաղիկներ քաղեցինք մեր և Պոլինայի համար: Այդպես վազելով հասանք այն սանդուղքին, վորով յերեկ ափ եյինք դուրս յեկել: Նայում ենք՝ սանդուղքի ճակատը զարդարված է Ստալինի և Վորոշիլովի պորտրետներով: Այժմ արդեն կարդում ենք այն լոզունգները, վորոնց մոտով յերեկ անցել եյինք յերազի պես, յերջանկությունից ինքներս էլ մեզ չհիշելով: Լոզունգներից մեկի վրա կարդացինք. «Ստալինյան Սահմանադրությունը խորհրդային կնոջը տվել է տղամարդուն հավասար բոլոր իրավունքները: Կեցցե՛ Ստալինյան Սահմանադրությունը»: Մյուսի վրա՝ «Կեցցե՛ անպարտելի կարմիր բանակը»: Յերրորդի վրա՝ «Վողջո՛ւյն խորհրդային խիզախ օդաչուներին՝ Օսիպենկոյին, Լոմակոյին և Ռասկովային»:

Մեր սիրտն ուժեղ բաբախել սկսեց: Մեր առաջին միտքն եր՝ վազել, արթնացնել Պոլինային, վոր նա էլ կարդա այստեղ գրածները: Բայց հետո վորոշեցինք թողնել, վոր հանգստանա: Սանդուղքով ցած իջանք, ցատկեցինք ափին կանգնած մակույկի մեջ և սկսեցինք թիավարել: Թիավարում եյինք ծովակարի: Մակույկն արագ սլանում եր ջրի հարթ հայելու վրայով: Յերգում եյինք բարձրաձայն: Թիավարեցինք այնքան, մինչև վոր զգացինք, վոր ուտել ենք ուզում: Էլ ավելի արագ թիավարեցինք դեպի ափ և սանդուղքով վեր բարձրանալով՝ վազեցինք տուն Պոլինային արթնացնելու:

Պոլինան կանգնած եր սենյակի մեջտեղը: Նրա ձեռքին մի մեծ հարթուկ կար: Նա բանիմաց ձևով ու տնտեսավարի հարթուկում եր իր վերնաշապիկը: Միայն այժմ յես ու Վերան հիշեցինք, վոր չեր խանգարի, յեթե մենք էլ կարգի բերեյինք մեր հագուստը:

Նախաճաշի ժամանակ յոթ մարդու չափ ուտում եյինք ու մեկս մյուսի մասին կատակներ անում: Շատ եյինք ծիծաղում այն մտքից, վոր մենք հարավային արևառությունից այնքան սևացել եյինք: Այդ բոլորովին աններդաշնակ եր մեզ շրջապատող հյուսիսային բնության հետ: Նախաճաշից հետո մեզ ասացին. «Կգնաք Արխանգելսկ, այնտեղ ձեզ սպասում են»: Ցավալի

յեր Լախտա լճից գնալը, բայց քանի վոր Արխանգելսկում սպասում են, ինչ կարող ես անել:

Կայարանում մեզ դիմավորեցին Արխանգելսկի կազմակերպությունների ներկայացուցիչները: Մենք վագոնից դուրս յեկանք, վողջունեցինք: Մեկ հարցրին. «Դուք արդեն կարդացե՞լ եք ընկեր Ստալինի հեռագիրը»: Վո՛չ, հեռագիրը մենք դեռ չեյինք տեսել: Անհամբերությունից հուզվելով՝ մենք քաղաք շտապեցինք: Հյուրանոցում մեզ տվին «Պրավդա Սևերա» լրագրի համարը: Առաջին եջում տպված եր.

«Արխանգելսկ

Ավագ լեյտենանտներ ընկ. ընկ. ՕՍԻՊԵՆԿՈՅԻՆ, ԼՈՄԱԿՈՅԻՆ յեվ լեյտենանտ ընկ. ՌԱՍԿՈՎԱՅԻՆ:

Ջերմագին շնորհավորում ենք փառապանծ օդաչուհիներ ընկ. ընկ. ՊՈԼԻՆԱ ՕՍԻՊԵՆԿՈՅԻՆ, ՎԵՐԱ ԼՈՄԱԿՈՅԻՆ և ՄԱՐԻՆԱ ՌԱՍԿՈՎԱՅԻՆ Սևաստոպոլ-Արխանգելսկ անվայրէջ թռիչքը հիդրոսավառնակով հաջողությամբ կատարելու առթիվ:

Հպարտանում ենք խորհրդային կին-օդաչուների արիությամբ, տոկունությամբ ու բարձր տեխնիկայով, օդաչուհիներ, վորոնք իրենց փայլուն թռիչքով ևս մեկ ռեկորդ գրեցին խորհրդային ավիացիայի պատմության մեջ: Ամուր սեղմում ենք ձեր ձեռքը:

Ի. ՍՏԱԼԻՆ,
Վ. ՄՈԼՈՏՈՎ,
Կ. ՎՈՐՈՇԻԼՈՎ,
Մ. ԿԱԼԻՆԻՆ,
Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ»

Դժվար է նկարագրել, թե ինչ ցնծություն սկսվեց հյուրանոցի համարում:

Բայց մեզ սպասում եյին, հարկավոր եր գնալ կուսակցության մարզային կոմիտե՝ նախաճաշի: Այստեղ մենք սկսեցինք խորհել, թե ինչպիսի պատասխան տանք այդ հեռագրին: Յերեքս

էլ մատիտներ առած նստեցինք ու սկսեցինք հեռագրի սևագրություն կազմել։ Բայց վոչինչ չէր դուրս գալիս։ Հուզմունքն այնքան ուժեղ էր, վոր մենք չէյինք կարողանում հասկանալ, թե ինչից սկսենք։ Այն ժամանակ կուսակցության մարզկոմի աշխատողներից մեկն ասաց․

— Գուցե կհամաձայնեք, վոր յես ոգնեմ պատասխան կազմելու։

Մենք ոգնությունից հրաժարվեցինք։ Մի՞թե վորևէ մեկը կարող է մեր փոխարեն նկարագրել այն զգացմունքները, վոր մենք ապրում էյինք ստանալով այն շնորհավորանքը, վորի տակ ստորագրել էր Ստալինը։ Վերջիվերջո վորոշեցինք ցրվել տարբեր սենյակներ և գրել։ Գրում էյինք յերկար ժամանակ։ Ընկերուհիներս ստիպեցին, վոր առաջ յես կարդամ իմ գրածը։ Վերա Լոմակոն իսկույն համաձայնեց։ Պոլինան իր տեքստից մի քանի բառ ավելացրեց, և պատասխանը պատրաստ էր։ Մենք գրեցինք․

«ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ,

Դժվար է բառեր գտնել արտահայտելու համար ուրախության այն զգացմունքը, վոր ապրում ենք մենք այժմ՝ ստանալով Ձեր շնորհավորանքը, վոր լի յե անսահման սիրով ու հոգատարությամբ մեր ավիացիայի և նրա մարդկանց նկատմամբ։ Թռչելով մեր անծայրածիր յերջանիկ հայրենիքի քաղաքների, կոլտնտեսային դաշտերի վրայով, ոդի միջով միացնելով յերկու ծովերը՝ մենք մեր սրտում կրում էյինք Ձեր անունը, աշխարհում ամենադեմոկրատական Սահմանադրության ստեղծողի անունը, Սահմանադրություն, վոր մեր առաջ բաց է արել յերջանիկ ու ազատ կյանքի բոլոր ուղիները, վոր մեզ իրավունք տվեց հասնելու խորհրդային քաղաքացու ամենամեծ յերջանկությանը— ստանալ Ձեր շնորհավորանքը և թեկուզ մտքով ամուր սեղմել Ձեր ձեռքը։

ՊՈԼԻ՛ՆԱ ՈՍԻՊԵ՛ՆԿՈ, ՎԵՐԱ ԼՈՄԱԿՈ,
ՄԱՐԻ՛ՆԱ ՌԱՍԿՈՎԱ»։



ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՎԱԼՅԱՆ ԾԱՆՈԹԱՆՈՒՄ Ե ՊՈԼԻՆԱՅԻ ՀԵՏ

Յես շատ էյի ցանկանում իմ նոր ոդային ընկերուհուն՝ Պոլինա Ոսիպենկոյին ծանոթացնել Վալյա Գրիզոդուբովայի հետ։ Յես ու նա շատ էյինք զրուցում ոդաչուների մասին։ Յես ասում էյի, վոր Գրիզոդուբովային ճանաչում եմ և նրան համարում եմ ամենալավ ոդաչուհիներից մեկը, նա արդեն տաս տարուց ավելի յե, ինչ թռչում է։ Պոլինան ևս լսել էր Գրիզոդուբովայի մասին և ուզում էր ծանոթանալ նրա հետ։ Բայց Պոլինան ապրում էր Բրյանսկում և յերբ գալիս էր, ժամանակ չէր ունենում Վալյային հանդիպելու։

Մի անգամ Վալյան հեռախոսով զանգահարում է ինձ և բոլորովին հանգիստ, ինչպես յեթե խոսելիս լիներ քաղաքից դուրս մի զբոսանք կատարելու մասին, ասում է.

— Հիշո՞ւմ ես մեր խոսակցությունները հեռավոր թռիչքի մասին:

— Հիշում եմ:

— Դու ինձ հետ թռչելու մտքից չե՞ս հրաժարվել:

— Վոչ:

— Այդ դեպքում գնանք մեքենան դիտելու:

— Ի՞նչ մեքենա:

— Այն, վորով մենք թռչելու յենք Հեռավոր Արևելք:

— Մի՞թե դու վորևէ բան արել ես այդ թռիչքի համար:

— Այո: Մեզ արդեն մեքենա յե հատկացված:

Յես շատ զարմացա: Վալյան յեկավ ինձ մոտ և մենք գնացինք գործարան, վորտեղ մեքենան էր գտնվում: Այդ ձմեռն էր: Մեքենան ինձ հոյակապ թվաց: Նա շատ ավելի մեծ ու պատկառելի յեր այն բոլոր մեքենաներից, վորոնցով մինչ այդ թռել էր Վալյան: Նրա անիվները մարդու հասակից բարձր էյին: Նա հիշեցնում էր ծանր նավերը: Բայց յես յերբեք կյանքումս չեյի տեսել, վոր աղջիկները թռչեն ծանր նավերով: Հենց միայն այն, վոր ոդաչուհիներին այդպիսի պատկառելի մեքենա յեն վստահում և Վալյա Գրիզոդուբովան ղեկավարելու յե այդպիսի մի վիթխարի նավ, հենց միայն այդ բանը հուզում էր ինձ: Նոր թռիչքն էլ ավելի հրապուրիչ ու հետաքրքիր էր թվում:

Սավառնակ կահավորելու մասնագետ ինժեներներն ինձ ցույց տվին շտուրմանի կաբինը: Այդ կաբինն ինձ դուր չեկավ, նա դիտելու տեղեր քիչ ուներ, այնինչ հեռավոր թռիչքի ժամանակ, մանավանդ մեծ բարձրության վրա, դիտելու տեղեր վորքան կարելի յե շատ պիտի ունենալ: Յես խնդրեցի կաբինը ձևափոխել, ավելի շատ ապակեպատել: Ինժեներներին տվի սարքերի մի մեծ ցուցակ և խնդրեցի դրանցով կահավորել կաբինը: Ինժեներները գրի առան:

Յերբ գործարանից վերադառնում էյինք, յես Վալյային հարցրի.

— Իսկ ո՞վ է լինելու յերկրորդ ոդաչուն:

— Ինքս էլ դեռ չգիտեմ: Հարկավոր է այնպիսի մարդ ընտրել, վորը կարողանա գիշերով թռչել: Մենք սկսեցինք անուններ թվել և վոչ մի կերպ չեյինք կարողանում վորևէ մեկի վրա կանգ առնել: Մեկը ցածրահասակ է, վոտքը պեդալին չի հասնի, իսկ մեքենան ծանր է: Մյուսը վաղուց չէ, ինչ թռչում է: Հետո յես ասում եմ.

— Մի ոդաչուհի կա, կարծում եմ լավ է թռչում:

— Ո՞վ է:

— Պոլինա Ոսիպենկոն:

— Նա վորպես յերկրորդ ոդաչու թռչել չի համաձայնի: Նա շքանշանակիր, անվանի ոդաչուհի յե: Մի՞թե այդպիսի մեկին կարելի յե առաջարկել, վոր վորպես յերկրորդ ոդաչու թռչի:

— Յերաշխավորում եմ, Վալյա, վոր կհամաձայնի:

— Յեթե համաձայնի, հիանալի կլինի:

Նույն որը յես Պոլինային հեռագիր եմ ուղարկում.

«Հեռագրի՛ր համաձայնությունդ կանանց հեռավոր թռիչքին մասնակցելու վորպես յերկրորդ ոդաչու»: Յեվ յերեկոյան կայծակ հեռագիր եմ ստանում. «Համաձայն եմ վորպես յերկրորդ ոդաչու: Պոլինա»:

Յերբ Պոլինան Մոսկվա յեկավ, մենք միասին գնացինք Վալյայի մոտ: Վալյան նստած էր իր սովորական ամառային հագուստով և Սոկոլիկի հետ խաղում էր: Պոլինան Վալյայի վրա նայում էր բացահայտ թերահավատությամբ: Այդ ժամանակ նա հավանաբար մտածում էր. «Չի կարող լինել, վոր այսպիսի առերևույթ «տնային» կինը հեռավոր թռիչքի ընդունակ լինի»: Յեվ իրոք, Վալյան իր տանը վոչնչով նման չէր խորհրդային նշանավոր ոդաչուհի Վալենտինա Գրիզոդուբովային: Նրա մեջ վոչ մի բան ցույց չէր տալիս, թե նա թռիչք գործող մարդ է: Իսկ յերբ յես ու Վալյան նստեցինք դաշնամուրի մոտ ու սկսեցինք նվագել, Պոլինան բոլորովին շփոթվեց: Հետագայում նա ինքն էլ անկեղծորեն խոստովանեց, վոր այդ րոպեներին ինքը մտածելիս է յեղել. «Այ քեզ կանացի շուկա: Այս գործը լուրջ գործ չի...»

Նստեցինք ընթրելու: Վալյան սկսեց խոսել թռիչքի մասին: Նա միանգամից գրավեց Պոլինային վորպես հին ծանոթի և ասաց.

— Այսպես ուրեմն, Պոլինա, մեզ թույլատրում են թռիչք

կատարել: Մենք վորոշեցինք թռչել Հեռավոր Արևելք, վորպեսզի հեռավորության կանանց միջազգային ռեկորդը գերազանցենք:

Յեվ Վալյան սկսեց մանրամասն պատմել մեքենայի մասին: Խոսում եր բանիմաց կերպով, պարզ ու համոզիչ: Շատ համբերատարությամբ և գործը լավ իմանալով պատասխանում եր Պոլինայի բոլոր հարցերին: Այժմ Պոլինայի աչքերից ու նրա խոսելու ոճից յերևում եր, վոր նոր ծանոթի նկատմամբ իր կարծիքը փոխվել ե: Վալյան մեզ ճանապարհ դնելու յեկավ մինչև սանդուղքները: Տրամադրությունն ուրախ եր ու յերազկոտ: Վալյան ասաց.

— Ա՛յ թե փառավոր յեռյակ կլինի: Մենք պետք ե սերտ աշխատենք, պետք ե խնայենք իրար: Յերբ մարդիկ մեծ գործի յեն դիմում, նրանք պետք ե լավ ընկերներ լինեն, վորպեսզի մեկի կյանքը թանկ լինի մյուսի համար:

Հրաժեշտ տվինք: Փողոցում Պոլինան իր տպավորությունները հայտնեց ինձ.

— Գիտես, սկզբում ինձ թվում եր, թե ամեն ինչ «փուչ» ե, բայց այժմ տեսնում եմ, վոր լուրջ գործ ե: Քաջամարտիկ ե նա, այդ Գրիզոդուբովան:

Սակայն մինչև Հեռավոր Արևելք թռչելուն դեռ շատ ժամանակ կար: Մեզ ամենից շատ անհանգստացնում եր, վոր Սևաստոպոլ–Արխանգելսկ թռիչքը ձգձգվում ե: Յերբ մենք Սևաստոպոլում եյինք ապրում, յերբեմն–յերբեմն Վալյան ինձ հեռախոսի մոտ եր կանչում և հարցնում.

— Սիրելի շտուրման, շտապ հայտնեցեք ձեր կոորդինատները:

Յես պատասխանում եյի, թե առայժմ կոորդինատները Սևաստոպոլն ե:

Վալյան պատմում եր, վոր մեքենան պատրաստվում ե, բայց ինչ վոր մեկն արգելակում ե, վարժությունները ուշացնում ե: Վերջին անգամ, յերբ Վալյան զանգահարեց ինձ Սևաստոպոլ, ասաց, վոր ոգնություն ստանալու համար մտադիր ե դիմել ամենաթանկագին մարդուն (նա չասաց, թե այդ ում ե ուզում դիմել. առանց այն ել պարզ եր): Միայն նրա ոգնությամբ կըհաջողվի մեր թռիչքը կատարել:

Յերբ Սևաստոպոլ–Արխանգելսկ թռիչքից հետո մենք Մոսկվա վերադարձանք, կայարանում հարազատների ու ծանոթների հետ մեզ դիմավորեց և Վալյան: Ինձ հետ բարևելիս նա շշնջաց.

— Լավ նորություն ունեմ: Ձեզ համար սյուրպրիզ եմ պատրաստել:

Վալյայի խոսքերն ինձ հուզեցին: Ի՞նչ սյուրպրիզ ե այդ:

Հաջորդ որը Վալյան յեկավ ինձ մոտ և պատմեց, վոր յեղել ե ընկեր Ստալինի մոտ, վոր նա հետաքրքրվել ե մեր թռիչքով, թույլատրել ե թռչել Հեռավոր Արևելք և խորհուրդ ե տվել ճանապարհն ընտրել Բայկալի հյուսիսային ծայրի վրայով, վորովհետև այդ մարշրուտը կրճատում ե: Ընկեր Ստալինը հարցրել ե, թե Բայկալ լիճը ոդագնացության տեսակետից ապահովվա՞ծ ե արդյոք: Յերբ նրան ասել են, վոր այնտեղ վոչինչ չկա, նա պահանջել ե, վոր Բայկալի հյուսիսային ծայրին ռադիոփարոս դրվի, և վոր այդ ռադիոփարոսն այնտեղ մնա այնքան ժամանակ, մինչև վոր մենք թռիչքն ավարտենք: Մնացած ամեն ինչը մեր պլաններում նա ճիշտ ե համարել և մեզ համար մեքենան պատրաստելու ցուցում տվել: Դրանից հետո բոլորը տաք–տաք գործի կպան, սկսվեց թռիչքի իսկական նախապատրաստությունը:

Ամեն առավոտ մենք գնում եյինք աերոդրոմ: Մեքենան արդեն այնտեղ եր, միայն առանց շտուրմանական կաբինի. այդ կաբինը վերափոխում եյին: Սավառնակում առայժմ կահավորված եյին միայն յերկու կաբին՝ առաջին և յերկրորդ ոդաչուների կաբինները: Վալյան կոնստրուկտորներին ու ինժեներներին իր պահանջներն եր առաջադրում: Քանի դեռ վերափոխումներ եյին կատարվում, մենք վարժություններ եյինք անում: Մեր մեքենայի նման մեքենայով մենք կույր թռիչքի վարժություններ եյինք անում: Թռչում եյինք յերեքով:

Յես զբաղվում եյի իմ շտուրմանական գործերով: Քարտեզներ պատվիրեցի, խնդրեցի այն կպցնել շերտ–շերտ և կպցնել մառլայի վրա, վորպեսզի թռիչքի ժամանակ չպատռվեն: Տեղեկություններ եյի հավաքում ճանապարհին յեղած աերոդրոմների

մասին, կարդում էի նրանց կրոկները[1]): Տեղեկություններ էի հավաքում մարշրուտի պրոֆիլի մասին:

Շտերնբերգի անվան ինստիտուտում աստղագիտական նախահաշվում էր պատվիրված: Մեր ճանապարհին ընկած ինը կետի նկատմամբ ինստիտուտը նախապես հաշվել էր արեգակի բարձրությունը մի ամբողջ ամսով, յուրաքանչյուր քսան րոպեյում:

Սակայն ամենից կարևորն էր՝ սամոլյոտն ապահովել հուսալի ռադիոկապով: Ռադիոյի պարտականությունները դրված էին շտուրմանի վրա:

Յես սկսեցի կապի խնդրով զբաղվել: Նախատեսված էր թռիչքին վերցնել նոր կոնստրուկցիայի հիանալի կայան՝ բոլոր ալիքներով: Նախ և առաջ ինձ առաջարկեցին ուսումնասիրել միջազգային խոսակցական կոդը: Թռիչքի ժամանակ շտուրմանը ստիպված պիտի լիներ անընդհատ աշխատել քսանութ ժամ առանց ոգնության ու փոխարինողի: Նշանակում է խիստ կարևոր էր սովորել վորքան կարելի յե արագ ընդունել ու հաղորդել և նոր կայանով աշխատելուն այնպես վարժվել, որ ոչ մի հոգնածություն չզգալ ռադիո կապի վորակի ու տեմպերի վրա:

Ինձ ոգնելու եկավ կապավոր–հրահանգիչ Ալյոշինը: Սա խիստ ու շատ խստապահանջ հրահանգիչ էր: Նա անբասիր ճըշգրտություն էր պահանջում: Նույնիսկ այն ժամանակ, յերբ յես արդեն վարժվել էի բանալիով բավական արագ աշխատելուն, նա ասում էր.

— Արագն արագ է, սակայն բավականաչափ մաքուր չէ...

ԿՐԵՄԼԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Հուլիսի 16-ին կույր աղիքի բորբոքումով ինձ փոխադրեցին Կրեմլի հիվանդանոց: Վալյան ու Պոլինան մռայլ նայում էին, թե իրենց շտուրմանն ինչպես է դուրս գալիս շարքից:

— Ի՞նչ անենք այժմ,— ասում էր Վալյան:— Ինչ նախապատրաստություն պիտի լինի առանց շտուրմանի:

1) Կրոկներ—մարշրուտային քարտեզի հետ կապված աերոդրոմների դաշտերի սխեմատիկ գծագրությունը:

— Վալյա,— պատասխանեցի յես,— ինձ հարկավոր է, որ կաբինը պատրաստ լինի, իսկ իմ պատրաստությունը հիվանդանոցում կկարգավորենք, կտեսնես: Դուք առանց ինձ շրջապտույտ թռիչքներ կանեք, իսկ յերբ յես հիվանդանոցից դուրս կգամ, միասին մարշրուտային թռիչքներ կգործենք:

Վալյան թախծով ժպտաց:

Դեռ հիվանդանոց չընկած՝ յես սկսեցի տեղեկանալ, թե ինձ մոտ մարդիկ թողնելո՞ւ յեն արդյոք: Պարզվեց, որ հիվանդներին այցելել թույլատրում են միայն յերեք հաճախորդի, այն էլ հնգօրյակում յերկու անգամ: Ի՞նչ անել ուրեմն: «Ուրեմն, մտածում եմ, ստիպված պիտի լինենք հիվանդանոցի կարգը խախտել, յես հո այնքան էլ ծանր հիվանդ չե՞մ»:

Յես գիտեյի, որ աշխարհում գոյություն ունի պսիխոտերապիա և հաստատ վորոշեցի ոգնության կանչել այդ հիանալի գիտությունը: Բժիշկներին հայտարարեցի, թե կմեռնեմ, յեթե ինձ մոտ մարդիկ չթողնեն: Յես կհուզվեմ և այդ ինձ կվնասի: Բժիշկները քրթմնջացին, քրթմնջացին, բայց համաձայնեցին: Սկսվեց հիվանդանոցային պալատի համար շատ արտասովոր յերթևեկությունը: Գալիս էր թռիչքի շտաբի կապի պետը: Մենք համաձայնեցնում էինք կոդերը, խոսակցական աղյուսակները, ընտրում էինք ռադիոհաղորդումների ծրագրերն այն կայանների համար, վորոնցով թռիչքի ժամանակ յես պետք է կողմնորոշվեյի: Յերկու որ հետո կապի պետը հայտարարեց, թե արդեն կարելի յե սկսել ռադիովարժությունը:

Ընդունելության որը յերևաց Ալյոշինը: Նա իր հետ բերել էր զումմեր[1]) ակումուլյատոր և մեկ ընդունիչ: Այդ բոլորը վերարկուով քողարկեց դրասեղանի տակ: Անտենան դուրս քաշեց, քաշեց պատուհանի վրա, ակումուլյատորը սարքեց, միացրեց և ապարատուրան պատրաստ էր: Հրահանգիչը զումմերն այնպես դրեց, որ յես կարողանամ պառկած աշխատել: Դրանից հետո նա գալիս էր կանոնավորապես ուղիղ ժամը 13-ին և մենք յերկուական ժամ պարապում էինք:

1) Զումմեր—ռադիո ընդունման ու հաղորդման վարժություններ անելու սարք է:

— Հենց որ դուք անկողին ընկաք, սկսեցիք ավելի մաքուր հագնվել,—կատակում էր Ալյոշինը:

Ինչպիսի ջերմաստիճան էլ որ յես ունենայի, աշխատում էի ընդունման ու հաղորդման վրա: Սառույցը փորիս դրած պառկած եմ, բայց ձեռքով թխթխկացնում եմ՝ կետ, գիծ, կետ... Բժիշկները սովորում էին.

— Դարձյա՞լ պարապմունք:

— Այո, բայց յեթե թռիչքը հետաձգվի, անմիջապես ջերմաստիճանս կբարձրանա,— սպառնում էի յես, և բժիշկներն ինձ հանգիստ էին թողնում:

Տարբեր գալիս էին քարտեզների հարցով: Պալատում բացում էին յերկար փաթեթները, մասնագետներն չափումների հետ խորհրդակցում էին քարտեզներն ուղղելու մասին: Յերբեմն հիվանդին «այցելության էին գալիս» միանգամից ութ մարդ: Բժիշկները վերջնականապես համբերությունից դուրս յեկած սկսեցին վճռականորեն բողոքել: Բայց յես ասում էի.

— Կառավարական առաջադրանքը տապալել չի կարելի: Թռիչքը տեղի յե ունենալու և յես լինելու յեմ այդ թռիչքի շտուրմանը:

Սարքավորման ինժեներները գալիս էին խորհրդակցելու, թե կաբինում ինչպես դասավորեն սարքերը: Յես գիտեյի, որ կաբինում նստատեղը նավի քթից շատ հեռու յե շինված: Խնդրեցի այն առաջ տեղափոխել: Ինժեներն ասում էր.

— Կգաք, կփորձեք:

— Հարկավոր է ավելի մոտիկ դնել,— պնդում էի յես:

Ինձ հարցնում էին, թե սավառնակում որտեղ դնեն ընդունիչը: Յես բացատրում էի:

Գալիս էր կոշկակարը ունտերի ու վորսորդական կոշիկների չափերը վերցնելու: Գալիս էին դերձակները չափեր վերցնելու, վորպեսզի ամառային զգեստ կարեն: Հանկարծ գալիս է մի մարդ, իսկ յես չգիտեմ էլ, թե նա ինչ է ուզում ինձանից: Պարզվում է, որ նա մասնագետ ձեռնոցագործ է:

— Յես յեկել եմ ձեռնոցային ֆաբրիկայից, թույլ տվեք չափս վերցնել:

Մեկ էլ հանկարծ գալիս է մի անծանոթ կին, բարևում է:

— Բարև ձեզ,— պատասխանում եմ յես,— ո՞վ եք դուք:

— Յես սաղավարտային գործարանից եմ:

Յեվ յես հնազանդությամբ դեմ եմ անում գլուխս:

Իմ լայնքն ու յերկայնքը չափում ու չափչփում էին:

Բայց ահա արդեն բոլոր չափսերը վերցված են, գործարաններում ավարտում են հագուստներ կարելը, իսկ յես դեռ պառկած եմ ու պառկած: Հիվանդությունս ձգձգվում է: Ապենդիցիտը չի անցնում, ջերմաստիճանս չի իջնում: Մի անգամ գալիս է Վալյան և ասում.

— Գիտես, Մարինա, բանը վատ է: Յերեկ կառավարական հանձնաժողովը պաշտոնապես հարցում արեց քո առողջության մասին: Պատասխանեցին, թե դու չուտով թռչել չես կարող:

— Ի՞նչ արած, Վալյա, պահեստի համար մի ուրիշ շտուրման պատրաստիր:

— Հեշտ է ասել: Նախ՝ վո՞րտեղից գտնես այդպիսին, իսկ յերկրորդ՝ յեթե լինի էլ, յես ուրիշի հետ թռչել չեմ ուզում:

Յես հասկանում էի, որ իմ ընկերուհիների կյանքը մթագնում եմ:

— Վալեչկա,— ասում եմ,— բայց դուցե յես կհասցնեմ: Բաղխավարժությունս, կարելի յե ասել, բոլորովին պատրաստ է: Մնում է միայն դուրս գալ հիվանդանոցից և մի քանի թռիչք գործել:

— Հասկանո՞ւմ ես, այն մարդիկ, ովքեր արդելակում են մեր թռիչքի նախապատրաստությունը, այժմ օգտագործում են քո հիվանդությունը և ասում, թե ամեն ինչ անհաջող է գնում:

— Լավ, Վալյա, դու գնա, յես մի վորևէ բան կմտածեմ:

Ինձ համար շատ ծանր էր, վոր յես իմ ընկերուհիներին այդ դրության մեջ եմ դրել: Նախապատրաստության վրա ամբողջ յերեք ամիս է անցել, մնում է մի քանի օր, իսկ յես պառկել եմ անկողնում և վոչնչով չեմ կարող օգնել: Հարկավոր է վեր կենալ, մտածում եմ, աշխատանքի անցնել: Յեթե ապենդիցիտի բորբոքումը կսկսվի, այն դեպքում, ի հարկե, ի՞նչ կարող ես անել: Բայց կարող է պատահել, վոր չկրկնվի:

Քրոջը կանչեցի և յերկրորդ ջերմաչափը խնդրեցի:

— Ինչի՞ համար:

— Տաքությունս յերկու ջերմաչափով պիտի ստուգեմ:

Քույրը բերեց յերկրորդ ջերմաչափը: Յես այն դնում եյի թևիս տակ և այնքան պահում, մինչև վոր սյունիկը բարձրանում եր մինչև նորմալ ջերմաստիճանին՝ 36,8: Այն ժամանակ ջերմաչափը հանում եյի ու պատրաստ պահում վերմակի տակ, իսկ նրա փոխարեն դնում եյի մյուսը՝ արդեն ինձ համար, իսկական տաքությունս չափելու համար:

Ամենից հետաքրքիրն այն է, վոր շատ չուտով իրոք վոր ջերմությունս իջավ մինչև նորմալ աստիճանը: Այն ժամանակ յես ինձ մոտ խնդրեցի գլխավոր բժշկին և լուրջ ու առարկություն չվերցնող տոնով ասացի.

— Ա՛յ ինչ, բժիշկ. քանի յերկու որ յես համբերությամբ բուժվել եմ այնպես, ինչպես բժիշկներն են պահանջել: Այժմ յես սկսում եմ թելադրել:

Գլխավոր բժիշկը բացահայտ կերպով հուզվեց.

—Ներեցեք, այսինքն այդ ինչպե՞ս: Մենք ենք համբերել և վոչ թե դուք: Դուք այստեղ, հիվանդանոցի պալատում ամբողջ ռադիոլաբորատորիա յեք սարքել, առավոտից մինչև յերեկո ձեզ մոտ մարդիկ եյին գնում գալիս, ուրեմն մեզանից ո՞վ է համբերողը յեղել:

Բժիշկը տեսնում եր, վոր յես մի նոր բան եմ հնարել, ուստի նախապես հարձակման անցավ: Բայց յես սանձնատուր չեյի լինում:

— Վոչ, այնուամենայնիվ յես պետք է թելադրեմ: Լսեցեք: Թող ինձ վաննա նստեցնեն և անհապաղ ոդ դուրս բերեն, թե չէ՝ կփախչեմ:

— Հասկանո՞ւմ եք, թե ինչ եք պահանջում: Վաննայից հետո՞: Դուք, ի՛նչ է, ուզում եք, վոր մենք ձեզ մրսեցնե՞նք:

— Բժիշկ, ինձ ոդ է հարկավոր: Յես չեմ մրսի, յես ինձ շատ լավ եմ իմանում: Յեթե ինձ չթողնեն վոտքերս անկողնից ցած դցել, չլողացնեն և ոդ դուրս չբերեն, յես շատ ավելի կվատանամ:

Յես գործ ունեյի խելոք բժշկի հետ, նա մեկն եր նրանցից, վորոնք միանգամայն ճիշտ գտնում են, վոր յերբեմն չի խանգարում հենց հիվանդին հարցնել, թե իրեն ինչպես լավ է

բուժել: Նույն որը ինձ թույլատրեցին վոտքերս ցած դցել, վաննա ընդունել և հետևյալ որը նստեցրին տերրասում:

Վալյան յեկավ ու զարմացավ: Հիվանդ չուրմանը բազմոցում նստած ժպտում եր ամբողջ բերանով: Յես Վալյային պատմեցի բժշկականության դեմ կազմակերպված իմ սոսկալի դավադրությունը:

— Հասկանո՞ւմ ես, յես այստեղ ինձ համար սուտ ջերմաստիճան եմ սարքում: Ամեն ինչ ինձ վրա յեմ վերցնում: Յեթե մի քանի որում անցնի, կթռչենք միասին: Չանցնի, կնշանակե կթռչեք առանց ինձ:

Բայց Վալյան չեր հավատում: Լսվա՞ծ բան է այդ. պառկած հիվանդը հանկարծ վեր կենա ու թռչի: Նա ինձնից խոսք առավ, վոր իրենից ջերմաստիճանս չեմ թաքցնելու:

Յես բժիշկներին ասացի.

— Իմ ջերմաստիճանը նորմալ է. դուրս գրեցեք:

— Ներեցեք,— պատասխանում եյին ինձ,— բայց ձեզ հարկավոր է նորմալ ջերմաստիճանով ելի մի տաս որ պառկել: Ձեզ կուղարկենք սանատորիա, Բարվիխա:

— Բարվիխա չեմ գնա,— համառում եյի յես:— Մեր աղջիկները Պոդլիպկիում են ապրում: Այնտեղի ոդը պակաս չէ: Կգնամ Պոդլիպկի, ազատ ոդում կապրեմ և շուտով կկազդուրվեմ:

Կանչեցին պրոֆեսորին: Պրոֆեսորն սկսեց տնտղել ապենդիցիտի մոտերքը: Շատ եր ցավում, բայց յես պառկել եյի հանդարտ, ժպտում եյի և ձևացնում, թե չի ցավում: Պրոֆեսորն ավելի ու ավելի ուժեղ է սեղմում փորս, իսկ յես պառկել եմ և սպասում եմ, թե յերբ կվերջանա այդ: Նա այնպես ուժեղ եր սեղմում, վոր նույնիսկ առողջ մարդը ցավ կզգար: Բայց յես համառորեն կրկնում եյի.

— Վոչ, չի ցավում:

Պրոֆեսորը չեր հավատում: Նա բժշկին առաջարկեց.

— Կանգնեցեք գլխացը և նայեցեք նրա աչքերին:

Յես աշխատում եյի վորքան կարելի յե անմեղ տեսք տալ իմ աչքերին: Նայում եյի ուղիղ բժշկի աչքերին և խաբում.

— Մի քիչ ցավում է, բոլորովին քիչ: Դատարկ բան է:

Ինձ դուրս գրեցին: Իսկական ջերմաստիճանս 37,8 եր: Ինձ բուժող բժիշկ Բարսկին անբավական որորում եր գլուխը:

— Ձեր դրությունն ինչ-վոր լավ չի յերևում: Շուտ եք դուրս գրվում:

— Բժիշկ, հասկացեք, յես այլևս չեմ կարող այստեղ մնալ:

— Դուք ինչ-վոր խարդախում եք: Ահա ձեզ դեղ: Կանոնավոր կընդունեք և դիետա կպահեք, վոչ մի մսեղեն, կծու կամ յուղալի բան:

— Ցտեսություն, բժիշկ: Ձեր բոլոր պատվերները կկատարեմ:

ՏՐԱՆՇԱՆԸ

Ինձ տարան Պոդլիպկի: Անձնակազմն չուրմանին արժանավայել կերպով դիմավորեց: Վալյան ու Պոլինան աղմուկով ուրախանում եյին ու գոռում.

— Վոչ մի պահեստի չուրման: Վոչ վոք պետք չի մեզ: Այլևս վոչ վոքի հետ չենք թռչի, մեր Մարինան դուրս ե յեկել:

Մենք մի մեծ ամառանոց եյինք զբաղեցնում: Բացի մեզանից այստեղ ապրում եյին Պոլինայի ամուսինը, Թռիչքի շտաբի աշխատողներ, բժիշկը և ինձ հետ յեկած ռադիոհրահանգիչը: Ռադիո սարքավորումը Կրեմլի հիվանդանոցից տեղափոխվել եր Պոդլիպկի:

Առաջին իսկ յերեկոյան աղջիկներն ինձ տարան հագուստեղենը տեսնելու: Մի առանձին սենյակում իրերի մի կույտ կար թափված: Պոլինան ինձ ուրախացնել ուզեց: Նա իր վրա գցեց մի յերկար մետաքսե շալիկ և սկսեց պարել, իսկ յես ու Վալյան բազմոցին նստած քրքջում եյինք: Հետո Վալյան հագավ նույնպիսի մի շալիկ և վրան քաշեց մի կաշվե անդրավարտիկ: Նա արտասովոր չափով հաստացավ: Մեր աղմուկի վրա դուրս յեկավ անհանգստացած բժիշկը:

— Ա՛յ քեզ հիվանդ: Այստեղ մենք ապրում եյինք հանգիստ ու խաղաղ, հիվանդը յեկավ և կրկեսն սկսվեց:

Վալյան արդարանում եր.

— Բժիշկ, դուք նայեցեք այս գողիչ շալիկներին:

Բժիշկն ել չկարողացավ իր ծիծաղը պահել: Ծիծաղը, բարեկամներիս մտերմությունը ինձ իրոք վոր առողջացրին: Հետևյալ առավոտյան ջերմությունս նորմալ դարձավ: Յես արդեն կարող եյի չպառկել, բայց դիետային լուրջ եյի վերաբերվում: Սա արդեն կատակ բան չեր, բորբոքումը կկրկնվեր և այն ժամանակ մնաս բարև թռիչք:

Ալյոշինն առաջարկեց, վոր յես ինքս ավարիային ռադիոկայանը սարքեմ անտառում: Թարմ ոդում աշխատելուց լավ բան ի՛նչ կարող ե լինել: Յես տաք-տաք գործի կպա: Ընդունիչը հավաքեցի, բացատում ռադիոկայան սարքեցի և կապը կարգավորեցի: Հիվանդանոցի մահճակալին պառկած ժամանակ յես այդ վոչ մի կերպ անել չեյի կարող:

Մեր Թռիչքի հրահանգի համաձայն, հարկադրական վայրեջքի դեպքում չուրմանը պետք ե նախապես պարաշյուտով դուրս թռչեր սավառնակից: Նշանակում ե՝ ոդաչուներից վորևե մեկը պետք ե ռադիոն իմանա, վորպեսզի վայրեջքից հետո ավարիային կայանի միջոցով կապը կարգավորի: Ինձ հետ վարժություններ անել սկսեց նաև Պոլինան: Առաջին որը Պոդլիպկիում անցավ աշխատանքի մեջ աննկատելի:

Հետևյալ որը ինձ ու Պոլինային կանչեցին քաղաք, Կրեմլ, Միխայիլ Իվանովիչ Կալինինի մոտ, վորպեսզի մեզ Լենինի շքանշաններ հանձնեն: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի սեսիայի նախապատրաստություններն եյին տեղի ունենում և Միխայիլ Իվանովիչը վորոշել եր չհետաձգել, շքանշանները մեզ հանձնել վոչ թե Գերագույն Խորհրդի նախագահության նիստում, ինչպես սովորաբար արվում ե, այլ պարզապես իր աշխատանքային կաբինետում:

Խոր հուզմունքով մենք Կրեմլում անցանք կառավարական շենքի շեմքը: Մեզ հրավիրեցին Միխայիլ Իվանովիչի կաբինետը: Նա սպիտակ կոստյումը հագին նստած եր իր սեղանի առաջ: Մեզ տեսնելով՝ Միխայիլ Իվանովիչը վեր կացավ, վորպեսզի մեզ վողջունի: Սեղանին դրված եյին յերկու հատ փոքրիկ կարմիր տուփեր: Մենք վողջունեցինք Միխայիլ Իվանովիչին և հուզմունքով լսում եյինք, յերբ նա կարդում եր կառավարության վորոշումը՝ մեզ պարգևատրելու մասին: Սկզբում շքանշանն ըն-

տացավ Պոլինան: Միխայիլ Իվանովիչը նրան մեկնեց շքանշանով տուփն ու շքանշանի գրքույկը, սիրալիր սեղմեց նրա ձեռքը և հաջողություն ցանկացավ: Պոլինան պատասխանեց, թե ինքը խոստանում է առաջիկայում ավելի վատ չաշխատել քան մինչև այժմ, և նույնիսկ ավելի լավ աշխատել: Միխայիլ Իվանովիչը դարձավ դեպի ինձ: Նրան մոտենալիս յես խիստ հուզվում եյի և տանջալից կերպով մտածում. վո՛ր ձեռքով վերցնեմ շքանշանը, ա՞ջ, թե՝ ձախ: Չե՞ վոր աջ ձեռքս պիտի մեկնեմ Միխայիլ Իվանովիչին և շնորհակալություն հայտնեմ պարգևի համար, իսկ ձախով շքանշանը վերցնելն անհարմար է: Մի կերպ թանղարժեք տուփիկն աջ ձեռքից շտապ փոխադրեցի ձախ ձեռքս և չնկատեցի, թե ինչպես աջ ձեռքս ինքնիրեն մեկնվեց Միխայիլ Իվանովիչի ձեռքին: Միխայիլ Իվանովիչը ինձ շնորհավորում եր պարգևի առթիվ, իսկ յես խոստանում եյի, թե շուտով մենք մեր նոր թռիչքը կավարտենք հաջողությամբ:

— Յես գիտեմ,— ասաց Միխայիլ Իվանովիչը:

Յեկավ լուսանկարիչը: Սկսեցին մեզ նկարել Միխայիլ Իվանովիչի հետ: Միխայիլ Իվանովիչը կատակներ եր անում, փողկապն ուղղում:

Մենք կաբինետից դուրս յեկանք և սկսեցինք մեր վերնաշապիկների կրծքին անցքեր բանալ շքանշանների համար: Յես ամրացրի իմ առաջին շքանշանը: Յերբ մենք Կրեմլից դուրս յեկանք և անցնում եյինք Ալեքսանդրյան այգու մոտով, շարունակ նայում եյինք մեր նոր շքանշաններին:

Մենք գնացինք Պոդլիպկի: Ճանապարհին յես անցա մեր տուն, Տանյուշային ինձ հետ վերցրի ամառանոց:

Սակայն Տանյուշան իր մոր հետ յերկար մնալ չկարողացավ: Հետևյալ որն իսկ մեզ կանչեցին Թռիչքի կառավարական հանձնաժողովի նիստին:

ՎԱԼԵՐԻ ՊԱՎԼՈՎԻՉ ՉԿԱԼՈՎ

— Ա՛յ թե եֆեկտ է լինելու,— կանխաճաշակում եր Վալյան:— Շտուրմանը քիչ եր մնում մեռնի և հանկարծ նույնիսկ շքանշան ստացավ:

Իսկապես եֆեկտը հսկայական եր: Բոլորը միանգամայն առողջ եյին տեսնում շտուրմանին: Մեզ հետ բոլորովին այլ կերպ սկսեցին խոսել:

Այդ նիստին ներկա եյին Վալերի Պավլովիչ Չկալովը և Բելյակովը: Վալերի Չկալովը շատ մոտ եր ընդունում իր սրտին մեր թռիչքի նախապատրաստությունը: Նա համբերությունից դուրս եր գալիս, յերբ ասում եյին, թե վորևե բան ժամանակին պատրաստել չի կարելի: Խոսքը վերաբերում եր սարքերի վերջնական մոնտաժին: Վալերի Պավլովիչը թխկացրեց սեղանին և ասաց:

— Հարկավոր է անել:

Ինժեներները լռեցին և հասկացան, վոր Վալերի Պավլովիչն իրավացի յե: Յերբ խոսքը վերաբերում է ընկեր Ստալինի հանձնարարած թռիչքին, վոչ մի անհնարին բան չպետք է լինի:

— Ամեն ինչ կարելի յե անել,— ասում եր Չկալովը:

Վալերի Պավլովիչից մեզ ել հասավ:

— Իսկ դո՞ւք ինչ եք քաղցրախոսություն անում: Պահանջեցեք: Դուք քաղաքավարություն մի արեք, այլ վառեցեք նրանց, ինչպես հարկն է:

Խոսքը վերաբերում եր այն մարդկանց, վորոնք թռիչքի նախապատրաստությունն արգելակում եյին:

Վալերի Պավլովիչը խորհուրդ տվեց անպայման մեկ մոտորով թռչելու վարժություններ անել. յեթե մի մոտորը դադարի աշխատել, պետք է կարողանալ մյուս մոտորով թռչել: Մեքենան շուռ ու մուռ կգա, պետք է այն կառավարել սովորել: Հետո նա Վալյային խորհուրդ եր տալիս ծանր բեռով սավառնակ քշելուն վարժվել: Խոստանում եր գնալ աերոդրոմ՝ դիտելու:

— Ավելի շատ համառություն, ավելի շատ համարձակություն: Այդ քո անձնական գործը չէ, այդ ամբողջ ժողովրդի գործն է: Դու վոչ թե խնդրիր, այլ պահանջիր:

Նա թռիչքի շարքի աշխատանքի մեջ մի թարմ հոսանք մտցրեց: Յերբ խոսք բացվեց այն մասին, թե մենք գիշերով ինչպես պիտի անցնենք բարձր սարերի վրայով և այդ առթիվ կասկածներ հայտնվեցին, Չկալովն ասաց.

տացավ Պոլինան: Միխայիլ Իվանովիչը նրան մեկնեց շքանշանով տուփն ու շքանշանի գրքույկը, սիրալիր սեղմեց նրա ձեռքը և հաջողություն ցանկացավ: Պոլինան պատասխանեց, թե ինքը խոստանում է առաջիկայում ավելի վատ չաշխատել քան մինչև այժմ, և նույնիսկ ավելի լավ աշխատել: Միխայիլ Իվանովիչը դարձավ դեպի ինձ: Նրան մոտենալիս յես խիստ հուզվում էյի և տանջալից կերպով մտածում. վո՞ր ձեռքով վերցնեմ շքանշանը, ա՞ջ, թե՞ ձախ: Չե՞ վոր աջ ձեռքս պիտի մեկնեմ Միխայիլ Իվանովիչին և շնորհակալություն հայտնեմ պարգևի համար, իսկ ձախով շքանշանը վերցնելն անհարմար է: Մի կերպ թանգարժեք տուփիկն աջ ձեռքից շտապ փոխադրեցի ձախ ձեռքս և չնկատեցի, թե ինչպես աջ ձեռքս ինքնիրեն մեկնվեց Միխայիլ Իվանովիչի ձեռքին: Միխայիլ Իվանովիչը ինձ շնորհավորում էր պարգևի առթիվ, իսկ յես խոստանում էյի, թե շուտով մենք մեր նոր թռիչքը կավարտենք հաջողությամբ:

— Յես գիտեմ,— ասաց Միխայիլ Իվանովիչը:

Յեկավ լուսանկարիչը: Սկսեցին մեզ նկարել Միխայիլ Իվանովիչի հետ: Միխայիլ Իվանովիչը կատակներ էր անում, փողկապն ուղղում:

Մենք կաբինետից դուրս յեկանք և սկսեցինք մեր վերնաշապիկների կրծքին անցքեր բանալ շքանշանների համար: Յես ամրացրի իմ առաջին շքանշանը: Յերբ մենք Կրեմլից դուրս յեկանք և անցնում էյինք Ալեքսանդրյան այգու մոտով, շարունակ նայում էյինք մեր նոր շքանշաններին:

Մենք գնացինք Պոդլիպկի: Ճանապարհին յես անցա մեր տուն, Տանյուշային ինձ հետ վերցրի ամառանոց:

Սակայն Տանյուշան իր մոր հետ յերկար մնալ չկարողացավ: Հետևյալ օրն իսկ մեզ կանչեցին թռիչքի կառավարական հանձնաժողովի նիստին:

ՎԱԼԵՐԻ ՊԱՎԼՈՎԻՉ ՉԿԱԼՈՎ

— Ա՛յ թե եֆեկտ է լինելու,— կանխաճաշակում էր Վալյան:— Շտուրմանը քիչ էր մնում մեռնի և հանկարծ նույնիսկ շքանշան ստացավ:

Իսկապես եֆեկտը հսկայական էր: Բոլորը միանգամայն առողջ էյին տեսնում շտուրմանին: Մեզ հետ բոլորովին այլ կերպ սկսեցին խոսել:

Այդ նիստին ներկա էյին Վալերի Պավլովիչ Չկալովը և Բելյակովը: Վալերի Չկալովը շատ մոտ էր ընդունում իր սրտին մեր թռիչքի նախապատրաստությունը: Նա համբերությունից դուրս էր գալիս, յերբ ասում էյին, թե վորևէ բան ժամանակին պատրաստել չի կարելի: Խոսքը վերաբերում էր սարքերի վերջնական մոնտաժին: Վալերի Պավլովիչը թխկացրեց սեղանին և ասաց:

— Հարկավոր է անել:

Ինժեներները լռեցին և հասկացան, վոր Վալերի Պավլովիչն իրավացի յե: Յերբ խոսքը վերաբերում է ընկեր Ստալինի հանձնարարած թռիչքին, վոչ մի անհնարին բան չպետք է լինի:

— Ամեն ինչ կարելի յե անել,— ասում էր Չկալովը:

Վալերի Պավլովիչից մեզ էլ հասավ:

— Իսկ դո՞ւք ինչ եք քաղցրախոսություն անում: Պահանջեցեք: Դուք քաղաքավարություն մի անեք, այլ վառեցեք նրանց, ինչպես հարկն է:

Խոսքը վերաբերում էր այն մարդկանց, վորոնք թռիչքի նախապատրաստությունն արգելակում էյին:

Վալերի Պավլովիչը խորհուրդ տվեց անպայման մեկ մոտորով թռչելու վարժություններ անել. յեթե մի մոտորը դադարի աշխատել, պետք է կարողանալ մյուս մոտորով թռչել: Մեքենան շուռ ու մուռ կգա, պետք է այն կառավարել սովորել: Հետո նա Վալյային խորհուրդ էր տալիս ծանր բեռով սավառնակ քշելուն վարժվել: Խոստանում էր գնալ աերոդրոմ՝ դիտելու:

— Ավելի շատ համառություն, ավելի շատ համարձակություն: Այդ քո անձնական գործը չէ, այդ ամբողջ ժողովրդի գործն է: Դու վոչ թե խնդրիր, այլ պահանջիր:

Նա թռիչքի շտաբի աշխատանքի մեջ մի թարմ հոսանք մտցրեց: Յերբ խոսք բացվեց այն մասին, թե մենք գիշերով ինչպես պիտի անցնենք բարձր սարերի վրայով և այդ առթիվ կասկածներ հայտնվեցին, Չկալովն ասաց.

— Այդ հարցը կլուծի Գրիզոդուբովան: Նա յե հրամանատարը, ինչո՞ւ խցկվել նրա գործերի մեջ:

Խորհրդակցությունը վերջացավ: Բելյակովը Չկալովին եր պաշտպանում: Նրանք յերկուսն էլ ասացին, վոր մենք միշտ կարող ենք հույս դնել նրանց ամեն մի ոգնության վրա: Վալերի Պավլովիչը խոստացավ գալ աերոդրոմ:

Դրանից հետո մենք ամեն որ գնում եյինք աերոդրոմ: Բժըշկական նախազգուշացումներին հակառակ յես էլ գնացի աերոդրոմ և բարձրացա մեքենան: Վալերի Պավլովիչն աերոդրոմում եր: Նա կանգնած եր կանաչ խոտի վրա ամուր, կուռ, ինչպես միշտ՝ վոտքերը լայն բացած, արևառ ու հողմահար դեմքով, սպիտակ բլուզը հագին: Չկալովը նայում եր, թե Վալյան ինչպես է մեքենան իջեցնում: Վալյան մի քանի շատ լավ վայրեջք կատարեց:

Դիտելով նրան՝ Վալերի Պավլովիչը մռնչում եր.

— Լավ է, լավ է:

Վալյան ղեկը դարձրեց, դուրս յեկավ սավառնակից և մենք յերեքս՝ Վալյան, Պոլինան ու յես Վալերի Պավլովիչի հետ քայլում եյինք աերոդրոմում: Վալերի Պավլովիչն առաջվա պես հանդիմանում եր մեզ, թե մենք քաղցրախոսություն ենք անում, թույլ ենք պահանջում, թե հարկավոր է ավելի մեծ հաստատակամություն ցուցաբերել: Հետո առաջարկեց միասին գնալ ճաշելու, վորպեսզի հետո էլ բարեկամաբար զրուցենք:

— Թե չե դուք, աղջիկերք, կկարծեք թե յես միայն հայհոյել գիտեմ: Իսկ յես ձեզ շատ եմ սիրում և ձեր բարին եմ ցանկանում: Գնանք մի բան ուտենք և ամեն ինչի մասին կխոսենք:

Մենք գնացինք «Դինամո» ստադիոնի ճաշարանը: Գնացինք Չկալովի կապույտ մեքենայով, վոր նա բերել է Ամերիկայից: Չկալովը նստել եր ղեկի մոտ և կատակներ եր անում.

— Մեքենան լիքը կնիկներ են:

— Այդ ի՞նչ է, Վալերի Պավլովիչ, մեզ կնիկնե՞ր ես անվանում:

— Բայց միթե՞ կնիկը վատ խոսք է: Այո, դուք յերեք կնիկ եք, բայց տես, թե ի՛նչ գործ եք սկսել: Ապա ինչպե՞ս անվանեմ ձեզ: Մենք դեռ ցույց կտանք, թե ինչ են խորհրդային կնիկները:

Հասանք «Դինամո»-յի ստադիոն: Սեղան նստեցինք և ուշադիր լսում եյինք Վալերի Պավլովիչին: Նա պատմում եր բևեռի վրայով կատարած իր թռիչքի մասին: Ասում եր, վոր յերբ թռիչքի եյին պատրաստվում, ժողովրդի թշնամիները մեքենայի վթար եյին նախապատրաստում: Բայց բան դուրս չեկավ:— Ամենից շատ,— ասում եր նա,— յես յերկյուղ եյի կրում, թե մոտորները սառեցնելու ջուրը չի բավականացնի: Ցեվ խոռք, ջուրը չբավականացրեց: Այդ վնասարարություն եր: Այն ժամանակ Վալերի Պավլովիչն անձնակազմին հրամայել եր մեզը հավաքել, ամբողջ սուրճն ու թեյը ջրի տակառի մեջ լցնել: Անձնակազմը ծարավից պապակել եր, բայց վոչ մեկը չեր խմում: Չկալովը մեզ նույնպես նախազգուշացնում եր. ժողովրդի թշնամիները դեռ չեն բնաջնջվել, միշտ պետք է նրանցից վորևէ գարշելի բան սպասել:

Մենք ուշաթափվելու չափ քրքջում եյինք, յերբ նա սկսեց պատմել, թե արտասահմանում կազմակերպված բանկետում ինչպես իրեն ստիպեցին վոստրե ուտել:

— Այս թռիչքից հետո, կարող է պատահել, վոր դուք էլ պատիվ ունենաք արտասահման թռչելու, սովորեցեք ձեզ շնորհքով պահել: Այո, անձեռոցիկի ծալը քանդել չի կարելի, այլ հարկավոր է այդպես ծալած էլ հպել շրթունքներին: Ցեթե քանդեցիր, այդ անքաղաքավարություն է: Վարվելակարգ պետք է իմանալ: Վոստրե մատուցեցին: Ցես մեկը բերանս առա, իսկ այն անպիտանն սկսեց հետ ու առաջ պտտվել: Ցես անձեռոցիկով յերեսս ծածկել եմ ու նստել: Աչքերս ճակատս են թռչում, իսկ վոստրեն պտտվում է կոկորդումս: Կոնյակով խեղդեցի անիծվածին:

Նա շատ եր պատմում այն մասին, թե ինչ է նշանակում Խորհրդային Միության Հերոս, ինչ բանի յե պարտավորեցնում այդ բարձր կոչումը: Չե՞ վոր մյուսներն էլ պետք է հավասարվեն հերոսներին:

— Այո, մենք Ամերիկայից գալիս եյինք Մոսկվա: Մեզ առաջարկեցին, վոր մեր կանայք գան Փարիզում մեզ դիմավորելու, բայց յես ասացի. յերկիրը մեզ Մոսկվայում է դիմավորում,

թող ընտանիքն էլ Մոսկվայում դիմավորի: Յերկիրն ու ընտանիքը խորհրդային օդաչուի համար միևնույն բանն են:

Վալերի Պավլովիչը պատմում էր, թե դեպի Ամերիկա կատարած անդրբևեռային թռիչքից հետո ինքն ինչպես էր վերադառնում Մոսկվա:

— Ահա հերոսը վերադառնում է, առաջարկում են հյուրանոցում տեղավորել, մի քանի սենյակից բաղկացած համար են տալիս: Իսկ յես վերադարձա ու ասացի. «Թռիչքից առաջ տանն եյի ապրում, այժմ էլ տուն կգնամ: Հյուրանոցում յես ի՞նչ պետի անեմ»:

Ճաշը վերջանում էր: «Դինամո»-յի ճաշարանում մեզ համար հատուկ հաշիվ էր բացված: Այն ամենի համար, վոր մենք ուտում եյինք, վճարում էր թռիչքի շտաբը: Մենք գոհ եյինք, վոր Վալերի Պավլովիչին հյուրասիրում ենք և սեղանից վեր կենալիս մատուցողին ասացինք.

— Բոլորը գրեցեք մեր հաշվին:

Բայց Վալերի Պավլովիչը բողոքեց.

— Ի՞նչ եք անում, աղջիկներ, գժվե՞լ եք: Յեվ նա առանձին հաշիվ պահանջեց ու ինքը վճարեց:

Ճաշարանից դուրս գալով՝ Վալերի Պավլովիչն ասում էր, թե ինչպես պետք է մենք զգույշ լինենք, վորպեսզի մեր թռիչքի անվան տակ ավելորդ պետական դրամ չծախսվի:

Մենք Վալերի Պավլովիչից բաժանվեցինք վարակված նրա յեռանդով, առույգությամբ և ինչ վոր առանձնահատուկ ներքին բոլշևիկյան ուղղամտությամբ ու ազնվությամբ: Հրաժեշտի ժամանակ Վալերի Պավլովիչն ասաց.

— Աղջիկներ, յեթե թռչել եք ուզում, թողեք ձեր այդ Պոդլիպկին, փոխադրվեցեք Շչելկովոյի աերոդրոմ և խիստ ռեժիմ սահմանեցեք: Հարազատներն առանց ձեզ չեն մեռնի: Ուրիշ վոչ մի բանով մի՛ զբաղվեք: Մոսկվան ձեզ հարկավոր չէ: Յեվ փոխադրվեցեք հենց այսօր, ամենաուշը՝ վաղը:

Մենք այդպես էլ արինք: Միայն Վալյան մի յերկու որ մնաց Մոսկվայում, վորպեսզի մեր սավառնակը փոխադրի Շչելկովոյի աերոդրոմ:

Այստեղ կար մի մեծ սենյակ, առանց շուքի ու զարդերի, չորս խոշոր պատուհաններով մի սենյակ: Նրա մեջ կային յերեք հատ սովորական կարմիր-բանակայինի մահճակալ, գրասենյակային տիպի գրասեղան, մի քանի հատ փայտե աթոռ և մեկ շիրմա: Կար և մի լվացարան, վորի մասին հարգալից ասում եյին, թե այդ լվացարանից լվացվել է ինքը Գրոմովը դեպի Ամերիկա կատարած իր թռիչքից առաջ: Բերին մի բազմոց, վրան ամառային սարք դցեցին, բերին էլի մի սեղան և դրին մեջտեղը: Հեռախոս անցկացրին: Պատուհաններում ու ծաղկակալների վրա ծաղիկներ դրին: Մենք անմիջապես մեզ զգացինք աշխատանքային պայմաններում: Մեզ հատկացրին մի առանձին կոկիկ սեղանատուն: Ճաշը պատրաստում էր պառավ խոհարարուհի Պրասկովյա Վասիլյեվնան, վոր ամեն տեսակ համեղ բաներ պատրաստելու մեծ վարպետ էր: Նա պարծանքով ասում էր.

— Յես բոլորին կերակրել եմ. և՛ Գրոմովին, Դանիլինին ու Յումաշևին, և՛ Չկալովին, Բայդուկովին ու Բելյակովին, և՛ Լևանևսկուն եմ կերակրել: Ահա, հաջողվեց ձեզ էլ կերակրել:

Մենք ուրախ եյինք, վոր այդպիսի նշանավոր խոհարարուհի ունեցանք: Իսկ գլխավորն այն է, վոր նա չափազանց սիրալիր ու բարեսիրտ մարդ էր:

Պրասկովյա Վասիլյեվնան պատրաստում էր տնային պարզ ճաշեր, թխում էր համեղ կարկանդակներ ու պիրոժոկներ և շարունակ անհանգստանում էր, թե արդյոք մեզ անհամ չե՞ն թվում ուտելիքները: Յեթե յես մի վորևէ կոտլետ լրիվ չեյի ուտում, նա արցունքները սրբելով բժշկին ասում էր.

— Յերևի Մարիա Միխայլովնային դուր չեն գալիս իմ պատրաստած կոտլետները:

Յես նրան հավատացնում եյի, վոր ինձ միայն մի քիչ կարելի յե ուտել: Նա շուտով գլխի ընկավ, վոր շտուրմանը հիվանդանոցից հետո դիետա յե պահում և սկսեց հատկապես ինձ համար ինչվոր առանձին համեղ կարտոֆիլ պատրաստել: Հենց վոր պատուհանից տեսնում էր, վոր մենք ճաշելու յենք գնում, սկուտեղը լի կարտոֆիլ էր բերում: Յեվ այդ կարտոֆիլից

այնպիսի համեղ ու զուրեկան բուրմունք եր բարձրանում, վոր ուզեյիր–չուզեյիր՝ պիտի ուտեյիր:

Հրահանգիչ Ալյոշինը ևս փոխադրվեց Տշկալով: Յես ու Պոլինան սկսեցինք ինքներս սարքել ավարիային կայանը: Կյանքումն առաջին անգամ Պոլինան յեթերից բառեր ու տառեր բռնեց: Նա շատ գոհ եր: Մեր կյանքը մռայլվում եր միայն նրանով, վոր սավառնակը Մոսկվայում ուշանում եր:

Մեր մեքենայի մասին մենք մտածում եյինք ինչպես մարդու մասին, մեծ քնքշությամբ: Նա արդեն ուներ իր անունը՝ «Ռոդինա»[1]: Յերկար ժամանակ մենք մեր գեղեցկուհի մեքենայի համար անուն գտնել չեյինք կարողանում: Մի անգամ ճաշի ժամանակ, յերբ արդեն առաջին անգամը չեր, վոր մենք զանազան անուններ եյինք ջոկում, Վալյան մտախոհ ու կամացուկ ասաց.— Ռոդինա:— Ավելի պատվավոր, հպարտ անուն գտնել չի կարելի:

Հանգստյան որվա նախորյակին մենք մոտոռների ծանոթ աղմուկ լսեցինք. այդ «Ռոդինան» եր թռչում: Սակայն աէրոդրոմը ծածկված եր Մոսկվայի մոտի անտառի հրդեհի ծխով: Վալյան սիրտ չարավ այդ ծխին ու աղջամուղջին սավառնակն իջեցնել և վերադարձավ Մոսկվա, Կենտրոնական աէրոդրոմ:

Հետևյալ որը յես ու Պոլինան վորոշեցինք գնալ լճում լողանալու: Հանկարծ հեռախոսով հաղորդում են, թե «Ռոդինան» Կենտրոնական աէրոդրոմից թռել ե: Ուրախությունից մենք սկըսեցինք խոտերի վրա գլորվել, թռչկոտել, իրար հրմշտել: Մեկ էլ, ահա, թռչում ե մեր գեղեցկուհին... Ներքևից նրա արծաթափայլ թևերի վրա պարզ յերևում են РОДИНА տառերը: Ահա նա սկսեց ցածրանալ, դիմեց վայրեջքի: Վալյան հիանալի իջեցրեց մեքենան: «Ռոդինան» սլանում եր, իսկ մենք Պոլինայի հետ վազում ենք նրա հետևից: Յերբ Վալյան դուրս յեկավ, մենք վրա պրծանք ու սկսեցինք գրկել, համբուրել նրան, կարծես վաղուց չեյինք տեսել:

Ուրախ-ուրախ վազեցինք սեղանատուն՝ նախաճաշելու: Պրասկովյա Վասիլյեվնան առանց այն էլ մեզ շատ եր սպասել:

[1]) Ռոդինա — հայրենիք:

Նա մեզ լավ կերակրեց և մենք գնացինք լճում լողանալու: Լողացանք, հանգստացանք, հետո նոր թափով սկսեցինք նախապատրաստվել թռիչքի:

Սավառնակը սարքավորեցինք և սկսեցինք վարժական թռիչքներ կատարել: Դիտմամբ մարշրուտով եյինք գնում, վորպեսզի ստուգենք, թե մեքենան վորևե թերություն չունի արդյոք: Վարժություններ եյինք անում նաև ուրիշ սավառնակներով: Մեզ առաջարկում եյին «Ռոդինայով» գիշերային թռիչք կատարել, բայց մենք ափսոսում եյինք մեր սավառնակը, և գիշերային թռիչքների համար մեզ ուրիշ ոդանավ տվին:

Այժմ արդեն մենք կարող եյինք իսկական նախապատրաստության դիմել:

Մի անգամ գիշերով թռչում եյինք մի ծանր յեռամոտոռ ոդանավով: Գիշերն ամպամած եր, անտառների հրդեհների ծուխը բոլորովին ծածկել եր գետինը: Սովորաբար յերբ գիշերը թռչում ես, յերևում ե Մոսկվայի լույսերի խոշոր ցոլքը: Բայց այժմ մեր շուրջը համատարած խավար եր և յերբեմն միայն ինչ-վոր հեռու ցածում կայծկլտում եյին հատ ու կենտ կրակներ: Շրջանաձև թռչելով մենք վեր բարձրացանք: Ամբողջ գիշերը թռչում եյինք ամպերից վերև, առանց գետինը տեսնելու: Կողմնորոշվում եյինք միայն ռադիո-կողմնացույցով: Մոտերքում տեղավորված ռադիոկայանը հատկապես մեզ համար ամբողջ գիշերը հաղորդում եր «Պիկովայա դամա» ոպերան: Ծիծաղելի յեր, վոր բոլոր ցանկացողները կարող եյին այդ անսովոր ժամին լսել «Պիկովայա դաման», և չիմանալ, թե ինչու յե հաղորդվում այն: «Պիկովայա դամա»-յով մենք վորոշում եյինք աէրոդրոմի ուղղությունը: Լուսաբացից առաջ ռադիո կողմնացույցը մեզ դուրս բերեց նույն «Պիկովայա դամա»-յի վրա և մենք առավոտյան աղջամուղջին տեսանք աէրոդրոմի ուղին:

Թռչում եյինք նաև պարզ գիշերներին, յերբ հիանալի յերևում եյին քաղաքների ու գյուղերի լույսերը, գետերում փայլփլում եր ջուրը: Այդպիսի մի գիշեր թռչում եյինք դեպի հարավ: Հենց վոր աէրոդրոմից դուրս յեկանք, մեր առաջ բացվեցին Պոդոլսկի լույսերը: Պոդոլսկից դենը՝ աջ կողմը յերևում եր

Սերպուխովը, ձախ կողմը՝ Կաշիրան, իսկ աջևում յերևում եյին Տուլայի ցոլքերը: Նա փայլփլում եր հազարավոր լույսերով:

Պոլինան տեղափոխվեց շտուրմանական խցիկը և սկսեց ականջիս գոռալ.

— Վորքա՜ն գեղեցիկ է: Ի՜նչ սքանչելի տեսարան է:

Վերադարձին մենք հեռվից տեսանք Շչելկովոյի աերոդրոմի լուսարձակները: Լարեցի իմ ռադիո կողմնացույցը և, նախորդ գիշերվա պես, ըստ «Պիկովայա դամա»-յի հասանք աերոդրոմ:

Դրանից հետո Վալյան ու Պոլինան մի քանի որ իրար հետևից գիշերային վայրեջքի վարժություններ եյին անում, թըռչում եյին շրջանաձև: «Ռոդինա»-յի նախապատրաստությունն ավարտվելու մոտ եր: Վալյան շտաբին զեկուցեց, վոր անձնակազմը պատրաստ է գիշերային թռիչքների: Մնում եր մեքենայում փոքրիկ լրացումներ անել. ամրացնել քարտեզների պայուսակները, մթերքի տոպրակները, տաք խմիչքների թերմոսների տակդիրները: Յես իմ կաբինի կողին մատիտների համար մի փոքրիկ գրպան հարմարեցրի: Սա մանրունք է, սակայն թռիչքի ժամանակ յուրաքանչյուր մանրունք նշանակություն ունի: Պոլինայի կաբինում քամի յեր փչում, նա տաքացումը հարմարեցրեց, քամի անց կացնող անցքերը փակեց:

«ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՁԵԶ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ Ե ԹՌՉԵԼ»

Մենք Սվերդլովսկի ուղղությամբ թռանք հազար կիլոմետր և վերադարձանք Մոսկվա: Վորոշել եյինք այդ թռիչքն ոգտագործել բարձրության վարժության համար: Չորս ժամ թռչում եյինք 4000 մետր բարձրությամբ և 4 ժամ՝ 6000 մետր: Նույնիսկ այդպիսի վոչ մեծ թռիչքի համար Պրասկովյա Վասիլյեվնան մեզ բազմապիսի համեղ ուտելեղենի տոպրակներ եր տալիս: Իմ տոպրակում կային տնային թխվածքներ, չոկոլադ, թերմոսում՝ տաք սուրճ ու թեյ: Կաբինի աջ պատի տակ մի փոքրիկ սեղան կար: 4000 մետր բարձրության վրա մոտքովս անցավ նախաճաշ սարքել: Սեղանը բարձրացրի, թաշկինակը վրան փռեցի, հանեցի թերմոսը, մի բաժակ թեյ լցրի, սեղանին դրի թխվածքներ, չոկոլադ և մի յերկտող գրեցի. «Ռոդինա» սավառնակի ճաշարանը բացված է»: Բավականությամբ նախաճաշեցի: Այս էլ շատ հետավոր թռիչքի համար վարժություն եր:

Թռիչքն ընթանում եր լավ ու խաղաղ պայմաններում: Յես տարված եյի ռադիոկապով: Ինձ հետ աշխատելու համար Մոսկվան պատվիրել եր վոչ թե Մոսկվայի ռադիոկայաններին, այլ Օմսկի, Նովոսիբիրսկի, և նույնիսկ Չիտայի, Խաբարովսկի նըման հեռավոր վայրերի ռադիոկայաններին: Կազանի շրջանում թռչելիս յես Խաբարովսկին լավ լսում եյի և նա էլ պատասխանում եր ինձ, թե լսում է ինձ: Կյանքումս առաջին անգամ յես կապ եյի սահդում այդպիսի հեռավոր կայանների հետ:

Յերբ վերադարձանք, տեսանք, վոր աերոդրոմը ծածկված է անտառի հրդեհի ծխով: Աերոդրոմը չի յերևում, սրծավ գնաց: Բայց մեր տրամադրության տակ ռադիոկապի հզոր միջոցը կար: Ճիշտ է, գետնին այդ ժամանակ ռադիոկայանները չեյին աշխատում, սովորական ընդմիջումն եր, բայց հո չեյինք կարող ոդում սպասել, մինչև վորևէ կայան աշխատի: Հարկավոր եր Մոսկվային իմաց տալ, վոր հատկապես մեզ համար գործի գցեն ՀԱՄԿԽ-ի ռադիոկայանը: Յեվ իրոք, հինդ րոպե չանցած հընչեցին «Պիկովայա դամա»-յի փրկարար հնչյունները: Ծխի մեջ կուրաբար մոտեցանք Շչելկովոյի աերոդրոմին: Յերբ բարեհաջող վայրեջք կատարեցինք, քիչ չեյինք կատակում.

— Դարձյալ «Պիկովայա դամա»-ն փրկեց:

Մեքենան նորից ու նորից ստուգվում եր: Մենք անվերջ տրնտղում եյինք կաբինները, մոտորները, մտածում եյինք ամենամանր դետալների մասին. գուցե լավ լինի այսինչ սարքի տեղը փոխել, գուցե վորևէ բան փոխարինենք ուրիշով, լրացնենք կամ բոլորովին հանենք:

Մոտենում եր «Ռոդինա»-յով վարժական թռիչք կատարելու վերջին որը: Մինչ այդ պետք եր վերացնել խոտորումը, այսինքն այն տարբերությունը, վոր կա մագնիսային և կողմնացույցային միջորեականների ուղղության միջև: Սավառնակի իրանն ու մասերը շինված են մետաղից և նրա մագնիսական ուժերի ազդեցության տակ կողմնացույցի ցուցմունքներն այնքան էլ ճիշտ չեն: Մագնիսային և կողմնացույցային միջորեականների միջև անկյուն է առեղծվում: Հենց այդ էլ կոչվում է խոտորում: Դա

վերացվում է այսպես: Սավառնակը բռնում է վորոշակի ուղղություն և մանր մագնիսների ոգնությամբ կողմնացույցների ցուցմունքները հասցվում են իրար մոտ մեծության: Խոտորումը վերացնելու համար յես դիմեցի փորձված շտուրման Սերգեյ Դանիլինի ոգնությանը: Նա պետք է մեզ հետ միասին վարժական թռիչքի դուրս գար: Դանիլինը սիրով համաձայնեց ոգնել մեզ: Մենք թռանք: Վալյան իր նստատեղումն է, Դանիլինը՝ իմ: Նա ստուգեց կարգավորումը, սարքերը, շատ մանրամասն գրի առավ իր դիտողությունները: Յես նստել եյի յերկրորդ ոդաչուի կաբինում և ստուգում եյի Պոլինայի կողմնացույցը:

Այդպիսով, մենք սավառնակը պատրաստեցինք վերջին վարժական թռիչքին՝ Մոսկվա–Սվերդլովսկ–Մոսկվա մարշրուտով՝ մոտ 2500 կիլոմետր յերկարությամբ: Վերջին անգամ և վերջնականապես մենք պետք է սարքավորումն ստուգեյինք ու կարգի բերեյինք: Նյութական մասն աշխատում եր անբասիր: Մենք թռչում եյինք տասը ժամ: Կապն իրեն պահում եր անթերի: Յերբ իջանք, կապավորները մեզ ասացին.

— Ա՜յ, այդ հիանալի յեր: Լավ կլինի, յեթե Հեռավոր Արևելք թռչելու ժամանակ էլ դուք այդպիսի պարզորոշ կապ ունենաք:

Թռիչքային վարժությունների զուգընթաց մենք գետնի վրա վարսորդական հրացանից և ատրճանակից կրակելու վարժություններ եյինք անում: Շատ եյինք զբաղվում ավարիային ռադիոկայանով:

Մենք գտնում եյինք, վոր մեծ թռիչքի համար ամեն ինչ պատրաստ է:

Կառավարական հանձնաժողովը վճռական խորհրդակցություն հավաքեց սեպտեմբերի 23-ին: Ոդերևութաբանները, վորոնք ամեն որ գալիս եյին մեզ մոտ աերոդրոմ, հաղորդում եյին, թե մեր մարշրուտում յեղանակը վատանում է և մինչև Հեռավոր Արևելք թռչելը շատ դժվար է լինելու: Սակայն մենք չեյինք վհատվում: Այդ որն առավոտյան եվս մի անգամ թռանք, եվս մի անգամ ստուգեցինք կողմնացույցը, ընդունիչը, հաղորդիչը: Ապա գնացինք Մոսկվա՝ կառավարական հանձնաժողովի խորհրդակցությանը:

Ավաղ, այստեղ մեզ հիասթափություն եր սպասում: Մեզ ասացին, թե այժմ աշուն է, Հեռավոր Արևելքում սկսվում է վատ յեղանակ, ուստի և մենք հազիվ թե մինչև այնտեղ թռչենք: Մեզ առաջարկում եյին նոր մարշրուտներ՝ մինչև Ոմսկ և հետ, մինչև Տաշքենտ և հետ: Ասում եյին, թե տարածությունը միևնույնն է, միայն վոչ թե ուղիղ գծով, այլ փակ կորագծով: Հեռավոր-արևելյան մարշրուտի վերաբերյալ խոսում եյին ձյունապատ լեռների և ուրիշ սոսկալի բաների մասին: Բայց մենք համառում եյինք մեր վորոշման վրա: Վատ յեղանակին հակադրում եյինք ռադիո-նավարկությունը: Յեվ յերբ մեզ ասացին, թե յեղանակն անհամապատասխան է, թե թռիչքի մեծ մասն անցնելու յե ամպերի միջով, յես հանեցի մեր մարշրուտի ռադիո-նավիգացիոն ապահովության սխեման: Դա մի պարզ, ակնառու սխեմա յեր: Այն փռեցի Միխայիլ Մոիսեյեվիչ Կագանովիչի առջև: Թող նույնիսկ գետինը չերևա, բայց յեթե իմ ռադիո ապարատներն աշխատեն, մենք տեղ կհասնենք:

Միխայիլ Մոիսեևիչը նայեց սխեմային և պատասխանեց.

— Յես կառավարության հետ կխորհրդակցեմ:

Նա գնաց Կրեմլ, իսկ մենք սպասելու մնացինք քարտուղարությունում: Րոպեներն սպանիչ կերպով յերկարում եյին: Կըթույլատրե՞ն, թե չեն թույլատրի: Ուղիղ կես ժամից հետո, ժամը 17 և 15 րոպեյին Վալյային հեռախոսի մոտ կանչեցին:

— Ընկեր Ստալինը ձեզ թույլատրեց թռչել: Գնացեք քնելու:

Իրարանցումն սկսվեց: Ի՞նչ վիճակում են մոտորները, ի՞նչ վիճակում է սավառնակը... Հարկավոր է սավառնակը վառելանյութով ապահովել: Բայց մեզ կտրականապես հայտարարեցին.

— Գնացեք քնելու, վոչ մի բանի մասին մի՛ անհանգստանաք:

Մենք սլացանք մեր հարազատներին հրաժեշտ տալու: Մտանք մեր տուն և այնտեղ մնացինք ընդամենը տասը րոպե, ճիշտ այնքան, վորքան հարկավոր եր վերնաշապիկս հանելու և մի քանի ճանապարհորդական իրեր վերցնելու համար: Հարազատներս վշտահար ասում եյին.

— Գոնե գնալուցդ առաջ մի քիչ մնայիր տանը...

Մեզանից հետո սոսկալի անկարգություն թողնելով՝ մենք

հրաժեշտ տվինք ու գնացինք Շչելկովոյի աերոդրոմ: Մեզ իսկույն ուղարկեցին ընթրելու: Խե՛ղճ բժիշկ: Իզուր էր նա պտտվում սեղանի շուրջը և պահանջում, վոր մենք շատ ուտենք: Թեպետ սովորաբար մեզանից վոչ վոք չէր կարող գանգատվել, թե ախորժակ չունի, բայց այժմ խիստ գրգռված լինելով՝ մենք ուտել չեյինք կարողանում:

Վերջապես մեզ ուղարկեցին քնելու: Հեռախոսն անջատեցին, վորպեսզի վոչ վոք մեզ անհանգիստ չանի, դռան մոտ պահակ կանգնեցրին և խիստ հրամայեցին վոչ վոքի ներս չթողնել: Բայց մենք քնելու ժամանակ չունեյինք: Յերկար ու հոգատարությամբ հավաքում եյինք իրերը: Յես վերցրի պարաշյուտի պայուսակը և այնտեղ դրի քարտեզներ, մատիտներ, բլոկնոտներ, նավային մատյաններ, պլանշետներ, տետրեր, աստղաբաշխական սարքեր:

— Ահա ճանապարհվում ենք Հեռավոր Արևելք, բայց վոր նայես, կարծես շուկա յենք գնում,— կատակով մրթմրթում էր Պոլինան:

Նույնիսկ յերբ պառկեցինք, յերկար ժամանակ քնել չեյինք կարողանում: Ելի ինչ-վոր բանի մասին անհանգստանում եյինք ու յերկար ժամանակ բարձրաձայն խոսում: Պատի հետևից հընչում էր բժշկի համառ ձայնը·

— Ինչո՞ւ չեք քնում դուք:

— Քնում ենք, քնում ենք:

Քնեցինք անսպասելի կերպով, ինչպես սովորաբար լինում է այդպիսի դեպքերում: Այդ գիշեր յես հանգիստ քնեցի: Հոգուս խորքում հաջողության այնպիսի հավատ կար, վոր այնպես քնեցի, կարծես վաղը սովորական աշխատանքային որ էր լինելու:

Մեզ արթնացրեց բժիշկ Բորչևսկին: Նա ներս մտավ նավային դեղարկղները ձեռքին: Այնտեղ բազմաթիվ ոգտակար բաներ կային: Լույսը բացվում էր:

— Ամեն բան կարող է պետք գալ,— ասում էր բժիշկը:

Գեղեցիկ տոպրակների մեջ դեղորայք էր դարսված, սկսած չոր յոդից մինչև նաշատիրի սպիրտը:

— Վորտեղ է կախված ձեր կաշվե անդրավարտիկը,— հարցրեց բժիշկը:

— Ահա, կախարանին:

— Այստեղ եմ դնում ոպիում և բենզոնաֆտոլ: Դուք չպետք է մոռանաք, վոր ապենդիցիտ ունեք: Յեթե բորբոքումն սկսվեց, ընդունեցեք մի բաժին ոպիում և ապա խմեցեք բենզոնաֆտոլը:

— Դրեք, դրեք այդ անպետք բաները: Բայց ասում եմ ձեզ, վոր այլևս վոչ մի բորբոքում չեմ ունենալու...

Մենք հագնվեցինք: Հագանք մետաքսե սպիտակեղեն՝ «գրապիչ» մետաքսե շապիկները, մետաքսե վարտիկներ, յեգերական սպիտակեղեն, մի քանի զույգ գուլպա: Շքանշաններն ամրացրինք բաճկոններիս: Հագանք կաշվե անդրավարտիկներ, ունտեր: Յես ստուգեցի, թե ամե՞ն ինչ անդրավարտիկիս գրպանումն է: Շոշափեցի լուցկին: Շտաբի աշխատող Գուսևը Պապանինից մեզ համար հատուկ լուցկիներ էր ճարել: Դրանք բևեռային լուցկիներ եյին, վոր նույնիսկ թրջված ժամանակ վառվում եյին: Պապանինը հաճույքով էր տվել մեզ այդ լուցկիները: Ինձ տվել եյին ինչ վոր «գերբևեռային» լուցկիների մի տուփ, վորովհետև անհրաժեշտության դեպքում յես պետք է պարաշյուտով ցած թռչեյի: Լուցկին փաթաթված էր ռետինե գեղեցիկ պատյանի մեջ:

Ստուգեցինք և լավ կարգի բերինք զենքերը: Նայեցինք, թե տե՞ղն են արդյոք պահեստի փամփուշտները: Զենքը կապեցինք գոտիկներիս, անդրավարտիկների վրա: Ամեն ինչ պատրաստ էր, պարաշյուտներն ու իրեղենի տոպրակները պահեստի փոխնորդով ու կոստյումով, ավարիային տոպրակները, մթերքի տոպրակները: Շտուրմանը հարկադրված է իր հետ քարշ տալ առանձնապես շատ իրեր, վորոնք նա վոչ վոքի չի վստահում: Այդ նշանով հեշտ է աերոդրոմում ճանաչել շտուրմանին: Յերբ մենք սենյակից դուրս յեկանք, յես ավելի շատ բեռնակրի եյի նման, քան ոդաչուի:

Հարևան սենյակում մոտ տասնհինգ մարդ էր հավաքվել— ճանապարհ դնողներ, ինժեներներ, տեխնիկներ, մեր հարազատները: Մեզ առաջնորդեցին Միխայիլ Մոիսեևիչ Կագանովիչի և բանակի հրամանատար Լոկտիոնովի մոտ: Միխայիլ Մոիսեևիչը հարցրեց, թե ինչպե՛ս ենք քնել: Մենք պատասխանեցինք, թե

հիանալի յենք քնել: Նա նախազգուշացրեց, թե յեղանակը լավ չէ: Բայց մենք ի պատասխան միայն ժպտացինք:

— Ընկեր Ստալինը մեզ թույլատրել է թռչել և մենք թռչում ենք:

ՍՏԱՐՏԸ

Մեքենա նստեցինք և գնացինք նախաճաշելու: Նախաճաշի ժամանակ նամակ գրեցինք ընկեր Ստալինին, վորով խոստացանք առաջադրանքը կատարել և շնորհակալություն հայտնեցինք ցույց տված վստահության համար:

Նախաճաշը կուլ չէր գնում: Յես կերա հավի մսից պատրաստած կոտլետ մի կտոր կիտրոնով և մի բաժակ թեյ խմեցի: Պրասկովյա Վասիլևնան աչքի արցունքներ եր թափում, վոր մենք բան չենք ուտում և վողբաձայն խրատ եր կարդում մեր գլխին: Իսկ մենք շատ ուրախ տրամադրությամբ ավտոմոբիլ նստեցինք ու գնացինք աերոդրոմ:

Մեր «Ռոդինան» արդեն շրջապատված եր մարդկանց մասսայով: Նրանք սավառնակի շուրջը կենդանի ցանկապատ եյին առաջացրել: Հենց վոր մենք մեքենայից դուրս յեկանք, թղթակիցները լուսանկարչական ապարատներով մեզ վրա հարձակվեցին:

Մենք սկսեցինք ստուգել, թե ամեն ինչ կարգի՞ն է դասավորված մեքենայում: Տեղավորվա՞ծ է արդյոք կենսամթերքը: Ամեն մեկն աշխատում եր ելի վորևէ բան խցկել մեր բուռը. բժիշկները՝ դեղորայք, տնտեսվարները՝ տաք թեյով ու սուրճով տերմոսներ: Նույնիսկ թեյը պատրաստել եյին յուրաքանչյուրի համար ըստ իր ճաշակի. Պոլինային քաղցր թեյ, ինչպես սիրում է նա, Վալյայինը՝ միջակ, իսկ ինձ՝ առանց շաքարի: Յուրաքանչյուրի համար իր կաբինում իր սիրած շոկոլադն եյին դրել: Ինձ համար դրել եյին հատուկ սպորտային շոկոլադ, վորը պետք է յերկարատև անընդհատ աշխատանքի ժամանակ եներգիա պահպաներ: Վերջին րոպեներին սկսեցին մեր գրպանները խցկել ավարիային ծրարներ, վորոնց մեջ դրամ կար: Ամեն մեկն աշխատում եր վորքան կարելի յե ավելի շատ բարիք լցնել սավառ-

նակը: Պրասկովյա Վասիլյեվնան բերեց ելի մի պարկ և բորտ-մեխանիկն այն խցկեց մեքենայի մեջ: Այդ պարկի մեջ կար ապուխտ, խավիար և ուրիշ համեղ բաներ:

Տրակտորը մեր սավառնակը քաշեց աերոդրոմի ծայրը, վորտեղից պիտի սկսվեր թռիչքը: Սավառնակի հետևից յերկար շարքով շարժվեցին ավտոմեքենաները, ստարտի տեղը վազեցին թղթակիցները և բոլոր ճանապարհ դնողները: Վալյան հրահանգեց.

— Դեպի սավառնա՛կ:

Յես սանդուխքով բարձրացա իմ կաբինը: Բորտ-տեխնիկ Մակարովն ստուգեց, թե յես արդյոք լա՞վ եմ փակել հատակի անցքը, ինձ ստիպեց թռչկոտել նրա վրա, վորպեսզի համոզվի, թե անցքն ամուր է ծածկված: Յես մնացի կաբինում: Միխայիլ Մոիսեևիչը և ընկեր Լոկտիոնովը պատուհանից ներս նայելով ինձ հարցրին, թե ինչպես եմ զգում ինձ: Հնչեց հրահանգը. «Գործի գցել մոտորները»: Յերկու մոտոռն էլ սկսեցին գործել: Տրվեց հետևյալ հրահանգը. «Վերցնել կրունկները»: Մենք տեսանք, թե ինչպես են մարդիկ հեռանում և հրապարակը մաքրվում է: Վալյան հեռախոսով Պոլինային հարցրեց, թե նա պատրա՞ստ է: Հետո հեռախոսն ինձ միացրեց և ստուգեց իմ պատրաստությունը: Դրանից հետո նա լիակատար գազ տվեց, մեքենան սլացավ և շուտով դյուրությամբ պոկվեց գետնից: Այդպիսի ծանր բեռով նա առաջին անգամն եր թռչում:

Մենք բռնեցինք 90 աստիճանի ուղղությունը և թռանք դեպի արևելք:

ՇՏՈՒՐՄԱՆԻ ԿԱԲԻՆՈՒՄ

Սիրտս շատ ուրախ եր: Սավառնակի մեջ կյանքը փոքր ինչ մթագնվում եր նրանով, վոր կաբինների պատերը մեզ բաժանում եյին իրարից: Դա սավառնակի կառուցվածքային թերությունն եր: Վալյայի հետ յես կապված եյի մի փոքրիկ պատուհանով, վորի միջով կարելի յեր միայն ձեռքի թաթը մեկնել: Պոլինան Վալյայից ավելի հեռու յեր նստած: Յես նրա հետ գրագրություն եյի ունենում ոդաճնշական փոստով. բարակ թղթի վրա

յերկտողը տեղավորում եյի մետաղե փամփուշտի մեջ, փամփուշտը տեղավորում եյի ալյումինե խողովակի մեջ, անցքը ծածկում և փուքսը փչում: Այնքան եյի փչում, մինչև վոր ինձ մոտ լամպիկը վառվում եր: Այդ նշան եր, վոր փոստը Պոլինային ե հասել:

Իմ կաբինի ներսում ամեն ինչ շատ հարմար եր սարքված: Ձախ կողմը իմ թիկունքում տեղավորված եր ռադիո-հաղորդիչը: Ձախ կողմը, բայց մի քիչ ավելի ինձ մոտ դրված եր ընդունիչը ամենալիք սուպերգետերոդինը: Նույնպիսի պահեստի մի ընդունիչ դրված եր աջ կողմը: Ուղիղ իմ նստելատեղի թիկունքում ամրացված եր մի մեծ «սամովար», հեղուկ թթվածնով լցված: Թթվածնային բալոնի տակ և նստելատեղի տակ տեղավորված եյին յերեք ումֆորմեր[1]), վորոնք սնում եյին իմ ընդունիչ-հաղորդիչ ռադիոկայանը: Աջ կողմը, պահեստի ընդունիչի առաջ հետ ծալովի սեղանն եր: Այդ սեղանին դրված եր ռադիոբանալին: Մի քիչ բարձր՝ աջ կողին տեղավորված եր սարքերի տախտակը, վորի վրա եյին արագաչափը, բարձրաչափը, ժամացույցը, ջերմաչափը: Ավելի դենը՝ աջ կողին ե սեկստանտը պահելու հարմարանքը, հատուկ կառուցվածքով մի գեղեցիկ փակվող պատյան՝ գիշերային լուսավորության համար: Մի քիչ ավելի բարձր նույն պատին տեղավորված եյին ե՛լի յերկու սարք՝ «նայողներ» վառելանյութի ծախսումը չափող սարքեր: «Նայողների» այն կողմն սկսվում եր կաբինի առջևի ապակե մասը: Բոլոր սարքերն այնպես եյին դասավորված, վոր չփակեն կաբինի առջևի ապակե մասը, վորը դեպի առաջ հիանալի տեսարան եր բացում: Ապակեպատ քթի մոտ՝ ձախ պատին ամրացված եր ռադիո-կողմնացույցը: Նրա տակ իմ պարաշյուտն եր: Թռիչքի ժամանակ յես այն չեյի հագնում, վորպեսզի աշխատելուս չխանգարի: Նույն ձախ պատին տեղավորված եր ոպտիկական դիտանոցը, վորի ոգնությամբ յես կարող եյի չափել չեղման անկյունները: Նստելատեղիս մոտ, ցածում, պատրաստված եր շատ հարմար մի պայուսակ: Նրա մեջ պահվում եյին քարտեզները, պլանշետները, հաշվելու գործիքները: Մյուս պայուսակում ռադիո գործիքներ են և պահեստի ապահովիչը: Մետաղալարը յես պահել եյի անդրավարտիկիս գրպանում:

*) Ումֆորմեր—մեքենա, վոր ռադիոկայանին բարձր լարման տոկ ե հաղորդում:

Կաբինի հատակին, ուղիղ իմ վոտքերի տակ կար մի փակ անցք, վորի միջով յես մտել եյի սավառնակ: Անցքի միջով յես կարող եյի տեսնել իմ դիտանոցը: Ուղիղ անցքի առաջ կային ելի յերեք ումֆորմեր, յերկուսը աջ պատի մոտ, մեկը՝ ձախ: Հատակի առջևի մասն ապակուց եր: Այդ ե՛լ ավելի յեր ընդարձակում իմ տեսադաշտը: Սավառնակը կահավորող հոգատար ինժեներները հատակին հարմարեցրել եյին փափուկ բարձ, վորպեսզի անհրաժեշտության դեպքում շտուրմանը կարողանա ամբողջ հասակով մեկնվել հատակին:

Մոսկվայից թռչելիս յես մտածում եյի գործադրել ոդագնացության ամենահասարակ միջոցները: Յես ուզում եյի պարզապես քամին չափել և չափած քամու ոգնությամբ թեկուզ ցերեկը թռչել: Վորպեսզի չեղման յերեք անկյուններով քամին չափելու համար ժամանակ չկորցնեմ, յես վորոշել եյի մի հիսուն կիլոմետր անցնել և միայն այն ժամանակ քամին ճշտել ըստ կողի չեղման և ընթացքի արագության: Սակայն արդեն 50 կիլոմետրից հետո ամպերը գետինը ծածկեցին: Հարկ յեղավ շտապ միացնել ռադիոկողմնացույցը: Յես այն լարեցի ըստ ռադիոփարոսի և թռիչքը շարունակվեց կուրաբար: Յերբեմն միայն ամպերի ճեղքերից յերևում եր գետինը: Սակայն դրանք այնքան մանր կտորներ եյին, վոր նրանցով կողմնորոշվել չեր կարելի: Ռադիոկողմնացույցով կողմնորոշվելով՝ յես յուրաքանչյուր ժամը մեկ գետնին հաղորդում եյի, թե վորտեղ եմ գտնվում:

Պոլինան առաջինն ինձ հետ ներքին փոստով գրագրություն սկսեց:

Նա կատակ ե անում, մի յերկտող ե տալիս, թե անցել ե «Պրավդայի» առաջադրանքի կատարմանը, սկսել ե որագիր կազմել: Նրա կաբինում ամեն ինչ շատ լավ ե, չի փչում, բայց, համենայն դեպս ծնկները փաթաթել ե լրագրով: Վալյան նստած ե ուրախ ու ժպտադեմ, անցքի միջով նրա դեմքի կեսը յերևում ե:

Ամեն ինչ լավ ե, միայն թե գետինը չի յերևում:

Աերոդրոմից մենք դուրս յեկանք ժամը 8 և 16 րոպեյին: Այժմ իմ ժամացույցով ժամը 13-ն է Մոսկվայի ժամանակով: Բարձրաչափի սլաքը ցույց է տալիս 3850 մետր: Դուրսը ջերմաստիճանը—3 է: Իմ հաշիվներով 20 րոպեյից հետո Սվերդլովսկն է լինելու: Դեռևս շարունակ ամպերի վրայով ենք թռչում:

Մոտենում է ժամը 16-ը: Մութը պետք է սպասել ժամը 16 և 15 րոպեյին, չէ վոր մենք դեպի արևելք ենք թռչում, ուրեմն մութը մեզ ամենուրեք ավելի շուտ է դիմավորելու, քան Մոսկվայում է ընկնում:

Ռադիոփարոսները ցույց եյին տալիս, վոր մենք ուղիղ ենք թռչում, դեպի Ոմսկ, բայց յես չեյի հավատում. չէ՞ վոր ամբողջ որը վոչ մի անգամ գետինը չեմ տեսել:

Գիտեմ, վոր շուտով գիշեր է լինելու:

Սկսեցի Վալյային խնդրել.

— Վալեչկա, հնարավորություն տուր գեթ մի փոքր գետնին նայեմ, թեկուզ մի քիչ բարձրություն կորցրու:

Իսկ բարձրությունը 4500 մետրից ավելի յեր: Թռչում ենք առանց թթվածնային դիմակի: Կաբինում դեռ տաք է, ապա կարելի յե ուտել: Բայց յես ուտել չեմ ուզում... Նորից եմ խնդրում.

— Վալեչկա, յեկ ցածրանանք, գետինը տեսնենք: Իմ հաշիվներով ժամը 16-ին մենք պետք է լինենք Ոմսկի մոտ: Մի քիչ բարձրություն կկորցնենք ու նորից վեր կբարձրանանք:

Բայց Վալյան անկոտրում եր: Ցածրանալ՝ նշանակում է վորոշ քանակությամբ վառելանյութ կորցնել կրկին վեր բարձրանալու համար: Վառելանյութի պաշարը հաշվի յե առնված վորոշ բարձրության համար, այդ բարձրության վրա ել պետք է թռչի:

Վերջապես ժամը 16 և 05 րոպեյին 4000 մետր բարձրության վրա ամպի ճեղքերի միջով յերևաց մի գետի արծաթափայլ շերտ: Այդ Իրտիշն եր: Յես ճշտորեն վորոշեցի, թե վորտեղ ենք գտնվում: Դատելով ըստ անցած ժամանակի և թռիչքի արագության՝ այդ բացի Իրտիշից ուրիշ գետ չեր կարող լինել: Յես

քարտեզով ճանաչեցի նրա գծագրությունը: Վալյային գրում եմ.

— Ուզածդ բարձրությունը կարող ես վերցնել, յես արդեն տեղը վորոշեցի:

Մութն արագորեն վրա յե տալիս: Անհամբեր սպասում եմ գիշերվան: Գիշերն շտուրմանին ուրախություն է բերում: Գիշերն աստղերով շատ լավ ու ճիշտ կարելի յե վորոշել վայրը: Յեթե գիտես վորևե յերկու աստղ, ասենք՝ Բևեռային աստղը և Վեգան, կամ Կապելլան, ճշտորեն կարելի յե վորոշել կոորդինատները:

Ժամը 17 և 34 րոպեն է: Առաջին անգամ խավարի մեջ պարզորոշ կերպով աստղեր եմ տեսնում: Չափում եմ Բևեռային աստղի և Վեգայի բարձրությունը: Դրա համար բաց եմ անում աստղադիտակի անցքը և սեկստանտը ձեռքիս գլուխս դուրս եմ հանում այդ անցքից: Աստղերը դիտում եմ: Պարզում եմ, վոր գտնվում եմ լայնության 55°-ի և յերկարության 80° 40″-ի վրա: Դա մեր մարշրուտից մի քիչ դեպի աջ է, բայց շեղումն աննշան է: Ուղղությունը շտկում եմ յերեք աստիճան դեպի ձախ:

Առջևում Կրասնոյարսկն է, լավ ուղենիշ: Հիմա յերևի քաղաքում պայծառ լույսեր են վառվում: Ըստ հաշիվների՝ Կրասնոյարսկ ենք հասնելու ժամը 20-ից 10 րոպե անց: Սակայն ամպի թանձր շերտն այն ծածկում է մեզանից: Կրասնոյարսկ հասնելուց առաջ աստղերն էլ են կորչում ամպերի մեջ: Մեքենան վարում է Վալյան: Նա ղեկանիվը վերցրել է Պոլինայից, վորը դըրանից առաջ վեց ժամ վարում եր մեքենան:

Այստեղ յես նկատում եմ, վոր կաբինն սկսում է ծածկվել սառցի բարակ շերտով: Մտածում եմ. յեթե իմ կաբինը սառցապատում է, ուրեմն նույնպիսի կերպով ծածկվում են նաև հարթություններն ու ամբողջ սավառնակը: Մեր մոտորների ուժը չի պատի ուզում պահել սառցապատած սավառնակը: Սառցի բեռը մեզ կքաշի ցած, դեպի գետին: Մի յերկտողով Վալյային տեղեկացնում եմ. «Սառցապատում է սկսվում»:

Ջերմաստիճանը մինուս 7 է: Այդպիսի ջերմաստիճանում սառցապատումը վտանգավոր է: Սավառնակում մութ է: Առա-

տաղի լույսը չեմ վառում, թե չէ՝ նավակողից դենը վոչինչ չի յերևա: Ինձ խանգարում է սարքատախտակի կանաչ լամպիկը: Այդ լամպիկը ցույց է տալիս, վոր իմ ռադիոկայանը սնող մեքենան աշխատում է: Յես ուրախ եմ, վոր այդ մեքենան աշխատում է, բայց կանաչ լամպիկը խանգարում է դիտել: Վալյան ճիշտ վորոշում է ընդունում: Նա սկսում է վեր բարձրանալ: Բարձրաչափի սլաքը թռչում է 5000 մետրից էլ դենը: Սառցապատումը դադարում է: Կաբինի ապակիները թափանցիկանում են, սառցի ասեղները թափվում են, և յես նորից կաբինի ապակու միջով ամեն ինչ տեսնում եմ: Մեքենան սկսում է ուժեղ ցնցումներ գործել: Ըստ յերևույթին մենք ընկել ենք ցուրտ մրրիկ առաջացնող մի հոսանքի մեջ: Վորքան դժվար է խավարի մեջ պայքարել ճոճումների դեմ:

Վալյան շարունակում է բարձրանալ, 6000 մետր, 6500 մետր... Ինձ մոտ նավակողին լամպիկը վառվում է: Այդ նշանակում է, վոր Պոլինան ուզում է ինձ հետ խոսել: Ստանում եմ մի յերկտող. «Ի՞նչ է պատահել Վալյային, ինչու յե այդքան վերև բարձրանում»: Պատասխանում եմ կարճ. «Սառցապատում է»:

Մենք վերև բարձրացանք, բայց այստեղից էլ աստղեր չեն յերևում...

Արդեն ժամանակն է, վոր Կրասնոյարսկ հասած լինենք: Գետինը չի յերևում: Վալյային խնդրում եմ այնքան բարձրանալ, մինչև վոր աստղեր յերևան:

Յերբ բարձրաչափի սլաքը 7450 թվին մոտեցավ, միայն այն ժամանակ ամպերի արանքից աստղեր յերևացին... Վերջապես ժամը 20-ից 21 րոպե անց յես կարողացա վորոշել, թե մենք վորտեղ ենք գտնվում: Աստատաղի անցքը բաց արի: Պաղ ոդի հոսանքը դեմքիս խփեց: Թթվածնային դիմակը հագիս է: Շատ ցուրտ է, բայց և այնպես ինձ հաջողվեց դիտողություն կատարել: Մենք գտնվում եյինք լայնության 55° 40″-ի և յերկարության 94° 10″-ի վրա:

ՌԱԴԻՈՆ ՋԱՐՈՒԹՅՈՒՆ Ե ԱՆՈՒՄ

Շարունակ Մոսկվային հաղորդում եմ, թե վորտեղ եմ գտնվում, շարունակ խոսում եմ Մոսկվայի հետ: Մոսկվան ինձ լսում է և յես էլ պարզ ընդունում եմ Մոսկվայի կայանը: Աերոդերևութաբանական գլխավոր կայանի պետ Ալտովսկին հաղորդում է յեղանակը, յես ընդունում եմ: Ժամը 20-ից 21 րոպե անց վորոշելով, վոր Կրասնոյարսկը նոր ենք անցել, յես դիմում եմ ռադիոյին:

Հաղորդիչը միացնում եմ:

Բանալին սեղմում եմ:

Բանալու վրա պետք է լամպիկը վառվի:

Չի վառվում:

Խավարի մեջ դժվար է պատճառը պարզել:

Մտածում եմ, թե ազդանշանի լամպիկն այրվել է և խավարի մեջ ռադիոգրամ եմ չխկացնում. «Յես ՈԽԳՐ–ն եմ: Լայնությունը 55° 45″, յերկարությունը՝ 90° 10″»: Գտնվում եմ 7500 մետր բարձրության վրա: Ոդի ջերմությունը մինուս 34°: Թռչում եմ պաղ ամպերի միջով: Ամպերի ստորին սահմանը հայտնի չէ: Հաղորդեցեք Դուշկաչանի շրջանի յեղանակը: Ռասկովա»:

Այս ռադիոգրամը չխկացնում եմ յերկու անգամ:

Այնուհետև միացնում եմ ընդունիչը, տաս րոպե պատասխանի յեմ սպասում:

Ընդունիչը համառորեն լռում է:

Նույնիսկ ընդունիչի ժապավենը լուսավորող լամպիկը չի վառվում:

Արդյոք Մոսկվան լսո՞ւմ է ինձ:

Դիմում եմ ռադիոկողմնացույցին: Նա էլ է լռում:

Չի լսվում նաև Կրասնոյարսկի հզոր ռադիոկայանը:

Յեթերում լռություն է սկսվել:

Պարզ է, վոր ռադիոկայանը, ընդունիչն ու հաղորդիչը կարգին չեն: Սկսում եմ կասկածել, թե Մոսկվան լսե՞լ է ինձ: Բայց ինչ կարելի յե անել խավարում: Հաշտվում եմ այդպես

մինչև լուսաբաց, մոտ չորս ժամ առանց ռադիոկապի թռչելու մտքի հետ: Տխուր է այդպես, բայց ի՞նչ կարող ես անել:

Ռադիոփարոսները չեն լսվում, մնում է միայն աստղաբաշխությունը:

Բարձրում ցուրտ է: Հանում եմ գրպանի լապտերը և դրսի ջերմաչափը լուսավորում, մինուս 34⁰ է: Յերբ լապտերի ճառագայթն ապակիները լուսավորեց, յես տեսա, վոր նրանք ներսից ծածկվում են սառույցե բարակ նախշով, ինչպես սառնամանիք որը լավ տաքացած խցիկում: Վառում եմ առաստաղի պլաֆոնը: Իմ շուրջը կաբինում սառույց է ու յեղյամ: Յես ինքս էլ ծածկված եմ յեղյամով, կարծես ձմեռ պապի լինեմ: Ճիշտ է, ներսից սառցապատումը վտանգավոր չէ, վերջապես կաբինի ներսում չի կարող սառույցի այնպիսի շերտ առաջանալ, ինչպես դրսից: Բայց կարգի համաձայն ոդանավի հրամանատարին հաղորդում եմ, վոր իմ կաբինը ներսից սառցապատում է:

Վալյան հաղորդում է, վոր ցածում մի դետալ է փայլատակում, բայց յես դետալը չեմ տեսնում: Ապակիները սառել են:

Իսկ ի՞նչ կլինի, յեթե յես իմ կաբինը սառեցնեմ դրսի ջերմաստիճանի չափ: Այն ժամանակ յերևի ապակիները կմաքրվեն և կարելի կլինի նրանց միջով վորևե բան տեսնել:

Բաց եմ անում վերևի և ներքևի փոքրիկ անցքերը: Պաղ քամու սուր հոսանքը ներխուժում է կաբին: Կաբինում ցրտում է մինչև մինուս 33⁰: Ապակիները ժամանակավորապես պարզվում են: Բայց ի՞նչ շահ: Ապակիների միջով յես դարձյալ միայն ամպամածություն եմ տեսնում: Ահա փայլատակեց դետալի մի շերտ և կրկին անհայտացավ: Ռադիոն չի աշխատում: Թթվածին եմ շնչում: Ուտել եմ ուզում:

Բարձունքում արագությունը խիստ մեծացավ: Իմ հաշիվներով մենք ժամում 310 կիլոմետր արագությամբ ենք գնում:

Նշանակում է Դուշկաչանը մթնո՞վ կանցնենք: Բայց յես վորքա՞ն եյի հույս դնում նրա վրա: Չէ՞ վոր այդ Բայկալի հյուսիսային ծայրում այն կետն է, վորտեղ ընկեր Ստալինի ցուցումի համաձայն հատկապես մեր թռիչքի համար պետք է ռադիոփարոս լինի դրված... Դուշկաչանը յես սպասում եյի այնպիսի անհամբերությամբ, ինչպես հեռավոր նավարկության ծովայինը՝

յերբ մոտենում է ափին: Մտածում եյի՝ ահա կհասնենք Դուշկաչան և յես կվորոշեմ մեր տեղը: Այժմ տեսնում եմ, վոր Դուշկաչանն անցնելու յենք մթնով, վորովհետև մեծ բարձրության վրա մեր արագությունն ավելացել է: Իմ ռադիոկողմնացույցն ու ընդունիչը չեն աշխատում և Դուշկաչանի փարոսը, վոր այնքան հարկավոր է մեզ, վոչ մի բանով ոգտակար լինել չի կարող: Մնում է, վոր քանի դեռ լույսը չի բացվել, մի անգամ ևս աստղերով վորոշեմ իմ տեղը:

Ժամը 26–ից անց է 36 րոպե: Վորոշում եմ, վոր արդեն գտնվում եմ Դուշկաչանի միջաթմբում, նրանից 30 կիլոմետր դեպի հյուսիս: Նշանակում է՝ Բայկալի վրայով մթնով կանցնենք: Ափսոս: Ահա այստեղ, մեր տակ, սավառնակի աջ կողմը գեղեցիկ, մեծ լիճն է և ցավալի յե, վոր չի յերևում:

Լուսաբացը վորևե սփոփիչ բան կբերի՞ արդյոք: Դեռ մի քանի ժամ առաջ յես սպասում եյի, վոր մութն ընկնի և յերկընքում աստղեր յերևան: Այժմ նույնպիսի անհամբերությամբ ըսպասում եմ արշալույսի առաջին ցոլքերին... Ահա կլուսանա և այն ժամանակ, իհարկե, գետինը կտեսնեմ, կկողմնորոշվեմ և տաք թեյ կխմեմ:

Կես ժամից հետո լուսաբացն սկսվում է: Բայկալը շա՜տ հեռու հետևումն է մնացել: Այժմ Մոսկվայում կես գիշեր է: Տանը դեռ քնած չեն. մայրիկը վերջին ժամանակներս սովորություն է արել ուշ քնել: Հիմա մոսկվացիք պայծառ լուսավորված փողոցներով տուն են վերադառնում թատրոններից, ակումբներից, կինոներից: Իսկ մենք արդեն հաջորդ որվա առավոտն ենք դիմավորում...

Ռադիոն, ինչո՞ւ չի աշխատում ռադիոն: Արդեն չորս ժամ է, ինչ մենք մեր մասին տեղեկություն չենք տալիս: Հիմա Մոսկվայում ինչպե՜ս են անհանգստանում մեր մասին...

Լուսաբացի առաջին իսկ ցոլքերի հետ յես տեսնում եմ, վոր կաբինի ապակիները ներսից պատած են սառցի հաստ շերտով: Թեպետ կաբինում ջերմությունը մինուս 36⁰ է, դուրսը՝ մինուս 37⁰, բայց և այնպես ապակիները յեղյամապատվել են: Իմ պահեստի ումֆորմերներն էլ են սառցով ծածկվել: Նրանցից լուլաներ են կախվել հաստակին: Նշանակում է ումֆորմեր-

ները սառել են: Այժմ արդեն պարզ է. մինչև թռիչքի վերջը, մինչև վայրէջք կատարելը ամբողջ աշխարհից կտրված ենք լինելու:

Արևի առաջին ճառագայթները գետինը լուսավորեցին: Դանակով սառույցը քերում եմ կաբինի պատուհաններից: Առջևս բացվում է արթնացող յերկրի հոյակապ տեսարանը: Սավառնակի տակ ինչ վոր մի տեղ ձյունե գլխարկով լեռների կատարներ եյին փռված: Ծագող արևն իր ճառագայթները նետում եր ձյունապատ գագաթների վրա:

Աչքերս ծակծկում եյին պայծառ ճերմակին նայելիս, մեր տակ լեռնաշղթա յեր:

Այդ գեղեցիկ տեսարանն ինձ սփոփանք չբերեց: Ցածում, խոր կիրճի մեջ, վորտեղ արևի ճառագայթները չեն թափանցել, թանձր մառախուղ է կանգնած: Նա շտուրմանի աչքից ծածկում է քարտեզի վրա գծագրած գետերը, վորոնցով շտուրմանը կարող եր կողմնորոշվել: Նորից կույր թռիչք: Գեղատեսիլ ձյունապատ գագաթները բոլորովին վոչինչ չեյին ասում. լեռներ ու լեռներ, ուրիշ վոչինչ: Այդպիսի լեռներ Անդրբայկալում վորքան ասես կան...

Վալյան ինձ մի ուրախ յերկտող գրեց. «16 ժամ թռիչքից հետո, վերջապես, մենք մանրամասն կողմնորոշում ունենք»: Յես նրան պատասխանում եմ. «Թող այդպես մանրամասն կողմնորոշվի Ալտուխովն իր յեղանակով»:

Ծիծաղեցինք:

Բայց այդ ուրախ ծիծաղ չեր: Մենք պետք է մեր ուղղությունը 30^{0} փոխենք դեպի աջ, վորպեսզի դուրս գանք Չիտա-Խաբարովսկ յերկաթուղային մագիստրալը, Ռուխլովո կայարանը:

Բայց ինչպե՞ս գնալ դեպի Ռուխլովո կայարանը:

Խորհրդակցում եմ Վալյայի հետ: Չե՞ վոր Ռուխլովո կայարանից ընդամենը 20–30 կիլոմետրի վրա պետական սահմանն է: Սահմանն անցնում է Ամուր գետով: Ռուխլովոյի մոտ Ամուրը կտրուկ վոլորան է կազմում, իսկ մենք պիտի մոտենանք սահմանին ուղիղ ուղղահայաց: Դեռ լավ է, յեթե գետինն ու Ամուրը յերևան: Այն ժամանակ, ի հարկե, սահմանն անցնելու վտանգ չի լինի: Բայց յերևում է, վոր գետինը ծածկված է լինելու

մառախուղով ու ամպերով, Ամուրը չենք տեսնելու, իսկ կույր թռիչքի ժամանակ 20—30 կիլոմետր սխալվելը մե՞ծ բան է: Ընկնես սահմանի այն կողմը և ահա քեզ կոնֆլիկտ...

Խորհրդակցում ենք Վալյայի հետ և վորոշում ընդունում. սահմանին չմոտենալ, թռիչքը շարունակել ուղիղ դեպի արևելք, Օխոտի ծովը դուրս գալու հույսով: Վալյան ինձ հետ համաձայն է: Մեքենան թռչում է դեպի արևելք: Սկսվում է շատ լարված րոպեներ:

Մենք աշխատում ենք ըստ հնարավորին մի վորևե գետակ տեսնել: Յերբեմն կիրճում ջրի մի կտոր է յերևում: Հաջողվեց տեսնել Ոլեկմա գետը. սրտներս փոքր ինչ ուրախանում է:

Արևը վեր է բարձրացել: Յես արեգակից ուզում եմ աստղաբաշխական դիտողություններ անելու համար, բայց Սոմներյան[1]) գծերն ընկած են այնպես, ինչպես Ոլեկմա գետը—մեր մարշրուտին ուղղահայաց—և ցույց են տալիս միայն հեռավորությունը առանց կողմնային շեղումների:

Նորից փորձում եմ ռադիոն, բայց ապարդյուն: Ընդունիչն ու հաղորդիչը չեն գործում: Ումֆորմերի վրայի սառույցը փշրեցի, բայց միևնույն է, ընդունիչն ու հաղորդիչը լուռ են: Յես ու Վալյան անընդհատ գրագրության մեջ ենք: Գրեցինք բոլոր գեղեցիկ բլոկնոտները, գրեցինք օգտագործված աղյուսակները: Յես արդեն սկսել եմ գրել քարտեզի կտորների վրա, վորտեղ նշանակված են մեր անցած կետերը: Յերկտողները թռչում են Վալյայից ինձ մոտ, իմ մոտից՝ Վալյայի մոտ: Նա խորհրդակցում է, ինձ հետ քննարկում է յուրաքանչյուր վորոշումը: Խե՜ղճ Պոլինա: Նա նստած է հետևում և իր ազդանշանային լամպով ապարդյուն կանչում է շտուրմանին: Շտուրմանը մեխված է իր կաբինի ապակիներին և այդ չի նկատում: Պոլինան կարծում է, թե շտուրմանը մեռել է... Նա յերկտող է գրում Վալյա Գրիզոդուբովային: Վալյան ձեռքն է թափ տալիս: Պոլինան նեղանում է անձնակազմի այդպիսի վատ անդամներից: Բայց մենք մեղավոր չենք: Խոսակցության համար վոչ մի րոպե ժամանակ չի մնում, բացի բացարձակապես անհրաժեշտ խոսակցությունից:

---

*) Սոմներյան գիծ—արեգակի հավասար բարձրությունների գիծը:

Մոսկվայի ժամանակով ժամը 6-ն է։ Իմ հաշիվներով կես ժամից հետո Ոխոտի ծովն է լինելու։ Անկեղծ ասած՝ ինձ համար շատ տխուր է։ Յես գիտեմ, վոր կարող եյի դեպի հյուսիս շեղվել, այնտեղ, ուր Ոխոտի ծովը խոր կերպով մտնում է ցամաքի մեջ։ Բացի այդ կարող եր համընթաց քամի լինել, վոր չասերմանին չի հաջողվել չափել, վորովհետև նա գետինը չի տեսել։

Արևը ծածկված է ամպերով։ Ամպերը մեզանից բարձր են, թեև մեր բարձրությունն առաջվա պես 7000 մետր է։

Գուցե հենց հիմա մեր տակը Ոխոտի ծովի ջրե՞րն են։ Զարհուրելի յե դառնում։ Մեքենան անիվներով է։ Հիշում եմ ոդաչուների պատմությունները փոթորկալի Ոխոտի ծովի մասին։ Ահա, այսպես շարունակ կույր թռիչքով մենք դուրս կգանք Ոխոտի ծովը։ Այն ժամանակ ի՞նչ կանենք։

Իջնելու ժամանակը չէ՞։ Բայց գուցե քամին հանդիպական է յեղել և մենք վոչ թե կես ժամ, այլ մի ամբողջ ժամ էլ պիտի թռչենք Ոխոտի ծովը հասնելու համար։ Յեթե այդպես է, մենք գտնվում ենք լեռնաշղթաների գլխին։ Յեթե սկսես ցածրանալ կքսվես լեռներին։ Ուրախ բան չէ այս խուլ վայրերում գերեզման գտնելը։ Նույնիսկ չեն իմանա, թե մենք վորտեղ ենք ջախջախվել...

Մի անգամ էլ եմ փորձում գործի գցել ռադիոկայանը։ Հարկավոր է ումֆորմերները տաքացնել։ Հիմնական ումֆորմերները գտնվում են նստելատեղի տակ, խորքում։ Նրանց հասնել չի լինի։ Հույսս մնում է պահեստի ումֆորմերների վրա, վորոնք դրված են իմ առաջ։ Աջ վոտիցս մորթե ունտը հանում եմ, նրանով ծածկում եմ հաղորդիչի ումֆորմերը, իսկ մի փոքրիկ ունտիկով էլ ծածկում եմ ընդունիչի ումֆորմերը։ Սկսում եմ թողարկման տոկն զգուշությամբ միացնել։ Տոկը ումֆորմերը կտաքացնի, իսկ ունտերը կպահպանեն առաջացած տաքությունը։ Թողարկման տոկը միացնում եմ մերթ ընդունիչին, մերթ հաղորդիչին։ Բայց ընդունիչն ու հաղորդիչը լուռ են։ Ժամը 6-ից 20 րոպե անց վառվում է հաղորդիչի լամպը։ Յես առնում եմ բանալին՝ ու չխչխկացնում.

— Յես Ուգր-ն եմ։ Շտապ վորոշեցեք, հայտնեցեք իմ տեղը։

Կարծում եմ, վոր Խաբարովսկը կվորսի և ռադիոյով կհաղորդի ինձ, թե յես Խաբարովսկի վո՛ր կողմն եմ գտնվում։ Յեթե Խաբարովսկն իմանա, վոր յես թռել եմ Ոխոտի ծովը կամ դեռ գտնվում եմ լեռնաշղթաների գլխին, ինձ կհաղորդի այդ։

Ահա աշխատել սկսեց նաև ընդունիչը։ Սկզբում յես լսում եմ, թե ինչպես Մոսկվան կանչում է ինձ.

— Ուգր, Ուգր, անհապաղ պատասխանեցեք։ Ուգր, Ուգր, անհապաղ պատասխանեցեք։

Անընդհատ կանչում են ինձ։

Հանկարծ Մոսկվայի հաղորդիչը լռեց։ Հավանորեն այնտեղ իմ ռադիոգիրն ընդունել են։

Մի քանի վայրկյանից հետո յես Մոսկվայից լսում եմ.

— Ռեպետե, կրկնեցեք։

Նորից չխչխկացնում եմ իմ ռադիոգիրը և նորից լսում.

— Ռեպետե։

Մի քանի անգամ իրար հետևից չխկացնում եմ իմ ռադիոգիրը։ Բայց Մոսկվան շարունակ կրկնում է.

— Կրկնեցեք, կրկնեցեք։

Յես միևնույն ռադիոգիրը կրկնում եմ արդեն 35 րոպե։ Ինձ թվում է, թե Մոսկվան ինձ չի լսում, վորովհետև մենք չափազանց հեռու յենք գտնվում։ Փորձում եմ կանչել Խաբարովսկին։ Բայց իմ ընդունիչի լարման տեղը սառել է, և յես վոչ մի կերպ չեմ կարողանում փոխադրել Խաբարովսկի վրա։ Ըստ յերևույթին այդպես էլ վիճակված է վոր մինչև վերջը կապված մնանք Մոսկվայի կայանի հետ...

Թ Ռ Ի Չ Ք Ը

Շարունակում եմ ռադիոգիրը չխկացնել։

Հանկարծ Վալյան խիստ ցնցում է մեքենան։ Ոդաչուների պայմանական կանոնի համաձայն՝ իսկույն նայում եմ ցած, գետնին և տեսնում եմ, վոր մառախուղը ճեղքվել է պատի նման։ Իմ տակը վոչ թե՛ գետին է, այլ Ոխոտի ծովը։ Սակայն ի մեծ ուրախություն իմ՝ յես աջ կողմում ափ եմ տեսնում։ Համարյա մեքենաբար հաղորդիչն անջատում եմ՝ յեթերում բաց թողնելով միայն մեկ բառ.

— Սպասեցե՛ք:

Բարձրությունը 7000 մետր է: Ուղիղ դեպի ցած լավ է յերևում, առջևը վոչինչ չի յերևում: Կապը դցում եմ, արագ վերցնում եմ քարտեզը և սկսում եմ Ոխոտի ծովի ափերի գծագրությունը համեմատել քարտեզի հետ: Բարեբախտաբար սա շատ բնորոշ տեղ է. յես լավ ճանաչում եմ Ոխոտի ծովի Տուգուրսկի ծոցի հարավային ծայրը:

Վալյային հաղորդում եմ, վոր մենք գտնվում ենք Տուգուրսկի ծոցի վրա, վոր կուսակցության ու կառավարության առաջադրանքը կատարել ենք, հասել ենք Հեռավոր Արևելք:

Այժմ կարելի յե մտածել վայրեջքի մասին: Հանկարծ իմ մեջ վորոշում է հղանում սավառնակը վայրեջք տանել Ամուրի Նիկոլայեվսկ: Այդ ընդամենը մի ժամվա թռիչքի բան է: Բայց Վալյան խիստ է մոտենում դրան: Նա ասում է, վոր Ամուրի Նիկոլայեվսկի աերոդրոմը վատն է, վոր շատ ավելի լավ աերոդրոմ ունի Կոմսոմոլսկը, և թեպետ Կոմսոմոլսկը մոտ 500 կիլոմետրի վրա յե, բայց մենք բավականաչափ վառելանյութ ունենք: Ուղղությունն ենք վերցնում ճիշտ դեպի հարավ, մտածելով դուրս գալ Ամուր գետի վրա:

Մոսկվայի համար նոր ռադիոգիր եմ կազմում:

«Ժամը 6-ից անց է 57 րոպե: Տուգուրսկի ծոցը: Բարձրությունը 7000 մետր: Գնում եմ դեպի Ամուր: Մտածում եմ վայրեջք կատարել Կոմսոմոլսկում»:

Ռադիոգիրը կոդավորված է: Յես հաղորդիչը միացնում եմ: Ապահովիչն այրվում է: Յես արագորեն փոխում եմ այն: Նորից միացնում եմ հաղորդիչը: Յերկրորդն էլ է այրվում: Այսպես կրկնվում է վեց անգամ: Ըստ յերևույթին ումֆորմերը, յերբ յես այն անջատել եմ, նորից սառել է և այդ ժամանակ գոլորշիներից առաջացած ջրի կաթիլները թրջել են ումֆորմերի փաթեթը: Դրա հետևանքով առաջանում է կարճ միացում: Վորքան ցավալի յե, վոր յես Մոսկվային չեմ կարող հաղորդել «Ռոդինա» սավառնակի անձնակազմի առույգ տրամադրության մասին:

Վորքան ցավալի յե, վոր չի կարելի հենց այժմ Մոսկվային

հաղորդել, վոր յերեք խորհրդային կանայք մեկ օր ու գիշերում թռել են իրենց հայրենիքի ամենահեռավոր սահմանները:

Այժմ նորից Պոլինան է վարում մեքենան: Գնում ենք ուղիղ դեպի հարավ:

Ժամը 8-ից անց է 02 րոպե: Մեր տակ մի գետ է յերևում: Այդ Ամուրն է:

Նորից խորհրդակցում եմ Վալյայի հետ, թե սավառնակն Ամուրի ուղղությամբ տանե՞նք Կոմսոմոլսկ: Վալյան նախկին վորոշումը չի փոխում: Հաշվիչները ցույց են տալիս, վոր վառելանյութը դեռ յերեք ու կես ժամ էլ կբավականացնի:

Ահա ճյուղավորվում են յերկու գետ: Նրանք նկատվում են մշուշի մեջ, ուղիղ մեր սավառնակի տակ: Վո՞ր գետի ուղղությամբ գնալ: Այստեղ Ամուրը բազմաթիվ ճյուղեր ունի: Բայց ձախ ճյուղով գնալ չի կարելի, նա ծածկված է մառախուղով, այնինչ աջ ճյուղը շատ լավ է յերևում: Գնում ենք այդ ճյուղի յերկարությամբ: Շուտով պարզվում է, վոր դա Ամգունն է: Վորոշում ենք Ամգունով գնալ և ամպամածության յեզրի յերկարությամբ հասնել Կոմսոմոլսկ:

Այդպես թռանք մինչև շատ գեղեցիկ Եվորոն լիճը: Նրանից վոչ հեռու յերևում է Չիվչիգիրի լիճը: Այժմ հարկավոր է գնալ ուղիղ դեպի հարավ: Մինչև Կոմսոմոլսկ մնում է 150 կիլոմետր:

Մոսկվայի ժամանակով ժամը 10-ն է: Վալյայի կաբինում կարմիր լամպիկն է վառվում: Այդ ազդանշան է՝ վառելանյութն սպառվել է: Սկսվում է վերջին բաքի ծախսումը, վորի մեջ յեղած թանգարժեք խառնուրդը հազիվ թե կես ժամ բավականացներ: Ժամը 10-ից անց 20 րոպե վառելանյութը բոլորովին վերջացավ: Մոտորներն սկսում են ընդհատումներ տալ: Վալյան հերթով միացնում է բոլոր բաքերը: Մոտորները կենդանության վերջին նշաններն են տալիս և վերջապես բոլորովին լռում:

Ել ի՞նչ Կոմսոմոլսկ: Չենք հասնի: Դեռ լավ է, յեթե հաջողվի գեթ վորևէ տեղ իջնել: Մեր տակը վայրի բլուրներ են անտառներով ծածկված: Այստեղ իջնել չի լինի...

Վերադառնում ենք դեպի լճերը, վորտեղ ճահճուտներ կան:

Բարձրությունը կորցնում ենք:

Վալյան ինձ յերկտող է գրում. «պատրաստվիր թռիչքի»:

Յես նրան յերկարողով պատասխանում եմ, թե թռչել չեմ ուզում, ցանկանում եմ մնալ սավառնակում, վոր յես ինձ համար թթվածնային բալոնի հետևը հարմար տեղ եմ ընտրել և այնտեղ կկանգնեմ շատ հանգիստ, և վոր ինձ վոչինչ չի պատահի: Վալյան պատասխանում է. «Յեթե մեքենան քթի վրա ընկնի, յես ու Պոլինան չենք էլ կարող քեզ դուրս քաշել քո կաբինից: Պատրաստվիր թռիչքի, մեզ մի՛ ուշացնի»:

Յես Վալյայի վրա բարկացա, բայց ցույց չտվի նրան: Բայց ինչ արած, հրամանատարի հրամանը հրաման է:

Սկսում եմ արագ արագ հավաքել իմ ընդարձակ կաբինում փռված քարտեզները, հաշիվները, քանոնները: Այդ բոլորը տեղավորում եմ նավի պայուսակում, սեկստանը թաքցնում եմ իր պատյանում: Չե՞ վոր յերբ յես թռչելիս լինեմ անցքը բացվելու յե և այն ժամանակ իմ ամբողջ գույքը կարող է սավառնակից թափվել ու կորչել:

Կաբինը հավաքելուց հետո պարաշյուտս հագնում եմ, ստուգում եմ, թե մոտս կողմնացույց, դանակ, զենք կա՞:

Նավակողին դրված են յերկու սալիկ շոկոլադ, վորոնք թռիչքի ժամանակ պիտի պահպանեյին իմ ուժերը: Դրանք անդրավարտիքիս գրպանն եմ դնում: Փորձում եմ հագնել մթերքներով լի ավարիային տոպրակը, բայց նա շատ ծանր է: Յեթե նա վրաս լինի, իջնելուս արագությունն այնքան մեծ կլինի, վոր թերևս կխրվեմ ճահիճի մեջ ու դուրս գալ չեմ կարող:

Մարտական պարաշյուտով առաջին անգամ եմ թռչում: Մարտական պարաշյուտի տարածությունն ավելի փոքր է, քան այն պարաշյուտներինը, վորոնցով յես իմ առաջին յերկու թռիչքըն եմ գործել: Այն ժամանակ յես թռչում եյի վարժական խոշոր պարաշյուտով, յես պահեստի համար մի ուրիշ պարաշյուտ էլ եյի ունենում: Այժմ ընդամենը մի փոքրիկ պարաշյուտ է. Հրաժարվել մթերքի տոպրակից:

Բացում եմ կաբինի հատակը:

Մեքենայորեն մի հայացք եմ գցում ժամացույցի և բարձրաչափի վրա; Բարձրությունն 2300 մետր: Ժամացույցը ցույց է տալիս առավոտյան ժամը 10-ից անց 32 րոպե:

Յես սավառնակից անջատվում եմ:

ՏԱՅԳԱՅՈՒՄ

25 Սեպտեմբերի: Սավառնակից անջատվեցի: Իսկույն զգացի, վոր բարձրությունը մեծ է: Վորոշեցի թռիչքը մի քիչ ձգձըգել: Առանց պարաշյուտը բանալու նետած քարի պես ցած եմ ընկնում: Անկման արագությունը մեծանում է, շնչելը շարունակ դժվարանում է: Օղակը ձիգ եմ տալիս, պարաշյուտը բացվում է: Առաջ յես գլխիվայր եյի ընկնում, իսկ այժմ դրությունս նորմալ է, յես շատ հանգիստ նստած եմ կախովի սեանի պարաշյուտի փոկերի վրա: Կրծքիս ճոճում է կողմնացույցը: Նրանով կողմնորոշվելով, թե իմ վոր կողմն է գտնվում գետը, վոր կողմը լիճը, վերևից նկատում եմ, թե ինչպես են ընկած փոքրիկ անտառակները: Այդ վայրում անտառային մասիվը բաժանվում է ճահճային ծովերով: Աշխատում եմ հիշել այդ ճահճուտների ուղղությունը գետի նկատմամբ: Դժբախտաբար մոտս վոչ թուղթ կա վոչ մատիտ և յես չեմ կարող գծել անտառների ու ճահիճների սխեման: Սկզբում մտածում եմ, թե վորքան ծանր է լինելու իջնել ճահճի վրա. չէ վոր ճահճի վրա իջնելիս կարող եմ մինչև գոտիս խրվել մեջը... Ի՞նչ անել այդ դեպքում:

Բայց իմ մտքերն արագ ընդհատվում են: Նկատում եմ, վոր գտնվում եմ ճահճի յեզրին և քամին ինձ քշում է ուղիղ դեպի անտառը: Սկսում եմ սահել: Քաշում եմ պարաշյուտի ժապավենները, ծալում եմ պարաշյուտի ժապավենները, ծալում եմ համարյա կիսով չափ, վորպեսզի փոքրացնեմ գմբեթի հրապարակը և այդպիսով մեծացնեմ անկման արագությունը: Այդ դեպքում յերևի շեղումը կդանդաղի և քամին ինձ չի տանի դեպի անտառ: Սակայն քամին ուժեղ ճոճում է պարաշյուտը: Ինձ օրորում է ինչպես ճոճանակում: Շուռ եմ գալիս քամու հակառակ կողմը: Ահա արդեն գետինը մոտիկ է: Իմ տակ անտառ է: Կարողանում եմ նկատել, վոր անտառը գտնվում է վոչ թե հարթ տեղ, այլ բլուրի վրա: Այստեղ յես իմ կողմնացույցը ծալում եմ և պահում կաշվե բաճկոնիս ծոցում: Մտածում եմ, թե ինչպես մոտենամ գետնին:

Գետնին մոտենալս շատ ավելի արագ է զգացվում: Թվում է, թե գետինն արագորեն քեզ է մոտենում: Տեսնում եմ, վոր

անտառում ծառերի միջև փոքրիկ բացատներ կան: Այնտեղ ծառերը նոսր են: Սահում եմ այն հաշվով, որ իջնեմ այդ բացատներից մեկի վրա: Բայց դեռ նրան չհասած զգում եմ, որ ուղիղ ինձ վրա յեն գալիս սոճիների խիտ սաղարթները: Վատ է. ստիպված եմ ծառի վրա իջնել: Սովորաբար պարաշյուտիստը գետնին մոտենում է կիսով չափ ոտքերը ծռած. ոտքերն այդ դիրքում թուլացնում են գետնին հարվածվելու ուժը: Այստեղ ընդհակառակն, յես ամուր իրար սեղմած ոտքերս ձգեցի և ձեռքերս խաչաձև ծալելով նրանցով ծածկեցի յերեսս—միակ բաց տեղս: Այդ պահին մի աննշան ցնցում զգացի: Ասեղներն իմ կաշվե հագուստին քսվելով խշխշացին:

Յերեսս բաց արի: Յես թափով մի կողմ ընկա, անկումը դադարեց: Զգում եմ, որ կողքս կպել է սոճի ծառի բնին: Վերև նայեցի: Պարաշյուտի գմբեթը ծածկել եր սոճենու պսակը: Յես ամբողջովին մետաքսից եմ կախված: Բայց չէ որ մետաքսը հավիտենական չէ: Ահա, որտեղ որ է պարաշյուտի գմբեթը կպատռվի: Հարմար րոպեն որսալով ոտքերով գրկում եմ սոճենու բունը: Իսկույն դադարում է ծառի բնին խփվելս:

Մի րոպեաչափ այդ դրությամբ հանգստանում եմ: Ձեռքերով ու ոտքերով բռնել եմ ծառի բունը: Շուրջս նայեցի: Մինչև գետին հինգ մետր կա: Ցածում գետինը ծածկված է խիտ թփուտով ու խոտով: Հարկավոր է պարաշյուտից անջատվել: Փորձում եմ կախվելու սիստեմն արձակել, բայց չի հաջողվում, կախվելու սիստեմը խիստ ձգված է, յես ամբողջ ծանրությամբ կախված եմ նրանից: Գրպանիցս դանակը հանում եմ, մի քիչ ծառի բնով վեր եմ բարձրանում և ժապավենները կտրում: Ժապավեններն անմիջապես կախվում են կարուսելի ծողերի նման: Իմ պարաշյուտից ազատվելով յես ծառի բնով ցած եմ իջնում:

Գետնի վրա ոտք կոխելով խոր շունչ եմ քաշում ու ասում. «Գետի՛ն»: Միայն այժմ եմ զգում, որ ամբողջովին քրտնած եմ: Շուրջս խիտ, անանցանելի անտառ է: Ոչ մի տեղ լույսի շող չի յերևում... Յես մենակ եմ:

Այդ ժամանակ իմ գլխի վրայով անցնում է «Ռոդինա» սավառնակը: Նա թռչում է ցածր, անտառի վրայով: Ըստ յերևույթին մեր աղջիկները որոնում են իմ իջած տեղը: Մոտորը չի աշխատում, սուլում է միայն սիրենան, որ նշան է, թե պետք է շասսիները բաց թողնել: Բայց Վալյային և Պոլինային բոլորովին պետք չէ շասսիները թողնել: Այդ հրաշալի յերաժշտությունը նրանց ուղեկցելու յե մինչև վայրեջք կատարելը: Ահա սավառնակը ծածկվում է անտառի հետևը: Լիակատար լռություն է տիրում: Յես սպասում եմ, թե վայրեջքի ժամանակ որևէ չխկոց չե՞մ լսի: Ամեն ինչ լուռ է:

Մութը վրա յե հասնում մոտավորապես մի ժամից հետո: Յես սկսում եմ անհանգստանալ: Ինչպես իջան իմ աղջիկները: Արդյոք մեքենան ո՞ղջ է: Սպասում եմ կրակոցի: Դեռ Մոսկվայում պայմանավորվել ենք, որ հարկադրական վայրեջքի դեպքում կրակելու յեն այնտեղ, որտեղ յերկուսն են, որպեսզի յերրորդը կարողանա կրակոցի վրա գնալ նրանց մոտ:

Կրակոցը չկա ու չկա: Մութը խտանում է: Ուշադիր ականջ եմ դնում: Անտառում ոչ մի խշխշոց չի լսվում: Միայն ականջներումս դեռ հնչում են սովորական ձայները. թվում է, թե դեռ լսում եմ Մորզեյի ազդանշանները:

Փորձում եմ աչքերս փակել, բայց միևնույն է, ականջներումս պարզ հնչում են առաջին ռադիոգրամայի կանչերը, որ յես ստացել եմ սավառնակի վրա. ՈՒԳՐ. դե,— ՐԲՐ, ՆՐ—1:

Գետնին խավար է իջնում: Յերկնքի արևելյան կողմը յերևում են առաջին աստղերը: Արևմուտքը դեռ փայլում է մայր մտած արևի թույլ շողերով: Այդ ժամանակ պարզ լսում եմ կրակոցի ձայն: Ահա՛, նշանակում է աղջիկները կենդանի յեն:

Վայրկենապես հանում եմ կողմնացույցը և որոշում կրակոցի ուղղությունը. հարավ-արևելք: Որպեսզի չմոռանամ, շոկոլադի սալիկի փաթեթի վրա գրում եմ՝ «զույդ-ոստ»:

Շատ եմ ուզում խմել: Վշտով հիշում եմ, որ սավառնակի վրա մնացին յերկու թերմոս՝ լի թունդ ու տաք թեյով, առանց շաքարի, կիտրոնով: Վատ չեր լինի հիմա մի գավաթ տաք թեյ խմել: Նայում եմ շուրջս: Մթության մեջ հազիվ եմ նկատում մոտակա թփերը: Ոչ մի տեղ ջուր չկա:

Ստուգում եմ իմ պարզ տնտեսությունը. որսորդական դանակ-ֆինկա՝ փոքրիկ սղոցով, դարձիչով և բզով, ատրճանակ,

տասնութ փամփուշտ, մի տուփ արկտիկական լուցկի, նրանցից, որ թռիչքից առաջ տվել էր մեզ Իվան Դմիտրիևիչ Պապանինը, մի կողմնացույց և յերկու տոլիկ շոկոլադ: Հագիս մետաքսե սպիտակեղենի վրայից յեղերական սպիտակեղեն է, կաշվե բաճկոն մորթե աստառով, մորթե անդրավարտիկ, ունտեր, կաշվե տաք սաղավարտ, ձեռքերիս՝ բրդե ձեռնոցներ:

Ուտում եմ մի կտոր շոկոլադ, պառկում տայգայի չոր հողի վրա և անմիջապես խոր քուն մտնում: Ամեն ինչ լավ է, ընկերուհիներս վողջ են: Վաղն առավոտյան կգնամ սավառնակի մոտ:

26 Սեպտեմբերի: Խոր քնեցի մինչև լուսաբաց: Դիտում եմ վայրը: Շուրջս խիտ անտառ է: բարձր ծառերի արանքով ցրիվ լույս է յերևում: Ցող է:

Հարկավոր է ճանապարհ ընկնել:

Նորից ստուգում եմ ուղղությունը, վոր յերեկ վորոշել եմ ըստ կողմնացույցի: Գնում եմ: Մորթե անդրավարտիկս, բաճկոնը, ունտերը, սաղավարտս— այդ բոլորը կպչում են ծառերի ճյուղերին: Մեծ դժվարությամբ եմ առաջ շարժվում խիտ թփուտների միջով: Թվում է, թե յերբեք յես այնպես դանդաղաշարժ չեմ յեղել: Ուտել եմ ուզում: Փորձում եմ տերևների վրայի ցողը լիզել: Բայց դա ի՞նչ խմել է: Միայն շրթունքներդ ես թրջում, իսկ բերանդ վոչինչ չի ընկնում: Տայգայում աճել է բարձր, փայտացած, բոլորովին չոր խոտ: Վորտե՞ղ ջուր գտնեմ, թեկուզ մի քիչ ջուր:

Կեսօր է: Գտնում եմ առաջին ջուրը: Փտող ծառի արմատների տակ ջրով լի մի փոքրիկ փոս կա: Զարմանալի մաքուր ջուր է: Ձեռքս դնում եմ մեջը—սառն է: Համն եմ փորձում. վոչինչ, կարելի յե խմել: Միայն մի քիչ խոտահամ է գալիս: Ե, ի՞նչ արած, պիտի խմեմ: Ջուրը բռով վերցնելով խմում եմ շատ ու ագահաբար: Նորից առաջ եմ շարժվում:

Իմ աջ կողմը մի բարձր բլուր է: Իմ ծանր հագուստի մեջ նրա վրայով անցնելը դժվար է լինելու: Վորոշում եմ իմ սկզբնական ուղղությունից մի քիչ շեղվել և ձախ կողմից բլուրը շրջանցել:

Հողը չոր է: Շուրջս անտառ է՝ հյուսված ու խճճված խոտով ու թփերով: Տեղ-տեղ խցկվում եմ խիտ թփերի միջով:

Խցկվում, անցնում եմ, քանի ուժս կտրում է: Բայց ավելի ու ավելի հաճախ եմ կանգ առնում, նստում հանգստանալու: Յեվ ո՞վ է հնարել այսպիսի ծանր զգեստը:

Մի քանի հարյուր մետր անցա դեպի արևելք: Հանկարծ կրակոց եմ լսում: Նորից եմ ուղղությունը վորոշում: Այժմ արդեն կրակոցը հարավից է գալիս: Ճիշտ է, չէ՞ վոր յերեկվա կրակոցը հարավ-արևելքից էր գալիս, իսկ այսօր յես ուղղությունից շեղվեցի և դեպի արևելք գնացի: Նշանակում է՝ իմ ընկերուհիները պիտի լինեն ինձանից դեպի հարավ վորևէ կետի վրա: Հավանորեն այժմ յես այդ գծի վրա յեմ կանգնած: Պետք է ուղղությունը փոխել:

Բայց առջևում անտառը ցածրանում է, լուսանցքներ են յերևում. յերևի վոչ հեռու անտառի յեզրն է: Խոտը գնալով ցածրանում է, քայլելն ավելի հարմար է դառնում, իսկ աջ կողմը խիտ անտառ է: Յես արդեն խիտ թփուտներով քայլելուց հոգնել եմ: Վորոշում եմ, վոր մինչև յերեկո դուրս կգամ անտառի յեզրերը, իսկ այնուհետև կգնամ բացատով:

Հաճախ ականջ եմ դնում: Յերբեմն վոտքերս խճճվում են խոտերի մեջ, ակամայից սայթաքում եմ, ընկնում: Կարճ ժամանակով նստում եմ, հանգստանում: Շուրջս խիտ տայգա է. յեղևնիներ, սոճիներ: Յերբեմն պատահում են վոսկեգույն յեղևնիներ: Անտառը կարծես յեռահարկ լինի. վերևը, բարձրում բավական նոսր փշատերև ծառեր են, ցած, նրանց տակ սաղարթավոր անտառի ծառեր, իսկ ավելի ցած փռված են փշփշոտ թփեր՝ հյուսված խիտ խոտի հետ:

Գնում եմ դեպի անտառի յեզրը: Առջևում յեղևնիների մեջ յերևացին ցաք ու ցրիվ կեչիներ: Կեչի ծառերը կանգնած են մերկ իներով: Անտառն ավելի ու ավելի նոսրանում է: Հանկարծ սայթաքում եմ: Վորպեսզի վայր չընկնեմ, հենվում եմ կեչի ծառին և հանկարծ այդ գեղեցիկ կեչին վայր է ընկնում: Յես խիստ վախենում եմ. այդ ինչպե՞ս է, վոր ամբողջ ծառը մի չփումից վայր է ընկնում: Մոտենում եմ ընկած ծառին և տեսնում, վոր կեչին ներքուստ ամբողջովին փտած է, կանգնած է յեղել միայն կեղևի ուժով: Հենց վոր ձեռք ես տալիս, կեղևը կոտրվում է և նրա միջից գարշահոտ փոշի յե դուրս թափվում:

Մնացած յեղերքը յերևում է։ Ավելի ցածը ճահճուտ է։ Ահա, մտածում եմ, յերևի այդ ճահճուտի վրա յե իջել մեր սավառնակը, մեր «Ռոդինան»։ Գնում եմ ավելի արագ, գոհ, վոր մինչև մութն ընկնելը հասել եմ անտառի յեզրին։ Բայց այստեղ վոտքս ջուրն է ընկնում։ Յես վոտքս արագ հետ եմ քաշում և տեսնում, վոր ճահճի յեզերքին եմ գտնվում։

Ինձ անհանգստացնում է այն, վոր գիշերը մոտենում է, իսկ իմ ունտերը թաց են։

Վրա յե հասնում յերկրորդ գիշերը տայգայում։ Ուշադիր զննում եմ ճահիճը։ «Ռոդինան» վոչ մի տեղ չի յերևում։ Իմ հետևն անտառ է, արևմուտքում՝ անտառ, հյուսիսային կողմը՝ նույնպես, ուղիղ իմ առջևը, արևելքում հորիզոն է. յերևի այնտեղ դաշտավայր է։ Սկսում եմ վերհիշել անտառի գիրքը, ճահճուտի ու ճահճի գիրքը, վոր յես տեսել եմ թռիչքի ժամանակ։ Այնտեղ, արևելքում պետք է լիճ լինի։ Իսկ հարավում յես բլուրների շարքեր եմ տեսնում։ Վերհիշում եմ այդ բլրաշարքը, ինչպես տեսել եմ ոդից և մտածում եմ. «Ա., ամեն ինչ հասկանալի յե. կրակոցը հարավից եր լսվում։ Նշանակում է սավառնակն այդ բլրաշարքի հետևն է։ Լավ։ Առավոտյան յես կանցնեմ այնտեղ, դեպի հարավ և անպայման կտեսնեմ սավառնակը»։ Նորից վերադառնում եմ անտառի յեզրը, չոր խոտի վրա։

Մթնում է։ Միտս է ընկնում Պապանինի տված լուցկին և սկսում եմ խարույկ պատրաստել։ Խարույկ վառելը շատ դժվար է. թաց փայտը շուտ չի վառվում։ Աշխատում եմ ավելի չոր ճյուղեր կտրել, բայց նրանք միայն մխում են, իսկ խարույկը չի վառվում։ Վերջապես դժվարությամբ վառեցի։ Խարույկի մոտ նստած՝ իմ մորթե ունտերը տաքացնում եմ և փոքրիկ կտորներով շոկոլադ ուտում։ Այսոր կերել եմ կես սալիկ։ Հարկավոր է խնայող լինել. չե՞ վոր բլուրների վրայով յերկար ճանապարհ եմ անցնելու։ Ծարավ եմ։ Վեր կացա, մոտեցա ճահճի յեզերքին, ճահճի ջրից խմեցի, շատ համեղ թվաց։ Վերադառնում եմ խարույկի մոտ, նրա մեջ մի չորուկ եմ դցում, վոր ինձ հաջողվել է ցամաքեցնել կրակի մոտ, և շուտով քնում եմ վառվող խարույկի կողքին։

27 Սեպտեմբերի։ Արթնացա սովորականից շուտ։ Առաջին

զգացմունքս քաղցն է։ Մի կտոր շոկոլադ կերա։ Այժմ ստիպված եմ շոկոլադն ավելի խնայել։ Ճահճից ջուր խմեցի։

Ինչպե՞ս թեթևացնեմ իմ հաղուստը։ Ով գիտե, թե էլի վորքան պիտի քայլեմ այսպես։ Կորչի անդրավարտիկը, կորչի բաճկոնը։ Վորքան թեթև է միայն յեղերական սպիտակեղենով։ Այժմ սպիտակեղենի վրայից միայն բրդե վերնաշապիկս է՝ վրան Լենինի շքանշանը։

Անդրավարտիկիս գրպանները դատարկում եմ։ Ռադիստի գըրպանում միշտ էլ լարի կտոր կլինի։ Ունտերը կապում եմ գոտուս. Այժմ յես հանգիստ եմ, վոր ունտերս չեն ընկնի։ Բոլոր շորերս մի կապոց արի ու շալակս առա։ Քայլելը շատ հեշտացավ։ Ինձ համար մի ձեռնափայտ էլ կտրեցի։ Այժմ յես ուղեկից ունեմ։

Արևը դեռ չի ծագել։ Պետք է քայլել քանի դեռ շոգ չի։ Շարժվում եմ դեպի բլրաշարքը՝ դեպի հարավ։ Բարձրանում եմ բլուրի գլուխը։ Քայլելը դժվարացել է։ Բլուրների վրա վոչ մի խոնավություն չկա։ Նայում եմ դես ու դեն։ Ի՜նչ ուրախություն. հատապտուղներ։ Ճիշտ է, քիչ է, մի բուռ էլ չկա, բայց չէ վոր իսկական հատապտուղ է։ Կարելի յե ուտել։ Գեթ մի քիչ ծարավը կտրել։

Բլուրն այնքան էլ հաջող չեր։ Առաջ գնալը դժվար է, խիստ դժվար։

Այս բլուրը քիչ է նման տայգային, վորով յես յերեկ անցնում եյի։ Բարձր ծառերն այստեղ քիչ են։ Բաց յերկնքի ֆոնի վրա միայն առանձին անկենդան, բոլորովին մերկ ծառեր են յերևում։ Գետնին ընկած ծառերի հսկայական կույտեր կան։

Այստեղ ծառերը տապալվում են իրենց արմատներով։ Մոտենում եմ ընկած ծառերից մեկին, նայում եմ. այնտեղ, ուր արմատներն են յեղել, յերևում է քառակուսի ձևով կտրված հողը։ Ծառն այստեղից պոկվել, ընկել է հողի հետ միասին։ Փորձում եմ փորփրել հողը և շատ շուտով, մոտ հինգ սանտիմետր խորության վրա հանդիպում եմ համատարած քարի։ Այդ վիթխարի ծառերն աճում են բլրի լանջին, քարոտ հողի վրա։ Լավ հողի հաստությունն այստեղ յերեսուն սանտիմետրից ավելի չէ։

Ուժեղ քամի յե փչում։ Յես մտաբերում եմ գլխավոր ոդե-

ութաբանական կայանի պետ Ալտովկուն, վորը մեզ պատմում եր այս վայրերում մոլեգնող տայֆունի մասին: Յես գիտեմ, վոր բլուրն այս կողմից նայում է դեպի Եղվորոն լիճը, ուստի քամին ազատորեն զբոսնում է բլրի վրա: Ի հարկե, այդ վիթխարի, ծանր ծառերը չեն կարող դիմանալ տայֆունի ճնշմանը: Հավանորեն հորդ անձրևները հեղեղում են ծառերի արմատները, ուժեղ քամին նրանց բունը թեքում է ցած և նրանք տապալվում են գետին իրենց հողի հետ:

Անտառն այստեղ հոյակապ տպավորություն է թողնում: Դժվար է պատկերացնել, թե քանի տասնյակ տարի առաջ է այստեղ համատարած անտառ յեղել: Բայց այժմ իմ շուրջն այնպիսի զարմանալի կույտեր կան, վոր ակամա մտածում ես, թե այս մրրկաթափ չորուկներն այստեղ դարերով են ընկած: Սա ծառերի գերեզմանատուն է: Իրոք, ամբողջ բլրակի վրա վոչ մի կենդանի ծառ չկա, կենդանի յե միայն խոտը և այդ խոտերի վրա յերբեմն հատապտուղներ են հանդիպում:

Անտառը համարյա անանցանելի յե: Առանձնապես ծանր է, վոր համաչափ առաջ գնալ չի լինում: Յերբեմն հարկ է լինում անցնել ընկած ծառերի վրայով, յերբեմն էլ նրանք այնպես են կախված լինում, վոր սողալով անցնում եմ նրանց տակով: Տեղ-տեղ իրար վրա կուտակված ծառերի չոր ճյուղերը հյուսվել, խճճվել են իրար հետ և նրանց միջով գնալն անհնարին է լինում: Այդպիսի դեպքերում յես հանում եմ իմ վորսորդական դանակը, բաց եմ անում սղոցը, ճյուղը սղոցում եմ և ձեռքով կտրում: Այսպիսով ինձ համար ճանապարհ եմ բանում:

Հոգնել եմ: Ամեն անգամ մրրկաթափ ծառերն անցնելուց հետո մի քանի րոպե հանգստանում եմ: Բացի ինքս ինձ տանելուց, պետք է հետս տանեմ նաև հագուստեղենս: Յերբեմն շալակած եմ տանում, յերբեմն ուղղակի կապոցը նետում եմ առաջ, նա կախվում է ընկած ծառերից, հետո առաջ եմ գնում և յես:

Ինչ էլ վոր լինի, մինչև մութն ընկնելը պետք է հասնել յեզրին: Գնում եմ, գնում, բայց յեզերքը չի յերևում: Հարավ-արևմուտքում և հարավ-արևելքում լուսանցներ եմ նկատում: Բայց այնտեղից արջի մռնչոց է լսվում: Արջեր հարկավոր չեն: Հե-

ռու նրանցից: Մնում է գնալ դեպի հարավ-արևելք: Արդյոք այսօր գեթ անտառի յեզերքը կհասնե՞մ: Վո՛չ, այդ այնքան էլ հեշտ բան չի յերևում: Շուտով կմթնի: Վորոշում եմ գիշերել անտառում: Շուրջս չոր է, տաք: Յերկինքը պարզ է:

Գիշերը մի կտոր շոկոլադ կերա: Կարծում եմ, վոր այսուհետև յերեկոյան բաժինն ավելի պիտի փոքրացնել:

28 Սեպտեմբերի: Քայլելը հեշտացել է: Տայգան արդեն ինձ վորոշ բան սովորեցրել է: Մի կապոցից յերկու հավասար կապոցներ եմ շինել, իրար կապել և ուսս գցել: Այ, այժմ ավելի հեշտ է և հաճելի: Իմ առջև մի փոքրիկ գետակ կա, մոտ յերեք մետր լայնությամբ: Վոտքով անցնել չի լինի, խոր է, բացի այդ ջուրը սառն է: Հարկավոր է կամուրջ շինել: Մի քանի ձող քաշ տվի, գցեցի ափից-ափ: Հնարամտություն չէ, բայց վորքա՛ն ժամանակ գնաց դրա վրա: Ափսոս: Ինչ արած, տայգային պիտի հարմարվես: Գետակն անցա: Գետակի այն կողմը ճահիճ է, յերկար, յերկար ճահճուտ՝ անտառով շրջապատված:

Ամբողջ օրն անցնում է ճահճուտը հետազոտելով: Մի յերեք կիլոմետր անցա դեպի արևմուտք— վոչինչ չկա, միայն անտառն է շրջապատում ճահճուտը: Անցա դեպի արևելք, կրակեցի—պատասխան չկա:

Գլխովս ամեն տեսակ անհաճո մտքեր են անցնում: Աշխատում եմ հեռու վանել այդ մտքերը: Պետք է մտածել միայն այն մասին, վոր գնամ ու գնամ առաջ: Իմ հաշիվներով սավառնակը պետք է լինի այն բլուրների հետևը, վոր յես անցա յերեկ և այսօր: Բայց ո՞ւր է նա: Յեվ ճի՞շտ եր արդյոք, վոր յես կրակոցներ լսեցի: Գուցե ինձ միայն թվացե՞լ է: Վո՛չ, չի կարող լինել: Ընկերուհիներս վողջ են, յես նրանց կգտնեմ, անպայման կգտնեմ:

Մի քանի րոպեյով նստում եմ մի կոճղի վրա: Դրությունս խորհելով՝ վորոշում եմ գնալ դեպի արևելք: Այնտեղ, ճահճուտի այն կողմը հարթություն է յերևում: Այնտեղ յերևի այնքան էլ խրուտ չէ:

Վորքան դժվար է ճահիճով անցնելը: Աշխատում եմ քայլել նրա յեզերքով, բլրաշարքի յերկարությամբ: Բայց դաշտավայրը հեռու յե, այսօր հասնել չեմ կարող: Էլի մի անգամ բլրի տակ

րևութաբանական կայանի պետ Ալտովսկուն, վորը մեզ պատմում էր այս վայրերում մոլեգնող տայֆունի մասին: Յես գիտեմ, վոր բլուրն այս կողմից նայում է դեպի Եվորոն լիճը, ուստի քամին ազատորեն զբոսնում է բլրի վրա: Ի հարկե, այդ վիթխարի, ծանր ծառերը չեն կարող դիմանալ տայֆունի ճնշմանը: Հավանորեն հողը անձրևները հեղեղում են ծառերի արմատները, ուժեղ քամին նրանց բունը թեքում է ցած և նրանք տապալվում են գետին իրենց հողի հետ:

Անտառն այստեղ հոյակապ տպավորություն է թողնում: Դժվար է պատկերացնել, թե քանի տասնյակ տարի առաջ է այստեղ համատարած անտառ յեղել: Բայց այժմ իմ շուրջն այնպիսի զարմանալի կույտեր կան, վոր ակամա մտածում ես, թե այս մրրկաթափ չորուկներն այստեղ դարերով են ընկած: Սա ծառերի գերեզմանատուն է: Իրոք, ամբողջ բլրակի վրա վոչ մի կենդանի ծառ չկա, կենդանի յե միայն խոտը և այդ խոտերի վրա յերբեմն հատապտուղներ են հանդիպում:

Անտառը համարյա անանցանելի յե: Առանձնապես ծանր է, վոր համաչափ առաջ գնալ չի լինում: Յերբեմն հարկ է լինում անցնել ընկած ծառերի վրայով, յերբեմն էլ նրանք այնպես են կախված լինում, վոր սողալով անցնում եմ նրանց տակով: Տեղ-տեղ իրար վրա կուտակված ծառերի չոր ճյուղերը հյուսվել, խճճվել են իրար հետ և նրանց միջով գնալն անհնարին է լինում: Այդպիսի դեպքերում յես հանում եմ իմ փորսորդական դանակը, բաց եմ անում սղոցը, ճյուղը սղոցում եմ և ձեռքով կոտրում: Այսպիսով ինձ համար ճանապարհ եմ բանում:

Հոգնել եմ: Ամեն անգամ մրրկաթափ ծառերն անցնելուց հետո մի քանի րոպե հանգստանում եմ: Բացի ինքս ինձ տանելուց, պետք է հետս տանեմ նաև հագուստեղենս: Յերբեմն շալակած եմ տանում, յերբեմն ուղղակի կապոցը նետում եմ առաջ, նա կախվում է ընկած ծառերից, հետո առաջ եմ գնում և յես:

Ինչ էլ վոր լինի, մինչև մութն ընկնելը պետք է հասնել յեզրին: Գնում եմ, գնում, բայց յեզերքը չի յերևում: Հարավ-արևմուտքում և հարավ-արևելքում լուսանցներ եմ նկատում: Բայց այնտեղից արջի մռնչոց է լսվում: Արջեր հարկավոր չեն: Հեռու նրանցից: Մնում է գնալ դեպի հարավ-արևելք: Արդյոք այսօր գեթ անտառի յեզերքը կհասնե՞մ: Վո՛չ, այդ այնքան էլ հեշտ բան չի յերևում: Շուտով կմթնի: Վորոշում եմ գիշերել անտառում: Շուրջս չոր է, տաք: Յերկինքը պարզ է:

Գիշերը մի կտոր չոկոլադ կերա: Կարծում եմ, վոր այսուհետև յերեկոյան բաժինն ավելի պիտի փոքրացնել:

28 Սեպտեմբերի: Քայլելը հեշտացել է: Տայգան արդեն ինձ վորոշ բան սովորեցրել է: Մի կապոցից յերկու հավասար կապոցներ եմ շինել, իրար կապել և ուսս գցել: Այ, այժմ ավելի հեշտ է և հաճելի: Իմ առջև մի փոքրիկ գետակ կա, մոտ յերեք մետր լայնությամբ: Վոտքով անցնել չի լինի, խոր է, բացի այդ ջուրը սառն է: Հարկավոր է կամուրջ շինել: Մի քանի ձող քարշ տվի, գցեցի ափից-ափ: Հնարամտություն չէ, բայց վորքա՛ն ժամանակ գնաց սրա վրա: Ափսոս: Ինչ արած, տայգային պետք հարմարվես: Գետակն անցա: Գետակի այն կողմը ճահիճ է, յերկար, յերկար ճահճուտ՝ անտառով շրջապատված:

Ամբողջ օրն անցնում է ճահճուտը հետապնդելով: Մի յերեք կիլոմետր անցա դեպի արևմուտք— վոչինչ չկա, միայն անտառն է շրջապատում ճահճուտը: Անցա դեպի արևելք, կրակեցի—պատասխան չկա:

Գլխովս ամեն տեսակ անհաճո մտքեր են անցնում: Աշխատում եմ հեռու վանել այդ մտքերը: Պետք է մտածել միայն այն մասին, վոր գնամ ու գնամ առաջ: Իմ հաշիվներով սավառնակը պետք է լինի այն բլուրների հետևը, վոր յես անցա յերեկ և այսօր: Բայց ո՞ւր է նա: Յեվ ճի՞շտ եր արդյոք, վոր յես կրակոցներ լսեցի: Գուցե ինձ միայն թվացե՞լ է: Վո՛չ, չի կարող լինել: Ընկերուհիներս վողջ են, յես նրանց կգտնեմ, անպայման կգտնեմ:

Մի քանի րոպեյով նստում եմ մի կոճղի վրա: Դրությունս խորհելով՝ վորոշում եմ գնալ դեպի արևելք: Այնտեղ, ճահճուտի այն կողմը հարթություն է յերևում: Այնտեղ յերևի այնքան էլ խորուտ չէ:

Վորքան դժվար է ճահճով անցնելը: Աշխատում եմ քայլել նրա յեզերքով, բլրաշարքի յերկարությամբ: Բայց դաշտավայրը հեռու յե, այսօր հասնել չեմ կարող: Եթե մի անգամ բլրի տակ

կդիշերեմ: Ուտում եմ շոկոլադի նվազեցրած բաժինը և պառկում քնելու:

Այսօր ունտերս չոր են, վորովհետև հաջողվել է խուսափել ճահիճով քայլելուց:

29 Սեպտեմբերի: Քնեցի խոր, առանց յերազների: Գիշերը վոչ մի անգամ չարթնացա և վոչ մի բան ինձ չանհանգստացրեց: Սովորականի պես արթնացա լուսաբացին և ինքս ինձ հրահանգեցի.

— Մարինա Միխայլովնա, գնա՛նք:

Վրայիցս հանում եմ տաք շորերը, վորոնց մեջ քնել եմ, և նորից ճանապարհ եմ ընկնում միայն սպիտակեղենով: Պետք է վոր լավ տեսք ունենա շտուրմանը:

Վերջապես այսօր կվերջանա՞ իմ արշավը: Ինչո՞ւ սավառնակներ չեն թռչում: Ինչպես յերևում է «Ռոդինայի» ռադիոկայանը չի աշխատում: Ի՞նչ է պատահել այնտեղ:

Վայրի բադերի մի յերամ թռչում է դեպի հարավ-արևմուտք: Շուրջս պտտում են փոքրիկ գորշագույն թռչնիկներ, վորոնց պոչը դեղին է: Խիտ շատ սկյուռ կա: Նրանք վազվզում են, ճյուղերի վրա թռչկոտում, բարձր ճչում: Ի՛նչ լավ է սկյուռների համար. նրանք իրենց տանն են...

... Ինչո՞ւ յես Պոլինային չասացի, վոր վայրէջքի ժամանակ ցնցումից կվարցները կարող են ընկնել իրենց բնիկից: Յերևի դրա համար էլ չի աշխատում ավարիային ռադիոկայանը: Քանի վոր մեզ մոտ չեն թռչում, նշանակում է հաղորդիչը չի գործում:

Կեսօր է: Սավառնակի մոտոր է աղմկում: Աղմուկը հեռվից է գալիս: Յես չեմ տեսնում, թե վորտեղ է թռչում սավառնակը: Մի քանի րոպեից հետո աղմուկը դադարում է և էլի վոչինչ չկա...

Օրը վերջանալու մոտ է: Իմ առջև փռված է ճահճոտ դաշտը: Բլուրներին ու լեռներին նայելով՝ մտաբերում եմ, չէ՞ վոր սա հենց այն դաշտն է, վորի վրայով մենք թռանք: Այստեղ, մոտերքում յերկու լիճ պիտի լինեն, մեկը մյուսից մի քիչ մեծ: Այժմ արդեն հեշտ է կողմնորոշվել, հեշտ է հասկանալ, թե յես

վորտեղ եմ ընկել: Հազիվ թե այստեղ իջած լինի սավառնակը: Կսպասեմ մինչև առավոտ, հետո կվորոշեմ, թե ինչ անեմ:

30 Սեպտեմբերի: Առավոտյան արթնանալուց մտածում եմ, վոր շատ հաճախ եմ փոխում իմ ուղղությունը: Այսպես հո կարելի յե վերջնականապես մոռանալ, թե ուր ես գնում: Վորոշում եմ նկարել իմ անցած ճանապարհի սխեման և այնտեղ նշանակել բլուրների ու ճահիճների սահմանները: Բայց թո՞ւղթ վորտեղից: Շոկոլադի փաթեթից բացի վոչինչ չկա: Նրա վրա նկարում եմ առաջին օրերին իմ անցած ճանապարհի սխեման: Նոր վորոշում եմ անում. վորոնել այն ձյունապատ սարը, վորի մոտ յես պարաշյուտով դուրս թռա: Այդ սարը մոտերքում պիտի լինի: Յեթե անցնեմ ճահճուտի այն կողմը, հավանորեն կբացվի այդ լեռան շղթան:

Պարզ է, վոր յես այն ուղղությամբ չեմ գնում: Վորտե՞ղ է ուրեմն իմ «Ռոդինան»: Վորտե՞ղ են Վալյան ու Պոլինան: Հիմա հավանորեն մտածում են, թե՝ կորավ մեր Մարինան... Այսօր հինգ օր է, վոր մենք բաժանվել ենք: Ըստ յերևույթին կրակոցների արձագանքը խաբել է ինձ: Բայց ո՞ւր վերադառնալ:

Վերջին յերկու օրը յես քայլում եմ ճահճուտի յերկարությամբ, բլուրների յեզերքով: Ուղիղ դեպի հարավ, ճահճուտի միջով տեսնում եմ բլուրների յերկրորդ շարքը: Նրանք փակում են իմ հորիզոնը: Նշանակում է պետք է գնալ ճահճուտի միջով, բլուրներից հեռու: Այն ժամանակ հորիզոնը կբացվի և յես հավանաբար կտեսնեմ իմ ձյունապատ սարը: Քայլում եմ թմբերի վրայով, նրանց արանքում ջուր կա: Ունտերս թրջվեցին, վոտքերս նույնպես:

Լավ կլիներ գիշերվա համար խարույկ վառել, բայց ինչի՞ց: Շուրջս ճահիճ է: Ընտրում եմ այնպիսի տեղ, վորտեղ ավելի շատ թմբեր կան: Վոտքերս հանում եմ, փաթաթում ճահճային խոտով, վրայից հագնում եմ խոնավ գուլպաներս, ապա սաղավարտս հանելով յերկու վոտքերս էլ փաթաթում եմ նրանով: Այս գիշեր պետք է զգաստ լինեմ. շուրջս ճահիճ է: Մի անզգույշ շարժում—և յես ջրի մեջ կլինեմ:

1 Հոկտեմբերի: Գիշերը շատ ցուրտ էր: Արթնացա, սառնա–

մանիք է: Ունտերը, վոր ընկած եյին կողքի թմբին, պաղել ու ամրացել են, կացնով էլ չես կտրի, հագնել հնարավոր չէ:

Ճահիճը ծածկվել է սառցե կեղևով, խոտը՝ յեղյամով: Ունտերը թրջելու համար ջուր է հարկավոր: Կոտրում եմ սառցի բարակ կեղևը, ունտերը ջուրը կոխում: Մի ամբողջ ժամ է տևում, մինչև ունտերի սառույցն այնքան է հալվում, վոր կարելի լինի հագնել: Այս անգամ քայլում եմ լիակատար զինաթափված: Թաց վոտնամանիս պատճառով շատ ցուրտ է ու խոնավ:

Թմբից թումբ եմ քայլում: Ճահիճը ծածկված է գոտկատեղս հասնող խիտ խոտով: Գնում եմ առանց նայելու, թե ինչ կա վոտքերիս տակ: Բայց, ըստ յերևույթին տայգան վորոշել է ինձ հետ կատակ անել: Հանկարծ մինչև վիզս ջրի մեջ եմ ընկնում: Զգում եմ, վոր վոտքերս ծանրացել են և կշռաքարերի պես ինձ դեպի ցած են քաշում: Վայրկենապես ամեն ինչ վրաս թրջվեց: Ջուրը սառն է սառցի պես: Տայգայում թափառելուս ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ ինձ միայնակ եմ զգում: Վոչ վոք ջրից դուրս չի քաշի. պետք է ինքս փրկեմ ինձ: Լող տվի: Լողում եմ ու թմբից կառչում: Բռնում ես թմբից, բայց նա էլ քեզ հետ ջրի տակն է անցնում: Միտս է գալիս «Աղջիկը Կամչատկայից» կինոֆիլմի մի տեսարանը և գործում եմ ճիշտ այնպես, ինչպես այդ կինոնկարի հերոսուհին: Փայտս բռնում եմ յերկու ձեռքով, ապա միանգամից մի քանի թմբի վրա դցում և այդպիսով առաջ նետվում: Մեծ դժվարությամբ հաջողվում է ջրից դուրս գալ: Նայում եմ հետ. իմ հետևը մոտ տաս մետր լայնությամբ մի լճակ է: Ըստ յերևույթին այստեղ հողի տակ գտնվող հավերժական սառույցը հալվել է և ստորերկրյա ջուր առաջացրել: Խոտով ծածկված մամռակալած հողի բարակ շերտը չի դիմացել իմ ծանրությանը, հողը խորասուզվել է և իր տեղը զիջել ստորերկրյա ջրին: Այժմ այստեղ ընդմիշտ լիճ կմնա: Նրա յեզրերը դուրս գալով՝ յես վախենում եմ ամբողջ հասակով կանգնել: Չլինի՞ թե հանկարծ իմ ամբողջ ծանրությունը միայն մեկ թմբի վրա ընկնի, և յես կրկին խորասուզվեմ: Լճակից հեռու յեմ սողում: Վերջապես վոտքերիս տակ ամուր գետին եմ զգում և վոտքի յեմ կանգնում:

Վրաս ամեն ինչ թաց է—մորթին, կաշվե բաճկոնը... Բոլոր կողմերիցս ջուր է հոսում: Զենքս թաց է, ժամացույցս թաց, հարկադրված եմ իջևանել:

Բայց ինչպե՞ս չորերս չորացնեմ այդ ճահճում: Դեռ լավ է, վոր օրն արևոտ է և թեթև քամի յե փչում: Ցեղենու մի կոճղ գտա: Նրա վրա փռեցի չորերս ու սպիտակեղենս: Հերթով չորացնում եմ և հագնում: Չորացնելը շարունակվում է ամբողջ օրը մինչև յերեկո:

Բայց դա կես դժբախտությունն է: Ամենավատն այն է, վոր շոկոլադի պաշարս սկսում է պակասել: Պարզ կերպով չի բավականացնի, յեթե էլի մի քանի օր այստեղ թափառելու լինեմ: Այսօր յես, կարելի յե ասել, հանգստանում եմ: Եներգիաս պահպանվել է, նշանակում է շոկոլադից կարելի յե ուտել օրական մեկ անգամ:

Տնտղում եմ անդրավարտիկիս գրպանները: Վորպիսի՜ ուրախություն: Ուտելիքի մեծ պաշար եմ գտել— ամբողջ յոթ հատ անանուխակոնֆետ: Դրանք սովորական բլիթներ են, վորպիսիք վաճառվում են Մոսկվայի յուրաքանչյուր անկյունի կրպակներում: Բայց նրանց մեջ շաքար կա, սննդարար նյութ, և յես այնքան եմ ուրախ, կարծես ամբողջ փրկությունը հենց այդ բլիթների մեջ է: Այժմ ընթրիքի համար հետ եմ գնում մեկական բլիթ, իսկ շոկոլադի մնացորդները բաժանում եմ նախաճաշերի ու ճաշերի:

Մինչև արևը մայր մտնելը չորերս չորացան: Այսօր կարելի յեր էլի յերկու կիլոմետր անցնել, բայց յես ճահճում լողանալուց այնպես եմ սառել, վոր վոչ մի կերպ չեմ ուզում կրկնել այն: Ավելի լավ է՝ հենց այստեղ կգիշերեմ:

2 հոկտեմբերի: Գիշերը ճահիճն ավելի յե սառել: Արթնացա շատ ավելի շուտ, մինչև արևածագ. ժամանակ կորցնել չի կարելի, հարկավոր է գնալ, քանի ճահիճը սառած է:

Կեսօրին մոտ անցնում եմ բլրաշարքը: Հյուսիս-արևմուտքում իմ առջև բացվում է բլուրների ու լեռնաշղթաների մի գեղեցիկ տեսարան:

Յերևում են յերկու շարք, վորոնք թամբի ձև ունեն: Առաջինը՝ մոտիկ թամբն ավելի կանաչ է: Յերևի դրանք սոճիներ

են: Տեղ-տեղ յերևում են յեղևնու մուգ կետեր, տեղ-տեղ էլ փայլփլում են բոլորովին վոսկեգույն յեղևնիները: Առջևի չար-քի հետևը յերևում է բլուրների յերկրորդ շարքը, վոր նույն-պես թամբանման է: Յես հիշում եմ, վոր դա այն բլրաշարքն է, վորի վրա յես հանդիպեցի մրրկաթափ ծառերին. նա վոս-կեգույն է յերևում:

Յերկու բլրաշարքերի թամբերի հետևը յերևում է ձյունա-պատ սարը: Յես այն ճանաչում եմ գագաթի բնորոշ կլորու-թյունից:

Վերջապես, ահա նա, իմ սարը: Նորից ստուգում եմ ուղղու-թյունը: Հարկավոր է գնալ ճիշտ դեպի հյուսիս-արևմուտք: Վոչ մի շեղում ու թեքում, թե չէ անխուսափելիորեն կմոլորվես և անվերջ կթափառես տայգայում:

Հասա մի անտառի կղզյակի: Ճահճից հետո նա շատ հաճելի յե թվում: Այստեղ գոնե չոր է, կարելի յե պառկել հանգստա-նալու: Մոտենում եմ կղզյակին: Մինչև մութն ընկնելն էլի յեր-կու ժամ կա: Աչքով չափում եմ մինչև մոտակա բլրաշարքը յե-ղած տարածությունը՝ չորս կիլոմետր կլինի: Յերկու ժամում չես գնա, իսկ յեթե գնաս, նորից կխրվես ճահճի մեջ:

Մնում եմ գիշերելու կղզյակում:

Ժամանակ շատ ունեմ: Հապա մի վորոնեմ ծառերի տակ: Գուցե թե վորևէ ուտելու բան գտնեմ:

Ուռա՜, սունկեր, իսկական ուտելի սունկեր, խոշոր, ամուր սունկեր: Դրանցից հիանալի ընթրիք կարելի յե պատրաստել:

Բայց հիմա յես շատ հոգսեր ունեմ. վորտեղի՞ց աղ ճարեմ, ինչով պատրաստեմ սունկերը: Յեվ արդյոք կհաջողվի՞ կրակ վառել:

Շուրջս խոնավ յեղևնի յե և մեջը փտած կեչի: Զարմանալի ծառ. կանգնած է միայն կեղևի ուժով: Դե, ինչ արած, Մարինա Միխայլովնա, զբաղվեցեք մթերումներով: Զինվում եմ դանակով և սկսում եմ յեռանդով կտրել կեղևը: Յերբ բավականաչափ կեղև հավաքվեց, հարց առաջացավ ինչի մեջ տապակել սունկերը և ինչո՛վ համեմել: Խոտի մեջ գտնում եմ կոշտ ու բուրավետ տերևներ: Կեչու կեղևը թրջեցի, նրանից տուփ պատրաստեցի, վոր բավական պինդ եր և ջուր եր պահում, ապա սկսեցի կրակ վառել: Լուցկին հանեցի, նայեմ՝ այնքան էլ շատ չի մնացել: Լուցկին չխկացրի, մոտեցրի կեղևին: Նախապես զգում եմ իս-կական տաք ուտելիքի հաճույքը: Լուցկին դրի իմ կողքին, խոտի վրա: Հանկարծ, միանգամայն անսպասելի կերպով բռնկվեց դարսված ամբողջ կեղևը և նրա շուրջը յեղած խոտը: Բոցն այնքան արագ տարածվեց, վոր յես հազիվ կարողացա հետ ցատկել: Մինչև գլխի ընկա թե ինչ պատահեց, կրակին զոհ գը-նաց իմ ամբողջ լուցկին: Սկսվեց իսկական տայգային հրդեհ: Կրակն սկսեց ողակաձև տարածվել ամբողջ անտառի շուրջը:

Մնաս բարև, համեղ ընթրիք. մնաս բարև, չոր տեղ քնել:

Թշվառ ալետայլը հավաքում է իր ունեցած-չունեցածը և փախչում ճահիճ:

Հրդեհից նոր եյի մի քառասուն մետր հեռացել, յերբ տեսա, վոր ուղիղ իմ գլխավերևը մի սավառնակ է թռչում: Յես նրանից 2000 մետր հեռու յեմ, բայց ոդաչուն հավանորեն տեսնում է իմ վառած հրդեհը. ուժեղ քամին ծուխը փռում է ճահճի վրա:

Ահա սավառնակն իջնում է 600 մետրի վրա և հրդեհի գըլ-խին մի քանի շրջան է գործում: Հարկավոր է ոդաչուին ցույց տալ, վոր այստեղ մարդ կա: Շտապ հանում եմ սվիտերս, յեղե-րյան սպիտակեղենս, այդ բոլորը փռում եմ ճահճի վրա և ինքս էլ մետաքսե սպիտակեղենով պառկում եմ գետնին: Սավառնակն էլի մի քանի շրջան է գործում և թռչում է դեպի հարավ:

Ի՞նչ արած: Անցնեմ էլի մի քանի կիլոմետր: Նորից շարժ-վում եմ իմ ուղղությամբ, դեպի հյուսիս-արևմուտք, ձյունա-պատ սարի կողմը: Մինչև աղջամուղջն ընկնելը հրդեհի տեղից յերեք կիլոմետր հեռացա: Ճահճուտում պատահում են մանր թփեր: Ճյուղերից բավական տանելի անկողին եմ պատրաստում: Պառկում եմ քնելու լիովին հավատացած, վոր քանի վոր սավառ-նակը կրակն ու ծուխը տեսավ, նշանակում է վաղը նորից այստեղ կթռչի և ինձ կգտնեն:

Քնելուց առաջ մի անանուխե բլիթ եմ ուտում:

3 հոկտեմբերի: Առավոտյան արթնանալով մտածում եմ. արժե՞ արդյոք սավառնակից ոգնություն սպասել այստեղ, թե՞ շարունակեմ առաջ շարժվել: Շոկոլադ քիչ է մնացել, ճահճու-տում սնունդի պաշարը լրացնել չես կարող, իսկ յերեկվա սա-

սավառնակն էլ վոչնչով ցույց չտվեց, թե ինձ նկատել է: Գուցե օդաչուն միայն ծուխն է տեսել, իսկ ինձ նկատել չի հաջողվել նրան: Վոչ, ավելի ճիշտ կլինի շարժվել դեպի ձյունապատ սարը: Աշուն է, յեղանակը վորտեղ վոր է կվատանա, հեղեղներ կսկսվեն: Այն ժամանակ ի՞նչ պիտի անեմ յես միայնակ, ճահճում:

Նորից ճանապարհ եմ ընկնում: Մի ժամից հետո հասնում եմ բլուրներին: Որն անցնում է բլրաշարքն անցնելով և յերկու կիլոմետրանոց ճահճուտ անցնելով: Այդ այն նույն ճահճուտն է, վորի մոտ յես արդեն յերկու օր թափառել եմ:

Դուրս եմ գալիս դեպի ծանոթ բլրաշարքը. նրա մոտ յես պարաշյուտով ցած իջա: Հանկարծ տեսնում եմ օդում յերկու սավառնակ: Նրանք թռչում են տարբեր ուղղություններով, վորոշակի կերպով ինչ-վոր բան են վորոնում ցածում:

Ճահճուտից յես դուրս յեկա դեպի արևմուտք այն մրրկաթափ ծառերից, վորտեղով մի անգամ արդեն ճամփորդել եյի: Ընկա ուղիղ այն տեղը, վորտեղից մի քանի օր առաջ արջի մռնչոց եր հասնում ինձ: Վոր այս տեղերում արջեր կան, յես չեմ կասկածում, ծառերի բները հենց նոր կրծմրծված են: Շուտով ամբողջ թուփ: Արոս հավաքում եմ, վորքան կարողանում եմ՝ քիչ առաջ գնացի, մինչցն ավելի ուժեղացավ: Հայրի վառոցին ավելացավ նաև փշրվող ճյուղերի ճրթճրթոցը...

Բավական հոգնել եմ: Հանկարծ հանդիպում է արոսի մի ամբողջ թուփ: Արոս հավաքում եմ վորքան կարողանում եմ. թաշկինակիս մեջ, գրպաններում: Կուշտ ուտում եմ, զարմանալի թարմացնում է: Լավ տեղ է: Վորոշում եմ այստեղ էլ գիշերել: Բայց հարկավոր է արջերի դեմ վորևե միջոց ձեռք առնել: Կըքնես, մեկ էլ այդ սև վիթխարին կմոտենա և կհետաքրքրվի, թե այդ ինչ անձնավորություն է մտել նրա տիրապետության մեջ: Մուշտակս կոճկում եմ, գլուխս խցկում օձիքի մեջ, կծկվում: Բայց քնել չեմ կարողանում: 30 մետրի վրա մի փոքրիկ արագահոս գետակ կա: Ամբողջ գիշերը գետակի այն կողմում հոգեմաշ կերպով մլավում են լուսանները: Ժամ առ ժամ ծանրանում է: Յես գովական վորսորդ չեմ, իսկ ամենավատն այն է, վոր իմ «վալտեր»-ի պահունակի մեջ մնացել ե ընդամենը չորս փամ-

փուշտ: Մնացածը կրակել եմ առաջին օրերը, յերբ հույս ունեյի, թե իմ կրակոցները կլսեն: Լուսանները շարունակում են մլավել ուժեղ ու զզվելի ձայնով, ինչպես կռվող կատուները: Բայց, բարեբախտաբար նրանք, ըստ յերևույթին, վոչ մի կերպ չեն կարող գետն անցնել ու ինձ մոտ գալ:

Գիշերը մի քանի անգամ արթնանում եմ: Տայգայում կատարյալ լռություն է: Ուղիղ իմ վերևը մի գեղեցիկ ծառ կա, վորի ճյուղերի արանքով յերևում է պարզ աստղաշատ յերկինքը: Յես գոհունակությամբ մտածում եմ, վոր յեղանակը դեռ չի վատանալու: Ըստ յերևույթին վաղն անձրև չի լինելու: Մի քանի անգամ կողքից կողք եմ շուռ գալիս: Աջ փոքիս վրա յեմ պառկել, սկսել է մի քիչ մրմռալ: Ամեն անգամ, յերբ աչքերս բաց եմ անում, շուրջս եմ նայում: Շուրջս խավար է, վոչինչ չի յերևում: Միայն իմ վերևը պայծառորեն փայլում են աստղերը: Յես սկսում եմ դիտել: Գտնում եմ Փոքր արջի համաստեղությունը, Բևեռային աստղը: Աննկատելիորեն քնում եմ:

4 հոկտեմբերի: Շոկոլադը վերջանում է: Մնացել է միայն մի նեղ շերտ: Մի ժամանակ այսքանը միայն նախաճաշի բաժինն եր, իսկ այժմ ստիպված եմ ամբողջ օրվան հատկացնել այդ շերտի կեսը: Հիշում եմ, վոր առաջին օրը կերա կես սալ շոկոլադ և շատ եմ ափսոսում: Բայց յես ունեմ ելի մի քիչ արոս, ճանապարհին հանդիպում է լոռամրգի և ելի թխենու նման մեկ տեսակ հատապտուղ: Սոսկալի խմել եմ ուզում: Այդ հատապտուղը կերա, կարծում եյի թե ծարավն ավելի քիչ կտանջի, բայց նա միայն ցամաքցրեց բերանս և ատամներս առնվեցին:

Կողմնացույցի հետ ինչ-վոր տարօրինակ բան է տեղի ունենում. նա խիստ շեղումներ է տալիս: Անպայման մոտերքում մագնիսային յերկաթահանք կա: Մի կետում կողմնացույցի սլաքը հանկարծ սկսեց լարած հոլի պես պտտվել իր առանցքի շուրջը: Այժմ ստիպված եմ կողմնացույցն ստուգել ըստ արևի ու ժամացույցի:

Գնում եմ: Հանկարծ իմ գլխավերևը յերևում է մի ծանր սավառնակ: Նա թռչում է իմ ուղղությամբ, յերկու շրջան է գործում ու հետ թռչում: Անցնում է մի քիչ ժամանակ, տեսնում եմ՝ ելի մի սավառնակ: Սա ևս թռչում է այնտեղ, շրջան գոր-

ծում ու անհայտանում: Լավ է: Այժմ ես հավատացած եմ, որ «Ռոդինա» սավառնակը գտնված է և ես ճիշտ ուղղությամբ եմ գնում:

Բարձրանում եմ վերև, դեպի բլուրները, դեպի խուլ անտառը: Երեկոյան դեմ իմ գլխավերևը կրկին մի ծանր սավառնակ է երևում: Նա վիրաժներ է անում և թռչում դեպի հյուսիս:

Սոսկալի քնել եմ ուզում:

Տայգայով առաջ գնալիս ես շարունակ կոտրվող ճյուղերի ճրթճրթոց եմ լսում: Այժմ էլ այդպիսի ճրթճրթոց եմ լսում ինձնից ոչ հեռու: Գուցե մա՞րդ է: Բայց ես լսում եմ: Կանգ եմ առնում, որպեսզի ձայներն ավելի պարզ լսեմ: Լսում եմ, իրոք, ինչ-որ մեկը գալիս է և ճյուղերը կոտրում: Բայց, ըստ երևույթին, այդ անհայտ քաղաքացին էլ որոշեց ականջ դնել: Խորին լռություն է տիրում: Ուշադիր նայում եմ առաջ, չլինի մարդ է, պետք է երևա թփերի հետևը, բայց ես ոչ ոքի չեմ տեսնում: Ըստ երևույթին նա էլ ականջ է դնում: Եվ ահա, մի տասնհինգ մեռոցի վրա թփերի միջից բարձրանում է մի արջ, բրդոտ սև արջ: Նա կանգնում է հետևի թաթերի վրա: Առջևի թաթերը կախված են բավական անօգնական: Նա քիթը դես ու դեն է դարձնում ու հոտոտում: Սոսկալի կերպարանք ունի: Ես արջին արժանի գնահատական եմ տալիս և զգում եմ, որ գերակշռությունն իմ կողմը չի. նա շատ ավելի լուրջ տեսք ունի, քան ես: Նրա հետ ձեռնամարտի մեջ մտնել չարժե: Բայց հիշում եմ, որ ես այնքան էլ թույլ չեմ, ես զենք ունեմ՝ «վալտերը» և դանակը: Սկսում եմ խորհել, թե ինչպես պետք է վարվեմ այդ արջի հետ. դանակը կբռնեմ ձախ ձեռքիս... Վալտերը՝ աջ: «Վալտերը հանում եմ պատյանից, փողը քաշում եմ ու պատրաստվում կրակելու. գնդակը բերանին, դանակը կոկորդին. ահա, սատկած արջն ընկած կլինի իմ ոտքերի տակ: Բայց արջը երկու քայլ է անում դեպի առաջ և դանակն ու «վալտերը» մի տեսակ իրենք իրենց ցած են ընկնում: Նորից մի քիչ սրտապնդվելով «վալտերը» բարձրացնում եմ, բայց կրակում եմ առանց նայելու, որտեղ պատահի: Իսկ ինքս սկսում եմ փախչել:

Հետևս լսում եմ կոտրվող ճյուղերի ճրթճրթոցը: Վազելով հետ եմ նայում. խեղճ արջուկ, նա իր չորս թաթերի վրա դես ու դեն հակվելով ամբողջ ուժով փախչում է, ճանապարհին հետքեր թողնելով... Բայց այդ ինձ չի հանգստացնում: Ես շարունակում եմ վազել հակառակ ուղղությամբ...

Վերջապես բարձրացա ամենաբարձր բլրի գլուխը: Ծույլ արջերն այստեղ չեն հասնի: Տեղավորվում եմ քնելու և օրվա դեպքերից հոգնած՝ խոր քուն եմ մտնում:

5 հոկտեմբերի: Այդ գիշեր ես երազ տեսա: Իբր թե տայգայում թափառում եմ և հանկարծ ընկեր Ստալինը մոտենում է ինձ ու ասում. «Ընկեր Ռասկովա, այստեղ, տայգայում իմ ավտոմեքենան է կանգնած: Օգնեցեք ինձ գտնել այն»: Ընկեր Ստալինը բռնում է ձեռքս և մենք նրա հետ արագ առաջ ենք շարժվում տայգայով: Երբեմն ծառերի արանքով աչքիս կապույտ ցոլքեր են երևում, ինձ թվում է, թե այդ հենց ընկեր Ստալինի մեքենան է, ես նրան այնտեղ եմ տանում: Բայց այնտեղ ոչ մի մեքենա չի լինում: Ընկեր Ստալինը քայլում է և կատակում. «Այ քեզ շտուրման, չի կարողանում մեքենան գտնել տայգայում: Էլ ինչ շտուրման եք դուք»: Ես շատ եմ ամաչում, որ չեմ կարողանում ընկեր Ստալինի մեքենան գտնել: Մեզ մի քարքարոտ բլուր է հանդիպում, ես ուզում եմ ընկեր Ստալինին օգնել, որ բարձրանա նրա վրա, բայց նա հրաժարվում է իմ օգնությունից. «Մի՛ անհանգստանաք, ես ճարպիկ եմ, ես լեռներում եմ մեծացել: Բայց այ, որ դուք իմ մեքենան չեք կարողանում գտնել, այդ շատ վատ է»:

... Քնի մեջ շատ լավ լսում եմ կրակոցներ: Մեկ, երկու, երեք, չորս, հինգ կրակոց: Բարձրանում եմ, նստում ու ականջ դնում: Արդեն լույս է: Կապույտ երկինքը վարդագունում է: Ոչ ոք չկա: Քար լռություն է:

Գլուխս ձեռքերիս հենած նստել եմ ու մտածում եմ. «Ամոթ չէ՞, ես շտուրման եմ և սավառնակը գտնել չեմ կարողանում»: Երազս մանրամասն հիշում եմ, մտածում եմ. միթե՞ իմ մեջ հալյուցինացիա յե սկսվել. միթե՞ հինգ կրակոցները թվացին ինձ:

Այլևս քնել չարժե: Դժկամությամբ պատրաստվում եմ ճանապարհ ընկնելու: Հանկարծ կրակոցները կրկնվում են: Մեկ,

յերկու, յերեք, չորս, հինգ: Նշանակում է՝ սա յերազ չէ: Վորտեղից վորտեղ ուժեր են հավաքվում, յես արագ վոտքի յեմ թռչում և կողմնացույցը հանում:

Պարզում եմ կրակոցների ուղղությունը: Դա համընկնում է իմ վերջին ուղղությանը: Ինձ թույլ եմ տալիս ուտել մնացած շոկոլադի կեսը՝ քառորդ մասից: Մի րոպե անց ելի յերեք կրակոց է լսվում: Դրանք լսվում են մի քիչ այլ ուղղությամբ, բայց շատ մոտիկ: Յերկու ուղղությունների միջև մոտ 25 աստիճան բացվածք կա: Վերցնում եմ միջին ուղղություն և գնում: Քայլելը հեշտ չէ: Արևն սկսում է վառել: Մորթե հագուստս քարշ տալն ավելի յե դժվարացել:

Իջնում եմ մի լանջով: Յերկնքում մոտորի ձայն է լսվում: Նա ինձ քաղցր յերաժշտություն է թվում: Մոտ թռավ այն ծանըր ողանավը, վոր յերեկ յես արդեն տեսել եմ: Այստեղ նա շատ ավելի շուտ է յերևացել: Ինչ կա վոր, բարի գալուստ: Կանգ եմ առնում ու դիտում սավառնակը: Նա շրջաններ է գործում միևնույն տեղի վրա, գազը պակասեցնում է, իջնում և անցնում խուզող թռիչքի:

Ելի հինգ կրակոց: Նրանք գալիս են հենց այն կողմից, վորտեղ սավառնակն է թռչում: Այժմ արդեն յես գիտեմ, վոր «Ռոդինան» գտել են: Իմ Վալյան ու Պոլինան այս տեղերն են, շատ, շատ մոտիկ: Գնալ, գնալ առանց կանգ առնելու:

Կես ուղին մոտ անտառը նոսրացավ, առաջ գնալը հեշտացավ: Ժամանակ առ ժամանակ դեռ կրակոցներ եմ լսում: Ինչ են այդպես առատ առատ կրակում: Յերևի սավառնակը ժամփուշտ է դցել նրանց համար...

Շարունակ իմ ուղղությունը համեմատում եմ և բուն կրակոցների ուղղում: Դուրս եմ գալիս անտառի յեզերքը և առաջ գնում նրա յերկարությամբ: Ձախ կողմը ձգված է մի յերկար ճահճուտ: Խոնավ է:

Հանկարծ վոտքս ջրի մեջ ընկավ: Դուրս քաշեցի և տեսա, վոր բոլորովին բոբիկ եմ: Ունտը գուլպայի հետ մնացել էր ճահճի մեջ, նա գնաց անդառնալի կերպով: Հավանորեն այն բարը, վորով ունտերը կապել էյի, մորթին կտրել էր: Առաջ եմ գնում: Շատ արագ եմ ուտում: Գիտեմ, վոր ամենաուշը մեկ

որից հետո լինելու յեմ իմ սավառնակի մոտ: Կարելի յե շռայլություն թույլ տալ, մի բուռ համեղ տափի պտուղ ուտել: Պայուսակիս մեջ յես դեռ ունեմ շատ պարս, կես անանուխաբլիթ և քառորդ մասից շոկոլադ:

Խիստ շոգ սկսվեց: Վորոշեցի դադար առնել: Պառկեցի հանգստանալու: Բոբիկ վոտքս բաճկոնով ծածկեցի և հաճույքով ձգվեցի:

Մեջքիս վրա պառկած՝ յես դիտում էյի տայգայի դյութիչ բնությունը: Պառկած էյի յեղևնու անտառում: Ծառերի բարձր ու մերկ բները բարձրացել էյին նավի կայմերի նման: Նրանք վերջանում էյին վերը վոսկեգույն ճյուղերի պսակով: Ճյուղերի արանքով յես տեսնում էյի պայծառ-կապտավուն, հանդարտ ու անամպ յերկինքը: Յեղևնիների պսակը վողողված էր արևի շողերով և այդ ամբողջ կախարդական տեսարանը ինձ հիշեցնում էր հին իտալական նկարիչների լավագույն նկարները:

Մոծակների աղմուկը ինձ իրականությանը վերադարձրեց: Նորից սավառնակը յեկավ և սկսեց խուզող թռիչք գործել ինձ բոլորովին մոտիկ, անտառի այն կողմը: Վեր եմ կենում ու քայլում դաշտի յերկարությամբ: Շրջանցում եմ անտառի անկյունը և հանկարծ հեռվում տեսնում եմ իմ «Ռոդինայի», իմ գեղեցկուհու արծաթափայլ շողշողուն պոչը:

Հուզված և ուրախ առաջ եմ շտապում, աշխատելով տեսնել, թե ինչ է կատարվում մեր մեքենայի մոտ: Տեսնում եմ, վոր այնտեղ յերկու հոգի չեն, այլ ավելի:

Հաշվում եմ, վոր մինչև «Ռոդինա» դեռ 2–3 կիլոմետր կա: Այդ նշանակում է յերեք ժամվա ճանապարհ ճահճի միջով: Իմ առաջին միտքն է լինում՝ գիշերել անտառի յեզերքին և վաղ առավոտյան, լուսաբացին, յերբ դեռ ճահիճը սառած կլինի և իմ ընկերուհիները քնած կլինեն, աննկատելի կերպով մոտենալ սավառնակին: Բայց յես տեսա, վոր մի խումբ մարդիկ հեռանում են սավառնակից: Նրանք գնում են: Յեվ իրոք. ո՞վ կարող է մտածել, թե յես կենդանի յեմ. չէ՞ վոր արդեն տասն որ է, ինչ յես կորած եմ տայգայում մենակ, յերկու սալիկ շոկոլադով: Հավանորեն այդպես էլ վորոշել են, թե Մարինան կենդանի չէ յինի: Յեվ շարժվել են դեպի գետը...

Անտառի յեզրին գիշերելու միտքը միանգամից վերանում է։ Բոլոր ուժերս լարում եմ, վորպեսզի շուտ հասնեմ սավառնակին։

Ատրճանակս բարձրացնում եմ գլխավերևս և յերկու անգամ կրակում։ Քամին կրակոցը մի կողմ է տանում, վոչ վոք չի լըսում։ Վոչ վոք ինձ վրա ուշադրություն չի դարձնում։ Լավ, մտածում եմ, թող մի ձեռ հասնեմ...

Արագ շարժվում եմ դեպի սավառնակը։ Այժմ արդեն նկատում եմ, վոր մարդկանց խումբը վոչ թե հեռանում է սավառնակից, այլ, ընդհակառակը, հակառակ կողմից մոտենում է «Ռոդինային»։ Պարզ է, վոր այդ գետնի վրա վորոնող մարդկանց խումբն է ոգնության յեկել։ Բայց միևնույն է, չարժե տայգայում գիշերել։ Նրանք հավանորեն յեկել են, վոր սավառյան Վալյային և Պոլինային տանեն դեպի գետը։ Ինչ էլ լինի, այսոր պետք է նրանց հասնել։

Շուտով լսեցի տղամարդկանց ձայներ և Պոլինայի ձայնը։ Պոլինան գոռում է. «Այստեղ տվեք կիսելը, կեփենք»։ «Էհ», մտածում եմ, «տխուր չեն իմ աղջիկները»։ Զվարթացա, կրակեցի իմ վերջին փամփուշտը։ Պատասխանը յեղավ Պոլինայի աղաղակը։

— Մարինան գալի՜ս է։ Նա ինքն է գալիս, նրան չեն բերում։

Մի խումբ մարդիկ սավառնակից բաժանվեցին ու ճահճի միջով վազեցին իմ կողմը։ Նրանք մինչև ծնկները խրվում էին ջրի մեջ, ցատկոտում էին թմբերի վրայով, սայթաքում էին ու վազում ամբողջ ուժով։ Բոլորի առջևից վազում էր բաց գլխով մի յերկարահասակ մարդ։ Նա վազելով մոտեցավ ինձ։

Կոճակներից տեսնում եմ, վոր սա 2-րդ կարգի զինվորական բժիշկ է։ Իմ առաջին միտքն է լինում. «Ըհը՛, ճահճուտում բժիշկ էլ կա։ Ցերեկ նա ինձ ուտել չի թույլ տա, դիետա պահել կտա... Սա՛ վորտեղից լույս ընկավ...»։ Բայց բժշկի կրծքին յես տեսա Կարմիր աստղի շքանշան և հրահանգիչ-պարաշյուտիստի նշան, վորից կախված էր «105» թվակիրը։ «Լավ, մտածում եմ յես, յեթե այս բժիշկը պարաշյուտով 105 թռիչք է կատարել, ուրեմն նա ավելի շուտ պարաշյուտիստ է, քան բժիշկ և հավանաբար թույլ կտա, վոր ուզածիս չափ ուտեմ»։

Բժիշկը վազելով մոտեցավ ինձ, գրկեց, այտերս համբուրեց։ Նրա աչքերից արցունք էր հոսում։ Նրա հետևից մոտեցան և մյուսները, ավելի ու ավելի շատ մարդիկ, և բոլորը ավիացիոն կոճակներով։ Այստեղ կապիտան էլ կա, ավագ լեյտենանտ էլ, կրտսեր ավիացիոն մասնագետներ էլ։ Ահա վազում է մի մարդ պարաշյուտիստ-հրահանգչի նշանով։ Ահա մի ուրիշը՝ պարաշյուտիստային սպորտի վարպետի նշանով։ Մոտ է վազում մի գնդի կոմիսար, նրա հետևից՝ Պոլինան։ Պոլինան նույնն է մնացել, միայն ինձ տեսնելուն պես բարձրաձայն լալիս է, ինձ գրկում ու համբուրում։

Մենք միասին նստում ենք մի թմբի վրա, նա գրկում է ինձ ու շոշափում։ Մինչ այդ այն մարդիկ, վորոնք սավառնակին մոտեցել էյին մյուս կողմից, նույնպես վազում են մեզ մոտ։ Դրանք ոդաչուներ չեն, քաղաքացիական հագուստով են։ Յես տեսնում եմ մի հասակավոր եվենկ-կոլտնտեսականի։ Նրանք բոլորը գրկում են ինձ, համբուրում, լալիս։ Բոլորից հետո գալիս է Վալյան։ Այդ ժամանակ նա զբաղված է յեղել. ազդանշանի շոր էր փռում այն սավառնակի համար, վոր թռչում էր «Ռոդինայի» գտնված տեղի գլխին։

Ուզում են ինձ ձեռքերի վրա բարձրացնել ու տանել սավառնակի մոտ։ Յես փաղաքշաբար նայում եմ իմ նոր ընկերներին ու մտածում. «Ի՜նչ սքանչելի մարդիկ են», և ասում եմ. «Դե, մի՞թե մեր յերկրում մարդ կարող է կորչել։ Յեթե չուզենաս էլ գտնել «Ռոդինա» սավառնակը—կգտնես»։

Մոտենում եմ, դիտում իմ կաբինը։ Ամեն ինչ կարգին է, բոլոր սարքերը վողջ են, նույնիսկ վոչ մի ապակի չի կոտրվել։ Վալյան շատ լավ է իջեցրել մեքենան։ Յես կարող էյի և չթռչել... Ինքը Վալյան է ասում, վոր յեթե յես մնայի սավառնակում, նույնիսկ ճակատիս ուռույց չէր առաջանա...

«ՌՈԴԻՆԱ» ՍԱՎԱՌՆԱԿԻ ՃԱՄԲԱՐԸ

Բժիշկ Տիխոնովն իր հիվանդանոցը բաց է անում ուղղակի դաշտում։ Դեղորայքը փռեց, շփում է իմ քերծվածքները, յոդ է քսում։ Լեյտենանտ Ոլյանիչինը խոհանոց է բացում, վոր նա սարքել է թթվածնային ապարատից։ Յես խնդրում եմ.

— Ուտելու բան ունեք և որքան կարելի յե՝ շատ:

Ինձ տալիս են մի կտոր հավի ֆիլե, մի քիչ բուլյոն և մի քիչ կիսել:

Վալյան ասում է.

— Մարինկա, իսկ մենք շարունակ տերմոսով տաք թեյ ենք պահում, վորպեսզի դու սառցված չլինես սպասել:

Ապա նա պատմում է, թե ոդաչու Սախարովն իրենց ինչպես է գտել: Յես հարցրի, թե այդ վոր որն է յեղել: Պարզվում է, վոր յեղել է ամսի 3-ին:

— Նշանակում է՝ յես սխալվել եմ մեկ որով: Ինձ թվում եր, թե ձեզ գտել են ամսի չորսին, վորովհետև այդ որը բոլոր սավառնակները մեկ տեղի վրա եյին թռչում, իսկ յերեքին՝ ցրիվ յեկած:

— Այ, հենց յերեքին էլ Միշա Սախարովը մեզ տեսավ: Նա ցածրացավ, պտտվեց մեր սավառնակի գլխին և թռավ Կոմսոմոլսկի կողմը: Հետո նորից վերադարձավ մեզ տեսնելու: Հիանալի տղա յե: Իսկ հետո այստեղ իսկական ոդային ոպերացիա ունեցավ: Դու չես կարող յերևակայել, թե նրանք ինչեր եյին ցած գցում մեզ համար ոդից, տաք հագուստով պարկեր, վալենկաներ, ռետինե կոշիկներ: Իսկ կապոցներից մեկում յես կիսամուշտակի մեջ փաթաթած մի բանկա մուրաբա գտա: Հիմա Պոլինան այդ մուրաբայից չոր փոշիով կիսել է յեփում: Մենք ուզում ենք նրան գիտական գաստրոնոմի կոչում տալ: Գիտես, Պրասկովյա Վասիլևնան մեզ համար մի տոպրակ մթերք էլ է գցել: Այնտեղ ապուխտ ու խավիար կար, բայց քեզ համար խավիար չի մնացել, Մարինկա, մենք բոլորը կերել ենք:

Վալյան խոսում եր ու խոսում առանց լռելու: Իսկ Պոլինան այդ ժամանակ ինձ բերեց փոքրիկ թաշկինակներ, վորոնց վրա ասեղնագործված եր՝ «Մարինա»: Պարզվեց, վոր այդ գեղեցիկ թաշկինակներն էլ սավառնակից են ցած նետել: Դրանք պատրաստել եյին Կոմսոմոլսկում խետագուրավական աղջիկները: Թաշկինակների հետ գցած են յեղել նաև նամակներ՝ նրանցից և Խասան լճի մոտ կռիվներին մասնակցած մարտիկներից:

Ինձ ցույց տվին նաև փոքրիկ թռուցիկների մի ամբողջ կույտ, վոր ցած եյին գցել սավառնակներից:

«ԽԻԶԱԽ ՈԴԱՉՈՒՀԻՆԵՐԻՆ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓԱՌԱՊԱՆԾ ԴՈՒՍՏՐԵՐԻՆ ՄԵՐ ԲՈՑԱՎԱՌ ՀԵՌԱՎՈՐ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՈՂՋՈՒՅՆԸ:

Անսահման ուրախ ենք, վոր ձեր նկատմամբ կուսակցության, կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ցուցաբերած հոգատարության շնորհիվ հաջողվեց ձեզ հայտաբերել: Բոլոր միջոցները ձեռք ենք առնում ձեզ անհրաժեշտ ոգնություն ցույց տալու համար, վորպեսզի, վորքան կարելի յե, շուտ տեսնենք ձեզ և ջերմորեն սեղմենք ձեր ամուր ձեռքերը:

ԿԵՑՑԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈԴԱՉՈՒՀԻՆԵՐԸ, ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՍԱՆԵՐԸ: ՄԻՆՉԵՎ ՇՈՒՏ ՅԵՎ ՈՒՐԱԽ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

«Ռոդինա» սավառնակի վորոնումների Կոմսոմոլսկ քաղաքի շտաբ:

3 հոկտեմբերի, 1938 թ.»

Սիրտս ուրախանում է, ինչպես մի մեծ տոնի ժամանակ: Վո՛րքան ուշադրություն, վորքա՛ն հոգատարություն:

Ինձ ծանոթացնում են մեզ ոգնության յեկած մարդկանց հետ: Բայց նրանք այնքան շատ են, վոր յես միանգամից նրանց ազգանունները հիշել չեմ կարող: Բոլորն էլ իրար ընդհատելով ինձ հարց ու փորձ են անում, թե յես տայգայում գազաններ տեսե՞լ եմ: Աղջիկները պատմում են, վոր իրենց արջեր են այցելել:

Սակայն բժիշկ Տիխոնովը գտնում է, վոր մի որվա համար չափազանց շատ են իմ տպավորությունները և ինձ քշում է քնելու: Ամբողջովին չոր ու մաքուր շոր հագնելով, հագեցնելով քաղցս և այդքան ժամանակից հետո առաջին անգամ տաք թեյ խմելով՝ յես մտնում եմ ֆյուզելաժ, պառկում մետաքսե փափուկ պարաշյուտի վրա և փորձում եմ քնել: Բայց ինչպե՞ս քնել, յերբ գտնվում ես այդպիսի ուրախ ճամբարում: Մարդիկ անընդհատ վազվզում են տափարակներում, հնչում են յերախտապարտ ուժեղ ձայներ: Լսում եմ բժշկի ձայնը, վոր շարունակ կրկնում է. «Մի՛ խանգարեք նրան քնել, չհամարձակվեք [illegible] մտնել»: Սիրելի՜ բժիշկ:

Բայց և այնպես ամեն րոպե կաբինի անցքից ներս է խցկվում մերթ սրա, մերթ նրա գլուխը: Յես արդեն սկսում եմ նրանց տարբերել: Յուրաքանչյուր գլուխն ինձ հարցնում է.

— Դու դեռ չե՞ս քնել:

— Մենք այդպես էլ գիտեյինք, վոր դու կգաս:

Իսկ վերևից մեկը մրթմրթում է.

— Հիանալի յե, հիանալի բան ստացվեց:

Այս բոլորն զբաղեցնում են իմ ուշադրությունը: Քունս չի տանում: Ինձ խորապես հուզում է ընկերների ուշադրությունը, վորոնք մի քանի ժամում դարձել են իմ մոտիկ բարեկամները: Յես հսկայական ջերմություն եմ զգում, ինձ տաքացնում է մարդու նկատմամբ յեղած այդ հուզիչ հոգատարությունը: Յես շատ լավ եմ զգում ինձ:

Բայց ահա ինձ է հասնում տապակածի անուշ բուրմունքը: Լսում եմ լեյտենանտ Ռյաբինչինի ձայնը, վոր բոլորին առաջարկում է տեղավորվել ոմլետ (ձվածեղ) ուտելու: Նորից ուրախ իրարանցում: Հետո սկսվում է լուրջ խոսակցություն: Մեկն ասում է.

— Մարինկան յեկավ, վաղը ճանապարհ ընկնենք:

Մի ցածր ձայն նրան պատասխանում է.

— Այո, բայց պետք է հոգալ Մարինկայի համար պատգարակ պատրաստելու մասին: Նրան վոտքով գնալ չի կարելի:

Յես ֆյուզելաժից գոռում եմ.

— Վո՛չ, վոտքով կգնամ:

Անմիջապես կաբինում կախվում է բժշկի գլուխը.

— Յես ձեզ հրամայեցի քնել և դուք պարտավոր եք յենթարկվել ինձ: Մենք վաղը ձեզ կտանենք պատգարակով,— և բժշկի ձայնը մարում է խավարի մեջ:

Հետո յես լսում եմ, թե տղերքն ինչպես են տեղավորվում՝ վոմանք կաբինում, վոմանք դուրսը: Մեկը կանչում է.

— Յես կբարձրանամ շտուրմանի խցիկում քնելու:

Այստեղ մի առանձին քնքշությամբ յես հիշում եմ իմ շտուրմանական կաբինը և մտածում. «Ինչ լավ է, վոր այն վողջ է»:

Մի քանի մարդ տեղավորվում են բենզինի բաքերի մոտ:

Ինձ համար մենակ տխուր է: Յես Վալյային ու Պոլինային խնդրում եմ գալ ինձ մոտ: Վալյան պառկում է իմ կողքին, յես ամուր գրկում եմ նրան: Այժմ շատ ուրախ եմ: Այդքան որերից հետո առաջին անգամ շրջապատված եմ մարդկանցով: Պոլինան տեղավորվում է մեր վոտքերի մոտ: Տիրում է լռություն:

Բայց էլի իմ քունը չի տանում: Տայգայի թարմ ոդում անցկացրած սքանչելի գիշերներից հետո կաբինում ինձ համար շոգ է և գլխավերևս էլ աստղեր չեն յերևում:

Շշուկով Վալյային հարցնում եմ.

— Դու քնա՞ծ ես:

— Վո՛չ, քնած չեմ: Ի՛նչ ուրախ եմ, վոր դու յեկար:

Մենք սկսում ենք կիսաձայն զրուցել: Շուտով մեզ մոտ է սողում և Պոլինան, վորը նույնպես զգացմունքների առատությունից քնել չի կարողանում: Վալյան ասում է.

— Իսկ դու գիտե՞ս, Մարինկա, թե ինչ ուրախ համարներ ունեցանք մենք: Մթերքների տոպրակներից, թռուցիկներից ու նամակներից հետո սավառնակներից մեզ մոտ պարաշյուտիստներ իջան: Սկզբում իջնել սկսեցին յերկուսը: Մեկը սավառնակին մոտիկ իջավ, մյուսը՝ հեռու: Պոլինան վազեց նրա մոտ, վորը հեռու յեր իջել: Դա կապիտան Պոլեժայն եր: Նա մեզ մոտ իջնելով իր 301-րդ պարաշյուտային թռիչքը գործեց: Պարաշյուտով թռչելուց առաջ նա մի հանդիսավոր ճառ եր պատրաստել. «Թանկագին ընկերներ, կատարելով կուսակցության ու կառավարության առաջադրանքը՝ յես, կապիտան Պոլեժայս..» և այլն և այլն: Իսկ մեր Պոլինան նույնպես պատրաստվում եր ճառով դիմավորելու: Նա ուզում եր ասել. «Թանկագին ընկերներ, «Ռոդինա» սավառնակի անձնակազմի անունից թույլ տվեք շնորհակալություն հայտնել...» Յեվ ահա, Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի յերկու կապիտաններ իրար հանդիպեցին ճահճում: Յեվ, յերևակայիր, վոչ մի ճառ չասվեց: Նրանք սկզբում շփոթվեցին, հետո գրկախառնվեցին, հետո սկսեցին համբուրվել և... լաց...

Մենք ծիծաղում ենք: Պոլինան նույնպես ծիծաղում է:

— Դու իմ մասի՞ն ես պատմում,— ասում է նա Վալյային,

լոկ յես, այ, քո մասին, կպատմեմ:

— Ի՞նչ կպատմես դու, չիժիկ:

— Իսկ դու ինչպե՞ս հյուրեր հրավիրեցիր: Գիտե՞ս, Մարինկա, մի անգամ գիշերը մենք քնած եյինք ելի այսպես, պարաշյուտի վրա և լսում ենք, վոր մեկը քայլում ե սավառնակի շուրջը և ճահճում չփչփացնում: Վալյան ասում ե. «Ինչ վոր մեկը յեկավ, յերևի Մարինկան ե»: Դուրս յեկավ տափարակը և գոռում ե. «Մարի՛նա»: Վոչ վոք չի պատասխանում, բայց պարզ լսվում ե ճահճի չփչփոցը: Այն ժամանակ Վալյան ասում ե. «Թանկագին ընկեր, խնդրեմ մի՛ քաշվեք, հյուր յեկեք մեզ մոտ: Մենք հասարակ խորհրդային ոդաչուհիներ ենք: Մենք նույնիսկ կարող ենք ձեզ կերակրել: Ներս յեկեք, մենք շատ ուրախ կլինենք»: Բայց հյուրը չի գալիս, նույնիսկ դադարեց չփչփացնել սավառնակի շուրջը: Յես համենայն դեպս լցնում եմ մաուզերը, հետո «վալտերը», հետո հրացանը և այդ բոլորը հերթով կաբինից տալիս եմ Վալյային, «Դու նրան հրավիրիր, բայց, համենայն դեպս զենքը ձեռքիդ պահիր»: Դե ի հարկե, զենքը ձեռքին Վալյայի ձայնը բոլորովին փոխվեց: «Յեթե կյանքը թանկ ե ձեզ համար, անմիջապես ներս յեկեք: Յես հաշվում եմ մինչև յերեք: Յեթե ներս չմտաք, կկրակեմ»: Նա հաշվում ե մինչև յերեք, հյուրը ներս չի գալիս: Վալյան կրակում ե: Յեթե դու տեսնեյիր, թե ինչպես վախեցավ խեղճ արջը: Նա վռնաց և սկսեց հեռու փախչել մեր սավառնակից:

Նորից ենք քրքջում: Պոլինան շարունակում ե պատմել:

— Առաջ մենք փառահեղ եյինք քնում: Քնում եյինք, իսկ ոդանցքը բաց եյինք թողնում, վորպեսզի բենզինի հոտը դուրս գնա: Այն ժամանակ դեռ մեր կաբինում կարմիր լամպ եր վառվում, վորպես նշան այն բանի, վոր բենզինը վերջացել ե: Այդ լամպն այնքան վառվեց, մինչև վոր ակումուլյատորը պարպվեց: Յեվ ահա, այդ կարմիր լույսի տակ մենք տեսնում ենք, թե ինչպես մեկը շատ քնքշորեն բարձրանում ե մեր կաբինը և հետոն ել ասում. «մյաու—մյաու»: Յերևում ե մի մեծ կատվի գլուխ: Վալյան ձգվել ե պարաշյուտի վրա և կես քուն-կես

արթուն փաղաքշաբար ասում ե. «փիսիկ»: Իսկ յես զենքը վերցրի: Պարզվեց, վոր դա կատու չի, այլ լուսան ե:

— Հետո՞, սպանեցի՞ք:

— Վոչ,— պատասխանում ե Վալյան,— չսպանեցինք: Յեթե յես նրա վրա կրակեյի, գնդակը կդիպչեր մեր սարքատախտակին և գուցե վորևե սարք փչրվեր: Ինչ կարիք կար սավառնակը փչացնելու: Յես կրակեցի ոդում և լուսանը փախավ:

Յես ծիծաղում եմ.

— Սիրելի Վալյա, իմ սիրելի ոդաչու, ախր դու տոտես կինես:— Մենք համբուրվում ենք ու նորից ծիծաղում:

Զրուցում ենք ելի շատ ու յերկար: Հանկարծ Պոլինան մի բան ե հիշում:

— Հա, մոռացա Մարինկային պատմել: Մի գիշեր պառկել ենք քնելու և լսում ենք, վոր արջ ե մռնչում: Իսկ հենց այդ գիշեր մենք հյուր ունեյինք, պարաշյուտիստներն եյին յեկել: Յես Վալյային ասում եմ. «գնանք տափարակը. արջին քշելու, թե չե մեր հյուրերն այդպիսի յերաժշտության սովոր չեն, կվախենան»: Դուրս յեկանք, բայց արջ չկա: Պարզվեց, վոր այդ կայլոտան Պոլեժայն ե խռմփացնում բաքերի վրա պառկած:

Մթության մեջ յես իմ ընկերուհիների դեմքը չեմ տեսնում, բայց պարզ պատկերացնում եմ Վալյայի քնքշորեն կկոցած աչքերը և զգում եմ Պոլինայի ծանոթ ժպիտը:

Առավոտյան դեմ Պոլինան քնեց: Յես ու Վալյան ել իրար ամուր գրկելով քնեցինք: Այսպես անցավ իմ միակ գիշերը «Ռոդինա» սավառնակի ճամբարում:

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԱՔՍԻՄՈՎԸ

Լույսը բացվելու հետ ճամբարն սկսեց արթնանալ: Աշխատելով ինձ չարթնացնել՝ աղջերքն սկսեցին կամացուկ իրերը հավաքել և ճանապարհի պաշար դարսել: Բայց յես արդեն արթնացել եյի: Խնդրեցի, վոր ինձ դուրս քաշեն կաբինի գլուխը: Իմ վոտքը ցավում եր և բժիշկը թույլ չեր տալիս քայլել:

Վալյան ու Պոլինան ինձ սկսեցին տեղավորել կաբինի կողին,

և յես հետաքրքրությամբ դիտում եյի, թե ճամբարն ինչպես է պատրաստվում մեկնելու:

Կապիտան Պոլեժայը պատգարակ սարքեց. նա անտառից յերկու հաստ ամուր ձող բերեց, պարաշյուտի ժապավենները քաշեց նրանց վրա ցանցի ձևով, իսկ վերևից ծածկեց պարաշյուտի մետաքսով: Տղամարդիկ իրերը հավասար բաժանում եյին, միայն չորս հոգի, վորոնք պատգարակը պիտի տանեյին, ազատ եյին բեռից: Մեզ տանելու յեն Կերբի քաղաքի խորհրդի նախագահ Կոզլովը և Կերբիի բուժակ Կրավնիչենկոն:

Արևածագին սավառնակներ յերևացին: Նրանք դեռ ելի վերևից մթերքի ու տաք հագուստեղենի տոպրակներ են ցած գցում: Ինչի՞ համար է այդքանը: Մեզ այլևս վոչինչ հարկավոր չէ: Բայց նրանք շարունակ գցում են ու գցում: Մեր ճամբարն արդեն չգիտի, թե ինչ անի այդ տոպրակները: Մենք աշխատում ենք նշաններով օդաչուներին հասկացնել, թե սավառնակները կարող են վերադառնալ, մենք գնում ենք դեպի գետը:

Վորպեսզի սավառնակին ցույց տան, թե Ռասկովան արդեն յեկել է, մեզ յերեքիս նստեցրին կարինում, իսկ մյուս բոլորը մատով մեզ եյին ցույց տալիս: Բայց օդաչուն չեր հասկանում: Նա մի վիմպել գցեց այսպիսի յերկտողով. «Յեթե Ռասկովան չի յեկել, յերկուսով կանգնեցեք աջ տախտակի վրա, յեթե Ռասկովան յեկել է, յերեքով կանգնեցեք աջ տախտակին»:

Բայց իմ ոտքը ցավում է, յես կանգնել չեմ կարող: Այն ժամանակ կոմիսար Լիտվինենկոն կարգադրեց աջ տախտակն շտապ մաքրել: Այնտեղ կանգնեցին Վալյան, Պոլինան և կոմիսար Լիտվինենկոն: Նրա գլխին սպիտակ թաշկինակ կապեցին և այդպիսով նա Մարինա Ռասկովայի տեղ ներկայացավ: Բոլորը շատ ծիծաղեցին, իսկ օդաչուն հասկացավ, վոր Ռասկովան յեկել է: Նա սկսեց այդ յեռյակի գլխի վրայով շատ ցածր թռչել և ձեռքը վողջույնով թափահարում եր Լիտվինենկոյի կողմը. նրան իմ տեղն եր գնում:

Հավաքելով անհրաժեշտ իրերն ու 2–3 օրվա պաշար՝ օդաչուներն սկսեցին սավառնակը կարգի բերել: Նրանք մաքրեցին տախտակները, վորոնց վրա հենց նոր իր աշխատանքն ավարտեց Ոլյանիչինի և Պոլինայի խոհանոցը, վորը «Ռոդինա» սավառնակի վրա վերջին նախաճաշը տվեց 16 մարդու: Կափարիչները բերին, կարինները փակեցին, վորպեսզի մեր սավառնակի մեջ անձրև չթափվի: Յերբ աերոդրոմային ծառայության բոլոր կանոնների համաձայն մեքենան ծածկված եր, մենք սավառնակի մոտ թողինք հետևյալ յերկտողը. «Անձնակազմը վողջ է, բոլորը գնացին դեպի գետը»:

Ինձ դրին պատգարակի վրա: Պատգարակը հեշտությամբ բարձրացրին կապիտան Պոլեժայը, գնդի կոմիսար Լիտվինենկոն, բժիշկ Տիխոնովը և պարաշյուտիստ— լեյտենանտ Ոլյանիչինը: Կապիտան Պոլեժայը հայտարարեց, թե նա ինքը կտանի իր թիկնապարկը: Յես նայում եյի այդ պարաշյուտիստի փոքրիկ մարմնին, վորի մեջ ֆիզիքական ուժի վոչ մի արտաքին նշան չկար: Յես մտածում եյի. «Միթե սա կարող է պատգարակը տանել: Ախր ճահիճով քայլելը դժվար է, իսկույն կհոգնի»:

Բայց ահա սկսեցին տանել:

Ամենածանր բեռը բաժին եր ընկել ավագ լեյտենանտ Ցերեմինին: Նա մեր սպորտային կոմիսարն եր և առանձին հոգատարությամբ եր տանում բարոգրաֆները, վորոնք գրանցել եյին մեր թռիչքի անվայրեջք լինելը: Վորպեսզի ճանապարհին բարոգրաֆները չկորչեն, վորպեսզի վոչ մի քերծվածք նրանց չվնասի, Ցերեմինը սրանից-նրանից տաք հագուստ եր հավաքել, բարոգրաֆները նրանց մեջ խնամքով փաթաթել և ըստացվել եր բավական ծանր մի կապոց: Նույնիսկ իջևաններում Ցերեմինը վոչ մի րոպե աչքաթող չեր անում իր բեռը: Յեթե վորևե մեկը հենվում եր նրա կապոցին, նա գոռում եր.

— Դուք հո խելագար չեք, կփչացնեք բարոգրաֆը:

Շուտով պատգարակը տանող մարդիկ սկսեցին հետ մնալ: Շատ դժվար եր ծանր պատգարակը շալակած համաչափ քայլել ճահճի թմբերի վրայով: Տղերքը սայթաքում եյին և մինչև ծնկները խրվում ջրի մեջ: Կոմիսար Լիտվինենկոն ամբողջ խմբին թույլատրեց մեզ չսպասել, այլ ուղեցույց Կոզլովի հետևից Ցուկաչի բլրի վրայով գնալ դեպի Ամգուն գետը: Հասնել Ամգունին, այնտեղ բեռը թողնել և, ով կարող է, վերադառնալ պատգարակի մոտ: Մենք բաժանվեցինք յերկու խմբի: Պատգարակին առաջնորդում եր բուժակ Կրավնիչենկոն:

Մենք ամբողջ խմբից մի քիչ հետ մնացինք։

Արևն անխնա վառում էր։ Շոգ էր։ Պատգարակը հարում էր իմ ակամա կուլեների ուսը։ Կոմիսար Լիտվինենկոն ծիծաղաշարժ պատմություններով բոլորին ժպտացնում էր։ Նա մի րոպե բաց թողեց. «Տարեք, ընկեր, թրջվեցեք, բայց պատգարակը մի՛ գցեք»։ Յեվ իրոք, վոչ մի անգամ իմ պատգարակը չգցեցին։ Նույնիսկ իջևաններում ուսից ցած չէին դնում, մինչև վոր մոտերքում չոր ու հուսալի թումբ չէին գտնում։ Այն ժամանակ բոլորը նստում էին իմ կողքին, ծխում էին և ջուր խմում ճահճից։ Այդ ջուրը մենք կատակով կոմպոտ էինք անվանում, իսկ կապիտան Պոլեժայը համառորեն անվանում էր «նարզան»։ Նա այդպես էլ ասում էր. «Դե, գնամ մի քիչ նարզան խմեմ»։ Մոտենում էր ճահճին, փորի վրա պառկում թմբին, գլուխը կախում ճահճի վրա և բավականությամբ խմում։

Իջևանում բոլորը հանգստանում էին, բացի անխոնջ կապիտան Պոլեժայից։ Յես արդեն վաղուց էի իմ կարծիքը փոխել նրա մասին։ Ահա նա նորից պատգարակը ձևափոխում է։ Նրան թվում է, թե նախկին ձևով ինձ համար այնքան էլ հարմար չի։ Յեվ իրոք, նա պատրաստում է հիանալի պատգարակ, վոչ թե պատգարակ, այլ ուղղակի կառեթ։ Յես այդպես էլ անվանեցի՝ Յեկատերինա Մեծի կառեթ...

Մենք նորից անտառից, յեղևնիների ստվերից դուրս յեկանք արևոտ ճահիճը։ Մինչև ծնկները ջրի մեջ խրվելով՝ տղերքը տաք քրտինք են սրբում իրենց ճակատից։

Այդպես շարունակվեց ամբողջ որը։ Հանկարծ մեր գլխավերևը յերևաց մի նավակ-սավառնակ։ Նա ցածր էր թռչում։ Մի տոպրակ շլմփաց ջրի մեջ։ Տոպրակը հանեցին ու բերին։ Նրա վրա գրված էր. «Ռոդինա» սավառնակի շտուրման Մ. Ռասկովային»։ Յերբ տոպրակը բաց արինք, մեջը գտանք «Ստալինսկի Կոմսոմոլսկ» թերթի հոկտեմբերի 6-ի համարը և մեծ քանակությամբ համեղ ու հյութալի խնձոր։ Բոլորը, վորքան կարող էին խնձոր կերան։ Յես էի հյուրասիրում։ Վերջին խնձորները գրպանները խցկեցին կամ դրին իմ պատգարակի վրա։ Մենք առաջ շարժվեցինք։ Լիտվինենկոն խնդրեց.

— Հապա, Ռասկովա, բաց արա թերթն ու կարդա, իսկ մենք քեզ տանելով կլսենք։

Առաջին իսկ էջում հետևյալ վերնագրերն էին՝ «Հաղորդագրություն «Ռոդինա» ինքնաթիռի մասին»։ «Ռասկովային որոնություն»;

Յես կարդում եմ։

«Քաղաքացիական ոդանավատորմի ոդաչու Դերկունսկին, Կիրսանովը, բորտտեխնիկ Սիսկովը և մեխանիկ Ֆեդինը մի նոր, ճահճոտ անտառում, «Ռոդինա» սավառնակից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա հայտաբերել են «Ռոդինա»-յի անձնակազմի յերրորդ անդամին՝ ընկեր Ռասկովային։ Նա կանգնած է յեղել հենց նոր վառած խարույկի մոտ, կոճղի վրա և թաշկինակով վողջունելիս է յեղել ոդաչուներին։ Սավառնակից նրա համար մթերք են ցած գցել և նա անմիջապես այդ մթերքը վերցրել է...»

«... Ռասկովային հայտնաբերող ոդաչու Դերկունսկին հաղորդում է հետևյալը. «Յերբ յես Ռասկովայի համար մթերք ցած գցեցի և «Ռոդինա» սավառնակի մոտ գնալու ճանապարհը ցույց տվի, նա անմիջապես ճանապարհ ընկավ հյուսիս—արևմըտյան ուղղությամբ։

Ինձ և իմ ընկերներին այդ հաղորդագրությունը զարմացնում է։ Վորքան եմ ցավում, վոր յես տայգայում իսկապես չեմ ստացել այդ թանկագին ծանրոցը։ [1]։

1) Վերջին որերս, յերբ այս գիրքն արդեն գրված էր, «Ռոդինա»-յի անձնակազմի վորոնումների մասին վորոշ մանրամասնություններ հայտնի դարձան։

Յերկար ժամանակ հանելուկ էր մնացել, թե ո՞վ է յեղել այն մարդը, վորի համար ոդաչու Դերկունսկին ցած էր գցել իր արկղները։ Վերջերս յես Կոմսոմոլսկից ստացա մի նամակ, վոր տպագրված է «Ստալինսկի Կոմսոմոլսկ» թերթի 1939 թ. փետրվարի 16-ի համարում։ Նամակի հեղինակը՝ Կոմսոմոլսկի շրջանի Կոնդոն գյուղացի կոլտնտեսական Ֆեդոր Իվանովիչ Սամարը հաղորդում է, վոր անցյալ տարվա հոկտեմբերի 1-ին նա իր նախաձեռնությամբ գնացել է տայգա՝ «Ռոդինա» սավառնակի անձնակազմին վորոնելու։ 5 որ նա ման էր յեկել տայգայում։ «Այդ որերից մեկին,— պատմում է Ֆ. Ի. Սամարը,— յես դաշտի կենտրոնում խարույկ վառեցի։ Խարույկի մեջ խոտ գցեցի, վորպեսզի ավելի շատ ծուխ առաջանա։

Թերթի հետևյալ եջերում մանրամասնորեն նկարագրվում եր տայգայում «Ռոդինա» սավառնակի նկատմամբ կատարած բոլոր գործողությունները: Վորքա՛ն հոգսեր ենք պատճառել մենք ամբողջ յերկրին և ընկեր Ստալինին... Յես կարդում եյի և հոգիս մի տեսակ թեթևանում ու ջերմանում եր այն հսկայական հոգատարությունից, վոր մենք զգացել եյինք մեզ վրա: Առանձնապես ուրախալի յեր գիտակցել, վոր այդ ամբողջ հոգատարությունը, բոլոր վորոնումները ներշնչվում և ղեկավարվում եյին ընկեր Ստալինի կողմից:

Մենք մոտենում եյինք անտառին: Պատգարակի վրայից յես տեսնում եյի, թե ինչպես հորիզոնում աստիճանաբար ծածկվում եր «Ռոդինա» սավառնակի գծագրությունը: Ահա արդեն նա բոլորովին չի յերևում...

Հեռավոր բլրաշարքի հետևը, այն բլուրների հետևը, վորտեղ յես թափառում եյի, հրացոլք եր յերևում: Յես Լիտվինենկոյին հարցրի, թե այդ ի՛նչ հրդեհ ե:

— Այդ ձեր խարույկն ե, վորի վրա դուք սունկ եյիք տապակում:

Անտառի յեզրին իջևանեցինք: Պատգարակն ինչպե՞ս տանել թփերի միջով: Մեկը մյուսից առաջ ընկնելով՝ առաջարկում ե-

---

Ծուխը տայգայի գլխին շատ վեր բարձրացավ: Այդ ծխի վրա մի սավառնակ մոտեցավ: Յես սկսեցի ոդաչուին նշաններ անել: Սավառնակից մի արկղ գցեցին: Այդ արկղում յես գտա կոնսերվաներ, կարագ, պանիր, խավիար, կանֆետ, շոկոլադ, թխվածք, լուցկի և մի փոքրիկ դանակ: Իմ գլխավերևը շրջան գործելուց հետո սավառնակը հեռացավ: Շուտով յեկավ մի ուրիշ սավառնակ, վորը մի արկղ էլ գցեց լի մթերքներով: Այդ սավառնակը ևս խարույկի գլխին մի քանի շրջան գործեց: Մի քիչ ժամանակից հետո իմ գլխավերևը յերևաց 3-րդ սավառնակը: Նա այնքան ցածր եր թռչում, վոր յես քիչ մնաց պիտի վայր ընկնեյի ուժեղ քամուց...»

Բոլորովին ակներև ե, վոր ոդաչու Դերկունսկին տայգայում թափառող կոլտնտեսականին Ռասկովայի տեղն ե դրել և ինձ համար նախատեսած մթերքները նրան ե գցել:

Ամենից հետաքրքրականն այն փաստն ե, վոր Ֆ. Ի. Սամարին դրդել եր ինձ նամակ գրել: Պարզվում ե, վոր յերբ նա վերադարձել ե իր կոլտնտեսությունը, կոլտնտեսության վարչությունը հրաժարվել ե նրան վճարել այն օրերի համար, յերբ նա տայգայում մեզ վորոնելիս ե յեղել... Այժմ, ի հարկե, այդ սխալն ուղղված ե:

յին ինձ տանել ձեռքերի վրա, ինչպես վիրավորներին են տանում, բայց յես հայտարարեցի, թե ինքս կգնամ: Ինձ կտրականապես պատասխանեցին, թե այստեղ իմ իշխանությունը վերջացել ե. սավառնակն իջնելուց հետո շտուրմանական պարտականությունները ինձանից ցած են առնվում և յես պետք միայն պառկեմ ու յենթարկվեմ: Կոմիսար Լիտվինենկոն չեր համաձայնում նաև, վոր ինձ վորևե մեկը տանի. ճահճի վրա հեշտ ե սայթաքել ու վայր ընկնել: Այդ ժամանակ մոտեցավ մեր ուղեցույց Կրայնիչենկոն և հայտարարեց, թե տայգայից գալիս ե մի մեծ խումբ, վորին առաջնորդում ե ուղեցույց Մաքսիմովը, այն նույն եվենկ-կոլտնտեսականը, վորին յես յերեկ հանդիպել եյի «Ռոդինա» սավառնակի մոտ: Մաքսիմովն այստեղի հասակավոր մարդկանցից ե և տայգան շատ լավ ե ճանաչում: Նրա ամբողջ կյանքն անցել ե Կերբիի տայգայում, Ամգունի ափերին: Առավոտյան, երբ դեռ մենք քնած ենք յեղել, Մաքսիմովը գնացել եր գետը, այնտեղ քաշել փոքրիկ մակույկներ, անցնելու համար ամեն ինչ ապահովել եր, իսկ յերկու մակույկ հոսանքով ավելի մոտիկ եր քաշել, վորպեսզի կարիք չլինի ինձ Յուկաչի բարձր բլուրի վրայով տանելու: Նա հավաքել եր նաև տեղական բնակիչներին և նրանք բոլորը գալիս եյին մեզ դիմավորելու:

Շուտով կոլտնտեսականների խումբը մոտեցավ մեզ: Շըրջապատեցին մեզ, հետաքրքրությամբ ինձ եյին նայում: Յես հարցրի.

— Մաքսիմով, այդ ինչո՞ւ վերադարձար.

Մաքսիմովը հանգիստ բացատրեց, թե ինքը միայն վազել ե գետը՝ մակույկներ բերելու:

Այ թե «վազել» ե: Մենք այստեղ դժվարությամբ եյինք առաջ գնում, իսկ նա այդ տարածությունն արդեն չորրորդ անգամն ե անցնում:

Իմանալով մեր կանգ առնելու պատճառը՝ կոլտնտեսականներն առաջարկեցին. «Թող չորս հոգի պատգարակը տանեն, իսկ չորսն էլ գնան նրանց կողքով՝ փոխարինելու համար: Այդպես կարելի յե դադարներ չանել»: Իրենց մայրենի եվենկական լեզվով իրար հետ խոսելով՝ նրանք մի քանի հոգի կացիններով

առաջ ուղարկեցին, վորպեսզի նրանք տայգայում ճանապարհ բանան այնպիսի լայնությամբ, վոր կարելի լինի պատգարակը տանել: Ճանապարհը փակող ամեն մի ճյուղ կտրվում եր և ազատ ճամփա բացվում:

Մի անգամ Ոլյանիչինը սայթաքեց և մինչև գոտին խրվեց ջրի մեջ: Մի ճարպիկ կոլտնտեսական անմիջապես ուսը դեմ տվեց պատգարակի ծայրին և հենց գնալիս էլ փոխարինեց Ոլյանիչինին: Ոլյանիչինն շտապ դուրս յեկավ ջրից և հետևեց մեզ:

Հենց վոր մի քառյակը հոգնում եր, անմիջապես, հենց յերթի ժամանակ նրան փոխարինում եր մյուս քառյակը: Զարմանալի ժողովուրդ է: Պատգարակում պառկած յես դիտում եմ նրանց: Ահա նրանք, սովորական խորհրդային մարդիկ, իսկական հերոսական սխրագործություն են անում՝ ո՞ւմ համար: Նույնպիսի մի հասարակ խորհրդային մարդու համար, վորին նրանք իրենց կյանքում յերբեք չեյին ճանաչել, վորի հետ յերբեք ծանոթ չեն յեղել, բայց հենց վոր նա փորձանքի մեջ է ընկել, նրան ոգնության են յեկել:

Մենք անցնում եյինք զարմանալի գեղեցիկ վայրերով: Այդտեղեն այնպիսի խիտ տայգա չեր, վորպիսին այն, վորտեղ յես թափառում եյի միայնակ: Ահա յերևաց մի կածան, առաջինը, վոր յես տեսա տայգայում: Նա տանում եր դեպի գետը՝ մի փոքրիկ, շատ գեղեցիկ, փիրուզագույն լճակի մոտով, վոր շըրջապատված եր կանաչ կեչիներով: Լճակը թվում եր հրաշալի, հեքիաթային: Նրա մոտ բարձրանում եր մի բլուր, վորի վրայից լճակի վրա եյին կախվել սպիտակ ցարասիներն ու վարդեգույն յեղևնիները:

Վորսորդական շավիղը մեզ տարավ դեպի մի վտակ: Անտառապատ բարձր ափերի միջով հոսում եր մի լեռնային գետակ: Ինձ պատգարակից ցած առան և մեծ զգուշությամբ գետի թեք ափով իջեցրին ջրում կանգնած յերկու մակույկների մոտ: Այդ մակույկներն ինձ հիշեցրին ծովը: Յես հիշեցի բայդարկան, վորով մի անգամ հարավում հանգստանալիս՝ իմ փոքրիկ Տանյայի հետ նավարկում եյի ծովի խորքը: Բայց բայդարկան պատրաստվում է լավ ներկված ու ամուր ձյութած կտավից, իսկ այս մակույկը շինված եր ցարասու կեղևից: Այդպես է արվում: Վերցնում են այն ցարասին, վորի փայտամասն ամբողջովին փտած է, բնի յերկարությամբ ճեղք են բացում և այնտեղից թափ տալիս ամբողջ փտած փայտային մասը: Այդ ճեղքին փայտի ող են ամրացնում, իսկ բնի ծայրերը ծալում ու կպցնում են դեպի վեր: Այդպիսով ցարասու ամբողջ կեղևը դառնում է անջրաթափանց ամբողջական նավակ, վոր շատ լավ հարմարեցված է լինում փոքրիկ, սահանքավոր գետի վրա նավարկելու համար:

Ինձ նավակ նստեցրին: Ինձ հետ նորից են Մաքսիմովը և բժիշկ Տիխոնովը, մյուս նավակում նստեց յերիտասարդ ուղեցույցը, նրա հետ՝ կոմիսար Լիտվինենկոն: Մնացած խումբը վոտքով ճանապարհ ընկավ գետի ափով, Ցուկաչի բլրի վրայով:

Մենք մեր մակույկներով նավարկում եյինք արագընթաց գետով: Նեղ, արագընթաց գետակը աղմուկով հոսում եր բարձր, լեռնոտ ու անտառապատ ափերի միջով: Տեղ-տեղ զառավոր ծառերը կախված եյին ջրի վրա, և թվում եր, թե ահա, վորտեղ վոր է ցած կընկնեն և կլողան մեր հետևից: Գետակը շատ վոլորապտույտ եր, հոսանքը՝ ուժեղ, բայց Մաքսիմովն ու նրա ընկերը նավակը վարում եյին վարպետորեն: Նրանք նավարկում եյին և շարունակ իրար կանչում իրենց մայրենի լեզվով: Ափին նայելով յես զարմանում եյի, թե ջուրն ինչպիսի արագությամբ է տանում մեզ. յես յերբեք առիթ չեյի ունեցել այդպիսի արագահոս գետակներով նավարկելու: Լիտվինենկոն ասաց, վոր այդ գետը հոսում է մեկ վայրկյանում մինչև 15 մետր արագությամբ:

Գետակով Ցուկաչի բլուրը շրջանցեցինք և դուրս յեկանք գեղեցիկ Ամգուն գետը: Այստեղ տեսանք, վոր ուղիղ գետի վըրայով թռչում է մի մեծ, ծանր սավառնակ: Ըստ յերևույթին սավառնակները շարունակում են հետևել մեր ընթացքին: Նավակները յերևալուն պես սավառնակը սպիտակ ռակետ բաց թողեց, վոր նշան եր, թե մեզ տեսնում է:

Ամգունով մենք անցանք դիմացի ցածրադիր ափը և զարմացանք, վոր վոտքով գնացող խմբին շուրջանցել ենք:

Տեղավորվեցինք քարքարոտ ալյածում: Բժիշկը գրպանից հանեց պաշտետի մի տուփ և սկսեց նրանով ինձ կերակրել:

Մութը վրա յեր հասնում:

Յես սկսեցի անհանգստանալ, թե չլինի՞ իմ ընկերուհիները ջրլուրի վրա գիշերեն: Հանկարծ Ամգունի մյուս ափին, խիտ անտառի մեջ կրակից լույս: Մաքսիմովը և մյուս կոլտնտեսականը մակույկներով գնացին մյուս ափը, դեպի Ցուկաչի բլուրը, վորպեսզի մեր ընկերներին դեռն անցկացնեն: Տղաներն ուրախ յերգով սկսեցին տեղավորվել նավակներում: Նավակը մի քանի անգամ գնաց ու յեկավ: Վերահաս աղջամուղջի մեջ գետի հոսանքն ի վեր տարածվում եյին ուրախ ձայներ, յերգ ու ծիծաղ: Բոլորը ծիծաղում եյին, վոր շտուրմանը, թեպետ և ուսապարկով, մյուսներից շուտ ափ դուրս յեկավ: Յես հայտարարեցի, վոր դրա համար յես պարտական եմ Ամգուն գետի Փլավ-շտուրման Մաքսիմովին: Բոլորն էլ շատ հավանեցին այդ անունը և սկսեցին Մաքսիմովին անվանել Ամգուն գետի Փլավ-շտուրման:

Յերբ ափին նստած ընկերուհիներիս եյի սպասում, նկատեցի յերկու կին: Նրանք մոտեցան ինձ և սկսեցին հարց ու փորձ անել, թե յես «Ռոդինա» սավառնակից չե՞մ և ինչպես եյի թափառում տայգայում: Յես նրանց պատմեցի մեր թռիչքի մասին, այն մասին, թե ինչպես ընկեր Ստալինը մեզ վորոնելու յե ուղարկել տասնյակներով սավառնակներ և բազմաթիվ մարդիկ:

Լիտվինենկոն մոտեցավ և պատմեց, վոր այդ կանայք իրենց բատերը (մակույկները) տվել են մեզ, վորպեսզի մենք ապահովության կարողանանք Կերբի գնալ: Նրանք մի ուրիշ ուղեկցի հետ Ամգուն գետով բարձրանում եյին դեպի Դուկի․ աղ և լուցկի եյին տանում այնտեղ: Պարզվեց, վոր այդ կանանցից մեկը Դուկիի կայանի օդերևութաբանն է: Ամեն որ նա Դուկիից հաղորդում է Կերբիին և Կոմսոմոլսկին, թե ինչպիսի յեղանակ է այդ լեռնային շրջանում: Մյուս կինը, վոր պառավ եր, նրա ամուսնու մայրն եր: Գետի ցածրադիր ափին կանգ եյին առել գիշերելու և Մաքսիմովից լսել եյին, թե այստեղ են գալիս «Ռոդինա» սավառնակի օդաչուները, նրանց հետ էլ այն պարաշյուտիստներն ու օդաչուները, վորոնք գտել են նրանց,

թե մարդիկ շատ են, իսկ մակույկ միայն յերեք հատ կա և ստիպված են ամբողջ որը գնալ մինչև Կերբի: Յեվ ահա, մեր գործը դյուրացնելու համար հեռավոր տայգայում ապրող այդ յերկու կանայք առաջարկել եյին լուցկին ափ հանել և իրենց մակույկը տվել եյին մեզ, իսկ իրենք վորոշել եյին մնալ գետի ափին, սպասել մինչև մակույկը գա: Իսկ հոսանքի դեմ նա կվերադառնա 4–5 որից վոչ շուտ:

Յես հարցրի, թե նրանք ինչպե՞ս կմնան այստեղ, տայգայում:

— Վոչինչ,— պատասխանեց օդերևութաբան կինը,— մենք մեզ հետ վերմակ ունենք, բրեզենտ, թեյաման, մթերք, մենք չենք կորչի, բայց այ, ձեզ հարկավոր է շուտ գնալ:

Յես հիացմունքով եյի նայում այդ յերկու խորհրդային հասարակ կանանց, վորոնք իրենց մակույկը տվել եյին անծանոթ մարդկանց:

Մեր նոր բարեկամները մեզ առաջարկեցին մի կետա (ձուկ) վոր նրանք բռնել եյին Ամգուն գետում: Անխոնջ բժիշկը հայտարարեց, թե ինքը չի կարող թույլ տալ, վոր մենք ուտենք մի ձուկ, վոր հայտնի չէ՝ յերբ է բռնվել ու յերբ է սպանվել: Գուցե այդ ձուկը հոտա՞ծ է: Բայց ամբողջ ճամբարը միաբերան սկսեց ձուկ պահանջել: Բժշկին ստիպեցին կետան քննել, հոտոտել բոլոր կողմերից և միայն դրանից հետո նա բարձրաձայն հայտարարեց.

— Այս կետայից հիանալի ճաշ դուրս կգա:

Պոլինան, բժիշկն ու Ոլյանիչինը ձուկը մաքրեցին, Ամգունից ջուր վերցրին կաթսայով, մեջը մի բուռ աղ գցեցին և բոլորս նստեցինք կաթսայի շուրջը:

Մթնում է: Վորը տաքանում է, վորը թաց վոտնամաններն է չորացնում: Սպասում ենք, թե յերբ պիտի յեփվի ձկնաճաշը:

Խարույկի մոտ մեզ հետ են նաև բատի տեր յերկու կանայք, և՛ ուղեցույցները և՛ Մաքսիմովը: Արդեն բոլորովին մութն է: Լուսինը դուրս յեկավ: Ամգունի արագահոս ջրերի մեջ խաղում եր լուսնի շողերը, գետի այն կողմը Ցուկաչի Փանտաստիկական բլուրն է՝ ծածկված անտառով: Իսկ մենք գետի ցածրադիր ափին ենք, մեր հետևը՝ յեղևնու խիտ անտառ:

Մինչ ձկնաճաշը յեփվում է, Լխովլիննիկոն մեր ճամբարի համար գիշերային իջևան է պատրաստում: Տղամարդիկ անտառ են գնում և այնտեղից քարշ տալով բերում են յեղևնու ճյուղեր: Ճյուղերը շարքով դարսում են խարույկի մի կողմը: Այդ մեր ամբողջ «կայարանի» ընդհանուր անկողինն է լինելու: Վորոշեցինք բոլորս շարքով քնել. այդպես ավելի տաք կլինենք: Լխովլիննիկոն հարկադրում է ամբողջ գիշերը խարույկը վառ պահել: Պաշարի համար անտառից ամբողջ գերաններ են քաշում ու բերում:

Լեյտենանտ Ոլյանիշինը բարձրաձայն բացականչում է.

— Ձկնաճաշի վերջին համտեսը:

Նա վերցնում է դդալը, ընդհանուր լռության մեջ հանդիսավոր կերպով փորձում է ճաշը և հայտարարում, թե ճաշը պատրաստ է:

Ձկնաճաշը բաժանում են՝ վորին թասի մեջ, վորին տերմոսի բաժակում, վորին ջրամանի բաժակում: Կաթսայից դուրս են քաշում կետայի բուրումնալից փարդադուշն կտորները և ձեռքերն այրելով շտապ ուտում, վորպեսզի իրենց ամանը շուտ ազատեն ու տան ընկերներին: Այդ «Ռոդինա» սավառնակի անձնակազմի և մեր ամբողջ դեսանտի առաջին իսկական տաք ճաշկերույթն է: Ձկնաճաշն անհամ է: Յես տասն որ աղի համ չեմ տեսել և հիմա մեծ հաճույքով վայելում եմ փոքր ինչ աղահամ ձկնաճաշը:

Բոլորն ուրախ են, հաճելի ջերմություն են զգում:

Ահա, վերջապես, բազմահոգս Լխովլիննիկոն մոտենում է խարույկին և ստանում իր բաժինը: Նա նստում է ու ասում.

—Ախ, այս ո՞վ է հնարել այս ձկնաճաշը, վորքա՜ն համեղ է:

Յեփվում է յերկրորդ կաթսան ևս: Նրա մոտ նստում են մեր ուղեցույցները: Մեզ հետ ուտում են Դուկլի մեր նոր բարեկամուհիները: Իսկական խնճույք: Յերբ ձկնաճաշը վերջանում է, բաց են անում խտացրած կաթի տուփերը և լավ քաղցրեղեն է ստացվում: Մենք արդեն պառկում ենք քնելու, իսկ Ոլյանիշինը դեռ յերկար ժամանակ ուղեցույցներին հյուրասիրում է շոկոլադով և գալետով:

Ուղեցույցները գնում են գիշերելու անտառի յեզրին: Այն-

տեղ յերկրորդ խարույկ է վառվում: Բոլորս շարքով պառկում ենք: Մթության մեջ կանացի քնքույշ ձայն եմ լսում.

— Այդպես մի՛ պառկեք: Վերցրեք մեր բամբակե վերմակը: Ձեր վոտքը հիվանդ է:

Այս ասողը ոդերեվութաբան կինն է: Նա ինձ է տալիս իր տաք բամբակե վերմակը: Վերմակը փռում են ճյուղերի վրա և նրա վրա տեղավորվում ենք Վալյան, Պոլինան, յես ու լեյտենանտ Ոլյանիշինը, վորը բոլորից բարակ է հագնված: Բոլորն էլ շատ հոգնած լինելով շուտով քնում են: Խարույկի մոտ հերթապահներ են մնում: Դուկլի ոդերեվութաբանը գետից մի թեյաման մաքուր ու զուլալ ջուր է բերում, ճարպկորեն հարմարեցնում խարույկի վրա: Ջուրը յեռում է: Հերթապահները տաք թեյ են խմում:

Այդ գիշեր իմ քունը չէր տանում, վոտքս ցավում էր: Յես պառկած դիտում էի իմ շրջապատի կախարդական տեսարանը: Ամեն ինչ ինձ թվում էր հեքիաթային ու հրապուրիչ, և՛ խարույկը, և՛ Ամգունը, և՛ լուսինը: Քամին խարույկի կայծերը դես ու դեն էր ցրում: Իսկ Դուկլի ոդերեվութաբանը տեսնելով, թե ինչպես քամին փոխվում է, կամացուկ ասաց.

— Յեղանակը վատանալու յե...

Յերկար ժամանակ չէր քնում և Լխովլիննիկոն: Նա շարունակ հետևում էր, վոր խարույկը քնած ընկերների վոտքերը չայրի և կրակը չհասնի յեղևնու ճյուղերին, վորոնց վրա մենք քնած էինք: Հերթապահներն ասում էին.

— Ընկեր կոմիսար, պառկեցեք քնելու. չե՞ վոր առավոտյան վաղ նորից ճանապարհ եք ընկնելու:

Բայց Լխովլիննիկոն պառկեց միայն այն ժամանակ, յերբ վերջնականապես համոզվեց, վոր ամեն ինչ իր տեղն է և փայտը կբավարարի ամբողջ գիշերը:

Տիրեց լիակատար լռություն: Խարույկի մոտ կամացուկ զրուցում էին յերկու հերթապահները: Նրանք վերհիշում էին, թե ինչպես ճահճի միջով անցան դեպի Ամգուն գետը:

Հանկարծ խարույկի մոտ մի նոր կերպարանք յերևաց: Յես փոքր ինչ բարձրացա, վոր տեսնեմ, թե այդ ով է: Տեսնեմ՝ այդ կապիտան Պոլեժայն է շրջում: Նկատելով, վոր յես տեղից

բարձրացա և քնած չեմ, Պոլեժայը մոտեցավ, ուղղեց վերմակը, վորի վրա յես պառկած եյի և ասաց.

— Ինչո՞ւ չեք քնում դուք:

— Քունս չի տանում, վոտքերս ցավում են: Մոտ նստեցեք, զրույց անենք:

Նա նստեց ճյուղերի վրա և անմիջապես խոսել սկսեց: Ըստ յերևույթին, նրա մեջ շատ մտքեր եյին կուտակվել, վորոնք անպայման վորևե մեկին պիտի հայտներ: Նա այսպես սկսեց.

— Չեք կարող յերևակայել, թե յես այս դեսանտային գործողությունից ինչպիսի հսկայական ուսում քաղեցի:

Յես զարմացա, վոր այս սքանչելի գիշերը նրա միտքն այդպիսի գործնական մտքերով է զբաղված: Պոլեժայը շարունակեց.

— Յերբ մենք մեր զորամասում տակտիկական խնդիրներ եյինք լուծում, խնդրին մոտենում եյինք այսպես. դեսանտը վերցնում եյինք, ցրում բլուրներում ու ճահիճներում, ուղղակի մի տեղից մյուսն եյինք նետում: Այժմ յես տեսնում եմ, վոր տայգայում իսկական դեսանտային գործողությունն այդպես չպիտի լինի: Յես պարզեցի, վոր տայգայում դեսանտը ժամում մեկ կիլոմետրից ավելի արագ շարժվել չի կարող: Յես իսկական տայգայի համն առա: Այժմ, իմ զորամասը վերադառնալուց հետո յես արդեն կիմանամ, թե ինչպես նախապատրաստեմ իմ դեսանտը, վորպեսզի հարկ յեղած դեպքում նա կարողանա աշխատել տայգայում:

Յես զարմանում եյի, թե կապիտան Պոլեժայն ինչ հետաքրքիր յեզրակացություններ է անում մեր անձնական վորոնումներից: Իսկ նա չեր լռում:

— Այժմ ինձ մի հարց ել է զբաղեցնում: Յես ուզում եմ լուծել այդ հարցը: Ի՞նչպես կարելի յե ոդից, ուղղակի սավառնակից մարդուն բարձրացնել տայգայից, առանց նրա մոտ դեսանտ իջեցնելու: Ի՞նչպես անել, վոր կարելի լինի առանց իջնելու մարդուն կապել ու սավառնակ բարձրացնել: Յերբ զորամաս վերադառնամ, անպայման կառաջարկեմ, վոր բոլորը մտածեն այդ հարցի մասին. պարաշյուտիստին ինչպե՞ս հետ վերցնել սավառնակ:

Սկսեցի ննջել: Լիտվիննենկոն արթնացավ, վեր կացավ, մի անգամ ել հերթապահներին դիտեց, փոխեց նրանց և կապիտան Պոլեժային հրամայեց քնել: Կապիտանը հնազանդությամբ պառկեց, իսկ Լիտվիննենկոն սկսեց շրջել խարույկի մոտ: Հետո մոտեցավ ինձ, հարցրեց, թե յես ինչո՛ւ չեմ քնում և հանկարծ ասաց.

— Ի՛նչ հիանալի ծերունի յե: Յես շարունակ նրա մասին եմ մտածում:

— Ո՞ւմ մասին,— հարցնում եմ յես:

— Մաքսիմովը, վոր ձեզ բերեց մակույկով: Նա Նելկան կայանի կապի տեխնիկ է:

Մենք սկսեցինք խոսել Փոքր-Հյուսիսի ժողովուրդների մասին, այն ճնշման ու ստրկության մասին, վոր նրանք կրում եյին հեղափոխությունից առաջ: Լիտվիննենկոն ինձ պատմեց այդ շրջանում ճապոնացիների կատարած ինտերվենցիայի մասին, պարտիզանական պատերազմի մասին, այն մասին, թե ինչպես կանայք ու ծերունի պարտիզանները վոսկին տանում ու թաքցնում եյին տայգայում, վորպեսզի ճապոնացիների ձեռքը չընկնի: Յես հարցրի.

— Մաքսիմովը վաղո՞ւց է ապրում այստեղ:

Լիտվիննենկոն պատմեց, վոր Մաքսիմովը մինչև կարմիրների այստեղ գալը ապրել է վոչ թե Ամգունի ափերին, այլ հեռու, խուլ տայգայում: Նա մասնակցել է պարտիզանների հիանալի հերոսական արշավին, յերբ նրանք ճապոնացիներին քշում եյին տայգայի, Ամուրի վրայով:

Յես իմացա, վոր «Ռոդինա»-յի անձնակազմի վորոնումներին մասնակցել է Կերբիի շրջանի համարյա ամբողջ բնակչությունը: Կերբիի շրջգործկոմ են յեկել վորսորդ-եվենկների վեց բրիգադներ և ցանկություն են հայտնել գնալ մեզ վորոնելու: Վորսորդներին տվել են ամեն անհրաժեշտ բան և յուրաքանչյուր բրիգադի համար մարշրուտ են մշակել: Եվենկները դուրս են յեկել տայգա:

Չորս որ նրանք շրջել են տայգաներում, ճահիճներում ու մրրկաթափիներում: Նրանք անցել են Ամգունի ավազանի հսկայական տերիտորիան: Հոկտեմբերի 1-ին չհետազոտված է մնա-

ցել միայն Յուկաչի բլրի շրջանը։ Յեվ ահա, Կերբիի շրջգործկոմի նախագահ Կոզլովը, ՆԳԺԿ շրջբաժանմունքի աշխատակից Տրիֆոնովը և բուժակ կոմյերիտական Կրաշենինչենկոն վորոշել են այդ շրջանը գնալ։ Ուղեցույցը յեղել է Նիկոլայ Մաքսիմովիչ Մաքսիմովը։ Առույգ ու յեռանդուն ծերունին դրանից առաջ էլ շրջել էր այն բոլոր վայրերը, վորտեղ նրա կարծիքով սավառնակը կարող էր վայրէջք կատարած լինել։

Նիկոլայ Մաքսիմովիչը հենց նոր հոգնած վերադարձած է յեղել վորոնումներից, յերբ նրան հայտնել են, թե իրեն վերցնում են վորպես ուղեցույց։ Նա անմիջապես աշխուժացել է և սկսել ստուգել, թե ամե՞ն ինչ պատրաստված է էքսպեդիցիայի համար, սկսել է վորոնումների վարիանտներ մշակել։

Հոկտեմբերի 1-ին Կոզլովի խումբը Մաքսիմովի հետ կատերով ճանապարհ է ընկել Կերբիից։ Մինչև Կամենկա լավ են գնացել, բայց ավելի հեռուն կատերները յերբեք չեն գնացել։ Այստեղ Նիկոլայ Մաքսիմովիչը ցանկացել է ապացուցել, վոր էլի մոտ 50 կիլոմետր կարելի յե գետով վերև գնալ։ Այդ հաջողվել է։ Յեվ միայն յերբ գետի ավազակույտերը վերջնականապես փակել են կատերի ճամբան, միայն այդ ժամանակ Մաքսիմովը բոլորին մակույկներ է նստեցրել։

Ճանապարհը կրճատելու համար Մաքսիմովը մակույկներն ուղղել է գետի ճյուղով։ Բայց մի քանի կիլոմետր անցնելուց հետո էքսպեդիցիայի անդամները տագնապով տեսել են, վոր այլևս առաջ շարժվել հնարավոր չէ։ Մաքսիմովն առաջարկել է մակույկները քաշելով տանել։ Մինչև Ամգուն մնում էր առնվազն չորս կիլոմետր, բայց Մաքսիմովը մտածելու ժամանակ չի տվել։ Նա առաջինն է մակույկը դուրս քաշել ջրից, պարան կապել նրան ու սկսել քաշել։ Մյուսներն էլ հետևել են նրա օրինակին։

Գետը հասնելով՝ վորոշել են հանգստանալ։ Մաքսիմովը վոչ մի րոպե չի կորցրել։ Քանի դեռ մյուսները հանգստանալիս են յեղել, նա զննել է մակույկները և ջուրն իջեցրել։

Մինչև բլուրը մնալիս է յեղել 20 կիլոմետր։ Գնացել են ամբողջ գիշերը և յերբ վերջնականապես ուժասպառ են յեղել, վորոշել են իջևանել։ Մաքսիմովը խարույկ է վառել և կաթ-

սանը կախել նրա վրա։ Յեվ թեպետ այս անգամ չի դիմացել, քնել է, բայց առավոտյան էլի բոլորից շուտ է արթնացել։ Արևը ծագած է յեղել։ Մաքսիմովը դժգոհ լինելով, վոր շատ են քնել, կտրականապես դեմ է յեղել թեյ խմելուն։ Ստիպված են յեղել ծերունուն զիջել։

Նրանք հասել են Յուկաչի բլրի ստորոտը։ Այս ու այն ծառերից բռնելով սկսել են բարձրանալ բլրի գագաթը։ Առջևից գնալիս է յեղել Նիկոլայ Մաքսիմովիչը։ Բլրի գագաթից նա յերկար և ուշադիր դիտել է շրջակայքը, ուսումնասիրել է իր առջև փռված դաշտի յուրաքանչյուր բիծը։ Չգիտես ինչու նա համոզված է յեղել, վոր «Ռոդինան» անպայման այստեղ է գտնվում։ Ամբողջ հույսն այդ դաշտի վրա յե յեղել։ Բայց սավառնակը չի յերևացել։

Էքսպեդիցիայի անդամներից մեկը կրակել է, մի քիչ սպասել և էլի կրակել։ Բոլորը լարված ականջ են դրել։ Յերբ արձագանքը հեռվում լռել է, լսել են յերեք պատասխան կրակոց։

Մաքսիմովը վայրկենապես կերպարանափոխվել է։ Նա ուրախ բացականչություններով վազել է դեպի կրակոցները։ Բոլորն շտապել են նրա հետևից։

Անցել են էլի չորս կիլոմետր։ Մաքսիմովը բարձրացել է մի թմբի գլուխ և հանկարծ ձեռները վեր բարձրացնելով հուզված գոռացել.

— Սավառնա՛կը... Այստեղ է սավառնակը։

Շուրջը ջուր ու թմբեր են յեղել։ Էքսպեդիցիայի անդամները մինչև գոտիները թրջված, հազիվ շունչ քաշելով վազել են ուղեցույցի հետևից։

Նիկոլայ Մաքսիմովիչը բոլորի առաջն ընկնելով առաջինն է իր գիրկն առել Վալյային ու Պոլինային։ Յերկար ժամանակ նրան համոզելիս են յեղել, վոր շորերը փոխի, չոր շորեր հագնի։ Նա շատ է հուզվել, յերբ իմացել է, վոր միայն յերկու օդաչուհին են այնտեղ, իսկ յերրորդը թափառում է տայգայում։ Պնդելիս է յեղել, վոր անմիջապես գնան նրան վորոնելու։ Բայց արդեն գիշեր է յեղել, իսկ մյուս օրը յես ինքս եմ յեկել...

ԱՄԳՈՒՆԻ ԱՎԱԶԱԹՄԲԵՐՈՒՄ

Լիովլինենկոն իր պատմությունը վերջացրեց: Յես, վոր շատ եյի հուզվել, յերկար ժամանակ չեյի կարողանում քնել այդ սքանչելի դեպքերը և մտածում եյի իմ յերկրի հիանալի մարդկանց մասին: Ահա մի խուլ, հեռավոր յերկիր: Ի՛նչ սքանչելի ժողովուրդ է ապրում այստեղ: Դեռ վորքա՛ն քիչ ենք ճանաչում մեր մարդկանց, վորքան քիչ են պատմում նրանց մասին... Մարդու սիրտ է ուրախանում, յերբ մտածում և Մաքսիմովի մասին, Լիովլինենկոյի մասին, Պոլեժայի մասին: Նրանք ինձ հարազատ եյին թվում, կարծես ամբողջ կյանքումս ճանաչել ու սիրել եյի նրանց:

Առավոտյան դեմ քնեցի: Յերբ սկսեց լույսը բացվել, լեյտենանտ Ուլյանիչևն արդեն նախաճաշ եր պատրաստում: Ճամբարն շտապ վոտքի յելավ: Բոլորը կերան ու տեղավորվեցին մակույկներում: Պոլինան, Վալյան ու յես գնում եյինք ամորոչկաներով (մակույկի մի տեսակ): Ինձ հետ նստած եր բժիշկ Տիխոնովը, իսկ ամորոչկան վարում եր դարձյալ Մաքսիմովը: Պոլինայի հետ ամորոչկայում, բացի ուղեցույցից, տեղավորվել եր կոմիսար Լիովլինենկոն, Վալյայի հետ, Կերբիի քաղխորհրդի նախագահ Կոլլոմը: Մյուսները տեղավորվել եյին բատերում:

Դեռ ցուրտ եր, Ցուկաչի բլրի վրա դեռ յեղյամ եր յերևում: Մենք ճանապարհ ընկանք: Գետի ափին մնացին յերկու կանայք իրենց ուղեկիցներով: Ամգունի արագ հոսանքը մեզ առավ ու տարավ գեղեցիկ ափերի յերկարությամբ: Պոլինան անընդհատ ինչ-վոր յեղանակ եր շվշվացնում, Վալյան յերգում եր: Դժվար եր կտրվել մեզ շրջապատող հիանալի տեսարաններից:

Վալյան առաջարկեց.

— Մարինկա, արձակուրդին անպայման պիտի գաս այստեղ: Ի՛նչ լավ է այստեղ:

Յես Մաքսիմովին հարցրի, թե նա առաջ ինչո՞ւ յեր տայգայում ապրում և վոչ գետափին: Մաքսիմովը պատասխանեց.

— Վորպեսզի թագավորը չիմանա, թե յես ապրում եմ այստեղ:

Եվնեկ Մաքսիմովը, տայգայի ազատ բնակիչը, չեր ուզում գործ ունենալ ցարական կառավարության հետ: Նա գերադասում եր ապրել միայնակ, իշխանությունից հեռու, խուլ տայգայում, գազանների մեջ: Միայն խորհրդային իշխանության որով նա յեկավ գետի ափը, մարդկանց մոտ...

Ամգունն ավելի ու ավելի դալարուն եր դառնում: Տեղ-տեղ խիստ ուժեղ հոսանքը գետի միջով մի ափից մյուսն եր անցնում: Գետն արագ եր հոսում, ինչպես ջրվեժ: Յերբեմն թվում եր, թե ահա, վորտեղ վոր է շուռ կգան մեր փոքրիկ մակույկները, վորոնց յեզրից մինչև ջուրը յերկու մատ տեղ եր մնացել, և մենք կգնանք գետի հատակը: Բայց Մաքսիմովը ավազաթմբերի մոտ դանդաղում եր, սպասում եր մյուս մակույկներին, իսկ հետո ճարպկորեն մտնում եր արագ հոսանքի մեջ: Հոսանքը կալնում եր մակույկները, մի կողմից մյուսն եր նետում, բայց դուրս եր բերում հենց այնտեղ, վորտեղ հարկավոր եր Մաքսիմովին: Վոչ մի մակույկ շուռ չեկավ: Շատ ավազաթմբերում ջրի մեջ յերևում եյին մրրիկի թափած ծառերը: Նրանք ընկած եյին Ամգունի հատակին և միայն կոճղերն եյին դուրս ցցվել ջրից: Մաքսիմովը գիտեր այդ բոլոր ծառերի տեղը և շրջանցում եր նրանց, միաժամանակ մյուս մակույկների ընկերներին նախազգուշացնելով հնարավոր վտանգների մասին:

Հանկարծ Պոլինայի մակույկը ճեղքվածք ստացավ: Ըստ յերևույթին նա դիպել եր ստորջրյա կոճղի: Մակույկն սկսեց ջրով լցվել: Անմիջապես ձեն տվին Մաքսիմովին: Նա բոլոր մակույկները տարավ դեպի գաուխթան ափը, վորտեղ քարքարոտ պլյաժի մի նեղ շերտ կար միայն: Մենք ափ դուրս յեկանք, սկսեցինք նախաճաշել շոկոլադով ու գալետով և հյուրասիրել մեր սքանչելի ուղեցույցին: Իսկ Մաքսիմովը ինչ-վոր մի տեղից դուրս հանեց մի փաթեթ, վորի մեջ կեչի խեժ կար և սկսեց կրակի վրա տաքացնել: Նա մակույկը դուրս քաշեց ջրից և ճեղքը վարպետորեն ծածկեց խեժով: Մակույկը նորից

ջուրն իջեցրին և մենք չարժվեցինք առաջ: Յես Մաքսիմովին մի ռալիկ չոկոլադ ու գալետ տվի և ասացի.

— Կերեք, Մաքսիմով, հետո կդնանք:

— Վոչինչ, յես ճանապարհին կուտեմ:

Մակույկում յերկու թի կա: Ամորոչկան թիավարում են համարյա այնպես, ինչպես բայդարկան: Բայդարկայի թիերին յես լավ եմ տիրապետում: Խնդրեցի, վոր ինձ թույլ տան Մաքսիմովին ոգնել թիավարելու: Բայց Մաքսիմովը վոչ մի կերպ չեր ուզում համաձայնել:

— Հանգստացեք, չի հարկավոր:

Յերբ Մաքսիմովն սկսում եր հոգնել, յես վերցնում եյի թիերը և վորտեղ հոսանքն ուժեղ չեր լինում, սկսում եյի թիավարել:

Մրցավազք եյինք սարքում: Իրար առաջ եյինք ընկնում, բայց և այնպես մենք՝ Մաքսիմովի հետ միշտ բոլորից առաջ եյինք լինում: Հետ մնացած մակույկներից լսվում եյին Վալյայի ու Պոլինայի ձայները: Նրանք կանչում եյին.

— Ճիշտ վոր ճիշտ. «Ռոդինա»-յի Փլաշչաուրմանը և Ամգունի Փլաշչաուրմանը գլխավորում են յերթը:

Ամբողջ որը մենք ուրախ թիավարում եյինք: Յերեկոյան դեմ գետի վրա մի սավառնակ յերևաց: Նա «Ռոդինա»-յի անձնակազմն եր վորոնում: Տղերքը բատում աշխույժ հենվել եյին թիերին և բարձրաձայն յերգում եյին: Սովորաբար ամայի ու խաղաղ Ամգուն գետը խլանում եր կանչերից, յերգերից ու կատակներից: Հաճախ մեր գլխի վրայով բադերի յերամներ եյին թռչում: Բոլորն ափսոսում եյին, վոր վորսով զբաղվել չի կարելի: Ա՜յ թե կարելի լիներ մի քանի բադ սպանել և ընթրիք պատրաստել նրանցից...

Մութն ընկնելուն շատ չեր մնում, յերբ մեր մակույկները մոտեցան կատերին: Նա կանգնած եր ուղիղ ափին կպված:

Մենք փոխադրվեցինք կատեր, իսկ Մաքսիմովը մնաց ափին: Նա ձեռքերով արցունքներն եր սրբում: Յերբ մեր կատերը հեռանում եր, նա հրամանատարին ասաց.

— Տեսեք, նրանց տարեք այնպես լավ, ինչպես յես եմ բերել ոմորոչկաներով:

Մենք յերկար ժամանակ ձեռքով եյինք անում Մաքսիմովին: Յերկար, յերկար նայում եր մեր հետևից փոքրիկ, սիրելի ծերունին: Այժմ նա իր նավատորմիղը յերեք որ ու գիշեր պիտի հետ քշի, հասցնի այն տեղը, վորտեղից այսոր առավոտյան մենք դուրս յեկանք:

Մեր նոր ընկերները՝ «Դալնեվոստոչնիկ» կատերի անձնակազմը՝ ավելի պակաս ճարպիկ չեյին և ավելի քիչ ցանկություն չունեյին վորքան կարելի յե շուտ մեզ Կերբի հասցնելու:

Առաջին անգամն եր, վոր կատերն Ամգունով այդքան շատ վերև եր բարձրացել: «Դալնեվոստոչնիկը» հաճախ նստում եր ծանծաղուտի վրա: Այն ժամանակ նավաստիները ցուրտը հաշվի չառնելով ջուրն եյին նետվում և լողալով գտնում խոր տեղերը: Կատերը ձողերով քաշում եյին ծանծաղուտի վրայից և նավարկում առաջ: Մի տեղ գետի վոլորանում հորձանքն այնքան ուժեղ եր և հոսանքն այնքան արագ, վոր կատերը պիտի զարնվեր ափին ու տաշեղի պես փշուր-փշուր լիներ. Մենք չեյինք հասկանում, թե ինչ է կատարվում, բայց տեսանք, թե ինչպես «Դալնեվոստոչնիկ»-ի անձնակազմից ամենայերիտասարդը փոխադրվեց փայտե բատի մեջ, վոր գնում եր կատերի կողքով, և այդ բատով արագ նավարկեց մյուս ափը: Այստեղ նա մի ծայրն ամրացրեց ծառին և նրանով մեր կատերը պահելով՝ չեր թույլ տալիս, վոր կատերն արագ գնա հոսանքով: Բայց հանկարծ ծառը կոտրվեց և կատերն արտակարգ ուժով առաջ նետվեց: Սակայն խիզախ յերիտասարդն առաջվա պես ծայրը բաց չեր թողնում ձեռքից: Նա ափով քարշ եր գալիս կատերի հետևից: Մենք հուզմունքով նայում եյինք ափին, վորտեղ խիզախ յերիտասարդը շարունակում եր գերմարդկային պայքարը փոթորկահույզ հորձանքի դեմ: Կատերից ջուրը նետվեց մի բարձրահասակ նավաստի: Նա անմիջապես ափ հասավ և ոգնեց ծայրը կապելու մի ուրիշ ծառի: Կատերը ձիգ եր տալիս, բայց արդեն հոսանքը հաղթահարվեց և նա վողջ մնաց:

Համեմատաբար հանդարտ ջրի մեջ ընկնելով մենք սպասեցինք յերկու խիզախներին, վորոնք փայտե մակույկով մեզ մոտ յեկան դժվարանցանելի հորձանքների ու սահանքների միջով:

«Դալնեվոստոչնիկ» կառերում մենք հեռագիր կազմեցինք ուղղված ընկեր Ստալինին և կառավարությանը: Յերեքս միասին իջանք լոցիկը, Պոլինան առաջարկեց իր տեքստը, իսկ յես և Վալյան մի քանի ուղղում մտցրինք: Հենց վոր մենք Կերբի հասանք, խկույն հեռագրերը հաղորդվեցին Մոսկվա: Մենք գրում եյինք·

«Մոսկվա, Կրեմլ

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ·

Մենք, սոցիալիստական մեծ Հայրենիքի դուստրներս, ձեր անունը սրտներումս, առանց վայրեջքի թռանք ամպամածության, մառախուղի, սառցապատման միջով և գիշերով Մոսկվայից՝ անծայրածիր Հայրենիքի սրտից, մինչև Ամուրի ափերը: Ճահճի վրա, տայգայում, բլուրների մեջ մենք մենակ չեյինք՝ մեզ հետ եյին մեր ամբողջ բազմամիլիոն ժողովուրդը, կուսակցությունը և Դուք, ընկեր Ստալին: Հայրական հոգատարության համար շնորհակալություն:

ԳՐԻԶՈԴՈՒԲՈՎԱ, ՈՍԻՊԵՆԿՈ, ՌԱՍԿՈՎԱ»:

«Մոսկվա, Կրեմլ

ԸՆԿ· ԸՆԿ· ՍՏԱԼԻՆԻՆ, ՄՈԼՈՏՈՎԻՆ, ԿԱԳԱՆՈՎԻՉԻՆ, ՎՈՐՈՇԻԼՈՎԻՆ, ՄԻԿՈՅԱՆԻՆ, ԿԱԼԻՆԻՆԻՆ, ԺԴԱՆՈՎԻՆ, ԱՆԴՐԵՅԵՎԻՆ·

Ձեր առաջադրանքը կատարված ե: Անվայրեջք թռիչքը Մոսկվա-Հեռավոր Արևելք «Ռոդինա» սավառնակով կատարված ե 26 ժամ 29 րոպեյում: Վայրեջք ե կատարված Ամգունի գետի մոտ ճահճուտ մի դաշտում, անմարդաբնակ վայրում: Անձնակազմն առողջ ե, նյութական մասը՝ կարգին:

Ամբողջ սրտով շնորհակալություն ենք հայտնում ձեր ցույց տված ստալինյան հոգատարության և օգնության համար:

Պատրաստ ենք կատարելու կուսակցության ու կառավարության ամեն մի առաջադրանք:

ԳՐԻԶՈԴՈՒԲՈՎԱ, ՈՍԻՊԵՆԿՈ, ՌԱՍԿՈՎԱ»:

Կերբիին մոտեցանք ուշ գիշերին: Վորքան յեղավ մեր զարմանքը, յերբ ավան հասնելով՝ մենք տեսանք, վոր ամբողջ բնակչությունը փողոցում մեզ ե սպասում: Մթության մեջ մի կարճատև միտինգ սարքվեց, ապա մենք գնացինք գիշերելու: Յերբ մեզ տարան մի փոքրիկ ու կոկիկ տուն, մենք զարմա-

ցանք: Մեզ համար պատրաստված եր մի ընդարձակ, լավ լուսավորված սենյակ: Անկողինները ծածկված եյին ձյունափայլ սպիտակեղեններով, ամբողջ սենյակը զարդարված եր ժանյակներով ու ծաղիկներով: Մեզ բացատրեցին, վոր այդ բոլորն արել են խետագուրովական աղջիկները: Յերկար ժամանակից հետո առաջին անգամ մենք հարկի տակ եյինք մտնում:

Վալյան ու Պոլինան բաղնիք գնացին: Այնտեղից վերադառնալով պատմեցին, թե բաղնիքն ել հիանալի յեր, ամբողջապես զարդարված ծաղիկներով և վոր այնտեղ իրենց հյուրասիրել են պաղ կվասով:

Իմ վոտքերը ցավում եյին: Յես պառկած եյի: Յերկու խետագուրովական աղջիկ վազեցին ինձ մոտ, սկսեցին հարց ու փորձ անել և պատմել իրենց մասին, թե ինչպես են իրենք Վալյա Խետագուրովայի կոչով յեկել այստեղ, ինչպես եյին իրենց ծնողներն անհանգստանում, յերբ իրենք հեռանում եյին տանից, ասում եյին՝ ինչո՞ւ յեք գնում այդ հեռավոր յերկիրը, և թե ինչպես ե իրենց դուր յեկել այս յերկիրը: Ամուսնացել են հիանալի մարդկանց հետ, իրենց նման ենտուզիաստների հետ: Նրանցից մեկը հիմա յերեխա ունի և նա բոլորովին յերջանիկ ե: Նա սիրում ե Կերբին և այդ ամբողջ սքանչելի Հեռավորարևելյան յերկրամասը:

Նրանք խոսում եյին արագ, իրար ընդհատելով, շտապելով արտահայտել իրենց մտքերը: Այդպես խոսում են մոտիկ հարազատները, յերբ յերկար անջատումից հետո կարճ ժամանակով հանդիպում են իրար: Յես ինձ զգում եյի ինչպես իմ տանը: Յեկավ եվս մեկ խետագուրովական և ինձ համար համեղ ընթրիք բերեց: Յեկավ բժիշկ Տիխոնովը և ասաց, վոր հարկավոր ե իմ վոտքերը վաննա դնել: Անմիջապես վաննա դրան, տաք ջուր բերին, և սիրելի բժիշկը շատ գոհ եր, վոր իր հիվանդը վերջիվերջո սկսում ե բուժում ընդունել բժշկական գիտության բոլոր կանոնների համաձայն:

Առաջին անգամ յես քուն մտա փափուկ ու մաքուր անկողնում:

Առավոտյան մեզ հայտնեցին, վոր Մոսկվայում ուղիղ հեռախոսագծի մոտ մեզ սպասում են մեր հարազատները: Մենք

մեծ հուզումով ու յերկյուղով եյինք գնում հեռագրատուն: Բայց այստեղ իմացանք, որ և՛ մայրիկները, և՛ մեր յերեխաները ողջ ու առողջ են: Յես ձայնը չեմ լսում, բայց ուղիղ հեռախոսագիծը պատասխանում է բոլոր հարցերին: Ուղիղ հեռախոսագծին է մոտենում իմ աղջիկը: Նա ասում է, որ յես պարտավոր եմ «Պիոներսկայա Պրավդա» թերթի համար մի հոդված գրել, թե ինչպես եյի ապրում տայգայում:

— Լավ, կգրեմ, անպայման կգրեմ:

Հենց որ մենք հեռագրատնից վերադարձանք, մեզ հայտնեցին, որ հեռագիր է ստացվել ընկեր Ստալինից և ընկեր Մոլոտովից: Մենք խնդրում ենք հեռագիրը բերել մեր բնակարանը: Բերում են: Մենք Վալյային չտալեցնում ենք, մեզ թվում է, թե նա չափազանց դանդաղ է բաց անում հեռագիրը: Վալյան կարդում է.

«Կերչի. «Ռոդինա» սավառնակի անձնակազմին՝
ԸՆԿ. ԸՆԿ. Վ. ԳՐԻԶՈԴՈՒԲՈՎԱՅԻՆ, Պ. ՈՍԻՊԵՆԿՈՅԻՆ,
Մ. ՌԱՍԿՈՎԱՅԻՆ.

Ջերմորեն շնորհավորում ենք ձեզ Մոսկվա—Հեռավոր Արևելք կատարած հաջող ու հիանալի անվայրեջք թռիչքի առթիվ:

Ձեր հերոսական թռիչքը, 6450 կիլոմետր, իսկ ուղիղ գծով 5947 կիլոմետր 26 ժամ 29 րոպեյում, կանանց միջազգային ռեկորդ է հանդիսանում ինչպես ուղիղ գծով, այնպես էլ կոտրված գծով:

Ձեր խիզախությունը, սառնարյունությունը և թռիչքային բարձր վարպետությունը, որ ցուցաբերեցիք ճանապարհի ամենադժվարին պայմաններում և վայրեջքի ժամանակ, ամբողջ խորհրդային ժողովրդի հիացմունքն են առաջացնում:

Հպարտանում ենք ձեզանով և ամբողջ հոգով սեղմում ենք ձեր ձեռքը:

Համ.Կ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ հանձնարարությամբ՝

Ի. ՍՏԱԼԻՆ
Վ. ՄՈԼՈՏՈՎ».

Հավատս չի գալիս. մի՞թե այս հեռագիրն իրոք մեզ է ուղարկված: Չե՞ որ մենք ընկեր Ստալինին և ընկեր Մոլոտովին այնքա՛ն հոգս ու անհանգստություն ենք պատճառել... Իսկ նրանք մեր թռիչքն անվանում են հերոսական և գրում են, թե ամբողջ հոգով սեղմում են մեր ձեռքը: Մի՞թե մենք արժանի յենք դրան:

Անհամբերությամբ իրար ձեռքից խլում ենք հեռագիրը: Յուրաքանչյուրս ուզում է իր աչքերով տեսնել այդ թանկագին տողերը, կարդալ հարազատ, սիրելի անունները:

Յերեքս էլ ափսոսում ենք, որ չի կարելի հենց այս րոպեյին նորից ստարտ վերցնել Շչելկովոյի աերոդրոմից, մենք ասում ենք, որ հավանորեն հիմա մեր ապարատը չեր կարող և մենք ուր ուզենայինք՝ կթռչեյինք նույնիսկ առանց վառելանյութի:

Վալյան ամուր գրկում ու համբուրում է յերկուսիս էլ, և մենք յերջանիկ ու հուզված շնորհավորում ենք իրար:

Յեկան Կերչի աշխատողները և հրավիրեցին իրենց հետ միասին ճաշելու: Այս սեղանին, վերջապես, կատարվեց տայգայում տեսած իմ յերազներից մեկը: Տայգա գիշերներից մեկում, յերբ իմ շոկոլադի պաշարն արդեն բոլորովին վերջանալու մոտ եր, յես յերազումս տեսա, որ խաշած կարտոֆիլով աղած ձուկ եմ ուտում: Կարտոֆիլը տաք եր և նրանից գոլորշի յեր բարձրանում: Կերչի ճաշարանում սեղանի վրա յես տաք կարտոֆիլ տեսա, որից գոլորշի յեր բարձրանում, և սխտորով աղած ձուկ, հենց այն աղած ձուկը, որի մասին յես տայգայում յերազում եյի: Նույնիսկ բժիշկ Տիխոնովը, որ ոչ մի րոպե չեր հեռանում ինձանից և շարունակ հետևում եր, որ յես որևէ ավելորդ բան չուտեմ, նույնիսկ նա ինձ թույլ տվեց աղած ձուկ ուտել:

Կերչում հրաժեշտի միտինգին հանդես յեկավ Պոլինան: Մեզ ճանապարհ դրին նույն «Դալնեվոստոչնիկ» կատերով: Ճանապարհ դրին հոգատարությամբ, փաղաքշանքով, ինչպես հարազատների:

Կատերը ճանապարհ ընկավ: Նա պետք է անցներ ամբողջ Ամգունը և նրա գետաբերանում մոտենար այն յերեք կատեր-

ներին, վորոնք արդեն Կոմսոմոլսկից դուրս եյին յեկել մեզ ընդառաջ:

Կերբիից հետո մեր կատերն անճանաչելի յեր դարձել: Վերին տախտակամածը զարդարել եյին զարդերով, խցիկները հենց նոր պատել եյին գեղեցիկ բրդե կտորով: Այժմ կատերի վրա կային մետաքսե վարագույրներ, փափուկ անկողին, բարձեր, վերմակներ: Մեր կատերին կպել եյին Կերբիի խետագուրովական աղջիկների հոգատար ձեռքերը:

Մենք Ամգունով դեպի ցած շարժվեցինք: Ամենից շատ անհանգստանում եր բժիշկ Տիխոնովը. ինչ ենք ուտելու մենք: Ամեն մի իջևանում, ամեն մի փոքրիկ կայանում նա դուրս եր վազում վորևե բան ճարելու: Մերթ նրան վորևե հյութ եր հարկավոր լինում, մերթ չաղ կարգով հավ եր հարկավոր, մերթ ինչ-վոր ջերմացուցիչներ եր հնարում, մերթ տաք վաննաներ: «Դալնեվոստոչնիկ»-ը դարձել եր բուժման ֆիզիկական մեթոդների լողացող ինստիտուտ:

ԿԵՐԲԻ—ԿՈՄՍՈՄՈԼՍԿ—ԽԱԲԱՐՈՎՍԿ

Զարմանալիորեն լայն ու հզոր ե Ամուրը, մանավանդ այնտեղ, ուր նրա մեջ ե թափվում Ամգունը: Ափերը բոլորովին չեն յերևում:

Թվում ե, թե «Դալնեվոստոչնիկ»-ը ծովն ե դուրս յեկել: Մենք տախտակամածին նստած հիանում եյինք մեր առաջ բացված ընդարձակ ջրերով: Հանկարծ մեր առաջ, ճանապարհի վրա տեսնում ենք յերեք կատեր տոնական ձևով զարդարված դրոշակներով: Նրանց տախտակամածներին մեծ բազմություն կա: «Դալնեվոստոչնիկ»-ն արագ մոտենում ե կատերներին և մենք նրանց վրա նկատում ենք վողջույնի լոզունգներ ու պորտրետներ, մեկի վրա Վալյային, մյուսի վրա Պոլինային և յերրորդի վրա խմբը: Մենք հուզվում ենք, գիտենք, վոր կատերներից մեկի վրա յե գտնվում մեր սավառնակի վորոնման հանձնաժողովի նախագահը: Այդ կատերները մեզ տանելու յեն Կոմսոմոլսկ: «Դալնեվոստոչնիկ»-ը դանդաղորեն մոտենում ե նավատորմին: Այնտեղից «ուռա» յեն գոռում: Կատերներից մեկի վրա

մենք տեսնում ենք «Պրավդա»-յի և «Իզվեստիա»-յի թղթակիցներին: Նրանք ել են «ուռա» գոռում, ձեռքով են անում և հենց այդտեղ ել, թեև մենք նրանցից բաժանված ենք ջրով, մեզանից պահանջում են առանձին ինտերվյու: Ինտերվյուն նրանց անհապաղ ե հարկավոր:

Ջերմագին հրաժեշտ ենք տալիս այն հիանալի ընկերներին, վորոնց հետ անցել ենք մեր յերկար ճանապարհն Ամգուն գետով: Վշտալի յե նրանցից բաժանվելը:

Փոխադրվում ենք «Մարատ» կատերը: Այս արդեն բոլորովին շքեղ ու հարմար կատեր ե, ծովային մի փոքրիկ նավ՝ հիանալի կահավորված կայուտաներով: Հեռանում ենք Ամգունի գետաբերանից, Ամուրով վերև ենք բարձրանում հոսանքին հակառակ, իսկ «Դալնեվոստոչնիկ» կատերը վերջին պատվանշանը տալով՝ գնում ե ցած՝ դեպի Նիկոլայևսկ: Դժվար թե «Դալնեվոստոչնիկ»-ին հաջողվի այս տարի բարձրանալ Կերբի: Մի քանի որից հետո Կերբիի շրջանում Ամգունը կսառչի և հավանորեն կատերն ստիպված կլինի մնալ Ամուրի Նիկոլայևսկում:

Ամուրի վոլորանում, մի մեծ, գեղեցիկ բլրի այն կողմը վերջին անգամ տեսնում ենք «Դալնեվոստոչնիկ»-ը: Նա թաղնվում ե՝ իր հետևը ջրում թողնելով փոթորկալի հետքեր...

Մենք իջնում ենք կայուտա և տեղավորվում փափուկ, կոկիկ բազմոցների վրա: Խոհարարները զարմանալի համեղ ճաշ են բերում: Բժիշկ Տիխոնովը մռայլ նայում ե չթույլատրված ուտելիքներին. ո՛, վաղը նա իր բուռը կառնի այդ խոհարարներին:

Մեզ հետ միասին կատերում տեղավորվում ե սպորտային կոմիսար Միշա Յերեմինը՝ իր բարոգրաֆներով: Նա կատերում պատեֆոն ե ճարել և լսում ու դնում ե ուտյոսովյան պլաստինկաներ: Ճաշելուց հետո բարձրանում ենք տախտակամած՝ Ամուրի գեղեցկություններով հիանալու: Մյուս յերկու կատերները գալիս են մեր կողքից: Առաջին իսկ րոպեյին մեր աչքին ե ընկնում, վոր հարևան կատերը խիստ թեքվել ե ձախ կողքի վրա, թվում ե, թե վորտեղ վոր ե ջուրը կհավասարվի նրա տախտակամածին: Պատճառը այդ կատերով յեկող թերթերի թղթակիցներն են, վորոնք հավաքվել են մի կողմի վրա: Նրանք

մեզ ձեռքով են անում և պահանջում են, վոր իրենց փոխարեն մեր կատերը: «Մարտի»-ի նավապետն առարկում է.

— Նրանք այնքան շատ են, վոր... կսուզեն մեր կատերը:

Միևնույն է, առաջին իսկ կայանում բոլոր թղթակիցները դը-նում են հեռագրատուն և հեռագիր տալիս հետևյալ նշումով. «Մարտիի նավեզրը»... Այդ անմեղ հանցանքը գործելով հինգ թերթերի թղթակիցներն, այնուամենայնիվ, բարձրանում են մեր կատերը և մի քանի ժամ շարունակ մեզանից վրեժ լուծում այն յերկար օրերի համար, վորոնց ընթացքում նրանք յեկել են մեզ ընդառաջ: Մենք խոնարհաբար և բարեխղճորեն հերթով բավարարում ենք մամուլի ներկայացուցիչների հետաքրքրու-թյունը:

Յուրաքանչյուր նավահանգստում մեզ դիմավորում են տեղա-կան բնակիչները: Այնտեղ, վորտեղ ռազմական կայազոր կա, մեզ դիմավորում են զորամասերը՝ յերաժշտությամբ և պաստառ-ներով: Հանկարծ աջ կողմից մեր առաջն է ընկնում մի ռազմա-նավ: Այդ նավի ամբողջ անձնակազմը շարված է վերևի տախ-տակամածում: Մեզ սալյուտ են տալիս և դրոշակներով ող-ջույն հաղորդում:

Կոմսոմոլսկին մոտենում ենք մութ ժամանակ: Ինձ դուրս բերին վերին տախտակամածը: Գիշերը Ամուրն ավելի լայն, ավելի հզոր է թվում: Ալիքները կարծես ծովի ալիքներ լինեն: Ուժեղ քամի յե, ահեղ յերկինք: Իսկ առջևում, բլուրի հետևը կրակներ են, բազմաթիվ լույսեր: Մենք վաղուց չենք տեսել այդպիսի տեսարան, այդպիսի մեծ քաղաք: Գույնզգույն լույ-սերով լուսավորված մեր կատերը մոտենում է Կոմսոմոլսկի նա-վահանգստին: Մենք մեծ բազմություն ենք տեսնում կանգնած ափին, սանդուղքների վրա: Հենց վոր կատերը կպչում է նա-վամատույցին՝ յերաժշտախումբը նվագել է սկսում: Նավա-հանգստից մենք գնում ենք մեքենայով՝ յերիտասարդության հիանալի քաղաքի, մեր կոմյերիտականների ձեռքով կառուցված քաղաքի միջով:

Գնում ենք քաղաքային միտինգի: Ստադիոնի ամբողջ հրա-պարակը լիքն է ժողովրդով: Վորքա՞ն տարորինակ է. համար-յա վոչ մի մեծահասակ մարդու դեմք չկա: Միայն յերիտա-

սարդություն է: Մթության մեջ, լուսարձակների լույսի տակ մեր առաջ յերևում են ուրախ, աշխույժ դեմքեր, ծիծաղող, ժպտացող դեմքեր, փայլփլուն աչքեր: Կոմսոմոլսկում մի տեսակ ավելի առույգ և ուժեղ են հնչում մեր յերգերը:

Յերբ մենք սկսում ենք խոսել, ամեն ինչ լռում է: Միտինգը վերջանում է, բայց ժողովուրդը դեռ յերկար ժամանակ չի ցրը-վում: Բոլորը ցանկանում են նորից ու նորից խոսել մեզ հետ: Մենք գնում ենք մի նոր շենքում մեզ հատկացված բնակարանը: Ինչ տարորինակ է, վոր ճահիճների մեջ, հեռավոր տայգայում այդպիսի գեղեցիկ, կոկիկ տներ կան: Սենյակները զարդարված են բոլորովին այնպես, ինչպես Մոսկվայում: Բայց չէ՞ վոր վեց տարի առաջ այստեղ մի սովորական տայգա յեր, ճիշտ այն-պես, վորով յես եյի թափառում:

Առավոտյան մեզ ցույց են տալիս քաղաքը: Դեռևս չնահան-ջած տայգայի մեջ բարձրացել են վիթխարի նավաշինարաններ, ցեխեր. այդ բոլորը կոմյերիտականների ձեռքով է արված: Վերջերս Կոմսոմոլսկում մեծ տոն է յեղել. նավաշինարանը բաց է թողել առաջին խոշոր նավը: Այդ նավն իջեցրել են Ամուրի ջուրը և ուղարկել Օխոտի ծովը: Մեզ ուրիշ գործարաններ էլ են ցույց տալիս: Ահա մի հոյակապ, խոշոր շենք: Հսկա գոր-ծարանի կողքին բանվորական ավանն է կոտտեջի տիպի տներով: Այստեղ կան նաև խոշոր քարաշեն տներ: Մնացել է հին նանա-յական գյուղի փողոցը: Մեզ բացատրում են, թե այս հին փայ-տաշեն տնակն այն ամենն է, վոր յեղել է այստեղ կոմյերիտա-կանների գալուց առաջ: Նանայական այս խուլ գյուղի մանրիկ, ծռված, անճոռնի տնակները տարորինակ է տեսնել նավաշի-նարանների, գործարանների կողքին, ելեկտրականությամբ լու-սավորված տների կողքին: Պահպանվել են և այն խրճիթները, վորոնց մեջ ապրելիս են յեղել Կոմսոմոլսկի առաջին կառուցող-ները: Հիմա այդ խրճիթներում վոչ վոք չի ապրում, դրանք պատմական հուշարձաններ են:

Մենք գնում ենք հեռագրատուն: Դրված է մի հասարակ հե-ռագրափող, և հերթապահ ռադիոհեռախոսիչը նորմալ ձայնով, վորպես յեթե խոսելիս լիներ վորևէ մեկի հետ հենց այստեղ, Կոմսոմոլսկում, ասում է.

— «Մոսկվա, Մոսկվա: Յես կոմսոմոլկն եմ, յես կոմսոմոլկն եմ»:

Առաջինը կանչում են Վալյա Գրիզոդուբովային: Նա խոսում է իր հարազատների հետ, Սոկոլիկի հետ, իսկ յես ու Պոլինան շունչներս պահած լսում ենք յուրաքանչյուր խոսքը և հետևվում նրա դեմքի արտահայտությանը: Նրանց տանն ամեն ինչ բարեհաջող է: Վերջապես խոսում եմ յես: Հեռախոսի մոտ իմ փոքրիկ աղջիկն է: Լսում եմ նրա ձայնը: Նա ինձ հարցնում է, կգնա՞մ իրենց գյուղը: Նա պահանջում է, վոր տեղ հասնելուն պես առաջին իսկ որը գյուղ գնամ... Այդպես է ուզում նա և նրա ընկերուհիները: Կգամ, դե, ի հարկե, կգամ: Նա ասում է, վոր տանն ամեն ինչ կարգին է, վոր ինքը խելոք է յեղել և յոթ «գերազանց» ունի: Հետո խոսում է մայրիկս: Այժմ մենք բոլորովին հանգիստ ենք մեր հարազատներից:

Կոմսոմոլսկից ճանապարհ ենք ընկնում զրահանավով: Զըրահանավ են բերում վանդակում դրած մի սկյուռ: Այդ Կոմսոմոլսկի պիոներների նվերն է իմ Տանյուշային: Ամուրի նավատորմի կարմիր-նավատորմայինները մեզ դիմավորում են ջերմ ու սրտաբաց, մեզ հատկացնում են ամենալավ կայուտները: Ինձ տեղավորում են հրամանատարի կայուտում, Վալյային ու Պոլինային՝ կոմիսարի:

Կոմսոմոլսկում բժիշկ Տիխոնովը հաշտացել է ելեկտրական սարքերով: Այժմ նա իր հետ մի ամբողջ ելեկտրոկաբինետ ունի և զրահանավի վրա անդիջում ու անողոք կերպով, տառացիորեն նշանակված ժամերին ելեկտրականությամբ բուժում է իր միակ հիվանդի վոտքերը: Յես հանձնվում եմ. նրա գործը միայն ինձ բժշկելն է, մյուս բոլորն առողջ են, և յես տակավին կիսով ու ակամա ինձ պահում եմ հիվանդի դերում: Յերբեմն նույնիսկ ինձ ել է թվում, թե հիվանդ եմ: Բայց մի՞թե կարելի յե հիվանդ լինել, յերբ շուրջդ այնքան լավ է, այնքան ուրախ:

Հիանալի ժողովուրդ են կարմիր-նավատորմայինները: Մենք նրանց պատմում ենք մեր թռիչքի մասին, բայց ավելի մեծ սիրով ականջ ենք դնում նրանց պատմածներին. ինչպես են նրանք Ամուր գետով նավարկում սահմանի յերկարությամբ, ինչպես են Ամուրի ջրերում ճապոնական նավերի հանդիպում, ինչպես են ճապոնական նավերը մեր զրահանավը տեսնելուն պես ամ-

բողջ արագությամբ չքանում, մանավանդ յերբ զրահանավի թնդանոթների պատյանները բացված են լինում: Պոլինան վերին տախտակամածում կարմիր-նավատորմայինների հետ ուկրաինական պար է պարում: Հետո զրահանավի անձնակազմը մեզ համար վարժական տագնապ է սարքում: Մենք կանգնած ենք վերևում, կամրջակի վրա: Հնչում է ազդանշանը: Կայծակի արագությամբ փակվում են նավախցերի անցքերը, բացվում են հրանոթները, զրահանավը պատրաստ է կռվի: Յուրաքանչյուր կարմիր-նավատորմային լավ գիտե իր տեղը և ճշտորեն հրամանի համաձայն կատարում է մարտական առաջադրանքները:

Խաբարովսկին մոտենում ենք ցերեկով: Առջևում յերևաց մեզ ընդառաջ յեկող ռազմանավերի նավատորմը: Ռազմանավերը և յերեք կատեր մեր կողքից անցնելով սալյուտ են տալիս: Ազդանշանավորները դրոշակներով հաղորդում են կարմիր-նավատորմայինների ու Ամուրի նավատորմի հրամանատարի ողջույնը:

Մեր զրահանավի ազդանշանավորի միջոցով հաղորդում ենք պատասխան ողջույն: Յես տախտակամածից չեմ հեռանում: Ահա և Խաբարովսկի գեղեցիկ կամուրջը: Զրահանավը մոտենում է Խաբարովսկին: Մենք տեսնում ենք, թե ինչպես քաղաքում մարդկային բազմություններ են շարժվում դրոշակներով: Նոր հանդիպումը հուզում և ուրախացնում է մեզ:

ՎՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ՄՈՍԿՎԱ

Գնացքը Մոսկվա հասնելուց մեկ որ առաջ հանդես յեկան զուտ կանացի տնտեսավարական հոգսեր: Նախ Պոլինան, ապա նրա հետևից նաև մենք՝ յես ու Վալյան, սկսեցինք մեր մետաքսի հագուստը լվանալ ու խնամքով արդուկել, մաքրել ու կարգի բերել մեր զամշե կոստյումները: Այդ բոլորով զբաղվում եյինք մի առանձին վոգևորությամբ:

Մոսկվա հասնելուց առաջ վերջին կայարանում՝ Ալեքսանդրովում վաղոն նստեցին կինոխրոնիկայի ներկայացուցիչները: Նրանցից մենք իմացանք, վոր մեր գալու առթիվ Մոսկվայում միտինգ է լինելու, հետո մենք գնալու յենք ընկեր Ստալինի մոտ: Յես ու Պոլինան իսկույն վազեցինք կուպե՝ Վալյայի

մոտ։ Նա հանգստանում էր։ Մենք սկսեցինք նրան քաշքշել.

— Վալյա, Վալյա, շո՛ւտ, վեր կաց։ Մենք Մոսկվայում գնալու յենք Ստալինի մոտ։

Մենք շատ հուզված եյինք։ Պոլինան շարունակ դիմում էր ինձ.

— Հապա, մի ավելի լավ կապիր փողկապս։

Կապում եյինք փողկապները, տասն անգամ ուղղում եյինք գլխարկներս, մեկը մյուսի գլխարկը, նորից ու նորից նայում եյինք իրար, ուղղում։ Դեռ Մոսկվայից շատ հեռու արդեն դուրս եյինք յեկել տամբուրը և անհամբերությամբ նայում եյինք, թե շո՞ւտ կհասնենք մեր հարազատ Մոսկվա։

Յեվ, ահա, գնացքը մոտենում է Մոսկվային։ Յերկաթուղագծի յերկարությամբ բոլոր տներից, բոլոր պատուհաններից մարդիկ ձեռքով են անում մեզ, իսկ մենք անհամբերությամբ բաց ենք անում տամբուրի դուռը և քիչ է մնում կախվենք սանդղակից։ Մեզ շարունակ հետ են քաշում վագոնի ներսը, բայց ի՛նչ օգուտ. չէ՞ որ մի քանի րոպեյից հետո տեսնելու յենք մեր բալիկներին, մեր հարազատներին։

...Կայարանն է։ Կառամատույցը մաքրված է, պահակախումբ է կանգնած։ Հարևան պլատֆորմում մեծ բազմություն կա, իսկ մերի վրա՝ բոլորովին փոքրաթիվ մի խումբ։ Դրանք հավանորեն մեր հարազատներն են։ Մենք պատրաստ ենք հենց ընթացքի ժամանակ ցած թռչելու վագոնից։ Գնացքը մոտենում է։ Դուրս ենք ցատկում։ Ոչինչ չի կարելի ջոկել։ Բոլորը համբուրվում են, ով ում հանդիպեց։ Ինձ մոտ են վազում իմ աղջիկը, մայրիկս, յեղբայրս, նրա յերեխան։ Մոտենում են Մ. Մ. Կագանովիչը, Լոկտիոնովը, Խորհրդային Միության հերոսները։ Մեր ձեռքերն են ընկնում հսկայական ծաղկեփնջեր։

Կայարանի հրապարակում հանդիսավոր միտինգ է։ Յերկար ու ջերմորեն խոսում է Լազար Մոիսեևիչ Կագանովիչը, և մենք հպարտ ենք, որ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ու ԽՍՀՄ Ժողկոմխորհի անունից մեզ ողջունում է Լազար Մոիսեևիչ Կագանովիչը՝ ընկեր Ստալինի մարտական զինակիցն ու բարեկամը։ Միտինգի ժամանակ Տանյուշան շարունակ քաշքշում է ինձ.

— Իսկ ո՞ւր է սկյուռը, ինչո՞ւ վագոնից հետդ չբերիր։

Մյուս կողմից յեղբորս յերեխան քաշում է թևքիցս և շոշափում իմ կաշվե բաճկոնը։ Վալյա Գրիզոդուբովան գրկել է Սոկոլիկին։ Սոկոլիկը հանգիստ նստել է և ժպտուն աչքերով ինձ է նայում։ Նա շատ ուրախ է, որ մայրիկը յեկել է։ Այստեղ, տրիբունի վրա կանգնած են և մեր հարազատները։ Որքա՜ն լավ է Մոսկվայում։

Միտինգը վերջանում է։ Մեր հարազատների հետ նստում ենք ծաղիկներով զարդարված բաց մեքենաները և գնում Գորկու փողոցով։ Յերկու կողմից մայթերի վրա ահագին ժողովուրդ կա։ Նրանք ձեռքով են անում, գոռում։ Կոկորդս սեղմվում է։ Կյանքումս առաջին անգամն է, որ յես այսպես Մոսկվա յեմ մտնում։ Այսպես են յեկել նաև չելյուսկինյանները, բևեռայինները, այսպես են դիմավորել Գրոմովին, Չկալովին։ Բայց յերբ ինքդ ես ապրում այդ րոպեները, այդ ուրիշ բան է։ Մենք չենք նկատում, թե մեքենաներն ինչպես են հասնում Պուշկինի հրապարակը։ Վերևից մեր գլխին թռուցիկների անձրև է տեղում։ Նրանք ամպ են կազմել՝ սպիտակ, կարմիր, ամեն գույնի։ Կարծես փողոցով մրրիկ է անցնում։ Իմ աղջիկն աշխատում է ավելի ու ավելի շատ բռնել այդ թռուցիկներից և խցկում է տատի, իմ, իր գրպանները, որտեղ հնարավոր է։ Մեքենան արագ է սլանում։ Շուրջս մրրիկ է։ Մարդիկ կանչում են, ձեռքերը թափահարում։ Ուզում ես յուրաքանչյուրին ձեռքով անել, պատասխանել, յուրաքանչյուրին ժպտալ։ Առջևի մեքենայում գնում է Վալյան, հետո Պոլինան, մեր մեքենան յերրորդն է։ Բոլորին ճանաչում են, կանչում են անուններով, բարձր գոռում են ու ծափահարում։

Ձեռքերս թմրում են, բայց մենք շարունակ թափահարում ենք ու թափահարում։ Ողջույն Մոսկվային ու մոսկվացիներին։ Ողջո՛ւյն ձեզ։

Ամբողջ ճանապարհը ծածկված է ծաղիկներով ու թռուցիկներով։ Ահա մեքենան սլանում է այն նրբանցքի մոտով, որտեղ յես եմ ապրում։ Այստեղից լսվում են այն մարդկանց ձայները, որոնք ինձ մանկությունից են ճանաչում, մեր տան, մեր բնակարանի հարևանների ձայները։ Առաջ ենք սլանում։ Ահա արդեն շուռ ենք գալիս դեպի Կրեմլ։ Սիրտս ուժեղ է խփում։

Կրեմլի մեծ պալատի շքամուտքն է: Տանյան հեղինակավոր տոնով ասում է.

— Բոլորովին ինչպես պալատում լինես:

Մենք առաջ ենք անցնում, վերնազգեստներս հանում: Մոտենում են մեզ հետ հրավիրված ընկերները: Մոտենում են ոդաչուները, մոտենում է Վալերի Պավլովիչ Չկալովը, սեղմում է մեր ձեռքը: Մեծ խմբով, հարազատներով և հերոս-ոդաչուներով շրջապատված վերև ենք բարձրանում:

Դահլիճներով անցնում ենք Գրանովիտայա պալատը: Այնտեղ դրված են յերկար, առնականորեն զարդարված սեղաններ, նրանց վրա՝ ծաղիկներ և ամեն տեսակ համեղ բաներ: Սեղան են նստում հրավիրված ոդաչուները, կոնստրուկտորները, ինժեներները և մեր մայրաքաղաքի անվանի մարդիկ: Առջևում տեղեր են թողնված մեզ և մեր հարազատների համար: Մենք նստում ենք, բայց մի՞թե կարելի յե հանգիստ նստել: Մեր ամբողջ ուշադրությունը բևեռված է մի սեղանի, վորի մոտ դեռ վոչ վոք չի նստել: Բայց մենք գիտենք, վոր այդ կուսակցության ու կառավարության ղեկավարների տեղերն են: Նրանք ներս են մտնում անսպասելի կերպով— Մոլոտով, Վորոշիլով, Կագանովիչ: Յեվ ահա մենք տեսնում ենք, գալիս է ընկեր Ստալինը իր սովորական մոխրագույն կոստյումը հագին: Նրա դեմքը ժպտուն է, ուրախ: Յեվ նա աչքերով մեզ է վորոնում: Մենք վեր ենք թռչում: Ստալինը ձեռքով վողջույնի նշան է անում մեզ, մենք նետվում ենք նրա մոտ... Մեր ձեռքերը սեղմում են Վորոշիլովը, Ստալինը: Մենք նետվում ենք Ստալինի մոտ և հերթով համբուրում ենք նրան: Վալյա Գրիզոդուբովան առաջինն է համբուրում, նախապես հարցնելով.

— Թույլ կտա՞ք, ընկեր Ստալին, համբուրել ձեզ:

Իսկ յես ու Պոլինան համբուրում ենք արդեն առանց թույլտվության: Վորոշիլովը կուշտ ծիծաղում է: Բոլորը մեր շուրջը կանգնած ծիծաղում են: Ամենաթանկագին մարդուն համբուրում են խորհրդային յերեք հասարակ աղջիկներ:

Անցյալ անգամ, յերբ ընկեր Մոլոտովը Կոկկինակիին և մեր աղջիկներին ընդունել էր ամառանոցում, յես Կրեմլի հիվանդանոցում պառկած եյի յեղել, իսկ մեր աղջիկները բախտ եյին ունեցել սեղան նստելու ընկեր Ստալինի կողքին: Դրա հա-

մար ել միայն վորոշվեց, վոր այս անգամ Ստալինի հետ նստելու իրավունքն ինձ է պատկանում: Յես նստում եմ Ստալինի և Վորոշիլովի միջև: Ստալինի կողքին մյուս կողմում նստում է Մոլոտովը, Մոլոտովի կողքին՝ Վալյան, նրանից հետո՝ Պոլինան: Ստալինն ինձ հարցնում է.

— Ինչպե՞ս եյիք ապրում տայգայում:

Բայց իմ կոկորդը ցամաքում է, յես կարգին բան պատասխանել չեմ կարողանում: Ասում եմ.

— Վոչինչ, լավ, մի՛ անհանգստանաք, ընկեր Ստալին:

Նա տեսնում է, վոր յես միանգամից իրեն վորևէ կապակցված բան ասել չեմ կարող և ժպտալով շարունակում է հարց ու փորձ անել:

— Գիշերը ցո՞ւրտ եր լինում:

— Վոչ, ընկեր Ստալին:

Նա տեսնում է, վոր մի տեսակ անհասկացող եմ, խելամիտ բան պատասխանել չեմ կարողանում և սկսում է ընդհանուր խոսակցություն: Դիմելով մեզ՝ Իոսիֆ Վիսսարիոնովիչը հարցնում է.

— Իսկ վորտե՞ղ են ձեր յերեխաները:

Մենք ցույց ենք տալիս, վոր նրանք նստած են մեր հարազատների հետ:

Ընկեր Ստալինն ասում է.

— Կանչեցեք նրանց այստեղ:

Բերում են Սոկոլիկին: Ընկեր Ստալինը նրան գիրկն է առնում: Գալիս է իմ Տանյուշան: Նա նայում է Ստալինին, նրա աչքերը փայլում են: Ստալինը ձեռքը մեկնում է նրան: Նա բարևում է նրան և Ստալինն ասում է.

— Ի՛նչ ուժեղն ես դու: Քիչ մնաց ձեռքս պոկես:— Յեվ ցույց է տալիս իր ձեռքը, վորի մատներն իբր թե կպել են իրար, բաժանել չի կարողանում: Տանյուշան իսկույն սկսում է չարաճճիություն անել: Նա բարձրաձայն ծիծաղում է, քաշում է ընկեր Ստալինի ձեռքը և ասում.

— Դուք կատակ եք անում, դիտմամբ եք այդպես սեղմել ձեր մատները...

Ստալինն էլ է ծիծաղում: Սոկոլիկը նրա գրկին է: Հանկարծ Ցանյուշան դառնում է Կլիմենտի Յեֆրեմովիչ Վորոշիլովին և ասում.

— Իսկ յես ձեր ձին տեսել եմ զորահանդեսում:

Վորոշիլովը ծիծաղում է և բարձրաձայն հայտարարում, վոր Ցանյուշան տեսել է նրա ձին, բայց այ, իրեն չի նկատել: Բայց Ցանյուշան չի շփոթվում, այլ անմիջապես վրա յե բերում.

— Վոչ, դուք նստած եյիք ձեր ձին:

Նայելով իմ փոքրիկ աղջկան, տեսնելով, թե ինչպես նա արագորեն մտերմացավ, յես ինքս էլ ազատվում եմ առաջին րոպեներին ինձ համակած հուզմունքից և արդեն սկսում եմ հանգիստ կերպով խոսել ընկեր Ստալինի հետ: Ցանյուշան իմ ականջին շշնջում է.

— Մայրիկ, հապա ինչո՞ւ Ստալինն այսպես հասարակ է:

Յես նրան պատասխանում եմ.

— Վորովհետև ընկեր Ստալինն է:

Մեզ հարց ու փորձ են անում մեր թռիչքի մասին, հարց ու փորձ են անում մեր յերեխաներին, Ցանյուշային, թե նա ինչպես է սովորում: Ստալինը կատակներ է անում. մերթ նրա քիթն է քաշում, մերթ արտևանունքն է ձիգ տալիս ու անվանում «անձնավորություն»: Գալիս է Ստալինի աղջիկը՝ Սվետլանան և Մոլոտովի աղջիկը նույնպես Սվետլանա: Ստալինը նրանց ներկայացնում է մեզ և իր աղջկանը ցույց տալով ասում է.

— Սա իմ տանտիրուհին է...

Սվետլանան նստում է Պոլինայի կողքին:

Կենացներ են առաջարկվում: Մոլոտովը խմում է մեր կենացը, խորհրդային յերեք ոդաչուհիների, վորոնք թռիչք են գործել մինչև Հեռավոր Արևելք: Մենք հերթով խոսք ենք խնդրում: Խոսում է Վալյան, խոսում է Պոլինան, վերջապես յես էլ խոսք եմ խնդրում ընկեր Մոլոտովից: Յես կանգնում եմ միկրոֆոնի առաջ, իմ ձեռքին գինու բաժակ կա: Յես խոսում եմ այն բացառիկ հոգատարության մասին, վոր ցուցաբերեց ընկեր Ստալինը մեր նկատմամբ, յերբ մենք տայգան եյինք ընկել: Յես

խոսում եմ այն մասին, վոր մեր յերկրում յերբեք, վոչ մի մարդ չի կարող կորչել: Իմ կողքին նստած է ընկեր Ստալինը և ինձ համար շատ դժվար է խոսել: Ուզում եմ Ստալինին, վոր այդքան ինձ մոտիկ է նստած, ասել մի բոլորովին անսովոր բան: Ձայնս ընդհատվում է, յես հուզվում եմ և վերջի վերջո նայում եմ վոչ թե դահլիճում իմ առաջ նստածներին, այլ միայն Ստալինին, և միայն նրան եմ ասում մեր ամբողջ ժողովրդի մեծ շնորհակալությունը մեր թանկագին Ստալինին՝ հիանալի յերջանիկ կյանքի համար, վոր այդպիսի ճանապարհներ է բաց անում ամբողջ ժողովրդի առաջ, և այն բանի համար, վոր քանի մենք ապրում ենք մի յերկրում նրա հետ՝ Ստալինի հետ, մեզանից վոչ վոք չի կարող զոհվել:

Յես խոսքս վերջացրի: Ստալինը վեր կացավ, սեղմեց իմ ձեռքը, մենք բաժակներս չխկացրինք: Ապա ինձ հետ բաժակ բաժակի զարկեցին ընկերներ Մոլոտովը, Վորոշիլովը, Կագանովիչը և բոլոր մեր սեղանին նստածները:

Խոսք է վերցնում ընկեր Ստալինը: Մենք ծպտուն չենք հանում: Ստալինը խոսում է կամաց, բայց այնպես, վոր բոլորը լսում են նրան: Նա խոսում է պարզ և զարմանալի սրամիտ: Նա հիշեցնում է մայրիշխանության ժամանակները, պատմում է, թե ինչ է մայրիշխանությունը, ինչպես է առաջացել այն, վոր կանայք ավելի տնտեսող են յեղել, քան տղամարդիկ, վոր կանայք սկսել են գյուղատնտեսական կուլտուրայով զբաղվել այն ժամանակ, յերբ տղամարդիկ միայն վորսով եյին զբաղվում, և ահա կանայք տղամարդկանցից ավելի կարևորություն են ձեռք բերել: Հետո նա խոսում է հետագա բոլոր դարերում կնոջը վիճակված ծանր կյանքի մասին: Նա խոսում է այն մասին, թե ինչպես եյին ճնշում կնոջը, զրկում հասարակ մարդկային գոյության իրավունքներից և վերջացնում է.

— Ահա այսոր այս յերեք աղջիկները վրեժ են լուծել կանանց ճնշման ծանր դարերի համար:

Նա շնորհավորում է մեր հաղթանակը և խմում մեր կենացը:

Այստեղ արդեն մեր հարազատները չեն դիմանում: Նրանք բոլորը վեր են թռչում իրենց տեղերից, վազում են դեպի

Ստալինը։ Բայց ընկեր Ստալինը ինքն է վեր կենում սեղանի մոտից և ուղղվում դեպի մեր մայրերը, հայրերն ու հարազատները, վորպեսզի բաժակ բաժակի զարկի նրանց հետ։ Հետո նա վերադառնում է իր սեղանի մոտ։

Այդ ժամանակ տեղից վեր է կենում Պոլինա Ոսիպենկոյի մայրը։ Նա հուզվում է, դողում, նրա արտևանունքներին արցունք է փայլում։ Նա մոտենում է ընկեր Ստալինին և նրան նվեր է մատուցում Նովոսպասովկա գյուղի կողմից։ Այդ մի մեծ ալբոմ է նկարներով, վոր ցույց է տալիս, թե առաջ ինչ է յեղել Նովոսպասովկա գյուղը, վորտեղ ծնվել է Պոլինա Ոսիպենկոն, և ինչ է դարձել հիմա։ Նա էլ հայերեն շատ բան էր ուզում ասել ընկեր Ստալինին, բայց չկարողացավ։ Ստալինը նրա հետ համբուրվեց։ Պառավ կինն այլևս վոչինչ ասել չկարողացավ...

Մոտենում է Գրիզոդուբովայի հայրը։ Նա խոսք է խնդրում, բայց նրա ձայնից ես բան չի դուրս գալիս։ Յես նրան հասկանում եմ... Հիմա նա ինչպե՞ս այստեղ կանգնի ու խոսի, յերբ նրա կողքին ընկեր Ստալինն է։ Ամեն ինչ խառնվում է աչքերում, բոլոր մտքերը բևեռվում են միայն նրա վրա և չկան այնպիսի խոսքեր, վորոնք կարողանային արտահայտել այն, ինչ նա ապրում էր այդ պահին։

Մոլոտովն առաջարկում է «Ռոդինա» սավառնակի փրկության ու եվակուացիայի մասնակիցների կենացը։ Այն ժամանակ Իոսիֆ Վիսսարիոնովիչը վեր է կենում և խնդրում է սեղանին մոտենալ այն բոլոր ներկա յեղող դեսանտայինները, պարաշյուտիստները, օդաչուները, վորոնք մեծ օգնություն եյին հասել։ Նա վեր է կենում սեղանի մոտից, ընդառաջ է գնում նրանց և խմում նրանց կենացը։ Նա յուրաքանչյուրի հետ խոսում է, յուրաքանչյուրի ձեռքը սեղմում։

Խոսք են վերցնում Խորհրդային Միության հերոսները։ Խոսք է վերցնում Վալերի Պավլովիչ Չկալովը։ Բոլորը խոսում են իրենց բաղձանքների մասին, ապագա թռիչքների մասին։ Մենք խնդրում ենք, վոր մեզ թույլատրվի ավելի հեռավոր թռիչք գործել։ Ստալինը ծիծաղում է, վոչինչ չի պատասխանում և նորից խոսք է խնդրում Մոլոտովից։ Իր յերկրորդ խոսքը Ստալինը ուղղում է Խորհրդային Միության Հերոսների մայրե-

րին, հայրերին ու կանանց։ Նա խոսում է այն մասին, վոր մեր հերոսները թռիչքների յեն ձգտում, վոր նրանք պատրաստ են յուրաքանչյուր յերկու ամիսը մեկ նոր ռեկորդ սահմանել։

— Ահա, Չկալովին ասացեք. թեկուզ գնդիկի շուրջը,— նա կթռչի յերեք անգամ ու կծիծաղի։ Իսկ գնդիկ նա անվանում է յերկրագունդը։

Յեվ ընկեր Ստալինն ասում է՝ խորհրդային ժողովրդի և Ստալինի կյանքն համար ամենից թանկը մարդիկ են, վոր մեզ այնքան հարկավոր չէ շատ ռեկորդներ ունենալ, վորքան հարկավոր է շատ լավ, հիանալի մարդիկ ունենալ։ Նա ասում է.

— Պետք է խանգարեմ ձեզ թռչել, բայց, ի հարկե, համենայն դեպս պետք է նաև օգնեմ։

Նրա ճառն ուղղված է այն բանին, վոր հերոսները պահպանեն իրենց, վոր նրանք ավելի քիչ ռիսկ անեն։

Սեղանի շուրջն ավելի ու ավելի ուրախ է դառնում, ավելի յե բարձրանում տրամադրությունը։ Ստալինը մանրամասն հարցնում է, թե ինչպես էր կառուցված իմ կաբինը, և առաջին անգամ յես լսում եմ բացառիկ իմաստուն հարց մեր սավառնակի մասին։ Նա հարցնում է.

— Բայց չէ՞ վոր դուք ստիպված եք յեղել թռչել միայն այն պատճառով, վոր դեպի հետևի կաբինը գնալու անցք չեք ունեցել։

— Այո՛,— ասում եմ յես։

— Իսկ ինչո՞ւ յեն այնպիսի սավառնակներ կառուցում, վոր շտուրմանը կտրված լինի ամբողջ օդանավից։

Յեվ ընկեր Ստալինն սկսեց զարգացնել այն միտքը, թե ինչպես պետք է կառուցել սավառնակները։ Նա սկսեց պատմել արտասահմանյան սավառնակների մասին։ Ինձ զարմացնում էր նրա հսկայական տեղյակությունը վոչ միայն մեր յերկրի, այլ և արտասահմանյան ավիացիոն տեխնիկայի մասին։ Նա պատմեց վերտոլյոտների մասին, վորոնք կարող են թռչել միանգամից, և ասաց.

— Ինչպես, չէ՞ վոր այդպիսի վերտոլյոտը ձեզ շատ պետք կգար տայգայում։

Ընկեր Ստալինի այդքան պարզ, հասարակ խոսքերը զարմացնում են իրենց զարմանալի խորաթափանցությամբ։

Նա նորից խաղում ու զբաղվում է իմ փոքրիկ աղջկա հետ։

Բեմում յերևում է յերգի ու պարի կարմիր-բանակային անսամբլը։ Ընկեր Ստալինը սիրում է ժողովրդական յերգեր։ Նա ուկրաինական յերգեր սիրում է և խնդրում է, որ «Զակուվալա» յերգեն։ Նա ասում է, որ այդ իր սիրած յերգն է։ Յերբ կարմիր-բանակայինները ուկրաինական ու կարմիր-բանակային յերգեր են յերգում, Ստալինն ու Վորոշիլովը ձայնակցում են։ Յերիտասարդ խմբի հետ նրանք յերգում են ուրախ, լավ և առույգ։ Փոքրիկ Տանյան յերգում է Վորոշիլովի հետ։ Վորոշիլովը նրան սովորեցնում է առանձին յերգել, հարցնում է.

— Դու այս յերգը գիտե՞ս։

Տանյան յերգում է նրա համար։

— Իսկ այս ե՞լ գիտես։

Տանյան այդ յերգն էլ է յերգում։ Յես զարմանում եմ, թե ինչպես յերբ մենք Հեռավոր Արևելքում թռիչք ենք կատարում, մեր յերեխաները սովորում են այդ յերգերը և արդեն կարողանում են յերգել այն ամենը, ինչ ժողովուրդը յերգում է։

Յերկար չշարունակվեց այդ հիանալի, ջերմ հանդիպումը։ Ստալինը կարմիր մեխակի մի փունջ է վերցնում և ծաղիկ առ ծաղիկ նվիրում է իմ փոքրիկ Տանյային։ Տանյայի աչքերը բոցկլտում են։ Նա մեխակները վերցնում է և վոչ մի պայմանով սեղանին դնել չի ուզում, պահում է ձեռքին, չի ուզում նրանցից բաժանվել, վորովհետև Ստալինն է տվել իրեն։ Այդ մեխակներով էլ մենք գնում ենք, յերբ ընկեր Ստալինը մեզ հրաժեշտ է տալիս, ամուր սեղմում է մեր ձեռքը և հետագա հաջողություններ ցանկանում։ Մենք յերկար, յերկար նայում ենք հեռացող Ստալինին։

Դժվար է նկարագրել այն զգացմունքները, վոր մենք ապրում էինք այդ դահլիճից հեռանալիս։ Մեր սրտերում՝ իմ, Պոլինայի ու Վալյայի սրտերում մեկ միտք կար, մի փափագ, թե Ստալինը մեզ նոր թռիչք կթույլատրի, վոր մենք թռչենք ավելի հեռու, ավելի լավ, վորպեսզի կրկին ընկեր Ստալինի հետ այսպիսի հիանալի յերեկո անցկացնելու պատվին արժանանանք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Բի՞մխա թե յերաժշտություն 5
Գծագրողը դառնում է շտուրման 20
Փոթորիկը 42
Օդագնացության լաբորատորիայում 47
«Բեզանից ողաչու դուրս կգա» 52
Կույր թռիչք 58

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Մայխմենկյան օդային զորահանդեսը 66
Վեց սավառնակ Լենինգրադից թռչում են Մոսկվա 74
Արագության մրցավազքը 1937 թ. 83
Վալյա Գրիզոդուբովայի անձնակազմում 88
Պոլինա Օսիպենկոն լողալ է սովորում 104
Յերեք մարդ բաց ծովում 118
Թռչող նավակով ցամաքի վրա 125

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Վալյան ծանոթանում է Պոլինայի հետ 139
Կրեմլի հիվանդանոցում 144
Շքանշանը 150
Վալերի Պավլովիչ Չկալովը 152
Շչելկովոյի աերոդրոմը 157
Ընկեր Ստալինը ձեզ թույլատրել է թռչել 160
Ստարտը 166
Շտուրմանի կաբինում 167
Խաղերն չարություն է անում 173
Թռիչքը 179
Տայգայում 183
Ռոդինա սավառնակի ճամբարը 205
Ուղեցույց Մակսիմովը 211
Ձմռանի ավազաթմբերում 228
Կերբի—Կոմսոմոլսկ—Խաբարովսկ 236
Ողջույն քեզ Մոսկվա 241

Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Թարգմ.՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ցե. Տ.-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Բ—1035. Հրատ. № 5023.
Պատվեր 721. Տիրաժ 3500.
Թուղթ 64×92. Տպագր. 15 մամ.
Մեկ մամ. 38400 նշան.
Հանձնված է արտադրության 4 սեպտեմբերի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 5 փետրվարի 1940 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0311675

13.217